3914
3915

3(02)
Ц-13

ԳԻՆԸ 1 Ռ. 20 Կ.

Գ. ԱԲԵՋՀԱՈՒԶ ՅԵՎ Ա. ՊՐՈՏԱՍՈՎ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

II ՄԱՍ

1003
12959

Դասագիրք քաղգրագիտության քաղաքային կրճատ դպրոցների, ՀԼԿՅԵՄ դպրոցների յեվ ինքնակրթության համար

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ—1927

3(02)
Ա-13

Գ. ԱԲԵՋՀԱՈՒԶ ՅԵՎ Ա. ՊՐՈՏԱՍՈՎ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դասագիրք քաղգրագիտության քաղաքային կրճատ դպրոցների, ՀԼԿՅԵՄ դպրոցների յեվ ինքնակրթության համար

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека имени А. Мясникяна
7/XI-1922
1946-87
78712-ԱՐ

ՀԽՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1927

Գրառեպվար № 34բ. Հ. 494 Տիրաժ 4000.

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում.—150

ԲԱՅԼՇԵՎԻԶՄ (ԼԵՆԻՆԻԶՄ) ՅԵՎ ՈՊՈՐՏՅՈՒՆԻԶՄ

Կուսակցության պատմության ուսումնասիրության իմաստը (Ներածություն)

Նախորդ գլուխներում մենք խոսում եյինք այն մասին, թե ինչպես ե կառուցված մեր կուսակցությունը, ինչպիսի պարտականություններ ունի կոմմունիստը կուսակցության, բանվոր դասակարգի և աշխատավորների առաջ։ Մենք պատմեցինք, թե ինչպես կուսակցությունն արհմիությունների և խորհուրդների միջոցով կապված ե մասսաների հետ և ինչպես ե նրանց ղեկավարում։ Վերջապես, վերջին չորս գլուխում մենք ծանոթացանք այն ուղիների հետ, վորոնցով ՀամԿԿ (բ.) ԽՍՀՄ ժողովրդական տնտեսությունը տանում ե դեպի սոցիալիզմ։

Ընկերներին հեղափոխական կռվի սեփական փորձից, մեր աշխատանքի ամենորյա օրինակներից, իրենց ձեռնարկությունների կյանքից, գյուղ գնալուց, թերթեր կարդալուց, ժողովներից և այլն լավ հայտնի յե, թե ինչպես դժվար ե սոցիալիզմի շինարարությունը։ Սակայն բոլորին հայտնի յե նույնպես, վոր ամեն տեսակ դժվարությունների ժամանակ ՀամԿԿ (բ.) կարողանում եր յելք գտնել, կարողանում եր լուծել այն բոլոր խնդիրները, վորոնք կանգնում եյին նրա առաջ։

Բայց վորտեղից և ինչպես ե ձեռք բերել մեր կուսակցությունն այդ հմտությունը, այդ ընդունակությունը, վորով բանվոր դասակարգին շարունակ ուղիղ ճանապարհ ե դուրս բերում։

Մենք կարող ենք այս հարցի պատասխանն ստանալ միայն բոլշևիզմի պատմությունն ուսումնասիրելով, մեր կուսակցության պարտությունների և հաղթանակների համարյա յերեսնամյա մարտական փորձն ուսումնասիրելով։

ՀամԿԿ (բ.) միանգամից չի ծնվել։ Նրան վոչ վոք չի «ստեղծել» առաջուց մտածած դեղատոմսով։ Նա ծնվել ու աճել ե բանվոր դասակարգի աճման և նրա ազատագրական շարժման հետ միասին։ Մեր կուսակցությունը հայտնի յե յերկաթե դիսցիպլինով, գաղափարական տոկունությամբ, միությամբ, խնդիրները ճիշտ դնելու և հեղափոխականորեն նրանց լուծելու կարողությամբ։

Այս հատկությունները կուսակցությունը կռել ե օպպորտյունիստական (համաձայնողական) կուսակցությունների (մենշևիկներ, եսերներ և այլն) և հենց իր միջի օպպորտյունիստական *) հոսանքների (տրոցկիզմ և ուրիշները) դեմ մղած անհաշտ կռվում։ Կռիվ հանուն բոլշևիզմ-լենինիզմի ընդդեմ օպպորտյունիզմի—ահա ՀամԿԿ (բ.) ամբողջ պատմության հիմնական բովանդակությունը։

Կոմմունիստական կուսակցությունն, իբրև բանվոր դասակարգի ավանգարդ, շարունակ կռիվ եր մղում միասնական, կենտրոնացած, յերկաթե դիսցիպլինով կոփված կուսակցության համար։ Լինելով բանվոր դասակարգի կուսակցություն, նա առաջ քաշեց պրոլետարիատին, իբրև աշխատավոր մասսաների ամբողջ հեղափոխական շարժման հեգեմոնի **)։ Այս կռվում ՀամԿԿ (բ.) շարունակ պաշտպանում եր նույնպես բանվոր դասակարգի և գյուղացության ամուր միությունը։

Մեր կուսակցության պատմության վո՛ր շրջանն ել առնելու լինենք, միանգամից յերևում ե, վոր այնտեղ կռիվ ե տեղի ունենում բոլշևիկյան, լենինյան այս սկզբունքներից մեկի կամ մյուսի համար։ Նույնիսկ այժմ, յերբ ԽՍՀՄ օպպորտյունիստական կուսակցությունները վոչնչացված են, ՀամԿԿ (բ.) ստիպված ե կռիվ մղել լենինյան գծի անաղարտության համար նույն այդ հիմնական հարցերի վերաբերմամբ հենց իր միջի օպպորտյունիստական թեքումների դեմ (օրինակ՝ կռիվը տրոցկիզմի դեմ, նոր օպպոզիցիայի դեմ 1925/1926 թ. և այլն)։

Ահա ինչու ամեն մի կոմմունիստի ու անկուսակցական բանվորի համար անպայման հարկավոր ե իմանալ ՀամԿԿ (բ.) պատմությունը։ ՀամԿԿ (բ.) օպպորտյունիզմի դեմ մղած կռվի ամբողջ պատմությունն

*) Օպպորտյունիզմ—այնպիսի ուղղություն բանվորական շարժման մեջ, վոր բանվորներին դասակարգային կռվի փոխարեն քարոզում ե—աշխատակցություն, համաձայնողականություն բուրժուազիայի հետ։ Օպպորտյունիստները համարում են, վոր բանվոր դասակարգը խաղաղ, պարլամենտական ճանապարհով, առանց պրոլետարիատի դիկտատուրայի կարող ե սոցիալիզմին հասնել։ ԽՍՀՄ բանվորները ապրելով յերեք հեղափոխություն, համոզվեցին, վոր օպպորտյունիստական կուսակցությունները բանվոր դասակարգի ու գյուղացության վատթար թշնամիներն են։ Նրանք մթագնում են դասակարգերի պառակտումը և այդպիսով, յեթե նույնիսկ չեն ել ուզում, ապա իրոք բուրժուազիայի սպասավորների դեր են խաղում։ Արևմուտքում բոլոր այսպես կոչված «բանվորական» կուսակցությունները, բացի կոմմունիստականներից, օպպորտյունիստական են և իրոք ծառայում են վոչ թե բանվոր դասակարգին, այլ բուրժուազիային (Գերմանական սոց. դեմոկրատական կուսակցությունը, անգլիական «բանվորական» կուսակցությունը և ուրիշներ)։

**) Հեգեմոն—առաջնորդ, ղեկավար։

իմանալը հնարավորություն ե տալիս ուղիղ հասկանալ բոլշևիզմի հիմունքները, ճիշտ կիրառել այն մեր այժմյան պայքարի և սոցիալիստական շինարարության մեջ, աշխատանքում չհեռանալ դեպի կոմմունիզմ տանող միակ հուսալի լենինյան ուղիներից։

ԻՆՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Բոլշևիզմի պայքարն օպորտյունիզմի դեմ՝ հանուն պրոլետարիատի նախապատրաստման առաջին հեղափոխության համար

ԻՆՉԻ ՄԱՍԻՆ Է ԳԼՈՒԽԸ

Այս գլխում մենք ուզում ենք պատմել, թե ինչպես 1905 թ. Ռուսաստանում հասունանում էր բանվոր դասակարգի ու գյուղացիության հեղափոխությունը, նախապատրաստվում էր ցարական ինքնակալության տապալումը։ Գլխում մենք կը տեսնենք.—1) Ինչու այդ հեղափոխության մեջ նրա սկսողը և գլխավոր, ղեկավար ուժը պրոլետարիատն էր. 2) Ինչու նրա հետ միասին կալվածատիրական ստրկության դեմ կռվի յելավ գյուղացիությունը. 3) Ինչու բուրժուազիան, կապիտալիստները խոսքով կարծես թե կողմնակից էին ցարիզմի տապալմանը, իսկ գործով նրա դաշնակիցներն էին ու մասսաների յերդվյալ թշնամիները. 4) Ինչպես այդ ժամանակները կազմավորված բանվորական կուսակցությունն այս բոլոր հարցերի վերաբերմամբ յերկու ուղղության, յերկու հոսանքի բաժանվեց՝ հեղափոխական (բոլշևիկներ) և օպորտյունիստական (մենշևիկներ)։

1. 1905 թ. հեղափոխության նախադրյալները

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԿՌԻՎԸ 900-ԱԿԱՆ ԹՎԵՐԻՆ

ԽՍՀՄ բանվորները, որ անցել են յերկու հեղափոխության (1917 թ. Փետրվարյան և Հոկտեմբերյան) դպրոց, իսկ ավելի հները նաև յերեք (1905 թվինը, 1917 թ. Փետրվարյանն ու Հոկտեմբերյանը), լավ գիտեն, որ հեղափոխությունը պատահաբար չի լինում, որ նա «աստծու պատիժ չե մարդկային մեղքերի համար», ինչպես հաճախ մտածում են հետամնաց քաղքենիները։

Հեղափոխությունը նախապատրաստվում է յերկար տարիներ, և տեղի յե ունենում շատ պատճառների կամ, ինչպես մենք հաճախ ասում ենք, շատ նախադրյալների հետևանքով։ Յեթե կան հեղափոխության նախադրյալներ, ապա ինչքան էլ տերտերներն աղոթելիս լինեն, ինչքան էլ ախ ու վախ անեն թույլ ջղեր ունեցող մարդիկ, ինչքան էլ ընդդիմանան համաձայնողականները և տիրող դասակարգերը,—անխուսափելիորեն գալիս է հեղափոխական փոթորիկը։

Դեռ 1905 թ. շատ առաջ Պլեխանովը և Լենինը, Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի ուսմունքի հետևորդները, մատնանշում էին հեղափոխության անխուսափելիությունը Ռուսաստանում։ Իսկ XX դարի սկզբին շատ հեղափոխականների համար պարզ էր, որ Ռուսաստանը մոտենում է հեղափոխության, որ նրա գալը սարերի յետևը չէ։ Իսկ ինչու 1905 թ. առաջ հեղափոխականները համոզված էին, որ մեզ մոտ շուտով հեղափոխություն տեղի կունենա։ Հենց այն պատճառով, որ նրանք ուսումնասիրում էին ռուսական արդյունաբերության, գյուղատնտեսության կացությունը, բանվոր դասակարգի ու գյուղացիության դրությունը, հետազոտում էին բուրժուազիայի ու ինքնակալության տրամադրությունը և այլն։ Այս բոլորն ուսումնասիրելով, նրանք շարունակ ավելի խորն էին թափանցում մոտեցող հեղափոխության նախադրյալների, պատճառների մեջ։

Մենք պետք է լավ քննենք այդ պատճառները, որպեսզի ճշտորեն հասկանանք, թե ինչու տեղի ունեցավ 1905 թ. հեղափոխությունը։ Սկզբում քննենք պրոլետարիատի դրությունը և ծանոթանանք այն կռվի բնույթին, որ այն ժամանակ նա վարում էր ցարական ինքնակալության դեմ։

Հասկանալի յե, որ բանվոր դասակարգի դրությունը կախված էր արդյունաբերության կացությունից։ 1861 թ. ճորտատիրական իրավունքի անկումից հետո սկսվում է արդյունաբերության ու բանվոր դասակարգի արագ զարգացումը (տես № 8 և 9 դիագրամները)։ Պրոլետարիատի աճումը տեղի յե ունենում աղքատացած գյուղական բնակչության հաշվին։ Գյուղացիությունը քայքայված հողի հետգնման վճարներից, կալվածատերերից հողը վարձակալելու վճարներից, չափից դուրս հարկերից, աղքատանում էր։ Նրա ամենաչունևոր մասը, որպեսզի սովից չմեռնի, ստիպված էր քաղաք գնալ, աշխատանքի գնալ կապիտալիստական ֆաբրիկները և գործարանները։ Ռուսական արդյունաբերության արագ աճումը XIX դարի վերջում շատ պատճառներով էր բացատրվում։ Նախ՝ գյուղի աղքատացման պատճառով Ռուսաստանում բանվորական ուժը շատ էժան էր։ Յերկրորդ՝ հում նյութի հսկայական պաշարների (ածուխ, յերկաթահանք, փայտ և այլն) առձեռն լինելը յերկրում շատ առավելություններ էր տալիս արդյունաբերության տերերին։ Յերրորդ՝ Ռուսաստանն իբրև մի յերկիր, որ ահագին քանակությամբ հաց էր արտածում արտասահման (օրինակ՝ մենակ 1900 թ. Ռուսաստանից արտածվեց 6,850 հազար տոնն հաց), յերկաթուղիների կարիք ուներ։ Յերկա-

Թուղիների կառուցման անհրաժեշտությունն ահագին զարկ տվեց յեր-կաթի արդյունահանման ու նրա վերամշակման զարգացմանը, ածու-



Դիագրամ № 8 Ինչպես զարգացավ ռուսական արդյունաբերությունը ճորտատիրական իրավունքի վերացումից հետո
(«Статист. Ежегодник», 1914 *թ.*)

*խի արդյունահանմանը և այլն (1899 թ. 5,200 կիլոմետր *) յերկաթուղի յեր շինված. 1898 թ. արտադրված եր 2,200 հազար տոնն չուգուն)։*

**) 1 կիլոմետրը=0,937 վերստի (այսինքն 469 սաժենի)։*



Դիագրամ № 9. Ինչպես զարգացավ ռուսական արդյունաբերությունը ճորտատիրական իրավունքի վերացումից հետո։
(Ըստ Պետլանի նյութերի)
(Պրոլուկցիան մինչ-պատերազմյան միլ. ռ.)

Չորրորդ՝ արդյունաբերությունն արագ զարգանում եր նաև այն պատճառով, որ արևմտա-եվրոպական կապիտալիստները ներմուծում եյին իրենց կապիտալները Ռուսաստան և արդյունաբերության մեջ դնում այն (XX դարի սկզբներին մինչև 2 միլիարդ ռուբլու օտարերկրյա կապիտալ եր ներմուծված)։

Բայց այս վերելքը XX դարի սկզբներին ընդհատվեց կրիզիսով, արդյունաբերության լճացումով։

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ

Հասկանալի յե, որ այդ կրիզիսն ամենից ավելի հարվածեց բանվոր դասակարգին։ Սկսվեց արտադրության կրճատումը—գործազրկությունը մեծացավ։ Իբրև օրինակ մատնանշենք, որ հարավային ռայոնի չուգուն հալող գործարաններում բանվորների թիվը 45,000-ից 1899 թ. իջավ մինչև 35,000-ի 1902 թ.։ Դոնեցի ավազանում ածուխի մշակման մեջ 1900 թ. 67,000 բանվոր կար, իսկ 1902 թ. մնաց 58,000։ Մոսկվայում 1902 թ. Պրոխորովի ֆաբրիկայից դուրս շպրտվեցին 900 բանվոր, Ռեուտովի մանուֆակտուրայից—1200 բանվոր, իսկ Մոսկվայի ակցիոներական ընկերության Պոդոլսկի գործարանը բոլորովին փակվեց և իր բոլոր բանվորներին՝ 2,000 մարդու փողոց նետեց։

Բայց աշխատել շարունակողների դրությունն էլ վատացավ։ Ֆաբրիկանտներն ու գործարանատերերը բոլորովին դադարեցին բանվորներին հաշվի առնել։ Հին բանվորները հիշում են, ինչպես նրանք ասում եյին. «Չես ուզում աշխատել՝ գնա։ Ազատ ես։ Քեզ նման շատերն են թրև գալիս»։ Ապա, օգտվելով պրոլետարիատի անելանելի դրությունից, կապիտալիստները բանվորական օրը յերկարացնում եյին, հասցնելով միջին հաշվով 12 ժամի։ Առանձին ձեռնարկություններում բանը հասնում եր նաև 14 ու 16-ժամյա աշխատանքի օրի։

Իսկ հատկապես կտրուկ կերպով, գործազրկության աճմանը հարակից, կրճատվեց աշխատավարձը (տես № 10 դիագրամը)։

Յեթե ավելացնենք, որ բանվորները բնակարանային կարիքի մեջ եյին, տուգանվում եյին դատարկ բաների համար, ապա հասկանալի կդառնա, թե ինչքան ծանր եր այն ժամանակ բանվորների դրությունը։

Բայց այս բնավ բոլորը չե։ Բացի կապիտալիստներից շահագործվելուց, բանվոր դասակարգը դեռ գտնվում եր ինքնակալության ճնշման տակ։ Պրոլետարիատը չուներ խոսքի, մամուլի, ժողովների ազատություն, ու միությունների ազատություն, այսինքն չուներ վոչ մի քաղաքական իրավունք։ Համեմատեցեք, օրինակ, ԽՍՀՄ և այն ժա-



Դիագրամ № 10. Կապիտալիստներն ինչքան կրճատեցին աշխատավարձն արդյունաբերական կրիզիսի ժամանակ

(Ըստ Աստրովի գրքի՝ «Եկոնոմիստները—մենշևիկների նախորդներն են»)

մանակվա Ռուսաստանի բանվորների իրավունքներն ու դուք կը տեսնեք, ինչպիսի խոր անդունդ ե բաժանում մեզ անցյալից։ Այժմ պրոլետարիատն ունի մամուլի իսկական ազատություն, տասնյակ հազարավոր բանվոր-թղթակիցներ քաշված են լրագրական աշխատանքի մեջ. ժողովների ազատություն ե. վոչ միայն արհմիությունների ազատություն ե, այլ և այդ արհմիությունները մասնակցում են սոցիալիստական շինարարությանը։

Ցարական ժամանակ սրանից վոչ մեկը չկար։ Ինքնակալությունն արմատում խեղդում եր գիտակցության ամեն մի նշույլ, բանվոր դասակարգի կազմակերպության ամեն մի փորձ։ Կառավարիչ, գործարանի դիրեկտոր, վարպետ, վոստիկան, ժանդարմ, տերտեր, լրտես և պրովոկատոր —սրանք բոլորը հետևում եյին բանվորի ամեն մի քայլին։ Ամբողջ ցարական կարգը— իր վոստիկանությամբ, պահնորդական բաժանմունքով, զորքով, տերտերներով, ծախու մամուլով, դպրոցներով, դատարանով, բանտերով—աշխատում եր բանվորներին դաստիարակել, որ հնազանդվեն «գահին, հավատին և հայրենիքին»։

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԿՌԻՎՆ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Պարզ ե, որ այս բոլորի շնորհիվ բանվորներն ատելությամբ եյին տոգորվում դեպի ինքնակալության կարգը և բուրժուազիան։ Բանվորներն իրենց մեջքի վրա կրում եյին իրենց իրավազուրկ, անլույս դրության ամբողջ ծանրությունը։ Չնայած ցարական բոլոր վկկապներին ու խար-

դախություններին, նրանք ստիպված եյին բռնել և բռնեցին կռվի հերոսական ուղին։

900-ական թվականների հեղափոխական կռիվը զարգացավ արդյունաբերական կրիզիսի ազդեցության տակ, որի մասին մենք վերևը խոսեցինք։ Այդ շարժումը շարունակ ավելի ու ավելի լայն քաղաքական գունավորում ստանում և սկսում դուրս գալ ֆաբրիկաների ու գործարանների սահմանից, ընդունելով փողոցային ցույցերի ձև։ Հազարավոր բանվորների ամբոխը կարմիր դրոշակներով, «կորչի ինքնակալությունը», «կեցցե ազատությունը» աղաղակներով, հեղափոխական յերգեր յերգելով արդյունաբերական քաղաքների փողոցներում ցուցադրում եր իր համախմբվածությունը և գիտակցականությունը։

Ի՞նչ եր նշանակում այդ։ Այդ խոսում եր հոգուտ այն բանի, որ բանվորների գիտակցությունն ավելի բարձրացել ե։ Նրանք արդեն սկսել եյին հասկանալ, որ բանը ոչ այնքան նրանում ե, որպեսզի կարողանան իրենց աշխատավարձի վրա մի ավելորդ գրոշ ավելացնել ու մի կես ժամով բանվորական օրը պակասեցնել, որքան նրանում, որպեսզի կարողանան ինքնակալության լուծը թոթափել։ Իսկ այդ հարկավոր եր պրոլետարիատին բուրժուազիայի դեմ մղվելիք հետագա կռվի համար։

Ցարական կառավարությունը ոստիկանության ու զորքի ոգնությամբ ցրում եր այդ ցույցերը, ձերբակալում եր հարյուրավոր ու հազարավոր բանվորների և հեղափոխական ուսանողների, նրանց տաժանակիր աշխատանքի վայրերն եր աքսորում, բայց շարժումն անդիմադրելի թափով աճում եր։

Հատկապես նշանակալի յեր Ռոստովի պրոլետարիատի 1902 թ. յելույթը։ Այնտեղ բանը նրան հասավ, որ մի քանի որ իրականացած եր լիակատար քաղաքական ազատությունը։ Ոստիկանության ու ժանդարմների աչքի առաջ ՌՍԴԲԿ*) Դոնի կոմիտեյի անդամները միտինգներում ճառեր եյին ասում ինքնակալության դեմ։ Հետևյալ տարին գործադուլը, սկսվելով Բաքվում, ընդգրկեց Ռուսաստանի ամբողջ հարավը՝ Թիֆլիսը, Ոդեսան, Կիևը, Յեկատերինոսլավը և այլն։ Այդ ընդհանուր գործադուլի առաջին փորձն եր։

Ցույցերի ցրումը, գործադուլավորներին պատժելը, ցարական դահիճների բռնությունները պրոլետարիատի համար հիանալի դպրոց ծառայեցին։ Այդ կռվում պրոլետարիատը կոփվեց, նրա գիտակցությունն աճեց։ Նախահեղափոխական ճակատամարտներում բանվորների ավելի

*) Մեր կուսակցությունն այն ժամանակ կոչվում եր Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն, իսկ կրճատ՝ ՌՍԴԲԿ։

լայն մասսաներն եյին սկսում հասկանալ, որ պրոլետարիատի գլխավոր թշնամին հանդիսանում ե ցարական ինքնակալությունը։

ԳՅՈՒՂԱՑՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԿՌԻՎԸ ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐԻ ԴԵՄ

Յեթե այդ տարիներում քաղաքում անհանգիստ եր, ապա գյուղում ել եր բարձրանում խուլ անբավականության ալիքը։ Գյուղացիները 1861 թ. ռեֆորմից հետո շատ քիչ հող ստացան։ Կալվածատերերը գյուղացիների հողի լավագույն կտորները վերցրին։ Գյուղացիներին «կտոր»-ները խիստ հարկավոր եյին. դրանք կամ ամբողջովին մարգագետիններ եյին կամ հենց այն տեղը, ուր ընկնում եր գյուղացիների համար կարևոր ճանապարհը։ Գյուղացիները պետք ե վճարեյին ու վճարեցին ահագին գումարներ բաժնեհողերի համար, նրանք վճարում եյին զեմստվային հարկերը, արտասահմանից ներմուծած մանգաղների, գերանդիների և այլն մաքսերը։

Բացի այդ, հարկավոր ե նկատի առնել, որ խոշոր կալվածատերերը մեծ մասամբ իրենց հողի վրա տնտեսություն չեյին վարում։ Նրանք ունենալով ամբողջ կալվածատիրական հողի յերեք քառորդը, նրա միայն մեկ հինգերորդն եյին հերկում, իսկ մնացած հողը բարձր վճարով վարձակալության եյին տալիս գյուղացիներին։ Սևահողի (չերնոզյոմի) շերտում շատ կալվածատերեր բոլորովին անասուն, ինվենտար ու շենքեր չունեյին կալվածներում։ Նրանք հարկադրում եյին գյուղացիներին կիսրար աշխատել, այսինքն գյուղացին իր անասունով, արորով, ցաքանով և այլն աշխատում եր կալվածատերերի հողի վրա և բերքի կեսը տալիս եր կալվածատերերին։

Ահա հենց այս կալվածատիրական սարկությունն ել հող ծառայեց գյուղացական անբավականության համար։

Ամեն մեկի համար հասկանալի յե, որ այսպիսի հողազրկությունը, մշակման պապական յեղանակները—արոր, յեռադաշտ,—կալվածատիրական սարկությունը, հետգնման ծանր վճարները և հարկերը ի վերջո քայքայեցին գյուղացական տնտեսությունը։ Գյուղացությունն աշխատում եր, թողնում հողը և գնում քաղաք, լրացնելով այնտեղ գործազուրկների քանակը։ Հաճախակի սովը և անբերքությունն ել ավելի խախտում եյին գյուղական տնտեսության հիմքերը։

Թե ինչքան եր աղքատանում գյուղացությունը, յերևում ե հետևյալ թվերի համեմատությունից։

Յեվրոպական Ռուսաստանի 50 նահանգում գյուղացիներն ունեյին՝

	1888 թ.	1898 թ.
Ձիեր . . .	19,600 հազար	17,000 հազար
Խոշոր յեղջյուր. անաս.	24,600 »	24,500 »

Հարկավ բոլոր գյուղացությունը չէր, վոր քայքայվում էր։ Մի մասը հարստանում էր, ինչպես ասում են, «մարդկանց շարքն էր մըտնում», կուլակ դառնում, շահագործելով գյուղական չքավորությանը։ Բայց այն ժամանակ, այս պետք է լավ հիշել, հակասությունները գյուղացության զանազան խմբերի միջև, չընայած աճում էյին, շարունակ ավելի սրվում, բայց այնուամենայնիվ այնպես սուր չէյին, ինչպես հակասությունները ամբողջ գյուղացության ու ճորտատեր-կալվածատերի միջև։ Գյուղացությունն իր ամբողջությամբ շահագրգռված էր կալվածատերերի ու կալվածատիրական կարգի տապալմամբ, վոր գյուղացական տնտեսությանը զարգանալու հնարավորություն չէր տալիս։

Գյուղացությունը դարավոր ճորտատիրությամբ ընկճված, անգրագետ ու սնահավատ, բոլորովին իրավազուրկ դրության մեջ էր։ Գյուղացության գլխին կանգնած էր լիազոր փոքր ցարը—զեմստվային պետը, այսինքն կալվածատեր-ազնվականների ներկայացուցիչը.— հենց նա յել գյուղացիներին դատում էր ու պատժում։ Սոսկալի յե հիշել, վոր այն ժամանակները գյուղացիների գանակոծությունը սովորական ու ծանոթ յերևույթ էր։ Տերտերը, ստրաժնիկը և տանուտերը զեմստվային պետի ամենամոտիկ օգնականներն էյին։

Սակայն վոչ կալվածատիրական ստրկությունը, վոչ յեկեղեցու քարոզները, վոչ էլ իրավազրկությունը գյուղացությանը հնազանդության մեջ չպահեցին։

Զանազան տեղերում ու առավելապես Ուկրայնայում, սկսեցին գյուղացական հուզմունքներ բռնկվել, վոր 900-ական թվականներին շարունակ ավելի ու ավելի մասսայական բնույթ ստացան։ 1902 թ. հուզմունքն ընդգրկեց Պոլտավայի նահանգը, ուր «սրբվեց», այսինքն ավերվեց, 54 կալված։ Այստեղից շարժումը նետվեց Խարկովի նահանգը, ուր վոչնչացվեց 25 կալված, ապա Վոլինի, Չերնիգովի, Վորոնեժի, Սարատովի և ուրիշ նահանգներ։ Բայց մեծ մասամբ գյուղացությունը խաղաղ էր տրամադրված։ Առաջուց կալվածատերը նախազգուշացվում էր, և գյուղացիները նշանակած օրը սայլերով մոտենում էյին կալվածատերերի ամբարներին, հացահատիկը բարձում ու հանգիստ տանում այն։

Կալվածատերերը զորք էյին կանչում։ Կազակներն ու դրագունները դաժանորեն գանակոծում էյին գյուղացիներին հրապարակով, սրերի տակ առնում և հաճախ գնդակահարում։ Գյուղացիները սրանից հետո յել դեռ շարունակում էյին հավատալ ցարին։ Այսպես ուժեղ էր նրանց հնազանդությունը և անգիտակցությունը։

Գյուղացական շարժումն անկազմակերպ, տարերային էր։ Գյուղը տեսնում էր իր թշնամուն—կալվածատիրոջը, բայց դեռ չէր հասկանում, վոր բանը մենակ կալվածատերը չէ, այլ ամբողջ ցարական-կալվածատիրական կարգը։ Գյուղացիները չգիտեյին ինչպես խլեն հողը կալվածատերերից, ինչպես պահեն իրենց ձեռքում այն։ Իսկ մեր կացությունն այն ժամանակ դեռ քաղաքում թույլ էր, չխոսելով արդեն գյուղի մասին։ Այնուամենայնիվ վորոշ դեպքերում յերևում էր կռվի քաղաքային յեղանակի ազդեցությունը՝ բռնկվում էյին գյուղատնտեսական բատրակների գործադուլներ (օրինակ 1902 թ. Ստավրոպոլի նահանգում և Կուբանի մարզում), յերևան էյին գալիս պրոկլամացիաներ (օրինակ՝ Սարատովի նահանգում), վորոշ տեղերում գյուղացիների մեջ հանդես էյին գալիս բանվորները և այլն։

Յեթե այն ժամանակ գյուղացությունը դեռ աղոտ կերպով էր հասկանում իր շահերը, ապա այդ ապստամբություններով նա գործով ցույց տվեց, վոր հարկավոր ղեկավարության ժամանակ նա կարող կը լիներ մի խոշորագույն ուժի փոխվել կալվածատերի և ցարական կարգի տապալման համար։

ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ

Այժմ մենք գիտենք, վոր բանվոր դասակարգը գիտակցում էր ցարական ինքնակալության տապալման անհրաժեշտությունը։ Գյուղացիների մեծամասնության մեջ այդ գիտակցությունը չկար, բայց իրենց ապստամբություններով նրանք իրապես քանդում էյին ցարական-կալվածատիրական կարգի հիմքերը։ Լավ, իսկ կապիտալիստ-արդյունաբերողնե՞րը։ Նրանք էլ այս գործում շահ ունեյին, բայց իրենց առանձին հատուկ, շահը։

Արդյոք լիովին գոհ էյին ֆաբրիկանտները-գործարանատերերը կալվածատիրական կարգից։ Վոչ, և ահա ինչու։ Նրանց շահն այն էր, վորպեսզի բնակչությունը գներ ինչքան կարելի յե ավելի շատ ապրանքներ, վոր նրանք արտադրում էյին իրենց ֆաբրիկաներում ու գործարաններում։ Այդ քաղաքային ապրանքների գլխավոր սպառողը կարող էր լինել գյուղացությունը։ Իսկ մենք հենց նոր պարզեցինք, վոր կալվածատերերի ճորտատիրական ստրկությունից քայքայվում էր գյուղացությունը։ Նա աղքատանում էր, քայքայվում, այդ պատճառով էլ չէր կարող քաղաքային ապրանքների լավ գնորդ լինել։ Հասկանալի յե, վոր քաղաքի կապիտալիստ-արդյունաբերողները սրանից դժգոհ էյին։ Նրանք գերադասում էյին գյուղացիների շահագործումը, նրանց հաշվին հարստանալն իրենց ձեռքն առնել։

Արդյունաբերության կրիզիսն ավելի ևս ուժեղացնում էր օպոզիցիոն տրամադրությունը շահագործողների այս շերտի մեջ։ Նրանք ուզում էյին որ առաջ քաղաքական իրավունքներ ստանալ, նր-

բանք ուզում էին սահմանափակել ինքնակալությունը,—մի խոսքով արդյունաբերական բուրժուազիան իշխանության էր ձգտում: Բայց բուրժուազիան այդ անում էր անվճռական կերպով, յետև նայելով: Նա ուզում էր վոչ թե հեղափոխություն, այլ միայն ռեֆորմներ, ինքնակալության սահմանափակումը և վոչ թե նրա տապալումը:

Իսկ ինչպես բացատրել այդ: Բանը շատ պարզ էր.—բուրժուազիան շահագրգռված էր ցարական իշխանության, միապետության պահպանումով, վորովհետև նա հազարավոր թելերով կապված էր նրա հետ: Նախ՝ ցարական կառավարությունն արդյունաբերողներին տալիս էր պետական արտոնյալ պատվերներ յերկաթուղիների կառուցման համար (ռելսեր, վագոններ և այլն), ռազմական պատվերներ, դրամական փոխատվություններ և այլն: Բացի այս, ինքնակալությունը վոստիկանությամբ, ժանդարմներով, զորքերով պահպանում էր, ինչպես մենք տեսանք, բուրժուազիայի շահերը բանվոր դասակարգի գրոհից. նա պաշտպանում էր կապիտալիստների շահույթները: Յերկրորդ՝ բուրժուազիան չէր ուզում վճռականորեն հանդես գալ կալվածատիրական հողատիրության դեմ, վորովհետև կալվածատիրական հողերի ահագին մեծամասնությունը գրավ ու կրկնագրավ էր դրված բուրժուազիային պատկանող բանկերում: Հետևաբար նա կալվածատիրական հողատիրության մասնակիցն էր: Յերրորդ՝ նա վախենում էր հեղափոխական պրոլետարիատից: Ասել, թե հարկավոր է կալվածատերերի հողն առնել, այդ նշանակում էր առիթ տալ հեղափոխական պրոլետարիատին խոշոր ֆաբրիկաների ու գործարանների սեփականության վոչնչացման հարցը դնել: Դե, իհարկե, բուրժուազիան այդ չէր ուզում:

Այսպես ուրեմն, քննելով գլխավոր դասակարգերի շահերը հեղափոխությունից առաջ, մենք կարող ենք այսպիսի յեզրակացության անել.—պրոլետարիատը և գյուղացիությունը խիստ շահագրգռված էին ցարական ինքնակալության և կալվածատիրական հողատիրության վոչնչացումով: Նրանց պայքարը 1905 թ. առաջ ըստ էության էլ հանգում էր այն բանին, վորպեսզի դեն շպրտվի ցարական կարգը, բայց այդ պայքարում պրոլետարիատը հանդես էր գալիս ավելի գիտակից ու կազմակերպված, քան գյուղացիությունը: Բուրժուազիան շահագրգռված էր միապետության վորոշ սահմանափակումով, բայց ուզում էր խաղաղ ճանապարհով անել այդ, նա ռեֆորմներ էր ուզում և դեմ էր հեղափոխության:

Հարց. Պատմեցեք, ինչպիսի պատճառներ էին նախապատրաստում առաջին հեղափոխությունը:

2. Բոլշևիզմը յեվ ոպորտյունիզմը 1905 թ. նախորյակին

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

900-ական թվականների սկզբի բանվորական շարժումը, վոր մենք հենց նոր կարճառոտ քննության առանք, շարունակ ավելի ու ավելի յեր մտնում ՌՍԴԲԿ ղեկավարության տակ: Բայց այն ժամանակ մեր կուսակցությունը դեռ թույլ էր: Նա միասնական, կենտրոնացած կուսակցություն չէր: Հաճախ մի խոշոր քաղաքում մի քանի սոցիալ-դեմոկրատական խմբեր կային, իրար հետ ծրագրով, կովի յեղանակների միությամբ չկապված և իրենց ռիսկով ու պատասխանատվությամբ գործող:

Սոցիալ-դեմոկրատական խմբերը ծագել էին դեռ անցյալ հարյուրամյակի 80-ական թվականների վերջին և 90-ական թվականների սկզբին: 1895 թ. Պետերբուրգում Լենինի ղեկավարությամբ խմբերը միացվեցին «Բանվոր դասակարգի ազատագրության կովի միության» մեջ, վորը ղեկավարում էր այն ժամանակի բանվորական շարժումը:

1898 թ. մարտին Մինսկում գումարվեց կուսակցության I համագումարը: Բայց տեղերում կազմակերպությունները դեռ շատ թույլ էին և համագումարը փաստապես կուսակցություն չստեղծեց: Նա ծրագիր չմշակեց, այլ նրա հանձնարարությամբ միայն մանիֆեստ հրատարակեց, վոր հայտարարում էր ՌՍԴԲԿ գոյությունը ու նրա գլխավոր խնդիրները: Կենտրոնական կոմիտեն համագումարից անմիջապես հետո ձերբակալվեց և տեղական խմբերն ու կազմակերպությունները վոչ մի ղեկավարություն չունեյին:

Մինչդեռ բանվորական շարժումը լայնացվում էր, և այն դեպի կովի ճիշտ ճանապարհն ուղղելու համար անհրաժեշտ էր մարտական համախմբված կուսակցություն: Վ. Ի. Լենինը, վոր 1900 թ. վերադարձավ Սիբիրի աքսորից ուրիշ ընկերների հետ միասին, յեռանդուն կերպով սկսեց կուսակցության ստեղծման աշխատանքը: Այն կենտրոնը, վորը կմիացներ խմբերն ու կազմակերպությունները միասնական կուսակցության մեջ, Վ. Ի. Լենինը համարում էր համառուսական սոցիալ-դեմոկրատական թերթը: Նա ակտիվ կերպով աշխատում էր թերթի կազմակերպման վրա, և 1900 թ. վերջին լույս տեսավ «Искра»-ի («Կայծի») առաջին համարը: «Մեր շարժման կենսական խնդիրները» հոդվածում Լենինը գրում էր. «Նպաստել բանվոր դասակարգի քաղաքական զարգացմանը և քաղաքական կազմակերպմանը—մեր գլխավոր ու հիմնական խնդիրն է»: Հետևաբար Վ. Ի. Լենինը «Искра»-ի գլխավոր խնդիրը նրանում էր տեսնում, վորպեսզի նա բարձրացներ բանվորների քաղաքական գիտակցությունը և ոգներ պրոլետարիատին կուսակցություն ստեղծելու: Մենք կարող ենք ուղ-

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека

դակի առել, վոր «Искра»-ն այդ խնդիրը կարողացավ լուծել, նա նախապատրաստեց ՌՍԴԲԿ II համագումարը, նա ստեղծեց կուսակցությունը։

II ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ (ԲՐՅՈՒՍՍԵԼ—ԼՈՆԴՈՆ, 1903 Թ. օգոստոսին)

II Համագումարում պատգամավորներ կային 26 կուսակցական կազմակերպություններից։ Իսկ ինչ արեց II համագումարը։ Նա մշակեց ու ընդունեց կուսակցական ծրագիրը (վոր նախապատրաստել եր «Искра»-ի խմբագրությունը՝ Լենինը, Պլեխանովը և Մարտովը), ընդունեց կուսակցության կանոնադրությունը, ընտրեց կուսակցական կենտրոնական օրգանները, ընդունեց բանաձև դեպի լիբերալները, եսերներն ունենալիք վերաբերմունքի մասին և այլ վորոշումներ։

Համագումարի ընդունած կուսակցական ծրագիրն այն նպատակները և խնդիրներն եյին, վորոնց ձգտում եր կուսակցությունը։

Ծրագիրը հենց սկզբում նշում եր Ռուսաստանի բանվոր դասակարգի ազատագրական կռվի կապը համաշխարհային բանվորական շարժման հետ։ Ապա, նա քննում եր կապիտալիստական հասարակության կառուցվածքը և մատնանշում եր նրա կորստյան անխուսափելիությունը պրոլետարիատի հարվածների տակ։ Ծրագիրը նախատեսնում եր բանվոր դասակարգի կողմից բուրժուազիայի իշխանության տապալման անհրաժեշտությունը, պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը և բուրժուական կարգի փոխարինումը սոցիալիստականով։

Բայց այն ժամանակ Ռուսաստանում դեռ խոսք լինել չեր կարող սոցիալիզմի համար մղվող անմիջական կռվի մասին։ Այն ժամանակ մեզ մոտ կապիտալիզմն ել դեռ այն չափով զարգացած չեր, վորպեսզի կարելի լիներ մտածել այն սոցիալիզմով փոխարինելու մասին։ Արգելքը, վոր կանգնած եր կապիտալիստական կարգի լիակատար զարգացման և բանվոր դասակարգի՝ բուրժուազիայի դեմ մղվող՝ կռվի զարգացման ճանապարհի վրա, ինչպես մենք գիտենք, ցարական ինքնակալությունն եր, կիսաճորտատիրական կարգը։ Այս պատճառով 1903 թ. ծրագիրը խոսում եր ինքնակալության տապալման մասին, իբրև բանվոր դասակարգի մոտակա խնդրի Ռուսաստանում։ Ըստ այդ ծրագրի ինքնակալության տապալումը պետք ե այն արդյունքն ունենար, վոր սահմանադիր ժողով գումարվեր, դեմոկրատական հանրապետություն հաստատվեր, բանվորական որենսդրություն ստեղծվեր (աշխատանքի պաշտպանություն, գիշերվա աշխատանքի արգելումն, 8-ժամյա բանվորական որ և այլն) և վճռվեր գյուղացիական հարցը (յեկեղեցական ու ցարական կալվածների կոնֆիսկացիան, «կտորները» գյուղացիներին վերադարձնելը)։

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր ծրագիրն ուղիղ կերպով (այն

ժամանակի համար) մատնանշում եր բանվոր դասակարգի կռվի նպատակները և զարմանալի չե, վոր նա, ինչպես մենք ասացինք գրքույկի այս մասի սկզբում, կանգնում եր մեր կուսակցության դրոշակի տակ և գնում եր նրա լոզունգների յետևից։

Ծրագրի քննությունը համագումարում մեծ ու լուրջ տարաձայնություններ չառաջացրեց և այն ընդունվեց միաձայն։

ՎԵՃԵՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ § 1 ՄԱՍԻՆ

Ընդհակառակը, համագումարում մեծ վեճեր տեղի ունեցան կուսակցության կանոնադրության հարցի մասին, այն մասին, թե ով կարող ե կուսակցության անդամ լինել և թե ինչպես պետք ե կառուցվի նա։

Կանոնադրության § 1 համագումարի քննության առաջարկվեց յերկու խմբագրությամբ—Մարտովի ու Լենինի։ Մարտովն առաջարկեց այդ պարագրաֆն այսպիսի շարադրանքով. «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության անդամ համարվում ե ամեն վոք, ով ընդունում ե նրա ծրագիրը, պաշտպանում կուսակցությանը նյութական միջոցներով և նրան կանոնավոր կերպով անձնական **աջակցություն** ցույց տալիս նրա կազմակերպություններից մեկի ղեկավարությամբ»։ Լենինն այլ կերպ առաջարկեց. «Կուսակցության անդամ համարվում ե ամեն վոք, ով ընդունում ե նրա ծրագիրը և պաշտպանում կուսակցությանը, ինչպես նյութական միջոցներով, այնպես ել անձնական **մասնակցությամբ** կուսակցական կազմակերպություններից մեկում» (յերկու դեպքում ել ընդգծումը մերն ե)։

Առաջին հայացքից թվում ե, վոր վիճելու բան իսկ չկա՝ յերկու խմբագրությունը միատեսակ են, իսկ զանազանությունը միայն բառերում ե—մեկը խոսում ե «աջակցության» մասին, իսկ մյուսը—«մասնակցության»։ Արդյոք արժե խաթարալա սարքել, արժե վիճել։ Սակայն համագումարի վիճաբանությունները ցույց տվեցին հայացքների մեծ տարբերություն մի խիստ կարևոր հարցի վերաբերյալ, թե ով կարող ե կուսակցության անդամ լինել։

Մարտովը և նրա կողմնակիցները, ապագա մենշևիկները[1]), համարում եյին, վոր կուսակցության անդամ կարող ե լինել ամեն վոք, «ով միայն աջակցում ե» նրան, բայց կարող ե և չլինել տեղական կազմակերպության կամ բջիջի մեջ, ինչպես կասեյինք մենք այժմ։

[1]) «Մենշևիկներ» ու «բոլշևիկներ» մականունը հաստատվեց արդեն համագումարից հետո։ Վորովհետև Լենինի յետևից գնացող պատգամավորների խմբակը կուսակցության կենտրոնական հիմնարկների ընտրության ժամանակ (մեծամասնություն) եր կազմում, ապա Լենինի կողմնակիցներին սկսեցին «բոլշևիկներ» (մեծամասնական) անվանել։ Մարտովականներն այդ ընտրությունների ժամանակ փոքրամասնություն եյին և «մենշևիկ» (փոքրամասնական) կոչումը ստացան։

Մարտովը իր ճառում ասաց, վոր կուսակցության համար շատ ոգտակար է, յեթե «ամեն մի գործադուլավոր» իրեն սոցիալ-դեմոկրատ հայտարարի։ Իսկ Աքսելրոդն ուղղակի հայտարարեց, վոր մենք չենք կարող կուսակցությունից դուրս թողնել այն պրոֆեսորներին և գիմնազիստներին, վորոնք ընդունում են կուսակցության ծրագիրը, նրան այս կամ այն ոգնությունը ցույց տալիս, բայց չեն մտնում նրա կազմակերպություններից վոչ մեկի մեջ։ Այսպիսով մենշևիկները կուսակցության դռները լայն բաց եյին անում բոլոր անկայուն, խիստ դիսցիպլինից վախեցող տարրերի առաջ։ Սրանում էլ յերևան եր գալիս մենշևիկների ոպպորտյունիզմը։

Նրանք կուսակցությունը լուծում եյին վոչ միայն բանվորների այլ պարզապես համակիր ինտելլիգենցիայի անկուսակցական մասսայի մեջ։ Նրանք հավասարության նշան եյին դնում դասակարգի ու կուսակցության միջև։ Նրանք հենց կուսակցության ստեղծման ժամանակ չեյին հասկանում, վոր կուսակցությունը դասակարգի ավանգարդն է, վոր «կուսակցություն» և «դասակարգ» հասկացողությունները խառնելն անթույլատրելի սխալ է, և վոր չի կարելի թուլացնել այդ ավանգարդը, լցնելով նրա շարքերը լոկ համակիրների անհաստատ տարրերով։

Լենինը և համագումարի ամբողջ հեղափոխական հոսանքը պահանջում եյին, վորպեսզի կուսակցության անդամ համարվեր միայն նա, ով պարտադրաբար ակտիվ կերպով մասնակցում է կուսակցությանը, ով յենթարկվում է դիսցիպլինի և պատրաստ է միշտ ծառայել կուսակցությանը։ § 1. լենինյան բանաձևումը նեղացնում եր կուսակցության անդամի հասկացողությունը։ Լենինը և բոլշևիկներն ուզում եյին կուսակցություն ստեղծել հաստատակամ, կայուն անդամներից, իսկ ոպպորտյունիստ-մենշևիկները պատրաստ եյին կուսակցության մեջ քաշել ամեն պատահածի։ Մարտովի կանոնադրությունը կուսակցության դռները լայն բաց եր անում մանր-բուրժուական տարրերի համար և հենց դրանով հեշտացնում եր բուրժուական ու մանր-բուրժուական տրամադրությունների ազդեցությունը կուսակցության վրա։ Բոլշևիկները կուսակցության անդամների քանակի յետևից չեյին ընկնում, նրանք պնդում եյին նախ և առաջ նրանց վորակի՝ հեղափոխական տոկունության, դիսցիպլինի և կուսակցության գործին նվիրված լինելու վրա։ Ահա ինչու բոլշևիկները III համագումարում (1905 թ.) կանոնադրությունն ընդունեցին Լենինի խմբագրությամբ։

Ամեն վոք, ով հետագայում թեկուզ մի քիչ տեսել է մեր կուսակցության կռիվը մենշևիկյան, եսերական ու այլ կազմակերպու-

թյունների հետ, հասկանում է, վոր մենք հակառակորդներին հաղթեցինք գաղափարական ու կազմակերպչական միության, դիսցիպլինի ու կուսակցության անդամների հիմնական կազմի միատեսականության շնորհիվ։

ՎԵՃԵՐ ՑԵՆՏՐԱԼԻԶՄԻ ՄԱՍԻՆ

Այն հարցի հետ, թե ում թույլ տալ կուսակցության մեջ մտնել, կապված եր և մի ուրիշ հարց՝ ինչպես կառուցել կուսակցությունը։ Մենշևիկները, հատկապես II համագումարից հետո, կուսակցության կառուցման հարցում հանդես են գալիս իբրև «թունդ դեմոկրատներ» և հակառակորդներ բոլշևիկյան ցենտրալիզմի[1])։ Ի՞նչ եր նշանակում այդ։ Այդ նշանակում եր, վոր նրանք ուզում եյին տեղական կուսկազմակերպություններին ավելի մեծ ընտրականություն, ինքնուրույնություն, ավելի մեծ ազատություն տալ։ Նրանք ուզում եյին սահմանափակել կենտրոնական կոմիտեյի ղեկավարությունը տեղական կազմակերպությունների վերաբերմամբ։ Հարկավոր է հիշել, վոր նրանք քարոզում եյին իրենց «դեմոկրատիզմը» այնպիսի պայմաններում, յերբ կուսակցությունն անլեգալ դրության մեջ եր, յերբ նա աշխատում եր կոնսպիրատիվ (գաղտնի) կերպով, յերբ բանվոր դասակարգը վոչ մի քաղաքական ազատություն չուներ։ Ցարական-ժանդարմական ճնշման պայմաններում չեր կարելի խոսել կազմակերպությունների իսկական ընտրականության, հաշվետվության և ինքնուրույնության մասին։

Բոլշևիկները յենթադրում եյին, վոր կուսակցությունը պետք է կառուցվի խիստ կենտրոնացման սկզբունքով, այսինքն տեղական կազմակերպությունները պետք է յենթարկվեն ավելի վերադասներին, իսկ վերջինները—կենտրոնական կոմիտեյին ու իրենց աշխատանքում միասնական քաղաքականություն անցկացնեն կենտրոնի անշեղ ղեկավարությամբ (կուսակցության համագումար, կուսակցության կ. կ.)։ Մենշևիկյան «դեմոկրատիզմով» միասնական, համախմբված կուսակցություն չես կառուցի. տեղական կազմակերպություններն աշխատանքը կը վարեն ով ինչպես կարող է։

Կյանքը փայլուն կերպով հաստատեց բոլշևիկյան սկզբունքները.—մեր կուսակցությունը բանվոր դասակարգին հաղթանակի հասցրեց, իսկ մենշևիկները շպրտված են կյանքի յետին անկյունները։

Այժմ, յերբ մեզ մոտ բանվոր դասակարգի իշխանությունն է, յերբ վոստիկանական ճնշում չկա, մենք շարունակում ենք մեր կուսակցության կառուցումը, բայց արդեն իսկական դեմոկրատական

---

[1]) Անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր II համագումարում ցենտրալիզմի մասին այս տարաձայնությունները յերևան յեկան միայն սաղմային ու անորոշ ձևով։ Միայն հետագայում նրանք ճշգրիտ կերպով դրսևորվեցին։

ցենտրալիզմի հիմունքներով, վորի մասին խոսվել ե առաջին գլուխում։

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՕՊՊՈՐՏՅՈՒՆԻԶՄԻՑ ԴԵՊԻ ՏԱՔՏԻԿԱՅԻ ՕՊՊՈՐՏՅՈՒՆԻԶՄ

Բոլշևիկների ու մենշևիկների միջև կազմակերպչական հարցերին վերաբերող այս տարաձայնությունները տաքտիկական [1]) տարաձայնությունների փոխվեցին կուսակցության ներսում։ Այդպիսի տարաձայնությունների սաղմը նշվեց դեռևս հենց համագումարում դեպի լիբերալ բուրժուազիան ունենալիք վերաբերմունքի հարցի առթիվ։

Մենշևիկները համարում եյին, վոր հեղափոխության ղեկավարը բուրժուազիան կը լինի, այս պատճառով ել կուսակցությունը պետք ե ամեն կերպ պաշտպանի լիբերալ բուրժուազիայի ելույթները։ Նրանց բանաձևը խոսում եր բուրժուազիայի հետ համաձայնության գալու անհրաժեշտության մասին։ Մենշևիկները չենթադրում եյին, վոր կապիտալիստներն իրենց պահանջներում բանվոր դասակարգի վերաբերմամբ վորևե թշնամական բան չեն առաջադրի, այս պատճառով ել նրանք առաջարկում եյին նրան՝ միություն բուրժուազիայի հետ։ Համագումարի հեղափոխական թևի բանաձևը (առաջարկված Պլեխանովի կողմից, վոր այն ժամանակ Լենինի հետ եր գնում) չեր ժխտում լիբերալ շարժման պաշտպանության անհրաժեշտությունը, բայց կտրուկ ու աներկմիտ կերպով ընդգծում եր, վոր կուսակցությունը պետք ե պրոլետարիատի առաջ մերկացնի բուրժուազիայի պռատությունը և նրա հակահեղափոխական եյությունը, վոր լիբերալ-կապիտալիստները յերբեք չեն կանգնի սոցիալ-դեմոկրատիայի տեսակետի վրա (համագումարն ընդունեց յերկու բանաձևն ել, վորովհետև թե մեկին ու թե մյուսին ձայն տվին նույն թվով պատգամավորներ)։

Իսկ ի՞նչումն ե այդ բանաձևերի իմաստը։ Նրանում, վոր մենշևիկյան բանաձևում արդեն յերևաց նրանց համաձայնողական բնույթը հենց կուսակցության ստեղծման ժամանակ, ճիշտ ե, դեռ սաղմային ձևով։ Իսկ բոլշևիկյան բանաձևում ճշգրիտ կերպով հայտնաբերվեց պրոլետարական հեղափոխական կուսակցության հետևողականությունը։

Ի՞նչ յեզրակացություն կարող ենք անել մենք || համագումարում կազմակերպչական ու տաքտիկական հարցերին վերաբերող այս տարաձայնություններից։ Մենշևիկները թույլատրելով կուսակցության մեջ (կանոնադրության § 1) պրոլետարիատին խորթ, անհաստատ տարրերին (գիմնազիստներին, պրոֆեսորներին, կուսակցությանը միայն համակրողներին և այլն) և չափազանցելով մեր բուրժուազիայի հեղափոխականությունը, մթագնում եյին բանվորների ու կապիտալիստների միջև յեղած հակասությունների աճումը, ըստ եյության ծառայում եյին (այս այն ժամանակ դեռ այնպես պարզ չեր) բուրժուազիային և վոչ թե բանվոր դասակարգին։ Բոլշևիկները հեղափոխական պրոլետարիատի շահերի արտահայտիչներն եյին, պահանջելով խիստ ընտրանք կուսակցության մեջ ընդունելու ժամանակ և կտրուկ քաղաքականություն լիբերալների պռատության վերաբերմամբ։

Տաքտիկական տարաձայնությունները բոլշևիկների ու մենշևիկների միջև խիստ սրվեցին արդեն 1904 թ. յերկրորդ կեսին՝ դեպի լիբերալ բուրժուազիան ունենալիք վերաբերմունքի հարցի առթիվ։ 1904 թ. աշնանը լիբերալ բուրժուազիայի շարժումը բավական մեծ չափեր ընդունեց։

Ամենուրեք տեղի եյին ունենում լիբերալների ժողովներ, վորոնցում ընդունվում եյին ցարին ուղղված պետիցիաներ (դիմումներ) Ռուսաստանում կարգը վերականգնելու մասին։ Մենշևիկներն առաջ քաշեցին իրենց «զեմստվային կամպանիայի պլանը»։ Նրա եյությունը և ընթացքը, մենշևիկների մտադրությամբ, հանգում եր հետևյալին։

Մենշևիկները համարում եյին, վոր ինքնակալության դեմ մղելիք կռվում պրոլետարիատը չի կարող ղեկավար ուժ լինել։ Այդպիսի ուժ, մենշևիկների կարծիքով, լիբերալ բուրժուազիան եր։ Անհրաժեշտ ե, վոր բանվոր դասակարգը պաշտպանի, քաջալերի բուրժուազիայի շարժումը, այս պատճառով ել նա իր կռվի գլխավոր խնդիրը պետք ե տեսնի բուրժուազիային պաշտպանելու մեջ։ Այս նպատակով բանվորները պետք ե իրենց պատգամավորություններն ուղարկեն լիբերալների ժողովներն և այնտեղ հայտարարեն, թե իրենք համերաշխ են նրանց հետ ու նրանց դրդեն կռվի չելնելու։ Մենշևիկները զեմստվոյականների մոտ գնալու այսպիսի տաքտիկան համարում եյին պրոլետարական կռվի բարձրագույն ձևը։

Լենինն ասում եր, վոր հեղափոխության հեգեմոնը պրոլետարիատը կլինի և կուսակցության գլխավոր խնդիրը բոլորովին նրանում չե, վորպեսզի քաջալերե բուրժուազիային։ Հարկավոր ե ընդլայնել ու ամրացնել իր կուսակցությունը, քարոզել զինված ապստամբության իդեան և փողոցներում, բանտերի, վոստիկանական ու ժան-

1) Տակտիկա—գործելակերպ, գործողության յեղանակներ, վորոնցից օգտվում ե կուսակցությունն իր նպատակներին հասնելու համար։ Տակտիկան փոխվում ե՝ կախված այն խնդիրներից, վոր կանգնած են կուսակցության առաջ և այն պայմաններից, վորոնցում հարկ ե լինում գործել։

դարժական հիմնարկությունների առաջ ցույցեր կազմակերպելով ազդել ոչ թե լիբերալների, այլ կառավարության վրա։

Մենշևիկները II համագումարում դեպի օպորտունիզմ գլորվեցին կազմակերպչական հարցերում, նրանք հեղափոխությունից առաջ դեպի այն գլորվեցին նաև տակտիկական հարցերում և, ինչպես կը տեսնենք հետևյալ գլուխում, նրանց համաձայնողական ձգտումները վառ կերպով դրսևորվեցին հենց 1905 թ. հեղափոխության մեջ։

Հարց. Պատմեցեք, ինչումն եք տեսնում II համագումարի գլխավոր նշանակությունը։

ՆՅՈՒԹԵՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Բանվոր դասակարգի ու գյուղացիության շարժման մասին

Բանվորական շարժումը 900-ական թվականների սկզբին

Նոր հարյուրամյակի առաջին տարիներից իսկ բանվորական շարժումը յերկու նոր քայլ է անում առաջ։ Նախ՝ նա դուրս է գալիս գործարանի պատերից և բանվորական թաղերի ու շենքերի սահմաններից, դուրս է գալիս մեծ քաղաքների փողոցները։ Յերկրորդ՝ նա ընդունում է բաց կռվի բնույթ արդեն ոչ միայն գործարանատերերի ու նրանց ծառաների դեմ, այլև ցարական կառավարության ծառաների դեմ.—գործադուլները սկսում են բարդանալ ցույցերով։

..Հատկապես ազդու էին Մոսկվայի ցույցերը նույն տարվա (1901) փետրվարի 23—26։ Հենց նրանցում էր, որ զգացվում էր առաջին անգամ հեղափոխության շունչը։ Նրանք կազմակերպվեցին ուսանողության կողմից, բայց այն հեղափոխական դարձրին բանվորները, որոնք Մոսկվայում ցույցերին մասնակցում էին տասնյակ հազարներով և յետ մղում կազակների մի ամբողջ շարք «մտրակով» գրոհները։ Առաջին անգամ Մոսկվայի փողոցներում յերևացին բարրիկադներ—1905 թ. դեկտեմբերի հեռավոր նախագուշակները։ Ցույցերը հետո շարունակվեցին Պետերբուրգում (մարտին ու հատկապես մայիսին, յերբ բանը հասավ Օբուխովի գործարանի բանվորների հսկայական տուր ու դմփոցին զորքերի հետ, ընդ որում վեց սպանված և ութ վիրավոր կար բանվորների կողմից, բայց վոստիկանությունն էլ իր բաժինն ստացավ), Թիֆլիսում (ապրիլին), Յեկատերինոսլավում (դեկտեմբերին) և մի շարք ուրիշ քաղաքներում։ Սրանք փոթորկի առաջին պոռթկումներն էին դեռ. հետևյալ 1902 թ. ուշ աշունը վկա յեր մի անցքի, որը ռուսական բանվորական շարժման պատմության

մեջ կարող է համարվել մի այնպիսի դարձակետ, ինչպիսին իր ժամանակ 1885 թ. մորոզովյան գործադուլն էր։ Այդ 1902 թ. նոյեմբերի ռոստովյան գործադուլն էր, որ, ինչպես սովորաբար լինում է, սկսվեց յերկաթուղային արհեստանոցներում և շուտով ընդգրկեց քաղաքի բոլոր խոշոր ձեռնարկությունները։ Բանվորների տրամադրությունն այնպես էր, որ մի ամբողջ շաբաթ իշխանությունը չէր համարձակվում նրանց մոտենալ։ «Ինչ-վոր չտեսնված ու չլսված բան էր տեղի ունենում Ռուսաստանում,—պատմում է մի ժամանակակից տեղեկագիր,—ամենօրյա բազմամարդ միտինգներ բաց յերկնքի տակ, բազմահազար ամբոխ, որ շունչը բռնած լսում էր հանդուգն ճառեր ինքնակալության, չինովնիկական կամայականության ու բռնության, դատարանների աչառության, կապիտալիստական շահագործման մասին,—ամբոխ, որ բարձր աղաղակներով «այո» էր պատասխանում հռետորի այն հարցին՝ թե «արդյոք հարկավո՞ր է մեզ քաղաքական ազատություն»։ Այստեղ էր և ամենաբազմազան հասարակություն, որ ամբողջ Ռոստովից հավաքվել էր չտեսնված տեսարանը դիտելու.—արհեստանոցները թողած բանվորներ, որ յեկել էին «լսեն» ժողովը, քաղքենիներ, առևտրականներ, չինովնիկներ, կանայք -կառքերում նստած լորնետները ձեռքներին։ Այստեղ էր նաև շփոթված իշխանությունը, որ չգիտեր ինչ ձեռնարկեր, վոստիկանությունը և կազակները, որոնք լսում էին սոցիալ-դեմոկրատական հռետորի ճառերը»։ Բիչ-քիչ ուշքի գալով, իշխանությունը հասկացավ, որ արդեն հարկավոր են ոչ թե մտրակներ ու թրեր, այլ գնդակներ.—ամբոխի վրա համազարկ բանալով, կազակները 6 սպանված ու 12 ծանր վիրավոր թողեցին, բայց իսկույն էլ հեռացան, իսկ գնդակահարությունը նույնիսկ վերջ չտվեց միտինգին։ Արդեն 1902 թ. ռուս բանվորը վճռականապես դադարեց հավատարիմ հպատակ լինելուց...

(Մ. Պակրովսկի, Ռուսաց պատմության համառոտ ուրվագիծ, III մաս, առաջին պրակ, եջ 47 -49, ռուսերեն)։

2. Վեճ II համագումարում կանոնադրության առաջին պարագրաֆի մասին

Ամբողջ հարցը հանգում է այն բանին, թե ինչպիսի տարրերը կարող են մտցվել մեր կուսակցության մեջ։ Լենինի նախագծով կուսակցության անդամ կարող է համարվել միայն այն մարդը, որ մտնել է այս կամ այն կազմակերպության մեջ։ Այս նախագծի հակառակորդները պնդում են, որ սրանով ինչ-վոր ավելորդ դժվարություններ են ստեղծվում։ Բայց ինչումն են այդ դժվարությունները։ Խոսվեց այն անձերի մասին, որոնք չեն ցանկանա կամ չեն կարո-

գանա մտնել մեր կազմակերպություններից մեկի մեջ։ Բայց ինչու չեն կարողանա։ Իբրև մի մարդ, որ ինքս մասնակցել եմ ռուսական հեղափոխական կազմակերպություններին, յես կասեմ, որ գոյություն ունեն օբյեկտիվ պայմաններ, որոնք անհաղթահարելի արգելք են հանդիսանում կուսակցության մեջ մտնելու համար։ Իսկ ինչ վերաբերում ե այն պարոններին, որոնք չեն ցանկանա, ապա նրանք մեզ պետք ել չեն։

...Ինչու չեն կարծում, որ յեթե ընդունվեր Լենինի նախագիծը, նա մեր կուսակցության դռները կփակեր բազմաթիվ բանվորների առաջ։ Կուսակցության մեջ մտնել ցանկացող բանվորները չեն վախենա կազմակերպության մեջ մտնել։ Նրանց համար դիսցիպլինը սարսափելի չե։ Նրա մեջ մտնել կը վախենան շատ ինտելիգենտներ... Բայց հենց այդ ել լավ։

(Պլեխանովի ճառից ՌՍԴԲԿ II համագումարում. «Протокол», 1924 թ. հրատկ., եջ 227)։

Մարտովի ձևակերպման կողմնակիցների սխալի արմատը նրա մեջ ե, որ նրանք ոչ միայն գանց են առնում մեր կուսակցական կյանքի հիմնական չարիքներից մեկը, այլև նույնիսկ սրբագործում են այդ չարիքը։ Այդ չարիքը նրա մեջ ե, որ համարյա ընդհանրական քաղաքական անբավականության մթնոլորտում (պայմաններում), աշխատանքի լիակատար ծածուկ լինելու պայմաններում, գործունեության մեծ մասը նեղ, գաղտնի խմբակներում ու նույնիսկ մասնավոր տեսակցություններում կենտրոնացած լինելու պայմաններում մեզ համար ծայր աստիճան դժվար ե, համարյա անկարելի յե, որոշել շաղակրատներին աշխատողներից։ Ու հազիվ թե գտնվի մի ուրիշ յերկիր, ուր այս յերկու կատեգորիայի իրար հետ խառնելն այնպես սովորական լիներ, այնպիսի անթիվ ու անհամար խառնաշփոթություն ու վնաս պատճառեր, ինչպես Ռուսաստանում։ Ոչ միայն ինտելիգենցիայի մեջ, այլև բանվոր դասակարգի միջավայրում մենք դաժանորեն տուժում ենք այդ չարիքից և ընկ. Մարտովի ձևակերպումն օրինականացնում ե այդ չարիքը։ Այդ ձևակերպումն անխուսափելիորեն ձգտում ե բոլորին ու ամեն մեկին կուսակցության անդամ դարձնել. հենց ընկ. Մարտովն ստիպված եր ընդունել այն վերապահությամբ—«յեթե ուզում եք, այո», ասաց նա։ Հենց այդ ե, որ մենք չենք ուզում։ Հենց այս պատճառով ե, որ մենք վճռականորեն առարկում ենք Մարտովի ձևակերպման դեմ։ Ավելի լավ ե, որ տաս աշխատող իրենց կուսակցության անդամ չանվանեն (իսկական աշխատողները չինների յետևից չեն ընկնում), քան մեկ շաղակրատ իրավունք ու հնարավորություն ունենա կուսակցության անդամ լի-

նելու։ Ահա մի սկզբունք, որ ինձ անհերքելի յե թվում և որը հարկադրում ե ինձ կռվել Մարտովի դեմ։ Ինձ առարկում եյին, որ անդամներին մենք ոչ մի իրավունք չենք տալիս և այս պատճառով չարաշահություններ լինել չեն կարող։ Այսպիսի առարկությունը սնանկ ե.—յեթե մեզ մոտ մատնանշված չե, թե ինչպիսի հատուկ իրավունք ե ստանում կուսակցության անդամը, ապա նկատեցեք, որ մեզ մոտ ոչ մի մատնանշում արված չե նաև կուսակցության անդամների իրավունքների սահմանափակման մասին։ Այս առաջին, իսկ յերկրորդ՝ և այս գլխավորն ե, անկախ նույնիսկ իրավունքներից, չի կարելի մոռանալ, որ կուսակցության ամեն մի անդամ պատասխանատու յե կուսակցության համար, և կուսակցությունը պատասխանատու յե ամեն մի անդամի համար։ Իսկ քաղաքական գործունեության մեր պայմաններում, ներկա քաղաքական կազմակերպության սաղմային կացության ժամանակ ուղղակի վտանգավոր և վնասակար կը լիներ կազմակերպության ոչ անդամներին անդամության իրավունք տալ և պատասխանատվություն դնել կուսակցության վրա այնպիսի մարդկանց համար, որոնք կազմակերպության մեջ չեն մտնում (ու չեն մտնում, գուցե, դիտմամբ)։ Ընկ. Մարտովը սարսափեց այն բանից, որ դատարանում կուսակցական կազմակերպության ոչ անդամն իրավունք չի ունենալու, չնայած իր յեռանդուն աշխատանքին, իրեն կուսակցության անդամ անվանել։ Այդ ինձ չի վախեցնում։ Ընդհակառակը լուրջ վնաս կը լիներ, յեթե դատարանում անցանկալի կողմով իրեն ցուցադրեր այն մարդը, որ իրեն կուսակցության անդամ ե անվանում, չպատկանելով կուսակցական կազմակերպություններից ոչ մեկին։ Անկարելի յե հերքել, որ այդպիսի անձնավորությունն աշխատում եր կազմակերպության վերահսկողության ու ղեկավարության տակ, անկարելի յե հենց տերմինի անորոշության շնորհիվ։ Փաստապես—սրանում կասկած լինել չի կարող—«վերահսկողության ու ղեկավարության տակ» բառերը կը հասցնեն այն բանին, որ չի լինի ոչ վերահսկողություն, ոչ ել ղեկավարություն։ Յերբեք Կենտրոնական Կոմիտեն ի վիճակի չի լինի իսկական վերահսկողություն տարածելու բոլոր աշխատողների, բայց կազմակերպության մեջ չմտնողների վրա։ Մեր խնդիրն ե—տալ փաստական վերահսկողությունը Կ. Կ. ձեռքը։ Մեր խնդիրն ե—պահպանել մեր կուսակցության ամրությունը, պահել նրա մաքրությունը։ Մենք պետք ե աշխատենք կուսակցության անդամի կոչումն ու նշանակությունն ավելի, ավելի ու ավելի բարձրացնել, և այս պատճառով յես դեմ եմ Մարտովի ձևակերպումին։

(Վ. Ի. Լենին, Աշխ. ժող. 1-ին հրատ., հ. IV, եջ 277—278, ռուսերեն)։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պարզեցե՛ք, թե արդյոք վորևե մասնակցություն ունեցել և ձեր ձեռնարկությունը կամ շեֆարկյալ գյուղը 900-ական թվականների սկզբի շարժումներին։ Յեթե ձեր մեջ կան այն տարիների անցքերին մասնակցողներ, ապա խնդրեցեք, վոր պատմեն ձեզ նրանց մասին։

2. Համեմատեցե՛ք, թե ամենագլխավոր գծերով ինչ ընդհանուր ու տարբեր բան կա II համագումարի ընդունած ծրագրի և մեր այժմյան ծրագրի մեջ։ Համեմատեցեք նույնպես լենինյան կանոնադրության § 1 խմբագրությունը II համագումարում մեր կուսակցության այժմյան կանոնադրության հետ։

Պարզելով այս, գրեցեք տետրակում համառոտ յեզրակացությունները։

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ պատճառներով կը բացատրեք դուք 900-ական թըվականների բանվորական շարժման զարգացումը, և ի՞նչ բնույթ եր կրում այն։

2. Ինչու՞ ամբողջ գյուղացիությունը դժգոհ եր ինքնակալությունից։

3. Ինչո՞վ կը բացատրեք դուք բուրժուազիայի անվճռականությունը ցարիզմի դեմ մղվող կռվում։

4. Ինչու՞ պրոլետարիատն ամենից ավելի յեր շահագրգռված ցարիզմի տապալումով։

5. Ինչու՞մն եր II համագումարում կուսակցության կանոնադրության առթիվ կուսակցության հեղափոխական-սոցիալ-դեմոկրատական (բոլշևիկներ) և ոպպորտյունիստական (մենշևիկներ) հոսանքների միջև յեղած վեճերի եյությունը։

6. Ինչու՞մն է բոլշևիկների և մենշևիկների տարաձայնության եյությունը դեպի լիբերալ բուրժուազիան ունենալիք վերաբերմունքի հարցում։

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

Բոլշևիզմը յեվ ոպպորտյունիզմը 1905 թ. հեղափոխության մեջ

ԻՆՉԻ ՄԱՍԻՆ Ե ԶՐՈՒՅՑԸ Իններորդ զրույցում մենք քննեցինք 1905 թ. հեղափոխության նախադրյալները։ Մենք պարզեցինք, վոր իբրև հեղափոխության ակտիվ ուժ միայն պրոլետարիատը հանդես յեկավ, պաշտպանություն գտնելով գյուղացիությունից, իսկ բուրժուազիան վախենում եր հեղափոխությունից։ Մենք տեսանք նույնպես, վոր դեռ II համագումարում կազմակերպչական ու տակտիկական հարցերի վերաբերմամբ տարաձայնություններ նշվեցին կուսակցության հեղափոխական թևի ու ոպպորտյունիստականի միջև։ Այս զրույցում մենք կքննենք՝ 1) ինչպես եր կատարվում 1905 թ. հեղափոխությունը. 2) ցույց կը տանք, վոր բոլշևիկները ճիշտ գնահատեցին բուրժուազիայի հակահեղափոխականությունը և պրոլետարիատի ղեկավար դերը հեղափոխության մեջ. 3) վոր բոլշևիկները ճիշտ նշեցին հեղափոխության ուղին քաղաքի ու գյուղի ընդհանուր գործադուլի և զինված ապստամբության միջոցով դեպի պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրան։

1. Ինչպես եյին բոլշևիկները, մենշևիկները յեվ տրոցկիստները վորոշում առաջին հեղափոխության բնույթը

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ Նախընթաց զրույցում մենք արդեն պատմեցինք, վոր Ռուսաստանում հեղափոխական շարժումն ըսկսվեց բանվորների (ցույցեր, գործադուլներ և հատկապես Ռոստովի անցքերը 1902 թ.) և գյուղացիների մեջ (Պոլտավայի, Խարկովի և ուրիշ նահանգների հուզմունքները)։ Նույնիսկ բուրժուազիան սկսեց թոթովել «ազատությունների» մասին, իր անբավականության մասին ցարական կարգերից։

1903 թ. գործադուլային շարժումն ընդգրկեց Ռուսաստանի ամբողջ արդյունաբերական հարավը և Կովկասը։ 200,000 մասնակցող

ունենալով, այս գործադուլն արդեն իսկական հեղափոխության նախագուշակն եր։ Այդ կռվում բանվորների տնտեսական պահանջները սերտորեն հյուսվում եյին քաղաքականների հետ։ Նույնիսկ մի անգամ մի քաղաքական դատավարության ժամանակ մի վոստիկան ասաց, վոր «կորչի ինքնակալությունը» լոզունը բանվորների մեջ հասարակ ու սովորական ասացվածք է դարձել։

1904 թ. Յապոնիայի դեմ սկսած պատերազմը վոչ միայն բանվորների ուշադրությունը չհեռացրեց հեղափոխական կռվից, այլ, ընդհակառակը, ել ավելի սրեց հակասությունները դասակարգերի միջև, ցույց տվեց բոլորին ցարիզմի անընդունակությունը յերկիրը կառավարելու գործում։

Հատկապես վառ անցքեր տեղի ունեցան 1904 թ. դեկտեմբերին Բաքվում։ Նավթային ձեռնարկությունների բանվորները մի շարք քաղաքական պահանջներ առաջադրեցին.—մայիսի 1-ի տոնակատարություն, մամուլի, միությունների ազատություն, հիմնադիր ժողովի գումարում և այլն։ Նավթարդյունաբերողներն արձակման սպառնալիքով առաջարկեցին բանվորներին աշխատանքի անցնել։ Կազակները մի քանի համազարկ բացին։ Մյուս որը «հանդուցյալների» վրա մոմեր վառվեցին, ինչպես ասում եյին բանվորները.—վառվեցին Բաքվի նավթային վիշկաները։

Բայց ել ավելի մեծ թափի հասան անցքերը 1905 թ. սկզբին։ 1904 թ. դեկտեմբերի վերջին ի պատասխան Պուտիլովի գործարանի (Լենինգրադ) 4 բանվորի արձակման գործադուլ արեց 12 հազար բանվոր։ Պուտիլովցիներն ոգնության համար դիմեցին ուրիշ գործարանների, և շարժումը լայն ալիքով, բառացի կերպով մի քանի որվա մեջ (հունվարի 4—6 հին տոմարով), ընդգրկեց Պետերբուրգի խոշորագույն ձեռնարկությունները, ուր բանվորների թիվը հասնում եր մինչև 200,000։

Սոցիալ-դեմոկրատիան թույլ եր, և շարժման գլուխ եր անցել տերտեր ու պահնորդային (охранник) Գապոնը — «Ռուսական ֆաբրիկա-գործարանային բանվորների ժողովի» կազմակերպիչը։

Գապոնը բանվորների մեջ միտք առաջ բերեց՝ գնալ ցարի մոտ պետիցիայով (խնդրագրով)։ Ինչպես հայտնի յե, հազարավոր բանվորներ կանանցով ու յերեխաներով, սրբերի ու ցարի նկարներով, կրոնական յերգասացությամբ ու ցարական հիմնով (որհներգով) հունվարի 9-ի կիրակի որը (հունվարի 22-ին նոր տոմարով) շարժվեցին դեպի Ձմեռային պալատը։ Յերթը յեկեղեցական թափորի բնույթ եր կրում։

Ցարը նույնիսկ չընդունեց բանվորներին, ցարը հրամայեց

գնդակահարել խաղաղ ամբոխը։ Կապարի կարկուտ, մտրակներ ու թրեր—այս եր թագավորի պատասխանը բանվորներին։

Այս «արյունոտ կիրակին» դարձակետ եր մեր հեղափոխական շարժման պատմության մեջ։ Այդ որն ցարն ինքը սպանեց բանվորների հավատը դեպի ինքնակալությունը, բացեց բանվոր մասսայի աչքերն այդ ինքնակալության իսկական բնույթի հանդեպ։

— Չկա՛ ցար, կորչի՛ ցարը,—ահա ինչ եր աղաղակում վրեժով ալեկոծված ամբոխը, վոր դեռ մի ժամ դրանից առաջ խաղաղ եր տրամադրված։

Վոր բանվորները պետիցիայով ցարի մոտ գնացին, ապացուցեց, վոր բանվոր դասակարգն իր մեջ դեռ շատ անգիտակից տարրեր ուներ։ Անզեն ամբոխի գնդակահարությունը պայծառացրեց բանվոր դասակարգի գիտակցությունը։ Այդ որը Ռուսաստանի պրոլետարիատը հասունացավ հեղափոխության համար, իբրև նրա առաջավոր ուժ։ Ինքնակալության զինված տապալում— ահա այն յեզրակացությունը, վոր նա արեց հունվարի 9-ից հետո։

III ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՅԵՎ ՄԵՆՇԵՎԻԿՅԱՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՆ

Այդ ժամանակ բանվորական կուսակցության մեջ ներքին պայքար եր տեղի ունենում, կոփվում եր հեղափոխության ապագա ավանգարդը։

Արդեն II համագումարից հետո, ուր մեծամասնությունը հեղափոխական հոսանքի կողմն եր, մենշևիկները կռիվ սկսեցին համագումարի վճիռների դեմ։ Պլեխանովը, վոր համագումարում հանդես եր գալիս իբրև Լենինի կողմնակից, մենշևիկների կողմն անցավ, և նրանց հաջողվեց, հակառակ համագումարի կամքի, կուսակցական կենտրոնական հիմնարկությունների կազմում մեծամասնություն դառնալ։ "Искра„ («Կայծ»,) թերթը № 52 մենշևիկյան որգան դարձավ և 1905 թ. հունվարից բոլշևիկները սկսեցին իրենց «Вперед» («Հառաջ») թերթը հրատարակել։ Բոլշևիկները վճռական պայքար եյին մղում տեղական կազմակերպությունների մեջ III համագումար հրավիրելու համար, վորը միայն կարող եր լուծել կուսակցության ներսում ստեղծված անորմալությունները։ Մենշևիկները յերկար դիմադրում եյին սրան, բայց վերջապես նրանց Կ. Կ. ստիպված եր համաձայնել կուսհամագումար հրավիրելուն։

Յերբ մենշևիկները տեսան, վոր համագումար յեկած պատգամավորների մեծամասնությունը բոլշևիկների կողմն է, նրանք Ժընևում (Շվեյցարիա) կազմակերպեցին իրենց առանձին «կուսակցական աշխատողների առաջին ընդհանուր ռուսական կոնֆերենցիան», ինչպես մենշևիկներն անվանեցին այն։ III համագումարի և կոնֆերենցիայի աշխատանքները տեղի եյին ունենում այն ժամանակ, յերբ հեղափո-

խությունն սկսվել եր։ Նրանց վճիռները ցույց տվեցին, վոր Ռուսաստանում արդեն չկա մեկ կուսակցություն յերկու հոսանքով, այլ ըստ էության կազմակերպվում են յերկու կուսակցություն՝ մեկը—հեղափոխական, մյուսը—համաձայնողական։

ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԻՉ ՈՒԺԵՐԻ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՔՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին հեղափոխության մեջ ինքնակալության դեմ մղվող հասարակական կռվի ասպարեզում, ինչպես գիտենք, կանգնած եյին յերեք ուժ՝ պրոլետարիատը, գյուղացիությունը և լիբերալ բուրժուազիան։

Պրոլետարիատի շարժումն այն տարիներում, վորոնք նախորդեցին հեղափոխությանը և հունվարի 9-ի անցքերին, արդեն ցույց տվեց, վոր վճռական ուժը հեղափոխության մեջ պրոլետարիատը կը լինի։ Իսկ մենշևիկներն այս հաշվի չեյին առնում և յելնելով հեղափոխության, իբրև զուտ բուրժուական հեղափոխության, գնահատությունից՝ պրոլետարիատին յերկրորդ տեղն եյին հատկացնում։ Նրանք ցարիզմի դեմ կանգնած գլխավոր ուժը տեսնում եյին հանձինս լիբերալ բուրժուազիայի, վորը և, նրանց կարծիքով, պետք է առաջնակարգ դերը խաղար։

Մենշևիկները համարում եյին, վոր պրոլետարիատը փոշիացած է, անկազմակերպ, և այս պատճառով նրա խնդիրը պետք է կայանա միայն բուրժուազիայի պաշտպանության, նրա քաջալերման մեջ։ Այսպիսով նրանք ստորացնում եյին բանվոր դասակարգի դերն ու նշանակությունը, ծավալվող կռվում նրան ինչ-վոր յետին անկյուն զցում։

Մենշևիկները չեյին տեսնում, վոր բուրժուազիան վախենում է մինչև վերջ հասցրած բուրժուական հեղափոխությունից։ Մենշևիկները չեյին տեսնում բուրժուազիայի աղվեսի պոչը, վոր միաժամանակ խաղ եր անում և՛ պրոլետարիատի, և՛ ցարիզմի հետ, նրանք նրա—վախկոտ ռուսական բուրժուազիայի—վզին եյին կապում հեղափոխության ղեկավարի, հեգեմոնի դերը։

Օպպորտունիստները չեյին հասկանում, վոր գյուղացիությունն իր իրավազուրկ տնտեսական ու քաղաքական դրությամբ ամենավիթխարի հեղափոխական ուժն է դառնում։ Նույնիսկ չեր կարելի համեմատել գյուղացիության հեղափոխականությունը բուրժուազիայի շարժման հետ, վոր փաստորեն հեղափոխության դեմ եր։ Ամբողջ գյուղացիությունն ագահորեն ձգտում եր կալվածատիրական հողին։ Իհարկե գյուղական բնակչության տարբեր միջաշերտերը (գյուղատնտեսական բանվորները, չքավորները, միջակները, ունևորներն ու կուլակները) տարբեր ձևով եյին մտենում հեղափոխությանը և նրանից

ստանալիք շահերը տարբեր ձևով եյին պատկերանում այդ շերտերին։ Բայց կարևորն այն եր, վոր այնպիսի մի վիթխարի ուժ, ինչպիսին բազմամիլիոն գյուղացիությունն է, ինքնակալության դեմ վճռական կռվի մղելու կողմն եր, մինչև նրա տապալումը[1]։

Կալվածատիրական հողը գրավելով գյուղացիությունը դեռ չի դառնա նույնպիսի սոցիալիստական (այսինքն սոցիալիզմի ձգտող), ինչպիսին է բանվոր դասակարգը։ Բոլշևիկները հիանալի հասկանում եյին այդ։ Բայց չե վոր այն ժամանակ հեղափոխությունն իրեն չեր առաջադրում սոցիալիստական կարգի կազմակերպության խնդիրը, այլ ճորտատիրական մնացորդն արմատով դուրս քաշելու, ցարական ինքնակալությունը վոչնչացնելու խնդիրը։ Յեվ այդ հեղափոխության մեջ գյուղացիությունը վճռական ուժերից մեկն եր։

Այսպիսով մենշևիկները թերագնահատում եյին գյուղացիության հեղափոխականությունը և գերագնահատում բուրժուազիայի հեղափոխականությունը։

Իսկ բոլշևիկները համարում եյին, վոր պրոլետարիատը—բուրժուական-գյուղացական հեղափոխության հեգեմոնն է։ Նա տանում է իր յետևից ամբողջ գյուղացիությունն ինքնակալության և հակահեղափոխական բուրժուազիայի դեմ։ Համագումարի բոլշևիկյան բանաձևն ուղղակի ասում է. «պրոլետարիատն իր դրությամբ ամենաառաջավոր ու միակ հետևողական-հեղափոխական դասակարգը լինելով, հենց դրանով կոչված է ղեկավար դեր խաղալու Ռուսաստանի ընդհանուր դեմոկրատական հեղափոխության շարժման մեջ։

Տարբեր ձևով գնահատելով հեղափոխության ուղին ու նրա շարժիչ ուժերը, բոլշևիկներն ու օպպորտունիստները տարբեր խնդիրներ եյին դնում կուսակցության առաջ և տարբեր ձևով եյին վորոշում նրա տաքտիկան։

Բոլշևիկներն իրենց կուսակցության առաջ խնդիր եյին դնում հավաքել, իմի համախմբել պրոլետարիատին, կապել նրան գյուղացիության հետ և տանել նրան ընդհանուր գործադուլի և զինված ապստամբության միջոցով դեպի ինքնակալության տապալումը և ժամանակավոր հեղափոխական կառավարության հաստատումը։

Այս պատճառով համագումարը վճռեց պաշտպանություն ցույց

1) Պետք է նկատի ունենալ, վոր կուսակցությունն առաջադրելով բոլոր գյուղացիության հետ կալվածատիրական կարգի դեմ լոզունգը, միևնույն ժամանակ միշտ իրեն առաջադրում եր բատրակության ինքնուրույն կազմակերպության խնդիրը։

տալ լիբերալ բուրժուազիային, յերբ նա հեղափոխականորեն հանդես կը գա, բայց պրոլետարիատի առաջ մերկացնել, նրան պարզաբանել լիբերալների ամբողջ կիսատությունը և կռվել վերջիններիս ամեն մի փորձի դեմ տիրելու բանվորական շարժումը կամ թեկուզ հանդես գալու նրա անունից։ Մենշևիկները համարելով բուրժուազիային հեղափոխության գլխավոր ուժը, կուսակցության խնդիրը տեսնում եյին այն բանում, վոր պրոլետարիատին կազմակերպեն բուրժուազիայի վրա միայն ճնշում գործադրելու, նրան «քաջալերելու» համար, և վոչ թե նրա ինքնուրույն դերի համար։

Գյուղացության վերաբերմամբ III համագումարը հաշվի առավ, վոր կուսակցության ծրագիրն արդեն յետ ե մնացել կյանքից։ Գյուղացությունը չի բավականանա «կտորները» իրեն վերադարձնելով, այս պատճառով ել համագումարի բանաձևը պահանջում ե բոլոր կալվածատիրական, վանքական, կայսերական տան ու կաբինետային (ցարական) հողի կոնֆիսկացիա (բռնի գրավում), գյուղացական հեղափոխական կոմիտեների կազմակերպումը բոլոր հեղափոխական վերակազմությունները գյուղում անցկացնելու համար։

Գյուղացության հարցի վերաբերող վճիռներում տարբերությունը բոլշևիկների ու մենշևիկների միջև շատ մեծ եր։ Բոլշևիկներն աշխատում եյին կազմակերպել գյուղացական շարժման պրոլետարական ղեկավարությունը հօգուտ հեղափոխության զարգացման և առաջարկում եյին կալվածատիրական հողի գրավման հեղափոխական ուղին։ Իսկ մենշևիկները չեյին տեսնում գյուղացության հեղափոխական, չնայած և տարերային, հզորությունը, վոր հսկայական նշանակություն ունի հեղափոխության ընթացքում։ Նրանք վորոշեցին, վոր կուսակցությունը պետք ե պահանջի հիմնադիր ժողովից գյուղացական կոմիտեներ ստեղծել հողաբաժանության համար, իսկ մինչև այն ժամանակ գյուղացությունը չպետք ե կոմիտեներ կազմակերպի։ Սրանում յերևաց մենշևիկների յերկչոտությունը, վախը գյուղացական շարժումից։

ԶԻՆՎԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մենք արդեն տեսել ենք, վոր բոլշևիկները նշեցին հեղափոխության ճիշտ ուղին՝ ընդհանուր գործադուլ և զինված ապստամբություն։ Բոլշևիկները գիտեյին, վոր լիբերալ բուրժուազիան անվճռական ե, վոր ցարիզմը կատաղի կերպով կը դիմադրի։ Հեղափոխական ժողովրդի համար հաղթելու միակ հնարավորությունը նրանք համարում եյին ինքնակալ իշխանության զինված տապալումը։ Նրանք տեսնում եյին, վոր հեղափոխությունն անխուսափելիորեն կը գնա այդ ճանապարհով. հեղափոխությունն արդեն սկսվեց, հեղա-

փոխական շարժումն «արդեն հասցրեց զինված ապստամբության անհրաժեշտությունը» (համագումարի բանաձևից), և «արյունոտ կիրակի» դասը տեսած մասսաներն անցքերի մղումով զենքի կը դիմեն։ Այս պատճառով III համագումարը վճռեց, վոր գործի եյությունը նրանում չե, վորպեսզի պրոլետարիատին պ ա ր զ ե ն ք զինված ապստամբության քաղաքական անհրաժեշտությունը։ Գլխավոր խնդիրն ե՝ գործնականորեն նախապատրաստել և կազմակերպել այն։ Այս նշանակում եր, վոր կուսկազմակերպությունները պետք ե անհապաղ զբաղվեյին տեղերում մարտական խմբեր կազմելով, ապստամբության պլանը պարզելով, զորքերի մեջ ագիտացիա անելով, զենք պատրաստելով և այլն։

Մենշևիկներն իրենց կոնֆերենցիայում նույնպես բանաձև ընդունեցին ապստամբության մասին։ Նրանք չեյին կարող բոլորովին ազատվել այդ հարցից, վորովհետև նա ամբողջ հասակով կանգնած եր բանվոր մասսայի առաջ։ Բայց մենշևիկյան բանաձևում պարզորեն յերևաց նրանց անվճռականությունը, նրանց ոպորտյունիստական եյությունը։ Նրանք կուսակցության առաջ ո ր ա կ ա ր գ ի մ ե ջ չ ե յ ի ն դ ն ո ւ մ զ ի ն վ ա ծ ա պ ս տ ա մ բ ո ւ թ յ ա ն գ ո ր ծ ն ա կ ա ն ն ա խ ա պ ա տ ր ա ս տ ո ւ թ յ ո ւ ն ը։ Մենշևիկները սահմանափակվում եյին այն բանով, վոր առաջարկում եյին սոցիալ-դեմոկրատներին ագիտացիա մղել ապստամբության համար, առաջուց ընդունելով նրա միաժամանակ ու ամենուրեք իրագործման անկարելությունը։ Իսկ հեղափոխական կռվի ամենատաք պահուն այսպիսի դիրքն իրոք նշանակում եր զինված ապստամբության անհրաժեշտության ժխտումը։

Բոլշևիկները համարում եյին, վոր ընդհանուր գործադուլի ու զինված ապստամբության հետևանքով հաղթական հեղափոխությունն առաջ կը քաշի ժամանակավոր հեղափոխական կառավարություն, վորի մեջ թույլատրելի յե ՌՍԴԲԿ ներկայացուցիչների մասնակցությունը։

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑՈՒԹՅԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱ

Բոլշևիկներն ասում եյին, վոր ինքնակալության վրա վճռական հաղթանակ տանելու մեջ շահագրգռված ե միայն ժողովուրդը, այսինքն պրոլետարիատը և առաջին հերթին գյուղացությունը։ Բայց ինչպես եյին հասկանում բոլշևիկները հեղափոխության վճռական հաղթանակը ցարիզմի վրա։ Նրանք համարում եյին, վոր այդպիսի հաղթանակ հանդիսանում ե պ ր ո լ ե տ ա ր ի ա տ ի ո ւ գ յ ո ւ ղ ա ց ո ւ թ յ ա ն հ ե ղ ա փ ո խ ա կ ա ն-դ ե մ ո կ ր ա տ ա կ ա ն դ ի կ տ ա տ ո ւ ր ա յ ի հ ա ս տ ա տ ո ւ մ ը։ Հեղափոխության հաղթանակի դեպքում այդ դիկտատուրան պետք ե իրականացներ ժ ա մ ա ն ա կ ա վ ո ր հ ե ղ ա փ ո խ ա կ ա ն կ ա ռ ա վ ա ր ո ւ թ յ ո ւ ն ը։

Այդպիսի կառավարությունը պետք է դիկտատուրա լինի, նա պետք է հենվի ժողովրդի զինված զորության վրա, վորովհետև ինքնակալության ջարդված, բայց չոչնչացրած ուժերը կատաղի կերպով կը ձգտեն վերադարձնելու հինը։ Հասկանալի յե, վոր Լենինն ու բոլշևիկները պարզաբանում եյին, վոր այդ կը լինի վոչ սոցիալիստական, այլ պրոլետարիատի ու գյուղացության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա։

Մենշևիկները հեղափոխությունը զուտ բուրժուական համարելով և բուրժուազիայի մեջ տեսնելով հեղափոխության կենդանի ուժը, հրաժարվում եյին. ժամանակավոր հեղափոխական կառավարության մեջ մտնելուց։ Նրանք ուղղակի վախենում եյին այն բանից, վոր հեղափոխությունն իշխանությունը սոցիալ-դեմոկրատական կուսակցության վզին կը փաթաթի։ Այս հարցին վերաբերող իրենց բանաձևում նրանք գրում եյին, «սոցիալ-դեմոկրատները **չպետք է իրենց նպատակ դնեն գրավելու կամ կիսելու իշխանությունը ժամանակավոր կառավարության մեջ**, այլ պետք է մնան ծայրահեղ հեղափոխական ոպպոզիցիայի կուսակցություն»։

Այսպիսով մենշևիկները պրոլետարիատին առաջարկում եյին, վոր ինքը յետ քաշվի հեղափոխական նվաճումներն ամրապնդելուց։ Նրանք մերժում եյին նրա ղեկավար դերը հեղափոխության մեջ, նրանք ստորացնում եյին բանվոր դասակարգի հեղափոխականությունը։

Համագումարի ու կոնֆերենցիայի այս և ուրիշ բոլոր տարաձայնություններն ակնառու ցույց եյին տալիս, վոր ՌՍԴԲԿ արդեն միասնական կուսակցություն չի հանդիսանում։ Այն ժամանակ, յերբ բոլշևիզմը դառնում եր հեղափոխական պրոլետարիատի զենքը, մենշևիզմը գլորվում եր դեպի ոպպորտյունիզմ և դառնում եր պրոլետարիատի մանր բուրժուական շերտերի և քաղաքային մանր բուրժուազիայի հայացքների արտահայտիչ։

Բոլշևիզմը բարձրացնում եր պրոլետարիատին մինչև հեղափոխության ղեկավարի դերը, մենշևիզմը իբրև հեղափոխության հեգեմոն առաջ եր քաշում բուրժուազիային։ Բոլշևիզմը գյուղացությունը դաշնակից եր համարում, իսկ մենշևիզմը նրան համարում եր վոչ-հեղափոխական ուժ։ Բոլշևիզմը հեղափոխական տակտիկայի կողմն եր, մենշևիզմը իրոք տանում եր դեպի համաձայնողականություն բուրժուազիայի հետ։

ԸՆԿ. ՏՐՈՑԿՈՒ ԴԻՐՔԸ Հեղափոխության բնույթի և նրա շարժիչ ուժերի գնահատության մեջ հատուկ դիրք եր բռնել ընկ. Տրոցկին։

Նա համարում եր, վոր այն ժամանակի Ռուսաստանը կանգնած եր սոցիալիստական հեղափոխության առաջ։ Այս պատճառով նա առաջ

քաշեց «առանց ցարի, բայց կառավարությունը բանվորական» լոզունգը, այսինքն նա հեղափոխությունը համարում եր սոցիալիստական, նա 1905 թ. կոչ եր անում դեպի պրոլետարիատի դիկտատուրա։

Ընկ. Տրոցկու հայացքները սխալ եյին։ Նա սխալ եր գնահատում հեղափոխության ուժերը։ Ընկ. Տրոցկին համարում եր, վոր բուրժուազիան անընդունակ է հեղափոխական կռիվ մղելու ինքնակալության դեմ, իսկ պրոլետարիատը — հեղափոխության գլխավոր զսպանակն է։ Այս կողմից ընկեր Տրոցկին իրավացի յեր, և այս մոտեցնում եր նրա հայացքները բոլշևիկյանին և ընդհակառակը, անջատում եր նրան մենշևիկներից։ Բայց ընկ. Տրոցկին ժխտում եր գյուղացությունն, իբրև հեղափոխական ուժ, և այս նրան մոտեցնում եր ոպպորտյունիստներին և հեռացնում հեղափոխական սոցիալ-դեմոկրատներից։ Դեռ ավելին, ընկեր Տրոցկին համարում եր, վոր հեղափոխության հաղթանակի դեպքում գյուղացությունն անխուսափելիորեն հանդես կը գա պրոլետարիատի դեմ, վորովհետև գյուղացության շահերը չափազանց տարբեր են բանվոր դասակարգի շահերից։ Այն ժամանակ յերբ Լենինն ու բոլշևիկներն ընդհանրապես կոչ եյին անում պրոլետարիատի ու գյուղացության միության, ընկ. Տրոցկին մատնանշում եր կռվի անխուսափելիությունն այդ դասակարգերի միջև։

Բայց այս ել բոլորը չե։ Ընկեր Տրոցկին հեղափոխությանը կործանում եր գուշակում, յեթե պրոլետարիատը «պետական պաշտպանություն» չստանա Արևմուտքի բանվոր դասակարգից, այսինքն նա համարում եր, վոր առանց հեղափոխության բռնկման Յեվրոպայում և պրոլետարիատի իշխանության հաստատման Արևմուտքում, մեր հեղափոխությունը կը կործանվի։ Այդ նշանակում եր, վոր ընկ. Տրոցկին չեր հավատում հեղափոխության ներքին ուժերին ու ամենից առաջ Ռուսաստանի պրոլետարիատի ուժերին, հեղափոխությունը ղեկավարելու նրա ընդունակությանը։ Այս նույնպես մոտեցնում եր նրան մենշևիկներին։ Մի կողմից՝ ընկ. Տրոցկին իր հայացքներով հարում եր բոլշևիկներին, իսկ մյուս կողմից՝ մենշևիկներին, սրանում յերևան եր գալիս նրա դիրքի հակասականությունը։

Ընկ. Տրոցկու թեորեայի սխալն իր ամբողջությամբ այն եր (նա այն անվանում եր պերմանենտ հեղափոխության, այսինքն անընդհատ հեղափոխության թեորիա), վոր նա սխալ կերպով համարում եր, թե իբր 1905 թ. Ռուսաստանը սոցիալիստական հեղափոխության առաջ եր կանգնած։

Թերագնահատելով գյուղացության հեղափոխականությունը, այդպիսով ընկ. Տրոցկին միանգամից կոչ եր անում պրոլետարիատին դեպի սոցիալիստական հեղափոխություն, «ցատկելով» բուրժուական-դեմո-

կրատական հեղաշրջման անխուսափելի աստիճանի վրայից: Կյանքը բոլորին համոզեց, որ ընկ. Տրոցկին սխալվում էր: Նույնիսկ 1917 թ. մեզ միանգամից չտարավ դեպի սոցիալիստական հեղափոխություն և փետրվարից մինչև հոկտեմբեր ընկած ամբողջ շրջանն անցողական շրջան էր՝ բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունից դեպի սոցիալիստականը: Առանց այդ աստիճանի մենք չէինք կարողանա պրոլետարական դիկտատուրայի ուղին մտնել ու գնալ դեպի սոցիալիզմ:

Հարց. Ինչո՞ւ ենք օպպորտյունիստական անվանում մենշևիկների հայացքները հեղափոխության մասին:

2. 1905 թ. հեղափոխության զարգացման հիմնական մոմենտները

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՀՈՒՆՎԱՐԻ 9-ից ՀԵՏՈ և ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

Հեղափոխության ընթացքն ամբողջովին հաստատեց հեղափոխության շարժիչ ուժերի բոլշևիկյան գնահատությունը:

Ի պատասխան հունվարի 9-ի ցարական գնդակահարության ամբողջ Ռուսաստանում բարձրացավ գործադուլների ու ցույցերի ալիքը: Մինչև 600 հազար բանվոր բողոքում էին Նիկոլայ Արյունոտի հանդգնության դեմ:

Քաղաքական պահանջների կողքին ցուցադրվում էին տնտեսականները:

Շարժումը հունվարյան գործադուլների վրա կանգ չառավ: Գարնանից բարձրանում է գործադուլների ու ցույցերի նոր ալիք: Այդ շարժումներում սոցիալ-դեմոկրատիան արդեն հանդես է գալիս իբրև մասսաների ղեկավար: Հեղափոխական ճակատամարտում սկսում են կազմակերպվել արհմիությունները:

Քաղաքում սկսված հեղափոխության և ֆրոնտում սկսված անհաջողությունների ազդեցության տակ սկսվում է գյուղացիական հուզմունքների ու բանակի յելույթների շարանը: Արդեն փետրվարին Օրլովի ու Կուրսկի նահանգներում բարձրանում է գյուղացիական յելույթների ալիքը, որ շուտով տարածվում է Չերնիգովի և ուրիշ նահանգներում:

Գյուղացիները կալվածատերերի ամբարներից գրավում են հացահատիկը, անասունները, իսկ երբեմն վոչնչացնում են նրանց կալվածները: Հունիսին Խերսոնի, Կիևի, Տվերի, Սամարայի և շատ ուրիշ նահանգների մի ամբողջ շարք գավառներում գյուղացիներն այրում էին կալվածատերերի ապարանքները, գրավում անտառը և կալվածատիրական հողերը: «Քաղաքային բանվորական շարժումը նոր դաշնակից է

ձեռք բերում հանձինս հեղափոխական գյուղացիության»,—գրում էր այն ժամանակ Վ. Ի Լենինը:

Հեղափոխության կողմն էր սկսում անցնել մասամբ և բանակը, վորը իր մեծ մասով կազմված էր գյուղացիներից: Հունիսի 15-ին Սև ծովում «Պոտյոմկին» զրահակրի վրա ապստամբություն բռնկվեց, վորը պաշտպանվեց Օդեսսայի ընդհանուր քաղաքական գործադուլով: Զինվորական իշխանություններն անզոր էին վորևե բան անել ապստամբների դեմ: Լիբավայում և Կրոնշտատում նավաստիներն ապստամբում են, հարձակվում սպաների վրա և այլն:

Պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական շարժման ճնշման տակ սկսում են ուժեղանալ ձախ տրամադրությունները լիբերալ բուրժուազիայի (զեմստվային գործիչների, քաղաքային գործիչների և այլն) մեջ:

Մայիսին Մոսկվայում տեղի յե ունենում զեմստվային և քաղաքային գործիչների համագումարը: Այդ համագումարը կապ ուներ ճապոնացիների կողմից Ցուսիմա կղզու մոտ ցարական նավատորմը ջախջախելու հետ: Լիբերալներն ավելի լավ վոչ մի բան չգտան անելու, քան դիմելու ցարին հայրենասիրական ու հավատարիմ հպատակության պետիցիայով: Լիբերալները յերկչոտ կերպով խնդրում էին «առանց հապաղելու գումարել ժողովրդական ներկայացուցիչներին», վորոնք պետք է ցարի «համաձայնությամբ» վճռեյին պատերազմի ու խաղաղության հարցը և «հաստատեյին նորոգված պետական կարգ»: Պետիցիայում չկար վոչ մի հեղափոխական պահանջ: Լիբերալների յերթը ցարի մոտ հունվարի 9-ի անցքերից հետո, նրանց ցանկությունը վորոշելու «նոր» կարգը ցարի «համաձայնությամբ», այսինքն բուրժուազիայի ձգտումը համաձայնության գալ ու հաշտվել ինքնակալության հետ, ցույց էր տալիս, վոր կապիտալիստները և «ձախ» կալվածատերերը վախենում են հեղափոխությունից: Նրանք հեղափոխության ճնշման տակ ձախանում էին, բայց իրենք չէյին համարձակվում հեղափոխական ուղիի վրա կանգնել: Բուրժուազիայի կազմավորվող կուսակցությունը—սահմանադրական-ռամկավար, կոնստիտուցիոն-դեմոկրատական (կամ ավելի կարճ կադետները)—իր ծրագրում չէր առաջարկում ինքնակալության տապալման պահանջը: Նա ծնունդ առավ ու ստեղծվեց իբրև *միապետական* կուսակցություն, վոր միայն ցանկանում էր սահմանափակել ցարի իշխանությունը: Արդեն այս փաստերից կարելի յե յեզրակացնել, վոր բուրժուազիան իրոք հեղափոխության դեմ էր: Նա ժողովրդական հեղափոխության մեջ դավաճանական դեր խաղաց և յեթե նա մի բան ուզում էր, ապա միայն ռեֆորմներ բուրժուազիայի օգտին, պահելով ցարական իշխանությունը: Իսկ բան-

վորական շարժման հեղափոխական ալիքն ավելի ու ավելի բարձրանում եր։ Սեպտեմբերին սկսվեց Մոսկվայի տպագրական բանվորների գործադուլը։ Նա արագ տարածվեց մյուս ֆաբրիկային ու գործարանական կենտրոնները, ընդգրկեց յերկաթուղային կայարանները։ Շուտով Պիտերի տպագրական բանվորները պաշտպանեցին մոսկվացիներին և վերջապես հոկտեմբերի կեսերին գործադուլը դարձավ ընդհանուր։ Գործադուլը դարձավ ամբողջ պրոլետարիատի մասսայական միաժամանակյա բողոք ցարական կարգի դեմ։ Կանգ առավ յերկաթուղային շարժումը, ընդհատվեց պոստ-հեռագրական կապը, կանգ առան ֆաբրիկաները և գործարանները, ամբողջ արտադրական կյանքը մեռավ։

Հոկտեմբերյան գործադուլը ցնցեց ինքնակալությունը։ Միապետությունը զղջաց.--1905 թ. հոկտեմբերի 17-ին (հոկտեմբերի 30-ին նոր տոմարով) հրատարակվեց ցարական մանիֆեստը, վոր մշուշապատ ձևով հայտարարում եր քաղաքական ազատությունների և Պետական Դումայի գումարման մասին։

Բուրժուազիան ցնծում եր։ Նա սահմանադրություն [1]) ստացավ և բավարարված եր։ Նրա արտաքին ամբողջ հեղափոխականությունն արագ չքացավ։ Իսկ մանիֆեստի հրատարակման օրը Պետրոգրադի քաղաքապետ Տրեպովը հրաման արձակեց—բանվորների դեմ «փամփուշտներ չխնայել»։

Հոկտեմբերյան գործադուլը շարժման նոր վերելք առաջ բերեց գյուղում։ Յեթե գարնանն ու ամառը Յեվրոպական Ռուսաստանի հետազոտված գավառների ամեն մի հարյուրակից շարժումն ընդգրկում եր միայն 14, ապա հոկտեմբերյան գործադուլից հետո գավառների ամեն մի հարյուրակից 37 գյուղացական հուզմունքներ կային։

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Հոկտեմբերյան այս որերին ստեղծվեցին բանվորների պատգամավորների խորհուրդներ նախ Պետերբուրգում (հոկտեմբերի 31-ին հին տոմարով), իսկ հետո Մոսկվայում, Ռոստովում Դոնի վրա, Նովոռոսիյսկում և ուրիշ քաղաքներում։

Իսկ ինչ եյին խորհուրդները և հատկապես Պետերբուրգինը։ Այդ հեղափոխական ապստամբության որգաններն եյին։ Պիտերինը շարունակ ավելի ու ավելի շատ հեղափոխական կառավարության դեր եր խաղում։ Ամենից առաջ նշենք, վոր հոկտեմբերի 17-ի մանիֆեստին Պետերբուրգի խորհուրդը պատասխանեց աշխատավորներին ուղղած իր դիմումով։ Խորհուրդը մերկացնում եր ցարական մանիֆեստը, նա դի-

[1]) Սահմանադրություն—հիմնական օրենք յերկրի պետական կառուցվածքի մասին։ Տվյալ դեպքում խոսքը վերաբերում ե ցարի իշխանությունը սահմանափակող սահմանադրությանը։

տում եր այն իբրև ցարի հարկադրական զիջումն հոկտեմբերյան գործադուլի հարվածների տակ։

Պետերբուրգի խորհուրդը հասկանում եր, վոր գլխավոր ճակատամարտերը դեռ առջևում են, այս պատճառով ել հոկտեմբերի 19-ին տեղեկություն ստանալով գործադուլի դադարեցման մասին Մոսկվայում, նա վորոշեց դադարեցնել գործադուլը և կոչ եր անում մասսաներին զինված ապստամբության կազմակերպման դիմել։

Անհրաժեշտ ե նշել, վոր չնայած խորհրդում բոլշևիկները փոքրամասնություն եյին, այնուամենայնիվ նա ընդունեց բոլշևիկների լոզունգը՝ «գործադուլի դադարում, Դումայի բոյկոտ և ապստամբության զինված նախապատրաստություն»։ Պրոլետարիատի հեղափոխական տրամադրության ազդեցության տակ մենշևիկները նույնպես արտահայտվում են հօգուտ Դումայի բոյկոտի և ձեռնարկում են մասսաների սպառազինման։

Խորհուրդն ազդարարեց մամուլի լիակատար ազատություն (տպագրական բանվորները հրաժարվում եյին տպել ցենզուրայով անցած նյութը), վորոշեց հեղափոխական ճանապարհով անցկացնել 8-ժամյա բանվորական որ։ Խորհուրդը կոչ եր անում մասսային նոր—նոյեմբերյան—գործադուլ անել՝ բողոքելու համար Կրոնշտատի ապստամբած նավաստիների պատժի դեմ և ռազմա-դաշտային դատարանների դեմ Լեհաստանում և ուրիշ տեղերում։

Բուրժուազիայի դավաճանությունն ամբողջ ակնառությամբ դըրսևորվեց այդ որերում։ Կապիտալիստները փակեցին ֆաբրիկաները և գործարանները։ Պիտերի և ուրիշ տեղերի ավելի քան 100 հազար բանվոր գործազրկության դատապարտվեցին։

Կառավարությունը վճռեց խորհրդին հարված հասցնել։ Նոյեմբերի 26-ին բանտարկվեց նրա նախագահը։ Խորհուրդը հայտարարեց, վոր նա նոր նախագահություն ե ընտրել և շարունակում ե պատրաստվել զինված ապստամբության։ Դեկտեմբերի 1-ին Խորհուրդը կոչ արեց աշխատավոր մասսաներին հրաժարվել հետգնման և այլ վճարներից, կոչ արեց խնայողական գանձարկղներից ավանդները վերցնել միայն վոսկով և այդպիսով խախտել ցարական գանձատան ֆինանսական հզորությունը։

Բայց ցարական կառավարությունը վճռեց պատժել Խորհուրդը և դեկտեմբերի 3-ին ձերբակալվեց նրա Գործադիր Կոմիտեն։

Պետերբուրգի Խորհրդի նոր Գործադիր Կոմիտեն դեկտեմբերի 9-ին ընդհանուր քաղաքական գործադուլ հայտարարեց, իսկ Մոսկվայի Խորհուրդը (Մոսկվայում արդեն դեկտեմբերի 7-ին գործադուլ եր ա-

նում մինչև 100 հազար բանվոր) վորոշեց զինված ապստամբությամբ փոխել այն։ Յեվ իսկապես ապստամբությունը բռնկվեց։

ԶԻՆՎԱԾ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆ

Զինված ապստամբություններ յեղան վոչ միայն Մոսկվայում, այլև Ռոստովում, Խարկովում, Նովոռոսիյսկում, Ուրալում, Կովկասում և Սիբիրի մի քանի քաղաքներում։ Բայց իհարկե ամենից վառն ու ուժեղը Մոսկվայի ապստամբությունն եր, հատկապես Կարմիր Պրեսնյայի ռայոնում։ Առաջին անգամն եր զինված ապստամբություն տեղի ունենում, փորձ չկար և կռվի յեղանակները տնայնագործական բնույթ եյին կրում։ Բայց կարևորն այն ե, վոր այս կամ այն ձևով մասսաները մասնակցում եյին նրան (բարրիկադների կառուցում, կապի հաստատում, վիրավորների խնամում և այլն). բանվորական խմբերը զենք ձեռքներին կռվում եյին բարրիկադների վրա։ Մոսկվայում զինված ապստամբության գլուխ եյին կանգնած բոլշևիկները։ Տասն որ հերոսաբար դիմացավ Պրեսնյան։ Գեներալ Դուբասովը ստիպված եր Պիտերից «հուսալի» զինվորական մասեր խնդրել, վորովհետև Մոսկվայի կայազորում խմորում կար և ընդհանրապես նա բավական չեր ապստամբությունը ճնշելու համար։

Դեկտեմբերի 14—15-ին Մոսկվայում, իսկ դեկտեմբերի 17-ին նաև Պրեսնյայում ապստամբությունը ջախջախվեց։

Զնայած պարտության, Մոսկվայի զինված ապստամբության նշանակությունը մեծ եր։ Նախ՝ ամբողջ պրոլետարիատը հասկացավ, վոր առանց զինված կռվի չի կարելի տապալել ինքնակալությունը, և յերկրորդ՝ նա հասկացավ, վոր առանց բանակի, առանց գյուղացիության պաշտպանության՝ հաղթանակն անհնար ե։

Բանվորների զինված ապստամբությունն ուշ հասավ գյուղ։ Գյուղացիական շարժումն իր բարձրությանը հասավ միայն 1906 թ. այն ժամանակ հետազոտված գավառների ամեն մի հարյուրյակից գոնե հիսունում հուզմունքներ կային։ Այսպիսով գյուղացիական շարժումը բանվորականի հետ կապված եր։ Բայց քաղաքի ու գյուղի առանձնացած լինելը, վատ կապը, գյուղացիության անգիտակից լինելը, գյուղում կուսակցական կազմակերպությունների բացակայությունը—այս բոլորը խանգարում եր բանվորների և գյուղացիների միաժամանակյա յելույթը։ Պատժիչ ջոկատներով ջախջախելով պրոլետարիատին, ջարդելով հեղափոխության մեկ ջոկատը, ցարական կառավարությունը մյուս ջոկատի—գյուղացիության դատն եյ տեսավ։

Ջախջախելով հեղափոխությունը, ցարը, կալվածատերը և բուրժուազիան ցնծում եյին։

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հեղափոխության ամբողջ ընթացքը հաստատեց բոլշևիկների հայացքները հեղափոխության ու նրա շարժիչ ուժերի մասին։ Յեվ հեղափոխության սկզբում, և՛ նրա տաք ժամանակ, և՛ զինված ապստամբության մոմենտում նրա գլուխ անցել եր պրոլետարիատը, վորի յետևից գնում եր գյուղացիությունը։ Ապստամբությունը վոչնչացավ։ Բայց Լենինն ու բոլշևիկները համարում եյին, վոր նա հեղափոխական պրոլետարական կռվի բարձրագույն ձևն եր, և հետագայում անխուսափելիորեն մեզ սպասում ե նոր ապստամբություն, մեզ սպասում ե բանակի հեղափոխական քայքայման համար մղվելիք կռիվը։

Լենինը կոչ եր անում կուսակցությանը և պրոլետարիատին՝ հաշվառել ապստամբության դասերը։ Իսկ մենշևիկներն աջ ու ձախ կըրկնում եյին Պլեխանովի բառերը. «հարկավոր չեր զենք վերցնել»։ Սրանում արտահայտվեցին նրանց քաղքենիական յերկչոտությունը և ոպորտյունիզմը։

Գյուղացիական շարժման զարգացումը մեզ ճշտիվ ցույց տվեց, վոր գյուղացիությունը գնում եր իր ղեկավարի—պրոլետարիատի յետևից։ Այս յերևում ե այն բանից, վոր գյուղում հուզմունքներն ամեն անգամ բարձրանում եյին քաղաքի հեղափոխական շարժումների հետ կապված։ Այս յերևում ե այն բանից, վոր այնտեղ, ուր գյուղացիական շարժումը լուրջ չափեր եր ընդունում և ուժ ձեռք բերում, նրա սկսողները և գլխավորները գյուղ այցելության յեկած քաղաքային բանվորներն եյին կամ քաղաքներում մի բան սովորած զինվորները։

Բուրժուազիան դավաճանեց հեղափոխությանը՝ նա միապետության կողմն եր, ընդդեմ հանրապետության։ Լիբերալների ցարի մոտ գնալը, յերկչոտ խնդիրները սահմանադրության մասին, վերաբերմունքը հոկտեմբերի 17-ի մանիֆեստին, ակնհայտ դավաճանությունը հոկտեմբերյան ու նոյեմբերյան գործադուլներից հետո—հիանալի կերպով հաստատեցին բոլշևիկների հայացքները և հերքեցին բուրժուազիայի իբրև հեղափոխական ուժի, մենշևիկյան գնահատությունը։

1905 Թ. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՋԱԽՋԱԽՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին հեղափոխության ջախջախման ամենագլխավոր պատճառները հետևյալներն են՝ 1) Պրոլետարիատի ու նրա կուսակցության թույլ կազմակերպվածությունը. 2) Պրոլետարիատի ու գյուղացիության, նույնպես և բանակի միջև հաստատուն կապի բացակայությունը. 3) Բուրժուազիայի գործարքը ցարիզմի հետ. 4) Արևմըտյան բուրժուազիայի ու հատկապես Ֆրանսիայի կողմից Նիկոլայ 2-ին ցույց տված դրամական ոգնությունը. 5) Յեվրոպական պրոլետարիատի պաշտպանության բացակայությունը։

1905 թ. հեղափոխության նշանակությունը նրանում ե, վոր նա առաջին անգամ բանվորների ու գյուղացիների բազմամիլիոն մասսա-

ներին վատ հանեց հասարակական, քաղաքական կյանքի համար։ Նա մասսաներին ցույց տվեց ինքնակալության ու բուրժուազիայի իսկական դեմքը, նա ցույց տվեց, թե վո՛ր կուսակցությունը հեղափոխության կուսակցություն ե և վո՛ր կուսակցությունները օպորտունիստական կուսակցություններ են (մենշևիկներ, եսերներ և այլն)։ 1905 թ. հեղափոխությունը նշանակալից ե այն բանով, վոր նա առաջին անգամ առաջ քաշեց պրոլետարիատի պետական իշխանության սաղմը —բանվորների պատգամավորների խորհուրդները։ Հեղափոխությունը 1917 թ. փետրվարի, ապա և պանծալի Հոկտեմբերի մեծ դասն եր, «գլխավոր փորձը» (Լենին)։

Հարց.—1905 թ. վո՞ր անցքերը հաստատեցին բոլշևիկների հայացքներն առաջին հեղափոխության մասին։

ԿՏՈՐՆԵՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

I. Լենինը բանվոր դասակարգի, գյուղացության յեվ բուրժուազիայի դերի մասին 1905 թ. հեղափոխության մեջ

1. Գյուղացությունն իր մեջ ընդգրկում ե բազմաթիվ կիսապրոլետարական տարրեր մանր բուրժուականի կողքին։ Այս նրան նույնպես անկայուն ե դարձնում, հարկադրելով պրոլետարիատին համախմբվելու խիստ դասակարգային կուսակցության մեջ։ Բայց գյուղացության անկայունությունն արմատապես տարբերվում ե բուրժուազիայի անկայունությունից, վորովհետև տվյալ մոմենտում գյուղացությունը շահագրգռված ե վոչ այնքան մասնավոր սեփականության անպայման պահպանությամբ, վորքան կալվածատիրական հողը, այդ սեփականության գլխավոր տեսակներից մեկը, խլելով։ Սրա շնորհիվ սոցիալիստական չը դառնալով, չդադարելով մանր-բուրժուական լինելուց, գյուղացությունն ընդունակ ե լիակատար ու ամենաարմատական կողմնակից դառնալու դեմոկրատական հեղափոխության։ Գյուղացությունն անխուսափելիորեն այդպիսին կը դառնա, յեթե միայն նրան լուսավորող հեղափոխական անցքերի ընթացքը չափազանց վաղ չկտրվի բուրժուազիայի դավաճանությամբ և պրոլետարիատի պարտությամբ։ Մատնանշած պայմանի ժամանակ գյուղացությունն անխուսափելիորեն հեղափոխության ու հանրապետության պատվար կդառնա, վորովհետև միայն լիովին հաղթանակած հեղափոխությունը կը կարողանա հողային ռեֆորմի ասպարեզում գյուղացությանը տալ բ ո լ ո ր ը, այն բ ո լ ո ր ը, ինչ գյուղացությունն ուզում ե, ինչ մասին նա յերազում ե, ինչ վոր իրոք անհրաժեշտ ե նրան վոչ թե կապիտալիզմի վոչնչացման համար, ինչպես յերևակայում են «սոցիալիստ-հեղափոխականները», այլ նրա

համար, վորպեսզի նա բարձրանա կիսաճորտատիրության խավարից, մռայլության ու ստրկության մթից, վորպեսզի լավացնի իր կյանքի պայմաններն այնքան, վորքան այդ թույլատրելի ե միայն ապրանքային տնտեսության սահմաններում...։

... Ահա ինչու բուրժուազիան իբրև դասակարգ բնականաբար ու անխուսափելիորեն ձգտում ե լիբերալ-միապետական կուսակցության թևի տակ մտնել, իսկ գյուղացությունն իբրև մասսա—հեղափոխական ու հանրապետական կուսակցության ղեկավարության տակ։ Ահա ինչու բուրժուազիան անընդունակ ե դեմոկրատական հեղափոխությունը մինչև վերջ հասցնելու, իսկ գյուղացությունն ընդունակ հեղափոխությունը մինչև վերջ հասցնելու, և մենք պետք ե բոլոր ուժերով օգնենք նրան այս բանում...։

... Պրոլետարիատը պետք ե դեմոկրատական հեղաշրջումը մինչև վերջ տանի, միացնելով գյուղացության մասսան, վորպեսզի ուժով ճզմի ինքնակալության դիմադրությունը և ջլատի բուրժուազիայի անկայունությունը։

(Վ. Ի. Լենին, Աշխ. ժող. I հրատ. հ. VI, եջ 369-371, ռուսերեն)։

2. Մեր հեղափոխության յելքն իրոք ամենից ավելի կախված ե գյուղացության բազմամիլիոն մասսայի կռվում ունենալիք կայունությունից։ Խոշոր բուրժուազիան մեզ մոտ ավելի շատ վախենում ե հեղափոխությունից, քան ռեակցիայից։ Պրոլետարիատը մենակ հաղթել չի կարող։ Քաղաքային չքավորները, պրոլետարիատի ու գյուղացության հետ համեմատած, վո՛չ ինքնուրույն շահեր, վո՛չ ել ուժի ինքնուրույն ֆակտոր (գործոն) են ներկայացնում։ Վճռական դերը գյուղինն ե, վոչ կռվի ղեկավարության իմաստով (այդ մասին խոսք իսկ լինել չի կարող), այլ հաղթանակի ապահովման իմաստով։

Ռուսաստանի արդի բուրժուական հեղափոխության մեջ գլխավոր տնտեսական հարցը հանդիսանում ե գյուղացության հողի համար մղվող կռվի հարցը։ Այս կռիվը անհրաժեշտորեն առաջանում ե գյուղացության հուսահատական դրությունից, ռուսական գյուղում ճորտատիրության մնացորդների առատությունից և այլն։ Այս կռիվը ել հրում ե գյուղացիական մասսային դեպի քաղաքական հարաբերությունների վճռական դեմոկրատիզացիան (վորովհետև առանց պետության դեմոկրատական կառուցվածքի գյուղացիները չեն կարող հաղթահարել ճորտատեր-կալվածատերերին) և դեպի կալվածատիրական հողատիրության վոչնչացումը։

3. Աշխարհում, գուցե, վոչ մի տեղ բուրժուազիան հեղափոխության մեջ յերևան չի բերել այնպիսի ռեակցիոն գազանություն, այն-

պիսի սերտ միություն հին իշխանության հետ, այնպիսի «ազատություն» վորևէ բանից, վոր թեկուզ հեռավոր նմանություն ունենար անկեղծ համակրանքի դեպի կուլտուրան, պրոգրեսը, մարդկային արժանապատվության պաշտպանությունը, ինչպես մեզ մոտ,—թող ուրեմն մեր պրոլետարիատը ռուսական բուրժուական հեղափոխությունից յեռակի ատելություն քաղի դեպի բուրժուազիան և վճռականություն նրա դեմ կռվելու...

Ըստ իր հասարակական-տնտեսական բովանդակության, ագրարական շարժումը բուրժուական լինելով, այդպիսին չի հանդիսանում ըստ իր շարժիչ ուժերի: Նրա շարժիչ ուժերը կարող են լինել վոչ թե բուրժուազիան, այլ պրոլետարիատն ու գյուղացությունը: Ինչու՞ յե հնարավոր այս: Վորովհետև պրոլետարիատն ու գյուղացությունն ել ավելի շատ, քան բուրժուազիան, տուժում են ճորտատիրության մնացորդներից, ել ավելի շատ կարիք ունեն ազատության ու կալվածատիրական ճնշման վոչնչացման: Ընդհակառակը, լիակատար հաղթանակը բուրժուազիային վտանգ է սպառնում.—պրոլետարիատը լիակատար հաղթանակից կօգտվի բուրժուազիայի դեմ և կօգտվի այնքան ավելի լավ, վորքան ավելի լիակատար է ազատությունը, վորքան ավելի լիակատար է կալվածատիրական իշխանության վոչնչացումը:

Այստեղից բխում է բուրժուազիայի ձգտումը վերջացնելու բուրժուական հեղափոխությունը կես ճանապարհին, կես ազատությամբ, հին իշխանության ու կալվածատերերի հետ գործարքով: Այս ձգտման արմատը բուրժուազիայի դասակարգային շահերն են:

(Վ. Ի. Լենին, Աշխ. ժող. I հրատ. հ. VIII, եջ 472, ռուսերեն):

2. Լենինը պրոլետարիատի ու գյուղացության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի մասին

... Յեվ այդպիսի հաղթանակը հենց դիկտատուրա կլինի, այսինքն նա անխուսափելիորեն ստիպված կլինի հենվել զինվորական ուժի վրա, զինված մասսայի վրա, ապստամբության վրա և վոչ թե այս կամ այն «լեգալ», խաղաղ ճանապարհով ստեղծված հիմնարկությունների վրա: Այդ կարող է լինել միայն դիկտատուրա, վորովհետև այն վերակազմությունների իրականացումը, վորոնք անհապաղ ու անպայման հարկավոր են պրոլետարիատին ու գյուղացությանը, առաջ կը բերի հուսահատական դիմադրություն և՛ կալվածատերերի, և՛ խոշոր բուրժուաների, և՛ ցարիզմի կողմից: Առանց դիկտատուրայի անհնար է փշրել այդ դիմադրությունը, վանել հակահեղափոխական փորձերը: Բայց այդ, հասկանալի յե, կը լինի վոչ սոցիալիստական, այլ դեմոկրատական դիկտատուրա: Նա չի կարողանա դիպչել կապիտալիզմի

հիմունքներին (առանց հեղափոխական զարգացման մի ամբողջ շարք միջանկյալ աստիճանների): Նա լավագույն դեպքում կկարողանա հողային սեփականության արմատական վերաբաշխում մտցնել հօգուտ գյուղացության, իրագործել հետևողական ու լիակատար դեմոկրատիզմ մինչև հանրապետություն, արմատախիլ անել բոլոր ասիական ստրկային գծերը վոչ միայն գյուղական, այլև գործարանային կենցաղից, սկիզբ դնել բանվորների դրության լուրջ լավացմանը և նրանց կենսական մակարդակի բարձրացմանը, վերջապես... վերջինը հաշվով, բայց վոչ կարևորությամբ,—տեղափոխել հեղափոխական հրդեհը Յեվրոպա:

(Վ. Ի. Լենին, Աշխ. ժող. I հրատ. VI, եջ 335, ռուսերեն):

3. ՌՍԴԲԿ III համագումարը զինված ապստամբության մասին

Համագումարը հանձնարարում է բոլոր կուսակցական կազմակերպություններին.

ա) Պարզաբանել պրոլետարիատին պրոպագանդայի ու ագիտացիայի միջոցով առաջիկա զինված ապստամբության վոչ միայն քաղաքական նշանակությունը, այլև գործնական-կազմակերպչական կողմը:

բ) Պարզաբանել այդ պրոպագանդայի ու ագիտացիայի ժամանակ քաղաքական մասսայական գործադուլների դերը, վորոնք կարող են կարևոր նշանակություն ունենալ ապստամբության սկզբում ու հենց հրդեհի ընթացքում:

գ) Ձեռնարկել ամենաեռանդուն միջոցների պրոլետարիատի զինման, նույնպես և զինված ապստամբության պլանի մշակման և նրա անմիջական ղեկավարության համար, ստեղծելով դրա համար, յեթե հարկ լինի, հատուկ խմբակներ կուսակցական աշխատողներից:

(„Կուսակցության VI համագումարը“, հրատարակ. „Московский рабочий“):

4. Ընկեր Տրոցկու «պերմանենտ հեղափոխության» թեորիայի սխալ լինելը

Լենինը խոսում է պրոլետարիատի և գյուղացության աշխատավոր շերտերի միության մասին, իբրև պրոլետարիատի դիկտատուրայի հիմքի:

Իսկ Տրոցկու մոտ ստացվում են «պրոլետարական ավանգարդի» «թշնամական ընդհարումներ» «գյուղացության լայն մասսաների» հետ:

Լենինը խոսում է աշխատավոր ու շահագործվող մասսաների ղեկավարության մասին պրոլետարիատի կողմից:

Իսկ Տրոցկու մոտ ստացվում են «հակասություններ բանվորական կառավարության դրության մեջ հետամնաց յերկրում, ուր ճնշող մեծամասնությունը գյուղացիական բնակչությունն է»:

Ըստ Լենինի հեղափոխությունն իր ուժերը քաղում է ամենից առաջ հենց Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների միջից:

Իսկ Տրոցկու մոտ ստացվում է, որ անհրաժեշտ ուժերը կարելի է միայն քաղել «պրոլետարիատի համաշխարհային հեղափոխության ասպարեզում»:

Իսկ ի՞նչպես անել, յեթե միջազգային հեղափոխությունը վիճակված է ուշացումով գալ: Արդյոք կա՞ որևէ լույսի նշույլ մեր հեղափոխության համար: Ընկ. Տրոցկին լույսի ոչ մի նշույլ չի տալիս, որովհետև «հակասությունները բանվորական կառավարության դրության մեջ... կկարողանան իրենց լուծումն ստանալ միայն... պրոլետարիատի համաշխարհային հեղափոխության ասպարեզում»: Ըստ այս պլանի մեր հեղափոխության համար միայն մեկ հեռանկար է մնում՝ թմրել իր սեփական հակասությունների մեջ և փթել արմատի վրա սպասելով համաշխարհային հեղափոխության:
(Ստալին, Հոկտեմբերի ուղիներում, էջ 22):

5. Լենինը 1905 թ. հեղափոխության նշանակության մասին

Հեղափոխության տարիներն են (1905-1907): Բոլոր դասակարգերը հանդես են գալիս աշկարա կերպով: Բոլոր ծրագրային ու տակտիկական հայացքները ստուգվում են մասսաների գործողությամբ:

Գործադուլային կռվի աշխարհում չտեսնված լայնություն ու սրություն: Տնտեսական գործադուլի գերաճումը քաղաքականի ու քաղաքականինն ապստամբության: Գործնական ստուգումն ղեկավարող պրոլետարիատի և ղեկավարվող, տատանվող, անկայուն գյուղացության հարաբերականության: Կռվի տարերային զարգացման մեջ կազմակերպության խորհրդային ձևի ծնունդը: Այն ժամանակի վեճերը խորհուրդների նշանակության մասին կանխում են 1917-1920 թվականների մեծ կռիվը: Կռվի պարլամենտական ձևերի փոխվելը ոչ պարլամենտականների, պարլամենտարիզմի բոյկոտի տակտիկայի փոխվելը պարլամենտարիզմի մասնակցության տակտիկայի, կռվի լեգալ ձևերի ու անլեգալների, ինչպես և նրանց փոխհարաբերությունների ու կապի փոխվելը,—այս բոլորն աչքի չեն ընկնում բովանդակության զարմանալի հարստությամբ: Այդ շրջանի ամեն մի ամիսը և՛ մասսաներին, և՛ առաջնորդներին, և՛ դասակարգերին, և՛ կուսակցություններին քաղաքական գիտության հիմունքների ուսուցման իմաստով, հավասար էր «խաղաղ», «սահմանադրական» զարգացման

մեկ տարվա: Առանց 1905 թ. «գլխավոր փորձի» 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակն անհնար կը լիներ:

(Վ. Ի. Լենին, Աշխ. ժող. հ. XVII, էջ 120-121, ռուսերեն):

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարզեցե՛ք, ինչպիսի մասնակցություն են ունեցել ձեր ձեռնարկության բանվորները 1905 թ. հեղափոխական անցքերին և համառոտ կերպով յեզրակացությունները գրեցե՛ք հետևյալ պլանով.

1. Ինչպիսի արձագա՞նք գտան ձեր ձեռնարկության մեջ հունվարի 9-ի անցքերը:
2. Արդյոք մասնակցե՞լ են ձեր ձեռնարկության բանվորները հոկտեմբերյան գործադուլին և ինչո՞ւմն է արտահայտվել այդ մասնակցությունը:
3. Արդյոք որևէ մասնակցություն ունեցե՞լ են ձեր ձեռնարկության բանվորները զինված ապստամբության (բարրիկադների կառուցում, նրանց պաշտպանություն, վիրավորների հոգատարություն և այլն):
4. Արդյոք ձեզ մոտ պատգամավորներ ընտրվե՞լ են բանվորների պատգամավորների խորհրդի համար և ի՞նչպիսի դեր խաղաց ձեզ մոտ Խորհուրդը 1905 թվին:
5. Ի՞նչպես էր ընթանում գյուղացիական շարժումը 1905—1907 թվականներին ձեր շեֆարկյալ գավառակում:

ՀԱՐՑԵՐ

1 Պատմեցե՛ք, ինչպիսի բնույթ էր կրում 1905 թ. հեղափոխությունը:

2. Վո՞րն էյին բոլշևիկների, մենշևիկների ու ընկ. Տրոցկու հայացքները.—
   ա) Բուրժուազիայի դերի մասին.
   բ) Գյուղացության դերի մասին.
   գ) Բանվոր դասակարգի դերի մասին.
   դ) Զինված ապստամբության մասին.
   ե) Ժամանակավոր հեղափոխական կառավարության մասին:

3 Ի՞նչպես եք հասկանում դուք «պրոլետարիատի ու գյուղացության դիկտատուրա» լոզունգը:

4 Ինչո՞ւմն են ընկ. Տրոցկու սխալները:

5. Ինչո՞ւ ջախջախվեց առաջին հեղափոխությունը:

6. Վո՞րն է 1905 թ. հեղափոխության նշանակությունը:

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

Բոլշևիզմն ու օպորտյունիզմը յերկու հեղափոխությունների միջանկյալ շրջանում

ԻՆՉԻ ՄԱՍԻՆ Է ԶՐՈՒՅՑԸ

Նախորդ զրույցում մենք ծանոթացանք 1905 թ. հեղափոխության ընթացքին և պարզեցինք, վոր միայն բոլշևիկյան գնահատությունը և բոլշևիկյան տակտիկան եյին ճիշտ ու համապատասխան հեղափոխության ընթացքին։ Ներկա զրույցում մենք նպատակ ունենք ցույց տալ, թե ինչպես եր ընթանում ռեակցիայի [1]) ծանր տարիներում (1907—1911), հեղափոխական շարժման մեջ յեղած խառնակության և կուսակցությունից անկայուն տարրերի փախուստի տարիներում, բոլշևիկ-լենինյանների պայքարը մենշևիկ ու մյուս օպորտյունիստների դեմ։

Այդ ուսանելի կռվի ամենագլխավոր փաստերը և դասերը հետևյալներն են. 1) բոլշևիկները Լենինի գլխավորությամբ կարողացան այդ ամենադժվարին պայմաններում յետ քաշվել ավելի մեծ կարգով, քան վորևե այլ կուսակցություն և պահպանել իրենց կռվի հեղափոխական ծրագիրը և տակտիկան. 2) օպորտյունիստները փորձեցին բանվորական շարժումը յենթարկել բուրժուազիայի նպատակներին և լիկվիդացիայի յենթարկել (վոչնչացնել) ընդհատակյա սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը, իսկ նրա փոխարեն ստեղծել լեգալ «բանվորական» կուսակցություն, վոր իր ծրագիրը և տակտիկան հարմարեցնում է «սահմանադրական» միապետության պայմաններին. 3) այդ սև տարիների փորձը մեր կուսակցությանը պետք յեկավ ավելի ուշ, նոր վերելքի տարիներում (1912—1914) և իմպերիալիստական պատերազմի տարիներում։

1. Բոլշևիկները բանվորական շարժման անկման, Ստոլիպինյան ռեակցիայի յեվ նոր վերելքի շրջանում

1907—1911 Թ. Թ. ՌԵԱԿՑԻԱՆ

Դեկտեմբերի զինված ապստամբության ջախջախումից հետո ինքնակալությունը հետագա տարիներում (1906—1907) ձգտում եր արմատախիլ անել հեղափոխությունը։ Ռեակցիայի այդ շրջանը շարունակվեց մոտավորապես մինչև 1911 թ.։ Ինքնակալությունը զինվորա-դաշտային դատարաններ մտցրեց, հատուկ պատժիչ արշավախմբեր ուղարկեց ամբողջ յերկիրը դահիճ-գեներալների հրամանատարությամբ (Մելլեր-Զակոմելսկի, Ռենենկամպֆ, Ալիխանով և ուրիշները), վորոնք դաժանորեն պատժեցին հեղափոխականորեն տրամադրված բանվորներին ու գյուղացիներին։ Աղյուսակի չոր ու ամենևին վոչ լրիվ թվերն ակնառու ցույց են տալիս, թե ինչպես ինքնակալությունը փորձում եր արմատով վոչնչացնել հեղափոխականներին.

Տարիներ	Մահվան դատավճիռներ	Կատարված մահապատիժներ
1907	1,692	748
1908	1,959	782
1909	1,435	543
Ընդամենը . .	5,086	2,073

Ցարական դատավճիռները, վոր բերում եյին մահապատիժ, տաժանակիր աշխատանք, բանտ և աքսոր, թափվում եյին գլխավորապես գյուղացիների ու բանվորների գլխին։

Հեղափոխությունը խեղդողների գլուխ եր կանգնած մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինը (այս պատճառով հաճախ ռեակցիայի եպոխան անվանում են ստոլիպինյան)։

Բանվորական շարժումն անկման եր հասնում ձերբակալությունների, մահվան դատավճիռների, արհմիութենական և այլ բանվորական կազմակերպությունների ջախջախման հարվածների տակ։ Այս է մատնանշում գործադուլային ալիքի խիստ ցածացումը (տես № 11 դիագրամմ)։

Գործադուլները մեծ մասամբ վերջանում եյին ձեռնարկուների հաղթանակով։ Կապիտալիստները հարձակման անցան, նորից մտցրեցին 10—12 ժամյա բանվորական օրը, ցածացրին աշխատավարձը և մտցրեցին տուգանքներ ամենաաննշան առիթների համար։ Վորովհետև արդյունաբերության մեջ կրիզիսը ձգձգվում եր, ապա կապիտալիստները շարունակում եյին բանվորների մասսայական արձակումը (լոկաուտ) և դրանով էլ ավելի վատացնում պրոլետարիատի դրությունը։

Հեղափոխության ջախջախումը իջեցրեց հեղափոխական տրամադրությունը բանվորական միջավայրում։ Արդյունաքամ պրոլետարիատը, թվում եր, յելք չեր տեսնում ծանր դրությունից։

1) Ռեակցիա—շահագործողների ձգտումը վերադառնալ հին կարգերին։



Դիագրամմ № 11. Ինչպես է զարգացել Ռուսաստանում գործադուլային պայքարը
(Փոքրացրած դիագրամմների սերիայից—Հեղ.

ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ՕՊՊՈՐՏՅՈՒՆԻԶՄԸ

Այս անկման շրջանի տրամադրությունները չեյին կարող չազդել հենց բանվոր դասակարգի կուսակցության, ՌՍԴԲԿ վրա: Սկսվեց ընդհանուր փախուստը կուսակցության շարքերից, գլխավորապես ինտելլիգենցիայի և այլ «ուղեկիցների», վորոնք կուսակցության մեջ մտել եյին հեղափոխության վերելքի շրջանում և վորոնք ծանր ռեակցիայի փորձությանը չդիմացան: Կուսակցության ներսում բայլշևիկների ու օպպորտյունիստների միջև կատաղի կռիվ եր տեղի ունենում, կուսակցությունը բաժանվել եր առանձին խմբերի: Նրա ազդեցությունը բանվորական մասսաների վրա նշանակալի չափով ընկել եր: Կուսակցության ներսում համաձայնողական տարրերի մեջ հուսախաբությունը և խառնափնթորությունը շատ հեռու եյին գնացել: Մենշևիկները սկսեցին ամբողջապես պաշտպանել լիբերալ բուրժուազիային և ասում եյին, վոր հեղափոխության բանը վերջացած ե, վոր տասնամյակներ կանցնեն, նախ քան նոր վերելք կը գա: Այս պատճառով նրանք սկսեցին ժխտել վըճռական դասակարգային կռվի անհրաժեշտությունը: Մենշևիկները միայն կոչ եյին անում պրոլետարիատին կռվել ռեֆորմների համար և աշխատակցել լիբերալ բուրժուազիային, վորը այժմ էլ ավելի շատ, քան 1905 թ., համաձայնության եր գալիս ինքնակալության հետ:

Այս ակնառու յերևվաց նրանց վերաբերմունքից դեպի 3-րդ Պետական Դուման [1]): Մենշևիկներն այս լոզունգը նետեցին՝ պահպանել Դուման ինչ գնով էլ վոր լինի:

Նրանք համարում եյին, վոր չպետք ե սրել Դումայի հարաբերությունը կառավարության հետ, ուր (Դումայում) մեծամասնությունն արդեն կադետները [2]) չեյին, այլ հոկտեմբերյանները [3]), վորովհետև

---

1) 1-ին (1906 թ.) և 2-րդ (1907 թ.) Պետական Դումաները կառավարությունը ցրեց նրանց իբր թե հեղափոխականության համար: Իրոք Դուման չեր էլ կարող իսկական հեղափոխականություն յերևան բերել:

Բանվորները և գյուղացիները Դումայում բոլորովին քիչ տեղ ունեյին, իսկ տեղերի մեծ մասը պատկանում եր լիբերալ բուրժուազիայի կուսակցությանը—կադետներին: 1907 թ. հունիսի 3-ի 3-րդ Դումայի ընտրություններին վերաբերող նոր օրենքը բոլորովին խուզում եր բանվորների ու ամենաաղքատ գյուղացիների իրավունքները և անհնար եր դարձնում ազատ ագիտացիան: Հունիսի 3-ը ռեակցիայի հաղթանակի օրն եր:

2) Կադետներ-կոնստիտուցիոն-դեմոկրատական (սահմանադրական-ռամկավար) կուսակցություն (վոր իրեն անվանում եր նույնպես «ժողովրդական ազատության կուսակցություն»),—լիբերալ-միապետական բուրժուազիայի ու լիբերալ կալվածատերերի մի մասի կուսակցությունը, կադետները ձգտում եյին գործարքի ցարիզմի հետ ի հաշիվ բանվորների ու գյուղացիների:

3) Հոկտեմբերյաններ—«հոկտեմբերի 17-ի կուսակցություն», աջ, հայտնապես միապետական առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի կուսակցությունը կապիտալիստ Գուչկովի գլխավորությամբ:

այդ Դումայի օգնությամբ հույս ունեյին վորոշ ռեֆորմներ անցկացնել բանվոր դասակարգի օգտին։ Դուման ջախջախումից պահպանելու համար նրանք թաքցնում եյին սոցիալ-դեմոկրատական ծրագիրը և հրաժարվում հեղափոխական կոչեր ուղղելու մասսաներին։

Գործը հասավ այնտեղ, վոր նրանք փորձում եյին Դումայի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան ազատել կուսակցության վերահսկողությունից և քիչ եր մնում նրան, Դումայի ֆրակցիային, ամբողջ կուսակցությունից բարձրագույնը համարեյին։

Մենշևիկների համաձայնողականությունը լիբերալ բուրժուազիայի հետ այնքան հեռու գնաց, վոր նրանք պաշտպանում եյին կադետների՝ Դումայի առաջ «պատասխանատու մինիստրություն» լոզունգը։ Իսկ չէ՞ վոր հենց ինքը Դուման իրոք հունիսի 3-ից հետո շարունակ ավելի ու ավելի չեր ռեակցիայի պատվար դառնում։ 2-րդ Դումայում մենշևիկները քվե տվեցին հօգուտ կադետ նախագահի և այլն։

Հենց այսպիսի համաձայնողական քաղաքականություն եյին վարում մենշևիկներն այս ու այն տեղ դեռ մնացած արհմիությունների, կոոպերացիայի, ակումբների և այլն վերաբերմամբ։ Պահպանել նրանց, վոչ մի քաղաքական աշխատանք չկատարել նրանցում, վորպեսզի ժանդարմները չջախջախեն նրանց,—ահա ինչով եյին ղեկավարվում նրանք։

Մտաբերելով մենշևիկների վերաբերմունքը դեպի լիբերալները կուսակցության II համագումարում (1903 թ,), նրանց կոնֆերենցիայի ժամանակ (1905 թ.), հեղափոխության ժամանակ և ռեակցիայի տարիներում, մենք կը տեսնենք մենշևիկների միշտ միևնույն օպորտյունիստական գիծը՝ կապել պրոլետարիատը բուրժուազիայի հետ, բուրժուազիայի վզին փաթաթել գըլխավոր դերը հեղափոխական կռվում և թողնել բանվոր դասակարգին ստորադաս տեղը։

ԼԻԿՎԻԴԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ

Օպորտյունիզմը չդանդաղեց յերևան գալ կազմակերպչական տեսակետից։ Այսպես, դեռ 1906 թ. մենշևիկները Լարինի (այժմ կոմունիստ), Պատրեսովի, Յեժովի և ուրիշների գլխավորությամբ առաջ քաշեցին «բանվորական համագումարի» հրավիրման իդեան։ Այդ համագումարը, նրանց կարծիքով, պետք է ստեղծեր «լայն բանվորական կուսակցություն», վորը պիտի փոխարիներ ՌՍԴԲԿ։ Նրանք ցանկանում եյին բանվոր դասակարգի հեղափոխական ավանգարդը լուծել պրոլետարիատի անգիտակից, անգործունյա մասսաների մեջ։ Լարինը նույնիսկ այն էլ ասեց, վոր այդ «բանվորական կուսակցությունը» մասսայորեն միանա եսերների մանր բուրժուական կուսակցությանը։

Մենշևիկների այդ մասը վոչ միայն համարում եր, վոր հեղափոխությունը ջախջախված է, և գալիս է ինքնակալության դեմ կռվի «խաղաղ» զարգացման յերկարամյա շրջանը, նա հետագա յեղրակացությունն էլ արավ՝ հին, ընդհատակյա կուսակցությունն իր կռվի յեղանակներով ու մարտական լոզունգներով բոլորովին անպետք է, պետք է լիկվիդացիայի [1]) յենթարկել այն։ Այս պատճառով էլ բոլշևիկները նրանց սկսեցին «լիկվիդատորներ» անվանել։ Լիկվիդատորներից վոմանք մինչև այն հասան, վոր արդեն հայտարարում եյին ընդհատակյա կուսակցությունը չեղյալ, նրան «դիակ» եյին անվանում և այլն։

Այստեղ կազմակերպչական հարցերում էլ, ինչպես և տակտիկականներում, մենք հեշտությամբ դրսևորում ենք մենշևիկների միասնական օպորտյունիստական գիծը։ Իրոք՝ 1903 թ. մենշևիկները հանդես յեկան կուսակցության հասկացողության լայնացրած մեկնաբանության պլանով (հիշիր վեճերը կանոնադրության § 1 մասին), 1906—1907 թվականներին նրանք առաջ քաշեցին լայն բանվորական համագումարի հրավիրման նախագիծը, համագումար, վորը պետք է փոխարինե կուսակցությանը և հենց դրանով նրան լուծե անկուսակցական մասսայի մեջ, վերջապես ռեակցիայի տարիներում նրանք ուղղակի վճռեցին վոչնչացնել ընդհատակյա կուսակցությունը։ Այսպես մենշևիկները աստիճան առ աստիճան գլորվում եյին, դառնում օպորտյունիստներ, զուտ ռեֆորմիստներ, լիբերալ բուրժուազիայի մոտ ծառայության մտնում։

ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԼԻԿՎԻԴԱՏՈՐՆԵՐԻ ԴԵՄ

Լենինը և հեղափոխության գործին հավատարիմ բոլշևիկները վճռական կռիվ մղեցին լիկվիդատորների դեմ։ Ի՞նչ խնդիր եր կանգնած կուսակցության առաջ ռեակցիայի տարիներում։ Լենինը պատասխանում եր.—ճիշտ է հեղափոխությունը ջախջախված է, բայց կուսակցության խնդիրը չէ, վորպեսզի հրաժարվի հեղափոխական դասակարգային կռվից և վոչնչացնի իրեն։ Հեղափոխականների խնդիրն է—ըստ հնարավորի քիչ կորուստներով յետ քաշվել, պահպանելով իրենց գաղափարական մաքրությունը և կուսակցության կազմակերպչական ուժը, յետ քաշվել նրա համար, վորպեսզի հետո, անհրաժեշտ մոմենտում, մեծ ուժերով նորից հարձակում սկսեն։ Լենինը հաճախ ասում եր, վոր հաղթանակի համար բանվոր դասակարգը պետք է սովորի վճռականորեն հարձակվել, բայց պետք է կարողանա առանց պանիկայի (խառնաշփոթության) նահանջել։ Նահանջել կարողանալն էլ հենց նրանում եր, վորպեսզի ամենասև ռեակցիայի տարիներում չհրաժարվեյինք հեղափոխական դասա-

1) Մենշևիկների մի մասը, այսպես կոչված մենշևիկ-կուսակցականները Պլեխանովի գլխավորությամբ, կողմնակից եր անլեգալ կուսակցության պահպանմանը։

կարգային կռվից, չհրաժարվելինք ընդհատակյա կուսակցությունից, վոր ղեկավարում է այդ կռիվը։

Վ. Ի. Լենինը բանվոր դասակարգի գործի համար չափազանց կարևոր էր համարում պահպանել կուսակցությունը, վորովհետև նախատեսնում էր, վոր կանցնի ռեակցիայի շրջանը, վոր անխուսափելի յե հեղափոխության նոր վերելքը։

1905 թ. հեղափոխությունը կանգ առավ կես ճանապարհին— նա բանվոր դասակարգին անհրաժեշտ քաղաքական ազատություններ և տնտեսական դրության բարվոքում չտվեց, իսկ գյուղացությունը հող չստացավ։ Հետևաբար, ինչպես 1905 թ. նախօրյակին հեղափոխության նախադրյալներ կային, այնպես էլ ռեակցիայի մռայլ տարիներում նրանք ուժի մեջ էին մնում, վորովհետև 1905 թ. հեղափոխությունը չբավարարեց ժողովրդի վիթխարի մեծամասնության— բանվորների ու գյուղացիների ամենակենսական շահերը։ Ահա ինչու Վ. Ի. Լենինը անխուսափելի յեր համարում յերկրորդ հեղափոխության գալը, ահա ինչու նա 1908—1911 թ.թ. այնպես յեռանդագին պայքարում էր կուսակցության համար, պրոլետարիատի ղեկավար դերի համար դասակարգային կռվում։

1908 թ. դեկտեմբերին Պարիզում կոնֆերենցիա կայացավ, վորին ներկա էին բոլշևիկների ու մենշևիկ-կուսակցականների (նրանք փոքրամասնություն էին) բոլոր խոշորագույն կազմակերպությունների ներկայացուցիչները։

Կոնֆերենցիան վճռեց մղել «ամենավճռական գաղափարական ու կազմակերպչական կռիվ լիկվիդատորական փորձերի դեմ» (կոնֆերենցիայի բանաձևից)։ Կոնֆերենցիան առաջվա նման կուսակցության կռվի նպատակները տեսնում էր ինքնակալության տապալման, հիմնադիր ժողովի գումարման և դեմոկրատական հանրապետության ստեղծման մեջ։ Կոնֆերենցիան յեռանդագին պահանջում էր ամրապնդել ՌՍԴԲԿ այն կերպարանքով, ինչ կերպարանքով նա ձևավորվել էր հեղափոխության տարիներում և անհաշտ կռիվ մղել բուրժուազիայի դեմ։

ԼԵԳԱԼ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Լիկվիդատորները, հեղափոխությանը թաղման որհներգ յերգելով, համարում էին, վոր բանվոր դասակարգը պետք է հարմարվի նոր ռեժիմին, պետք է ոգտագործե կիսաազատությունների մնացորդները՝ կռվելու հանուն բանվոր դասակարգի մանր պահանջների, կռվելու հանուն ռեֆորմների։ Այս պատճառով նրանք բոլորովին հրաժարվում էին ընդհատակից և իրենց բոլոր ուշադրությունը կենտրոնացրին

Պետական Դումայի, արհմիությունների, ապահովագրական գանձարկղերի, ակումբների և այլն աշխատանքի վրա։

Ի՞նչպես էին վերաբերվում Լենինն ու բոլշևիկներն այս լեգալ հնարավորությունների ոգտագործմանը։ Արդյոք հրաժարվո՞ւմ էին նրանք դրանցից։ Ամենևին։ Լենինը համարում էր, վոր կուսակցությունը ռեակցիայի պայմաններում էլ չպետք է կապերը կտրի բանվոր մասսայից։ Յեթե հակահեղափոխությունը կուսակցությանը քշել է խոր ընդհատակը, ապա այնքան ավելի յե մեծանում այն վտանգը, վոր նա կը կտրվի մասսաներից։ Այդ վնասակար է կուսակցության և պրոլետարիատի համար։ Այս պատճառով Լենինը յեռանդագին պայքարում է հանուն այն բանի, վոր բոլշևիկները պետք է աշխատելու գնան նույնիսկ այնպիսի կազմակերպության մեջ, ինչպես Պետական Դուման է, պետք է գնան արհմիությունները, ակումբները, յերեկոյան դպրոցները, ապահովագրական գանձարկղները։

Ամեն տեղ, ամենուրեք, ուր միայն կարելի յե աշկարա դիմել բանվորներին, հարկավոր է փորձել ըստ պայմանների անցկացնել իր իդեաները, կռվել անկման շրջանի տրամադրությունների, խառնափնթորության, իր ուժերին չհավատալու դեմ բանվոր դասակարգի մեջ և նրան պատրաստել նոր հեղափոխության համար։

Բայց, նշանակում է, այսպես է դուրս գալիս, վոր և՛ բոլշևիկները և՛ լիկվիդատորները կողմնակից էին «լեգալ» հնարավորությունների ոգտագործման։ Այս ճիշտ է. սակայն տարբերությունն այստեղ շատ մեծ է և ահա ինչումն է այն։ Լիկվիդատորներն իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացրին միայն այդ աշխատանքի վրա, հրաժարվելով անլեգալ կուսակցությունից։ Լիկվիդատորները ձգտում էին ոգտագործել լեգալ հնարավորությունները վոչ թե նոր հեղափոխության նախապատրաստման համար— նրանք դրանից անդարձ հրաժարվել էին,— այլ փոքրիկ ռեֆորմներ անցկացնելու համար։ Լենինը և բոլշևիկները գլխավոր ուշադրությունն ուղղում էին ընդհատակյա կուսակցության ուժերի հավաքմանը, նրա վրա աշխատելուն, և յեթե նրանք անհրաժեշտ էին համարում կռիվ մղել լեգալ հիմնարկություններում ու կազմակերպություններում, ապա անլեգալ կուսակցության վերահսկողությամբ։ Յեվ հենց լեգալ հնարավորությունների ոգտագործումը պետք է այնպես տարվեր, վորպեսզի նա ոգներ նոր հեղափոխության նախապատրաստությանը։ Լիկվիդատորների համար կռիվը հանուն ռեֆորմների ամեն ինչ էր, բոլշևիկների համար նա կարևոր, բայց այնուամենայնիվ յերկրորդական, ստորադաս աշխատանք էր։

«ՕՏԶՈՎԻԶՄԸ» ՅԵՎ ԿՌԻՎԸ ՆՐԱ ԴԵՄ

Ստոլիպինյան ռեակցիայի տարիներում նույնիսկ բոլշևիկյան ֆրակցիայի ներսում միշտ չեր, վոր լիակատար միություն եր լինում։ Այսպես, լեգալ հնարավորությունների ոգտագործման հարցի առիթով բոլշևիկներից բաժանվեց այսպես կոչված «ոտզովիստների» մի փոքր խմբակ։ Բոլշևիկների ներսում կռիվը տեղի յեր ունենում գլխավորապես այս հարցի շուրջը՝ գնա՞լ, թե՞ չգնալ Պետական Դումա։ Բոլշևիկները, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, վճռեցին բոյկոտի յենթարկել Բուլիգինյան Դուման 1905 թ. և հետո առաջին Դուման *) 1906 թ.։

Ինչու՞ այն ժամանակ Լենինը բոյկոտի կողմնակից եր։ 1905 և 1906 թվականներին դեռ հույս կար պայթեցնել ցարական Դուման (Բուլիգինյան Դուման բոյկոտով ել պայթեցրվեց, նա այդպես ել չը գումարվեց), այն ժամանակ հեղափոխությունը վերընթաց գծով եր գնում, և կարելի յեր սպասել հեղափոխության հաղթանակին ու հիմնադիր ժողովի գումարմանը։ Այժմ, ռեակցիայի տարիներում բոյկոտի տակտիկան սխալ կը լիներ։

Իսկ բոլշևիկներիմի փոքրիկ խմբակ, թագնվելով «ձախ» հեղափոխական ֆրազների տակ, նոր պայմաններում ել պնդում եր Դումայի բոյկոտի հին տակտիկայի վրա։ Վայել չեր, իբր թե, լավ հեղափոխականներին աշխատել այդ ախոռում, ավելի մաքուր գործ կը գտնվի—ընդհատակյա աշխատանքը, ասում եյին նրանք։ Նրանք պնդում եյին յետ կանչել 3-րդ Դումայից բոլշևիկ-պատգամավորներին (այս պատճառով ել նրանք «ոտզովիստներ» անունն ստացան)։ Ճիշտ այդպես եյին վերաբերվում ոտզովիստները նաև մյուս լեգալ հնարավորությունների ոգտագործմանը։ Ո՞ւր եր տանում այդպիսի տակտիկան։ Նա ծառայում եր բուրժուազիայի ոգտին։ Բոլշևիկների Դումայում աշխատելուց հրաժարվելը լիբերալ բուրժուազիային ավելի մեծ ազատություն կտար հիմարացնելու բանվորների հետամնաց շերտերը, ու ել ավելի շատ—գյուղացական մասսաները։

Վ. Ի. Լենինը վճռականապես կռվում եր այսպիսի «ձախության» դեմ։ «Յեթե անիծյալ հակահեղափոխությունը,—գրում եր Լենինը,—մեզ քշել ե այս անիծյալ ախոռը (այսինքն Դուման), այստեղ ել կաշխատենք հեղափոխության ոգտին, ախ ու վաշ չանելով, բայց և չհպարտանալով»։

Ոտզովիստները, չնայած և «ձախ» ճառեր եյին ասում հեղափոխական տակտիկայի մասին, բայց ըստ եյության նրանք գլորվում եյին դեպի լիկվիդատորները հենց այն բանով, վոր նրանք իրոք

*) Լենինը հետագայում գրում եր, վոր 1-ին Դումայի բոյկոտի տակտիկան ել սխալ եր։

հնար եյին տալիս լիբերալ բուրժուազիային Դումայի միջոցով ավելի ազատ կերպով ազդել մասսաների վրա։ Բացի դրանից Պետական Դումայում, արհմիություններում և այլ լեգալ կազմակերպություններում աշխատելուց հրաժարվելը կը հասցներ այն բանին, վոր կուսակցությունը մասսաներից կկտրվեր, կուսակցությունն աղանդի *) կը վերածվեր։ Իսկ այդպիսի կուսակցությունը չի կարող մասսաների ղեկավար դառնալ։ 1909 թ. բոլշևիկներն իրենց «Պրոլետար» թերթի խմբագրության լայնացրած խորհրդակցության մեջ վորոշեցին, վոր բոլշևիզմը վոչ մի կապ չունի «ոտզովիզմի» հետ, և կուսակցությունը պետք ե կռիվ մղի նրա դեմ։

ՆՈՐ ՎԵՐԵԼՔ

Բանվորական շարժման անկումն ու խառնաշփոթությունը շարունակվեց մոտավորապես մինչև 1911 թ., յերբ սկսվեց նրա նոր վերելքը։ Այդ վերելքը սերտ կապված եր արդյունաբերական կրիզիսի վերջանալու հետ (վերհիշիր, թե ինչ ասվեց այդ մասին 9-րդ գլուխում)։ Արդյունաբերությունը նորից աշխուժացավ, աճեց, սկսվեց նրա միավորումը տրեստների ու սինդիկատների մեջ։ Կապիտալիստները բանվորական ուժի կարիք եյին զգում։ Կապիտալիստներն ոգտագործել եյին ռեակցիայի տարիների ցած աշխատավարձը և յերկար բանվորական որը։ Բայց վերջիվերջո նրանք նորից հանդիպեցին 1905 թ. աճած, իսկ այժմ պարտությունից կազդուրված պրոլետարիատի դիմադրությանը։ Առաջ գործադուլները տնտեսական բնույթ եյին կրում, իսկ հետո շարունակ ավելի հաճախ եյին առաջադրվում նաև քաղաքական պահանջներ։

Բանվորական շարժումը հատկապես ուժեղ առաջ շարժվեց Լենա գետի 1912 թ. ապրիլի 4-ի (նոր տոմարով 17-ի) անցքերից հետո։ Խուլ տայգայում, մայրաքաղաքից մի քանի հազար վերստ հեռավորության վրա, վոսկու արդյունաբերության հանքերում բանվորները վարչությանը մի շարք պահանջներ ներկայացրին, վորոնց մեջ գլխավորներն եյին՝ 8-ժամյա բանվորական որ 10-ժամյա որի փոխարեն, աշխատավարձի բարձրացում $30^0/_0$, բանվորների պատգամավորների անձեռնմխելիություն և այլն։

Վարչությունը մերժեց, բանվորները համառում եյին, և զուռնան տևեց մինչև ապրիլ, յերբ Իրկուտսկից զորախմբով յեկավ ժանդարմական վաշտապետ Տրեշչենկովը։ Խաղաղ տրամադրություն ունեցող ամբոխն ապրիլի 4-ին գնաց խնդրելու կալանավորված պատգամավորների դրության մասին։ Տրեշչենկովը առանց նախազգուշության հրաման տվեց կրակել անզեն ամբոխի վրա։ Սպանվեց 270

*) Աղանդ—գաղափարակիցների ինքնամփոփ նեղ շրջան, վոր զատվում ե մնացած աշխարհից։

մարդ և վիրավորվեց 250, ինչպես հաղորդում էր բոլշևիկյան "Правда„ թերթը:

Գնդակահարությունը ցույց տվեց, որ բուրժուազիան գնում է ցարի հետ միասին, որ նա շահի յետևից ընկած օրհնում է Լենայի բանվորների վերաբերմամբ գործադրած գազանությունը:

Ջայրույթը բռնեց ամբողջ բանվորական Ռուսաստանը, և նա պատասխանեց ազդու ցույցերով ու գործադուլներով: Տրամադրությունը բարձրացավ, ինչպես 1905 թ. հունվարի 9-ին հաջորդող օրերում: Պետական Դումայում ներքին գործերի մինիստր Մակարովը սոցիալ-դեմոկրատների այն հարցապնդումին, թե այս առթիվ ինչպես է յենթադրում գործել կառավարությունը, լպիրշ կերպով պատասխանեց. «Այսպես էր, այսպես էլ կլինի»:

Հետագա տարիներում գործադուլային շարժումն աճում էր (տես № 11 դիագրամը) և ընթանում մեր կուսակցության դրոշի տակ: 1914 թ. Պիտերում, Բաքվում նորից յերևան են գալիս բարրիկադներ, բայց պատերազմն ընդհատեց հեղափոխական ալիքի սկսված վերելքը:

ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԽԶՈՒՄԸ

1912 թ. հունվարին Պրագայում կայացավ բոլշևիկների կոնֆերենցիան, որ վճռականապես կապերը խզեց լիկվիդատորների (նրանք, այսինքն լիկվիդատորները «վերջնականապես կուսակցությունից իրենք իրենց դուրս գրին», —ասում էր Լենինը) և տատանվող մենշևիկների հետ: Այդ ժամանակից կարող ենք հաշվել, որ մեր կուսակցությունն արդեն դադարեց ՌՍԴԲԿ ֆրակցիան լինելուց ու դարձավ բոլորովին ինքնուրույն կուսակցություն, որը մենշևիկների հետ ամեն տեսակ կապ խզեց:

Սակայն դեռ այն ժամանակ էլ սոցիալ-դեմոկրատներ կային, որոնք ուզում էին անհաշտելին հաշտեցնել: Հենց ընկ. Տրոցկին էր, որ հաշտեցուցիչ դիրք էր բռնում բոլշևիկների կողմից լիկվիդատորների դեմ մղած կռվում: Յերբ ծավալվեց այդ կռիվը, այն ժամանակ ընկ. Տրոցկին կուսակցության պաշտպանության համար բոլշևիկների կողմը չանցավ: Ընկ. Տրոցկին բոլշևիկների ու մենշևիկների տարաձայնությունները էյական չէր համարում, այդ պատճառով էլ աշխատում էր «հաշտեցնել» յերկու ֆրակցիան: Սակայն ընկ. Տրոցկու այս «հաշտեցնողականությունը» շատ յուրատեսակ էր: Այսպես, 1912 թ. հունվարին բոլշևիկների ձեռքով կատարված կուսակցության միավորմանը ընկ. Տրոցկին պատասխանեց նույն թվի օգոստոսին մի ուրիշ կոնֆերենցիայի կազմակերպումով, որտեղ հավաքվեցին բոլշևիզմի հակառակորդ զանազան սոցիալ-դեմոկրատական խմբերի ու խմբակների ներկայացուցիչները:

«Օգոստոսյան բլոկը» *) չցուցադրեց հին, հեղափոխական ծրագիրը: Ընկեր Տրոցկին, ինչպես և մենշևիկները, ասում էր, որ կուսակցության հիմնական լոզունգները պետք է լինեն՝ խոսքի, գործադուլի, ժողովների ու միությունների ազատություն: Իսկ այդ հեղափոխության ծրագիր չէր, այլ լիբերալ ռեֆորմների: Առանց ինքնակալության տապալման պրոլետարիատը և գյուղացիությունը չէին կարող քաղաքական ազատություններ ստանալ: Բոլշևիկները չէին հրաժարվում կռիվ մղել բանվոր դասակարգի մասնակի պահանջների համար, բայց նրանք միշտ բացատրում էին նրան, որ հիմնական խնդիրը մնում է առաջվանը՝ ինքնակալության տապալումը և դեմոկրատական հանրապետության հաստատումը:

«ПРАВДА» ԹԵՐԹԸ

Այն տարիներին կուսակցության համախմբման և նրա շուրջը մասսաների համախմբման գործում ահագին դեր խաղաց «Правда» թերթը—բոլշևիկների ԿԿ օրգանը, որի առաջին համարը լույս տեսավ 1912 թ. ապրիլի 22-ին (նոր տոմարով մայիսի 5-ին): Այդ թերթը բառի լիակատար իմաստով բանվորական թերթ էր, որովհետև նա հրատարակվում էր բանվորների գրոշներով: «Պրավդայի» համար կատարվող հանգանակությանը մասնակցում էին 1022 բանվորական խմբակ: Այն ժամանակվա հազարավոր բանվոր թղթակիցներ թերթը կապում էին մասսայի հետ: Մեն միայն առաջին տարվա ընթացքում «Պրավդան» զետեղեց բանվորների գրած 11,114 բանվորական թղթակցություն և 200 հոդված:

«Պրավդա» թերթը տոկունությամբ կռվում էր լիկվիդատորների դեմ կուսակցության համար, արթնացնում էր բանվոր դասակարգի գիտակցությունը և կոչ էր անում կռվելու հին, «չխուզած», ինչպես այն ժամանակ ասում էին, լոզունգների համար:

«Պրավդան» իրոք նորից համախմբեց բանվորներին իբրև հեղափոխական մարտական դասակարգ, «Պրավդան» համախմբեց մեր կուսակցությունն իբրև այդ դասակարգի ավանգարդ (առաջապահ):

Կառավարությունը դաժանորեն հետամտում էր թերթը: Առաջին տարվա ընթացքում նա 41 անգամ կոնֆիսկացիայի յենթարկվեց: Թերթը շատ անգամ փակեցին, բայց նա լույս էր տեսնում նոր անուններով՝ «Рабочая Правда», «Северная Правда», «Правда Труда» և այլն: Ցարական կառավարությունը թերթը «վերջնականապես» փակեց 1914 թ. պատերազմից առաջ:

*) Բլոկ—միություն:

ՀԵՏՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԴԱՍԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հակահեղափոխության և բանվորական շարժման նոր վերելքի ամբողջ շրջանն ահագին նշանակություն ունի մեր կուսակցության պատմության մեջ: Նա ցույց տվեց, որ իսկական բոլշևիկ, իսկական հեղափոխական կարելի յե անվանել միայն նրան, ով հակահեղափոխության տարիներում էլ պահում ե իր հայացքների ամրությունը և կարողանում ամեն տեսակ պայմաններում աշխատել հեղափոխության համար:

Այդ փորձը հատկապես գնահատելի յե Արևմուտքի մեր յեղբայրական կոմկուսակցությունների համար: Արևմուտքի կոմկուսակցությունները մեր կուսակցության համեմատությամբ յերիտասարդ են: Նրանք ծնվել են 1918—1920 թ. թ. հեղափոխական գրոհի ժամանակ: Այժմ նրանք ստիպված են, իհարկե այլ պայմաններում, ինչ որ նման վիճակ ապրել, որն ապրում եյին բոլշևիկները 1908—1914 թ. թ.: Պատահական չե, որ այժմ արևմտյան կոմկուսակցություններում ծագում են յերբեմն «աջ», յերբեմն «ձախ» թեքումներ (այս մասին մանրամասն տես 14-րդ գլուխը), և նրանց դեմ կռվելով, կոմկուսակցությունը մեծ դժվարությամբ գտնում ե ուղիղ գիծը, յուրացնելով բոլշևիկների ռեակցիայի տարիների փորձը:

Հարկավոր ե նաև այն սպիտակ տեռորի պայմաններում, որ այժմ գոյություն ունի Արևմուտքում, անլեգալ աշխատանքը զուգորդել լեգալի հետ: Հարկավոր ե գնալ արհմիությունները, հետամնաց բանվորներին իր կողմը գրավել: Հարկավոր ե մասսայական կուսակցություններ կառուցել, իսկ այդ միայն այն ժամանակ հնարավոր կը լինի, յերբ կոմմունիստները բանվոր դասակարգի հետ միասին կը կռվեն նրա կենսական, ամենօրյա կարիքների համար և կդիմադրեն լիկվիդատորական տրամադրություններին: Հարկավոր ե բանվոր դասակարգի ամենօրյա կարիքների համար կռիվ մղել լեգալ կազմակերպությունների (պարլամենտների, արհմիությունների և այլն) միջոցով ու միևնույն ժամանակ բանվորներին պատրաստել կապիտալիզմի դեմ վերջնական գրոհի համար: Բոլշևիկների կռիվը 1908—1914 թ. թ. շրջանում պետք ե այս տեսակետից հենց լավ դաս լինի բուրժուական յերկրների կոմմունիստական կուսակցությունների համար:

Հարց. Ինչումն ե լիկվիդատորության եյությունն ու վնասը և ինչու բոլշևիկները Վ. Ի. Լենինի գլխավորությամբ լիկվիդատորների դեմ կատաղի կռիվ եյին մղում:

2 Բոլշևիկները իմպերիալիստական պատերազմի դեմ մղած կռվում

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ռուսաստանում բանվորական շարժման նոր վերելքը, ինչպես մենք հենց նոր ասացինք, ընդհատվեց սկսված համաշխարհային սպանդով: Իսկ ինչի համար տեղի ունեցավ այդ սարսափելի պատերազմը, որ միլիոնավոր զոհեր տարավ ու ամբողջ յերկրներ ավերեց:

Հազիվ թե ԽՍՀՄ մեջ այժմ շատ բանվորներ ու գյուղացիներ գտնվեն, որոնք ասեն, թե 1914—1918 թ. թ. պատերազմն աստվածային պատիժ եր, թե այդ պատերազմում Ռուսաստանը կռվում եր «հանուն հավատի, ցարի և հայրենիքի»: Բոլորին հայտնի յե, որ այդ պատերազմը իմպերիալիստական (նվաճողական, հափշտակողական) եր:

Խոշորագույն պետությունները (Գերմանիան, Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը, Յապոնիան) բռնությամբ իրենց եյին հնազանդեցրել մի ամբողջ շարք յերկրներ (գաղութներ), լիովին տիրել նրանց: 1914 թ. մոտերքը նրանք ամբողջ աշխարքն իրենց մեջ բաժանել եյին (տես № 12 դիագրամը): Մինչդեռ արդյունաբերու-

ՄԵԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տարածությունը միլիոն քառ. կիլոմետրներով



Դիագրամ № 12. Ինչպես իմպերիալիստական պետությունները բաժանել են իրենց մեջ ամբողջ աշխարհը:

թյունը շարունակում էր զարգանալ, ապրանքներ շարունակ ավելի շատ էին հրապարակ նետվում, նրանց վաճառքը դժվարանում էր։ Բուրժուական երկրներն իրար դեմ առևտրական պատերազմ էին մղում, այսինքն ամեն մի պետություն աշխատում էր վառացնել իր մրցակցի առևտուրը։ Կռիվը հատկապես ուժեղ էր Անգլիայի ու Գերմանիայի միջև։ Նրանց կոնկուրենցիան (մրցությունը) անխուսափելիորեն հասցնում էր հում նյութի շուկայի և վաճառահանության շուկայի համար մղվող իսկական պատերազմի։ Բուրժուազիայի կապիտալներն այնքան էին աճել, որ նրանց անհրաժեշտ էին նոր երկրներ այդ կապիտալներն արտադրության մեջ դնելու համար, որպեսզի բանվորներից ու գյուղացիներից նոր օգուտներ քամեն։ Որ պատերազմն անհրաժեշտ էր, այդ կարելի էր տեսնել և այն կատաղի սպառազինումից, որ տեղի էր ունենում մինչև պատերազմը։ Պետությունները հսկայական փողեր էին ծախսում իրենց բանակների ու նավատորմի սպառազինման վրա։ Այսպես, Գերմանիան իր բոլոր ծախքերի ամեն մի 100 կոպեկից 46 կոպեկը ծախսում էր բանակի ու նավատորմի վրա, Անգլիան 100 կոպեկից ծախսում էր—38, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները—35, Ֆրանսիան—26, Իտալիան—25 և Ռուսաստանը—24 կոպեկ։

Այդ պատերազմում Գերմանիան ուզում էր ստանալ Փոքր Ասիան, բելգիական և ֆրանսիական գաղութներն Աֆրիկայում, գրավել Լեհաստանը, իրեն ենթարկել Բելգիան։ Անգլիան ուզում էր իր ձեռքը գցել աֆրիկական բոլոր գաղութները, բացի, հասկանալի յե, ֆրանսիականներից ու բելգիականներից, գրավել Փոքր Ասիան, Միջագետքը և այլն։ Այդ ս պ ա ն դ ի մ յ ո ւ ս բոլոր մասնակիցներն ուզում էին այս կամ այն կերպ շահվել ուրիշների հաշվին։ 1914 թ. պատերազմը տեղի էր ունենում վաճառահանության շուկաների համար, աշխարհը խոշորագույն պետությունների միջև բաժանելու համար։

Այս տեսակետից ցարական Ռուսաստանը բացառություն չէր կազմում։ Ինքնակալությունն ու բուրժուազիան, ճնշելով զանազան ազգությունների միլիոնավոր մասսաները, ձգտում էին այն բանին, որպեսզի իրենց մրցակիցներից գարձյալ նոր երկրներ ու ժողովուրդներ պոկեն։ Ինքնակալությունն ուզում էր գրավել Արևելյան Պրուսիան, Գալիցիան, իսկ հարավում նա ուզում էր ձեռք ձգել ամբողջ Հայաստանը, նա ուզում էր ստանալ Թուրքիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը, որ տերն Դարդանելի նեղուցը, (այդ նեղուցը Սև ծովը միացնում է Միջերկրականին և այդ է արտասահման հաց և ուրիշ հում նյութեր արտածելու ջրային ճանապարհը)։ Չնայած ռազմական տեխնիկայի թուլությանը գերմանականի համեմատությամբ Ռուսաստանն ահագին ուժ էր (պատերազմի ժամանակ զենքի տակ էր մինչև 12 միլլիոն զինվոր), որը գերմանացիների ուժերն արևմտյան ֆրոնտից քշում էր արևելյանը։ Ռուսաստանը «դաշնակիցներին» թնդանոթի միս (զինվորներ) էր մատակարարում, և գրանում էր նրա դերը։ Մեր զինվորները կռվում էին վոչ միայն Լեհաստանի, Արևելյան Պրուսիայի, Գալիցիայի դաշտերում, այլև Ֆրանսիայի ու Թուրքիայի դաշտերում։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հասկանալի յե, բոլոր պատերազմող երկրների բուրժուազիան չէր ասում, որ ինքը պատերազմ էր մղում կողոպուտի նպատակով։ Բոլոր երկրների կապիտալիստները՝ և Գերմանիայինը ու Ավստրո-Հունգարիայինը, և Անգլիայինը, Ֆրանսիայինն ու Ռուսաստանինը, բոլորն իրենց ձեռվ մեղադրում էին հակառակորդին հարձակման մեջ։ «Դաշնակիցների»[1]) բուրժուազիան (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Յապոնիա, Իտալիա, ավելի ուշ նաև Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները) ներշնչում էին բանվոր դասակարգին և գյուղացությանը, որ սա—վերջին, որ սա—«ազատագրական» պատերազմն է։ Նրանք ասում էին, որ հարկավոր է վոչնչացնել գերմանական իմպերիալիզմը, և այն ժամանակ չեն լինի պատերազմներ ու բռնություններ։

Հասկանալի յե, որ բանվորներն ու գյուղացիներն այնքան հեշտությամբ չէին հավատա բուրժուազիայի հեքիաթներին, եթե նա չգտներ յուրանոցուն ոգնական։ Այդ ոգնականը բոլոր երկրներում սոցիալ-դեմոկրատական կուսակցություններն էին, վորոնք դավաճանում էին բանվոր դասակարգի գործին։ Նրանցից ամեն մեկն իր երկրում գնաց իր կառավարության ետևից։ Նրանք պաշտպան կանգնեցին «իրենց հայրենիքին», մոռացության մատնելով Մարքսի ուսմունքը, որ ասում էր, թե կապիտալիստական կարգում բանվորները հայրենիք ունենալ չեն կարող։

Պատերազմ վարելու համար բուրժուազիային հարկավոր է ամեն մի երկրի ներսում դասակարգային կռվի խաղաղացում և սոցիալ-դեմոկրատները, ամենուրեք քծնելով բուրժուազիային և կառավարությանը, քաղաքացիական խաղաղություն էին ստեղծում պատերազմող երկրների ներսում։ Սոցիալ-դեմոկրատները ներշնչում էին բանվոր դասակարգին, որ նա պետք է կռվի, պետք է մեռնի «հայրենիքի համար»։ 1914 թ. պատերազմից շատ տարիներ առաջ || Ինտեր-

[1]) Այլ կերպ—Անտանտա, այսինքն այդ պետությունների միությունը։

նացիոնալը[1]) խոսում էր նրա անխուսափելիության մասին։ Դեռ ավելին, իր վորոշումների մեջ—հատկապես 1912 թ. Բազելի կոնգրեսում (համագումարում)—նա նախազգուշացնում էր բուրժուազիային, սպառնում նրան, վոր պատերազմն անխուսափելիորեն հեղափոխություն կառաջացնի։

Իսկ յերբ պատերազմը վրա հասավ, այն ժամանակ սոցիալ-դեմոկրատները վոչ միայն չփորձեցին բանվորների բողոքներ կազմակերպել պատերազմի դեմ, այլև կոչ եյին անում նրանց մասնակցել այդ սպանդին։ Շատ յերկրներում նրանք նույնիսկ մինիստրներ դարձան (օրինակ՝ Գերմանիայում—Շայդեմանը, Բելգիայում—Վանդերվելդեն, Ֆրանսիայում—Ալբերտ Թոման) և պարլամենտներում քվեարկում եյին հօգուտ պատերազմական վարկերի (Գերմանիա, Ֆրանսիա և այլն)։

Ահա ինչու հեղափոխական սոցիալ-դեմոկրատները, վորոնք հավատարիմ եյին բանվոր դասակարգի գործին, նրանց սկսեցին անվանել սոցիալ-դավաճաններ, սոցիալ-հայրենասերներ կամ սոցիալ-շովինիստներ[2])։

Սոցիալ-շովինիզմը տիրապետող հոսանք դարձավ սոցիալ-դեմոկրատների ներսում։ Գործի եյությունը հանգում էր նրան, վոր սոցիալ-դեմոկրատների ահագին մեծամասնությունը հրաժարվում էր պրոլետարական միջազգային համերաշխությունից և կոչ էր անում բանվորներին պատերազմել իրար դեմ ի պաշտպանություն «իրենց» յերկրների կողոպտիչ-կապիտալիստների շահերի։

Բայց ինչո՞ւ եյին լսում բանվորներն այդ դավաճան-առաջնորդներին։ Մինչև պատերազմ կապիտալիզմի համեմատաբար խաղաղ ծաղկման տասնամյակները, բանվորի կյանքի վորոշ լավացումը, Արևմտյան Յեվրոպայում հեղափոխական ցնցումների բացակայությունը թմրացրել եյին պրոլետարիատի հեղափոխական կամքը։

Սոցիալ-դեմոկրատիան, վոր կանգնած էր բանվորական շարժման գլխին, տարեց տարի վարակվում էր օպորտյունիզմով։ Արդեն պատերազմից շատ առաջ նա, ինչպես մեր մենշևիկ-լիկվիդատորները, հեղափոխության փոխարեն քարոզում էր պարլամենտների միջոցով խաղաղ պայքար բարենորոգումների (ռեֆորմների) համար։ Յեթե սրան ավելացնենք և այն, վոր Անգլիայի, Գերմանիայի և ուրիշ յերկրների կապիտալիստները գաղութային բանվորների դաժան շահագործման հաշվին լավացրել եյին իրենց յերկրների պրոլետարիատի

[1]) I Ինտերնացիոնալը, վոր հիմնեցին Մարքսն ու Էնգելսը, աշխատում էր 1864 թ. մինչև 1872 թ.։ II Ինտերնացիոնալը կազմակերպված է 1889 թ., քայքայվեց 1914 թ. պատերազմի սկզբում, նորից վերականգնվեց պատերազմից հետո, 1919 թ.։

[2]) Շովինիստ—ազգայնամոլ, նա, ով յերկինք է բարձրացնում իր յերկիրը և ատում օտարերկրացիներին։

վերնաշերտի (այսպես կոչված բանվորական արիստոկրատիայի) դրությունը, ապա հասկանալի կը լինի, թե ինչու բանվորները գնում եյին բուրժուազիայի յետևից դեպի իմպերիալիստական սպանդ։

ՑԵՆՏՐԻԶՄ

Բացի ծայրահեղ աջ, հայտնապես-դավաճանական հոսանքից, սոցիալ-դեմոկրատիայի ներսում կար մի ուրիշ—միջին, այսպես կոչված ցենտրիստական հոսանք։ Նրա հայացքների արտահայտիչներն եյին՝ ռուսական մենշևիկները Մարտովի գլխավորությամբ (Պլեխանովը իսկական սոցիալ-շովինիստ էր դարձել), եսերների մի փոքրիկ խմբակ[1]) (չեռնովականները), գերմանական սոցիալ-դեմոկրատների մի խմբակ Կաուցկու գլխավորությամբ, անգլիական սոցիալիստների մի խմբակ Մակդոնալդի գլխավորությամբ և ուրիշները։ Ցենտրիստները համարում եյին, թե սոցիալ-դեմոկրատների գործըն այն պետք է լինի, վոր հարկադրեն պատերազմող կառավարություններին հաշտություն կնքելը։ Նրանք չեյին հասկանում կամ չեյին ուզում հասկանալ, վոր յերբ պատերազմն սկսվել է, ապա յերկխայտառություն և պետությունների պատերազմական դրության ժամանակ կառավարություններին «համոզել», վոր պատերազմը դադարեցնեն։ Նրանք դեմ եյին իմպերիալիստական պատերազմին, բայց միևնույն ժամանակ դեմ եյին նաև քաղաքացիական պատերազմին, դասակարգերի պատերազմին. Նրանք հայտնապես չեյին դավաճանում բանվոր դասակարգին, բայց դրա հետ միասին չեյին համարձակվում կոչել նրան դեպի պրոլետարական հեղափոխություն, վորովհետև չեյին հավատում հեղափոխության։ Ընկեր Տրոցկին պատերազմի տարիներին հարում էր միջազգային սոցիալ-դեմոկրատիայի այդ հոսանքին։ Նա կողմնակից չէր, վոր պատերազմում ցարական կառավարությունը պարտվի, նա վերջնականապես չէր խզում կապերը II Ինտերնացիոնալի հետ։ Ընկեր Տրոցկին իր լոզունգն առաջ քաշեց՝ «վո՛չ հաղթություններ, վո՛չ էլ պարտություններ», այսինքն այլ կերպ ասած, պատերազմի դեմ մղած պայքարում կանգ էր առնում ցարական իշխանության պարտության հնարավորության առաջ։ Պրոլետարիատի կողմից իշխանության նվաճման միջոցով պատերազմը դադարեցնելու համար մղվող կռվի փոխարեն, նա, ցենտրիստներին հետևելով, առաջին պլանն էր քաշում խաղաղության համար մղվող կռիվը։

ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԿՌԻՎԸ ՇՈՎԻՆԻՍՏՆԵՐԻ ՅԵՎ ՑԵՆՏՐԻՍՏՆԵՐԻ ԴԵՄ

Ամբողջ միջազգային սոցիալ-դեմոկրատիայի մեջ պատերազմի վերաբերմամբ իրոք միջազգային դիրք բռնեցին միայն բոլշևիկները Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, գերմանական ս.—դ. մի փոքրիկ խմբակ

[1]) Եսերների մեծամասնությունը «պաշտպանողական» էր։ Կերենսկին դեռ Պետական Դումայում վորոշակի հայտարարեց, վոր ինքը և իր կուսակցությունը կողմնակից են Գերմանիայի դեմ մղվող պատերազմին։

Կարլ Լիբկնեխտի, Ռոզա Լյուքսեմբուրգի ղեկավարությամբ (վերջիններս Գերմանիայում), բուլղարական և լեհական ընկերների մի մասը, նաև փոքրաթիվ անհատներ։

Յերբ պատերազմն սկսվեց, այն ժամանակ բոլշևիկների ֆրակցիան Պետական Դումայում հայտարարեց, վոր այս պատերազմը վոճրագործություն է ժողովրդի դեմ։ Սրա համար բոլշևիկները (Բադաևը, Պետրովսկին, Մուրանովը և ուրիշները) Սիբիր աքսորվեցին։

Կուսակցության Կ. Կ. մանիֆեստ հրատարակեց, վորի մեջ մասսաներին բացատրում էր հափշտակողական պատերազմի էությունը և II Ինտերնացիոնալի սոցիալ-դավաճանությունը։ Լենինը և բոլոր բոլշևիկները պայքար մղեցին ինչպես սոցիալ-շովինիստների, այնպես էլ ցենտրիստների և ընկեր Տրոցկու խմբակի դեմ, վորովհետև ցենտրիստները իրոք միայն հեղափոխական ֆրազով քողարկում էին հենց նույն սոցիալ-շովինիզմը։ «Իրենց» կառավարությունների զորքերի պարտությունից հրաժարվելը, քաղաքացիական պատերազմից հրաժարվելը, պացիֆիստական[1]) դատարկախոսությունը, — այս բոլորը ձեռնտու էր կապիտալիստներին։ Հիշված մանիֆեստում Լենինը տվեց ճշգրիտ և հասկանալի լոզունգ՝ «պատերազմ — պատերազմին»։ Վերածել իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի — ահա պրոլետարիատի անելիքը։

Իր հոդվածներում Վ. Ի. Լենինը մերկացնում էր սոցիալ-շովինիստների դավաճանությունը և ցենտրիստների պատրությունը։ Լենինն ապացուցում էր, վոր ընկված ժողովուրդները կարող են այդ պատերազմից չելնել և իրոք ընդմիշտ այն դադարեցնել միայն այն դեպքում, յեթե բանվորներն ու գյուղացիները կռիվ մղեն իրենց յերկրի ներսում, իրենց դասակարգային թշնամու — բուրժուազիայի դեմ։ Վոչ թե քաղաքացիական խաղաղություն, այլ քաղաքացիական պատերազմ, վորին վերջիվերջո կը համարձակվեն դիմել պատերազմից ընկված գորշ շինելներով աշխատավորները, — ահա ելքը ստեղծված դրությունից։ Լենինը կոչ էր անում միջազգային պրոլետարիատին միջազգային համերաշխության, կոչ էր անում պրոլետարական հեղափոխության, իշխանության գրավման։

Ռուսաստանի համար Լենինը պրոլետարիատի առաջ դնում էր

[1]) Պացիֆիստներ անվանում են նրանց, վորոնք խոսում են խաղաղության մասին, պատերազմի անհարկավորության մասին։ Այս — պրոլետարիատի համար վտանգավոր հոսանք է, վորովհետև մթագնում է գործի էությունը։ Պատերազմները բուրժուազիայի տիրապետության ժամանակ անխուսափելի յեն և յեթե անպայման խաղաղություն ենք ուզում, ապա պետք է տապալենք բուրժուական կառավարությունները և հաստատենք պրոլետարիատի դիկտատուրա, — այն ժամանակ էլ պատերազմներ չեն լինի։

ինքնակալության տապալման խնդիրը և նրա փոխարինումը պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայով։ Բայց նա հայտարարում էր, վոր մեր դեմոկրատական հեղափոխությունն այժմ կաճի ու կը փոխվի սոցիալիստականի։

Պատերազմի այդ տարիներում Լենինը շատ անգամ իր սակավաթիվ գաղափարակիցներով ձգտում էր նոր Ինտերնացիոնալ ստեղծել։ Ինչպես հայտնի է, Կոմմունիստական Ինտերնացիոնալը ծագեց արդեն մեր մեծ պրոլետարական հեղափոխությունից հետո (1919 թ.), բայց նրա հիմնական կորիզը Լենինը պատրաստել էր դեռ պատերազմի տարիներում։

ՄԱՍՍԱՆԵՐԸ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԿՈՂՄԸ

Բանվորները և գյուղացիները խաբված բուրժուազիայից և սոցիալ-դավաճաններից, ավերված պատերազմից, խոցոտված ու խեղանդամված, շուտով սկսում են հասկանալ, վոր ստեղծված դրությունից միակ յելքը հանդիսանում է քաղաքացիական պատերազմը — հեղափոխությունը։

Բանվորական մասսան սկսում է վորդեգրել բոլշևիկների լոզունգը՝ «կորչի պատերազմը»։ Մեր բուրժուազիան, արևմտյանի օրինակով, ձգտում է բանվորներին գրավել դեպի յերկրի պաշտպանությունը։ Խոշոր կապիտալիստները՝ Գուչկովը, Ռյաբուշինսկին, Նոբելը և ուրիշները 1915 թ. կազմակերպում են կենտրոնական ռազմարդյունաբերական կոմիտե, վոր իրեն նպատակ է դնում բարձրացնել ցարական բանակի ռազմունակությունը, լավացնելով նրա մատակարարման և սպառազինման գործը։ Մենշևիկ-պաշտպանողականները Պիտերի բանվորներին կոչ էին անում իրենց պատգամավորներն ընտրել այդ կոմիտեյի համար։ Յերևաց, վոր մասսաները բոլշևիկների կողմն են, և կոմիտեյի ընտրությունները տապալվեցին։ Միայն բոլշևիկյան պատգամավորների ձերբակալությունից հետո, Գուչկովը մենշևիկների պաշտպանությամբ, վորոնց գլուխ էր անցած Գվոզդյովը, մի կերպ գլուխ բերեց կենտրոնական ռազմ-արդյունաբերական կոմիտեյի «բանվորական խմբակը»։

Ցարական բանակների ջախջախումը Լեհաստանում և Գալիցիայում, սովը, ցարական պալատի շվայտ կյանքը — այս բոլորը նպաստեց, վոր բանվորական և գյուղացական մասսաները միանան բոլշևիկյան լոզունգների շուրջը։

1915 թվից սկսվում է գործադուլային շարժման նոր ալիքը (տես № 11 դիագրամը)։ 1916 թ. Պետերբուրգում ի հիշատակ հունվարի 9-ի (հունվարի 22-ի նոր տոմարով) բանվորները ցույցի յելան

մինչև 100 հազար մարդ։ Բանվորները դրոշների վրա հեղափոխական լոզունգներ ունեյին՝ «կորչի ինքնակալությունը», «կորչի պատերազմը» և այլն։ Իսկ խրամատներում բանվոր-զինվորները լուսավորում եյին գյուղացական մասսային, իրենց համար հավատարիմ դաշնակից եյին պատրաստում ինքնակալության, բուրժուազիայի և պատերազմի դեմ կռվելու համար։

Հ ա ր ց. *Ի ն չ ո՞ ւ ս կ ս վ ե ց և ի ն չ ի՞ հ ա մ ա ր է ր մ ղ վ ու մ ի մ պ ե ր ի ա լ ի ս տ ա կ ա ն* պատերազմը։

ԿՏՈՐՆԵՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Լիկվիդատորության մասին

Լիկվիդատորությունը բառի նեղ իմաստով, մենշևիկների լիկվիդատորությունն իդեապես սոցիալիստական պրոլետարիատի հեղափոխական դասակարգային կռվի ժխտումն է ընդհանրապես և մեր բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ պրոլետարիատի հեգեմոնիայի ժխտումը մասնավորապես...։

Կազմակերպչորեն լիկվիդատորությունը ժխտումն է անլեգալ սոցիալ-դեմոկրատական կուսակցության անհրաժեշտության և դրա հետ կապված հրաժարումը ՌՍԴԲԿ (նրանից դուրս գալը, կռիվ նրա դեմ լեգալ մամուլի եջերում, լեգալ բանվորական կազմակերպություններում, արհեստակցական միությունններում, կոոպերատիվներում, համագումարներում, ուր մասնակցում են բանվոր պատգամավորներ և այլն)...։

(Վ. Ի. Լենին, Աշխ. ժող. I հրատ. հ. XI, մաս I, եջ 274-275)

2. «Պրավդա» թերթի մասին

Կուսակցության, մասսայական բանվորական կուսակցության ըստեղծման համար մղվող այս կռվի կենտրոնում կանգնած եր «Պրավդան»։ Նա սոսկ թերթ չեր, վոր բոլշևիկների հաջողությունների ամփոփումն եր տալիս լեգալ բանվորական կազմակերպությունների նվաճման գործում,—նա դրա հետ միասին կազմակերպիչ կենտրոն եր, վոր այդ կազմակերպությունները համախմբում եր կուսակցության ընդհատակյա օջախների շուրջը և ուղղում բանվորական շարժումը դեպի մի վորոշ նպատակ։ Ընկ. Լենինը դեռ «Ի՞նչ անել» գրքույկում (1902 թ.) գրում եր, վոր լավ դրված համառուսական մարտական թերթը պետք է վոչ միայն հավաքական ագիտատոր լինի, այլև հավաքական կազմակերպիչ։ Հենց այսպիսի թերթ դարձավ «Պրավդան» ընդհատակի

պահպանման և բանվորական լեգալ կազմակերպությունների նվաճման համար լիկվիդատորների դեմ մղած կռվի շրջանում։ Յեթե ճիշտ է այն դրությունը, թե առանց լիկվիդատորների վրա հաղթանակ տանելու մեզ մոտ չեր լինի այն կուսակցությունը, վոր ուժեղ է համախմբվածությամբ և անհաղթելի՝ դեպի պրոլետարիատն ունեցած իր անձնվիրությամբ, մի կուսակցություն, վորը կազմակերպեց 1917 թ. Հոկտեմբերը,—ապա նույնքան ճիշտ է և այն, վոր հին «Պրավդայի» համառ և անձնուրաց աշխատանքը նշանակալի չափով նախապատրաստեց և արագացրեց այդ հաղթանակը լիկվիդատորների վրա։ Այս իմաստով հին «Պրավդան» անկասկած ռուսական պրոլետարիատի ապագա պանծալի հաղթանակների նախագուշակն եր։

(*Ս տ ա լ ի ն*, «Պրավդայի» տասնամյակի առթիվ, «Պրավդա» № 98, 1922)։

3. Պատերազմի մասին

Ամբողջ յերկրի այս բաժանումից, կապիտալիստական մոնոպոլիայի այս տիրապետությունից, չնչին թվով խոշորագույն բանկերի—յերկուսի, յերեքի, չորսի, հնգի, վոչ ավելի—պետության վրա ունեցած այս անսահման իշխանությունից անխուսափելիորեն աճեց 1914—1918 թվականների առաջին իմպերիալիստական պատերազմը։ Այդ պատերազմը մղվում եր նրա համար, վորպեսզի ամբողջ աշխարհը վերաբաժանվի։ Պատերազմը մղվում եր նրա համար, թե խոշորագույն պետությունների չնչին խմբակներից վորը, անգլիականը, թե՞ գերմանականը հնարավորություն և իրավունք ստանա ամբողջ յերկիրը կողոպտելու, խեղդելու, շահագործելու։

(Վ. Ի. Լենին, Աշխ. ժող. հ. XVIII, եջ 254)

4. Կուսակցության խնդիրները պատերազմի ժամանակ

Ամեն մի յերկրի սոցիալ-դեմոկրատիայի խնդիրը պետք է լինի առաջին հերթին կռիվ մղել տվյալ յերկրի շովինիզմի դեմ։ Ռուսաստանում այդ շովինիզմն ամբողջովին ընդգրկել է բուրժուական լիբերալիզմը («կադետներ») և նարոդնիկների մի մասը մինչև եսերները և «աջ» սոցիալ-դեմոկրատներին...։

Ռուսաստանում սոցիալ-դեմոկրատների խնդիրները, այս յերկրի ամենից ավելի հետամնաց լինելու շնորհիվ, վոր դեռ չի ավարտել իր բուրժուական հեղափոխությունը,—պետք է առաջվա նման հետևողական դեմոկրատական վերակազմության յերեք հիմնական պայմանները լինեն՝ դեմոկրատական հանրապետություն (բոլոր ազգերի լիակատար իրավահավասարությամբ և ինքնորոշմամբ), կալվածատիրական հողե-

րի կոնֆիսկացիա և 8-ժամյա բանվորական օր։ Բայց բոլոր առաջավոր յերկրներում պատերազմը հերթի յե դնում սոցիալիստական հեղափոխության լոզունգը, վորն այնքան ավելի կենսական ե դառնում, վորքան ավելի շատ են ընկնում պրոլետարիատի ուսերին պատերազմի ծանրությունները, վորքան ավելի ակտիվ ե դառնալու նրա դերը Յեվրոպայի վերաստեղծման ժամանակ արդի «հայրենասիրական» բարբարոսության սարսափներից հետո խոշոր կապիտալիզմի տեխնիկական հսկայական հաջողությունների պայմաններում։

Բուրժուազիայի կողմից պատերազմական ժամանակի օրենքների օգտագործումը՝ պրոլետարիատի բերանը լիովին փակելու համար՝ նրա առաջ անպայման խնդիր ե դնում ստեղծելու ագիտացիայի ու կազմակերպության անլեգալ ձևեր։ Թող օպորտյունիստները «պահպանեն» լեգալ կազմակերպություններն իրենց համոզմունքների դավաճանության գնով,—հեղափոխական սոցիալ-դեմոկրատները կօգտագործեն բանվոր դասակարգի կազմակերպչական հմտությունները և կապերը, վոր ստեղծեն կրիզիսի եպոխային համապատասխանող սոցիալիզմի համար մղվող կռվի անլեգալ ձևեր և բանվորներին համախմբեն վոչ թե իրենց յերկրի շովինիստական բուրժուազիայի, այլ բոլոր յերկրների բանվորների շուրջը։ Պրոլետարական Ինտերնացիոնալը չի վոչընչացել ու չի յել վոչնչանա։ Բանվորական մասսաները բոլոր արգելքներն անցնելով նոր Ինտերնացիոնալ կստեղծեն։ Օպորտյունիզմի այժմյան հաղթանակը յերկարատև չե։ Ինչքան ավելի շատ լինեն պատերազմի զոհերը, այնքան ավելի պարզ կլինի բանվորական մասսաների համար օպորտյունիստների դավաճանությունը բանվորական գործին և զենքն ամեն մի յերկրի կառավարության ու բուրժուազիայի դեմ դարձնելու անհրաժեշտությունը։

Արդի իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի փոխարկելը միակ ճիշտ պրոլետարական լոզունգն ե, վորը մատնանշված ե Կոմմունայի փորձով, նշված Բազելի (1912 թ.) բանաձևով և վորը բխում ե բարձր զարգացած բուրժուական յերկրների միջև տեղի ունեցող իմպերիալիստական պատերազմի բոլոր պայմաններից։ Ինչքան ել այսպիսի փոխարկման դժվարությունները մեծ թվան այս կամ այն մոմենտում, սոցիալիստները յերբեք չեն հրաժարվի այդ ուղղությամբ կատարվելիք սիստեմատիկ, համառ, անշեղ նախապատրաստական աշխատանքից, քանի վոր պատերազմը դարձել ե փաստ։

Միայն այս ճանապարհով պրոլետարիատը կկարողանա փրկվել շովինիստական բուրժուազիայի կախումից և այս կամ այն ձևով ավելի կամ պակաս արագությամբ վճռական քայլեր անել դեպի

ժողովուրդների իսկական ազատությունը տանող ճանապարհը և դեպի սոցիալիզմ տանող ճանապարհը։

Կեցցե՛ բանվորների միջազգային յեղբայրությունը ընդդեմ բոլոր յերկրների բուրժուազիայի, շովինիզմի ու պատերազմի։

Կեցցե՛ օպորտյունիզմից ազատագրված պրոլետարական Ինտերնացիոնալը։

Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության կենտրոնական կոմիտե. (Պատերազմի մասին հրատարակված մանիֆեստից, ՌԿԿ իր համագումարների և կոնֆերենցիաների բանաձևերում. 2-րդ հրատ. եջ 123-124)։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պարզեցե՛ք, ինչպես անդրադարձան ռեակցիայի և նոր վերելքի տարիները ձեր ձեռնարկության բանվորական շարժման վրա։ Յեթե ձեռնարկության մեջ սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն կար հեղափոխական տարիներում (1905—1907), ապա պահվե՞ց նա արդյոք ռեակցիայի տարիներում, թե միայն առանձին կուսակցականներ մնացին։ Հետևեցե՛ք, ինչը նոր զարկ տվեց ձեր ձեռնարկության շարժման աճմանը և ինչ ձև ընդունեց այն։ Յեզրակացությունները գրեցե՛ք տետրակում։

2. Պարզեցե՛ք, ինչպես անդրադարձավ պատերազմը ձեր ձեռնարկության բանվորների վրա։ Գործադուլ, ցույցեր յեղա՞ն և ի՞նչ դեր եյին խաղում նրանցում մենշևիկները և բոլշևիկները, յեթե նրանք կային։ Յեզրակացությունները գրեցե՛ք տետրակում։

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչպես եյին վերաբերվում բոլշևիկները լեգալ հնարավորությունների օգտագործանը։
2. Ի՞նչ դեր խաղաց «Պրավդա» թերթը։
3. Ի՞նչ դասեր կարող են առնել Արևմուտքի կոմկուսակցությունները մեր կուսակցության 1908-1914 թ. թ. կռվի փորձից։
4. Ի՞նչ բնույթ եր կրում 1914 թ. պատերազմը։
5. Ի՞նչու բանվոր դասակարգը 1914. թ. սկսեց պաշտպանել բուրժուական հայրենիքը։
6. Պատմեցե՛ք պատերազմի տարիների միջազգային բանվորական շարժման յերեք հոսանքի մասին։
7. Ի՞նչպիսի հեղափոխության եր կոչում Լենինը Ռուսաստանի և Արևմուտքի բանվորներին։

րի կոնֆիսկացիա և 8-ժամյա բանվորական օր։ Բայց բոլոր առաջավոր երկրներում պատերազմը հերթի է դնում սոցիալիստական հեղափոխության լոզունգը, վորն այնքան ավելի կենսական է դառնում, վորքան ավելի շատ են ընկնում պրոլետարիատի ուսերին պատերազմի ծանրությունները, վորքան ավելի ակտիվ է դառնալու նրա դերը Յեվրոպայի վերաստեղծման ժամանակ արդի «հայրենասիրական» բարբարոսության սարսափներից հետո խոշոր կապիտալիզմի տեխնիկական հսկայական հաջողությունների պայմաններում։

Բուրժուազիայի կողմից պատերազմական ժամանակի օրենքների ոգտագործումը՝ պրոլետարիատի բերանը լիովին փակելու համար՝ նրա առաջ անպայման խնդիր է դնում ստեղծելու ագիտացիայի ու կազմակերպության անլեգալ ձևեր։ Թող ոպորտունիստները «պահպանեն» լեգալ կազմակերպություններն իրենց համոզմունքների դավաճանության գնով,—հեղափոխական սոցիալ-դեմոկրատները կոգտագործեն բանվոր դասակարգի կազմակերպչական հմտությունները և կապերը, վոր ստեղծեն կրիզիսի եպոխային համապատասխանող սոցիալիզմի համար մղվող կռվի անլեգալ ձևեր և բանվորներին համախմբեն վոչ թե իրենց յերկրի շովինիստական բուրժուազիայի, այլ բոլոր յերկրների բանվորների շուրջը։ Պրոլետարական Ինտերնացիոնալը չի վոչնչացել ու չի էլ վոչնչանա։ Բանվորական մասսաները բոլոր արգելքներն անցնելով նոր Ինտերնացիոնալ կստեղծեն։ Ոպորտունիզմի այժմյան հաղթանակը յերկարատև չէ։ Ինչքան ավելի շատ լինեն պատերազմի զոհերը, այնքան ավելի պարզ կլինի բանվորական մասսաների համար ոպորտունիստների դավաճանությունը բանվորական գործին և զենքն ամեն մի յերկրի կառավարության ու բուրժուազիայի դեմ դարձնելու անհրաժեշտությունը։

Արդի իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի փոխարկելը միակ ճիշտ պրոլետարական լոզունգն է, վորը մատնանշված է Կոմմունայի փորձով, նշված Բազելի (1912 թ.) բանաձևով և վորը բխում է բարձր զարգացած բուրժուական յերկրների միջև տեղի ունեցող իմպերիալիստական պատերազմի բոլոր պայմաններից։ Ինչքան էլ այսպիսի փոխարկման դժվարությունները մեծ թվան այս կամ այն մոմենտում, սոցիալիստները յերբեք չեն հրաժարվի այդ ուղղությամբ կատարվելիք սիստեմատիկ, համառ, անշեղ նախապատրաստական աշխատանքից, քանի վոր պատերազմը դարձել է փաստ։

Միայն այս ճանապարհով պրոլետարիատը կկարողանա փրկվել շովինիստական բուրժուազիայի կախումից և այս կամ այն ձևով ավելի կամ պակաս արագությամբ վճռական քայլեր անել դեպի

ժողովուրդների իսկական ազատությունը տանող ճանապարհը և դեպի սոցիալիզմ տանող ճանապարհը։

Կեցցե՜ բանվորների միջազգային յեղբայրությունը ընդդեմ բոլոր յերկրների բուրժուազիայի, շովինիզմի ու պատերազմի։

Կեցցե՜ ոպորտունիզմից ազատագրված պրոլետարական Ինտերնացիոնալը։

Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության կենտրոնական կոմիտե. (Պատերազմի մասին հրատարակված մանիֆեստից, ՌԿԿ իր համագումարների և կոնֆերենցիաների բանաձևերում. 2-րդ հրատ. եջ 123-124)։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պարզեցե՛ք, ինչպես անդրադարձան ռեակցիայի և նոր վերելքի տարիները ձեր ձեռնարկության բանվորական շարժման վրա։ Յեթե ձեռնարկության մեջ սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն կար հեղափոխական տարիներում (1905—1907), ապա պահվե՞ց նա արդյոք ռեակցիայի տարիներում, թե միայն առանձին կուսակցականներ մնացին։ Հետևեցե՛ք, ինչը նոր զարկ տվեց ձեր ձեռնարկության շարժման աճմանը և ինչ ձև ընդունեց այն։ Յեզրակացությունները գրեցեք տետրակում։

2. Պարզեցե՛ք, ինչպես անդրադարձավ պատերազմը ձեր ձեռնարկության բանվորների վրա։ Գործադուլ, ցույցեր յեղա՞ն և ի՞նչ դեր էին խաղում նրանցում մենշևիկները և բոլշևիկները, յեթե նրանք կային։ Յեզրակացությունները գրեցեք տետրակում։

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչպես էին վերաբերվում բոլշևիկները լեգալ հնարավորությունների ոգտագործանը։
2. Ի՞նչ դեր խաղաց «Պրավդա» թերթը։
3. Ի՞նչ դասեր կարող են առնել Արևմուտքի կոմկուսակցությունները մեր կուսակցության 1908-1914 թ. թ. կռվի փորձից։
4. Ի՞նչ բնույթ էր կրում 1914 թ. պատերազմը։
5. Ի՞նչու բանվոր դասակարգը 1914. թ. սկսեց պաշտպանել բուրժուական հայրենիքը։
6. Պատմեցե՛ք պատերազմի տարիների միջազգային բանվորական շարժման յերեք հոսանքի մասին։
7. Ի՞նչպիսի հեղափոխության էր կոչում Լենինը Ռուսաստանի և Արևմուտքի բանվորներին։

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

Կուսակցությունը յեվ բանվոր դասակարգը Հոկտեմբերի համար մղվող կռվում յեվ նրա նվաճումների պաշտպանության գործում

ԻՆՉԻ ՄԱՍԻՆ Ե ԶՐՈՒՅՑԸ

Անցյալ զրույցում մենք ցույց տվեցինք, վոր մենշևիկների ոպորտյունիզմը ռեակցիայի տարիներում նրանց հասցրեց լիկվիդատորության, իսկ պատերազմի տարիներում—սոցիալ-շովինիզմի։ Բոլշևիկները կռիվ եյին մղում կուսակցության պահպանման և ամրապնդման համար և մեծ հաջողությունների հասան բանվոր դասակարգի վրա ազդեցություն ձեռք բերելու մեջ, բայց բանվորական շարժման սկսված վերելքը պատերազմով ընդհատվեց։

Ներկա զրույցում մենք քննության կառնենք, թե ինչպես բոլշևիկները շարունակեցին 1917 թ. փետրվարից մինչև հոկտեմբեր իրենց հեղափոխական ուղիղ գիծը, վոր պահել եյին պատերազմի ծանր տարիներում։ Մենք կը քըննենք. 1) ինչպես բոլշևիկների հեղափոխական ուղիղ լոզունգները և տակտիկան նրանց օգնեցին ոպորտյունիստների-մենշևիկների և եսերների դեմ մղած կռվում իրենց կողմը գրավել բանվորների և գյուղացիների մեծամասնությունը. 2) ինչպես բոլշևիկներն ուղիղ նշեցին և իրապես անցկացրին բանվորների ու գյուղացիների միությունը՝ կալվածատերերին ու բուրժուազիային վերջնականապես տապալելու համար, ինչպես նրանք իրականացրին բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից սոցիալիստականին անցնելը. 3) ինչպես բոլշևիկների ղեկավարությամբ բանվորներն ու գյուղացիները Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, յերեք տարվա ընթացքում, պաշտպանում եյին նրա նվաճումները հակահեղափոխության կատաղի գրոհից։

1. Բոլշևիկները Հոկտեմբերի ուղիներում

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Մենք արդեն մատնանշել ենք, վոր այն նախադրյալները, վորոնք առաջ բերին առաջին հեղափոխությունը, նախադրյալներ հանդիսացան և փետրվարյան հեղափոխության համար։ Տարբերությունը նրանում եր, վոր 1905 թ.

հետո արդյունաբերությունը 12 տարվա ընթացքում հսկայական չափերով աճել եր և աշխատավորների ու շահագործողների միջև հակասությունները ծայրահեղորեն սրվել եյին ավերիչ պատերազմի շնորհիվ։ Պատերազմը կլանում եր ժողովրդական տնտեսությունը։ Այսպես, մետալլուրգիական արդյունաբերության ասպարեզում բոլոր շինվածքների 90% ավելին պատերազմի վրա յեր գործադրվում, տեքստիլ արդյունաբերությունն իր արտադրության 70% տալիս եր բանակին և այլն։ Մասսաներն աղքատանում եյին և անբավականությունն ընդգրկում եր բանակն ու թիկունքը։

Քաղաքներում ու հատկապես Պետերբուրգում (1916 թ. մտցըրվեցին հացի քարտեր) սովն ել ավելի սրեց բանվորների ու գյուղացիների անբավականությունը և ատելությունը դեպի ցարիզմը։ Փետրվարի վերջին մայրաքաղաքի բանվորները ցույցերի յելան «հաց», «վերադարձրեք ամուսիններիս խրամատներից», «կորչի պատերազմը» լոզունգներով։ Շարժումն շուտով ընդգրկեց Պիտերի բոլոր ձեռնարկությունները։ Բանակն ապստամբների կողմն անցավ, և մի քանի որվա մեջ միապետությունը վոչնչացվեց ժողովրդի կողմից [1]։

Ինչու այսպես արագ, մի քանի որվա մեջ, սրբվեց ցարի գահը և նրա վողջ կարգը։—Հենց այն պատճառով, վոր բանվորներն ու գյուղացիները դրանից 12 տարի առաջ արել եյին «գլխավոր փորձը»—առաջին հեղափոխությունը, վորովհետև պատերազմը նպաստեց աշխատավորների գիտակցության պայծառանալուն, վորովհետև բանվոր դասակարգն ու գյուղացությունը (բանակը), վորոնք խաղաղություն և հող եյին ուզում, իրար հետ միություն կնքեցին։ Վորովհետև Նիկոլայ 2-րդի միապետության դեմ հանդես յեկան և՛ կապիտալիստները, և՛ անգլո-ֆրանսական բանկիրները։ Միապետության դեմ յելած այս բոլոր դասակարգերը, իհարկե, իրենց շահերն ունեյին.—բուրժուազիան ուզում եր պահպանել այն, վոր պատերազմը լավագույն ձևով մղվի. բանվորներն ու գյուղացիները կռվում եյին «հանուն հացի, հանուն խաղաղության, հանուն իսկական ազատության» (Լենին)։

Մի որվա մեջ—փետրվարի 27-ին (հին տոմարով) կազմվում և Պետերբուրգի բանվորների պատգամավորների խորհուրդը, իսկ շատ շուտով նրանց կից ընտրվում և զինվորների սեկցիա (մաս), և Պետական Դումայի Կոմիտեն մարտի 2-ին (հին տոմարով) կազմեց ժամանակավոր կառավարություն։ Այսպիսով միաժամանակ ստեղծվում են յերկու իշխանություն. յերկու կառավարություն՝ բանվորների և գյուղացիների կառավարությունը (Խորհուրդը), վորը ճիշտ է, դեռ

[1] Հեղափոխությունն սկսվեց մարտի 12-ին կամ փետրվարի 27-ին հին տոմարով։

թույլ էր ու սաղմային, և բուրժուազիայի կառավարությունը (Ժամանակավոր կառավարությունը)։ Այս յերկիշխանության մեջ էլ կայանում է փետրվարյան հեղափոխության առանձնահատկությունը։ Բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդների կազմակերպությունը, սովորեցնում էր Լենինը, հենց իրականացումն է հին բոլշևիկյան «պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա» լոզունգի։ Բայց այդ դիկտատուրան այնպես չեր իրականացվում, ինչպես յենթադրում եյին բոլշևիկները 1905 թ.։ Կյանքում այդ յեղավ «չափազանց ինքնուրույն կերպով, մի շարք խիստ կարևոր փոփոխություններով» (Լենին).—միաժամանակ գոյություն ունի բուրժուական և բանվորա-գյուղացական կառավարություն. Յեվ խորհուրդները կամովին, հենց սրանում է փետրվարյան հեղափոխության առանձնահատկությունը, իշխանությունը հանձնեցին բուրժուազիային—Ժամանակավոր կառավարությանը։ Փաստապես փետրվարյան հեղափոխության ժամանակ ամբողջ իշխանությունը Պետերբուրգի Խորհրդի ձեռքում էր։ Ժամանակավոր կառավարությունը մասսաների ճնշման համար չուներ «իր» զորքը, վոստիկանությունը։ Ամբողջ ուժը Խորհուրդների ձեռքում էր։ Ու այնուամենայնիվ Խորհուրդները, ուր մեծամասնությունը պատկանում էր մանր-բուրժուական սոցիալիստներին (մենշևիկներին և եսէռներին) իշխանությունը տվին բուրժուական ժամանակավոր կառավարությանը։

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՆՑՈՂԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Առաջին հայացքից կարող է յերևալ, վոր յերբ իշխանության գլուխ անցավ բուրժուազիան, ապա այդ հեղափոխությունը սովորական բուրժուական բնույթ ուներ։ Սակայն նա նման չեր Արևմտա-Յեվրոպական բուրժուական հեղափոխություններին ու միևնույն ժամանակ տարբերվում նրանից, ինչ տեղի ունեցավ 1905 թ.։ Բուրժուա-դեմոկրատական փետրվարյան հեղափոխության գլխավոր առանձնահատկությունը, վոր բխում էր հաստատված յերկիշխանությունից, նրանում էր կայանում, վոր նա արդեն հենց սկզբում իր մեջ թագցնում էր պրոլետարական սոցիալիստական հեղափոխության (Հոկտեմբեր) սաղմերը։ Սկսվելով իբրև բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն, նա աճելով փոխվեց սոցիալիստականի, և հենց սրա մեջ էր փետրվարյան հեղափոխության առանձնահատկությունը։

Բուրժուազիայի, ժամանակավոր կառավարության և հեղափոխական մասսաների դեպի հեղափոխության ամենագլխավոր հարցերն ունեցած վերաբերմունքի որինակներով մենք կը հետևենք, թե ինչպես մեկ հեղափոխությունն աճելով փոխվեց մյուսին։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Ամենակենսական հարցը, վոր հետաքրքրում էր տասնյակ միլիոն բանվորների ու գյուղացիների, պատերազմն էր։ Հեղափոխության հենց սկզբում մենք տեսնում ենք, վոր բանվորների ու գյուղացիների մեծամասնությունն անհրաժեշտ էր համարում շարունակել պատերազմը։ Նրանք գնում եյին եսէռների ու մենշևիկների համաձայնողական կուսակցությունների յետևից, վորոնք բացատրում եյին նրանց, թե հարկավոր է հեղափոխությունը պաշտպանել Վիլհելմ 2-դի դեմ։ Բայց ահա ժամանակավոր կառավարությունը, իշխան Լվովի գլխավորությամբ, արտաքին գործերի մինիստր կադետ Միլյուկովի բերանով հայտարարում էր «դաշնակիցներին» (1917 թ. ապրիլին), վոր ցարական հին դաշնագրերը կողոպուտի ընկեր-կապիտալիստների—Անգլիայի, Ֆրանսիայի և ուրիշների—հետ ուժի մեջ են մնում և հեղափոխությունից հետո։ Մեր բուրժուազիան խոստանում էր իր «դաշնակիցներին», վոր ռուս բանվորներն ու գյուղացիները «մինչև արյան վերջին կաթիլը» կռիվ կը մղեն Գերմանիայի դեմ «մինչև հաղթական վախճանը»։ Անգլիական ու ֆրանսիական կապիտալիստներին ուղղված այսպիսի թղթից հետո մասսաներն զգաստացան համաձայնողական ածխահոտից (ուգարից)։ Պիտերի պրոլետարիատի համերաշխ ցույցի հետևանքով Միլյուկով Դարդանելսկին (նրան կատակով այդպես եյին անվանում իր հափշտակողական ձգտումների համար, վոր ուզում էր Դարդանելի նեղուցն առնել թուրքերից) «տապալվեց»—նա ստիպված էր բոլորովին հրաժեշտ տալ մինիստրական պորտֆելին։

Մասսաները խաղաղություն եյին ուզում, իսկ համաձայնողականները հեղափոխական ֆրազներ նետելով, ամեն կերպ պաշտպանում եյին պատերազմը։ Մենշևիկներն ու եսէռները փաստապես դեմ եյին ֆրոնտում տեղի ունեցող յեղբայրացմանը։ Բոլշևիկները սարի պես կանգնած եյին նրա կողմը։ Մենշևիկներն ու եսէռները խոսքով դատապարտում եյին պատերազմը, բայց միևնույն ժամանակ շարունակում եյին ներշնչել բանվորներին, վոր հարկավոր է պաշտպանել հեղափոխությունը Վիլհելմից և պաշտպանում եյին այսպես կոչված «ազատության փոխառությունը» այդ կողոպտիչ պատերազմը շարունակելու համար։ Նրանք չեյին ուզում հարկադրել Ժամանակավոր կառավարությանը, վոր հրապարակե դաշնակիցների հետ կնքած ցարական հափշտակողական դաշնագրերը, կողմնակից եյին, վոր դաշնակիցների վերցրած ցարական պարտքերը վճարվեն։ Դեռ ավելին, յերբ Ժամանակավոր կառավարությունը հունիսի 18-ին (հին տոմարով) հարձակում սկսեց գերմանական ֆրոնտում, ապա մենշևիկներն ու եսէռները բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդների միջոցով կամպանիա սկսեցին այդ հարձակման ոգտին։ Ու մի անգամ էլ մաս-

սաները համոզվեցին, վոր բուրժուազիան ու համաձայնողականները կողոպտիչ պատերազմի շարունակման կողմն են։ Բանվորներն ու գյուղացիները Լենինի և ամբողջ կուսակցության վիթխարագույն լուսավորական աշխատանքի շնորհիվ, սեփական փորձով համոզվեցին, վոր խաղաղություն կարելի չե ձեռք բերել միայն իշխանությունը մի դասակարգի (բուրժուազիայի) ձեռքից մի ուրիշի (պրոլետարիատի՝ դաշնակցած գյուղացիության հետ) ձեռքն անցնելու գնով։

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆՈՒՆԵՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Մյուս կարևորագույն հարցը յերկրի արդյունաբերական տնտեսության կացության և պրոլետարիատի դրության հարցն ե։ Արդյունաբերությունը, վոր հեղափոխության պահուն անկման եր հասած, բոլորովին քայքայվում եր կապիտալիստների սաբոտաժի պատճառով։ Բուրժուազիան արտադրության այս քայքայման մեջ մեղադրում եր բանվոր դասակարգին, խոսելով դիսցիպլինայի անկման մասին ձեռնարկություններում, այն մասին, վոր անհնար ե արտադրությունը կարգի գցել հեղափոխության մտցրած 8-ժամյա բանվորական օրի պատճառով և այլն։ Բանը դրանում չեր։ Իրենք կապիտալիստները գիտակցաբար քայքայում եյին արտադրությունը։ Մեկ «պակասում եյին շրջանառության միջոցները», մեկ ածուխ չկար, բայց իսկապես ածուխը թաքնված եր պահեստներում կամ վագոններում, մեկ ել հանկարծ պակասում եր մետաղը և այլն։

Բուրժուազիայի կողմից արտադրության գիտակցաբար քայքայումը նպատակ ուներ թուլացնել ու վախացնել բանվոր դասակարգին, ազդել բնակչության տատանվող մանր-բուրժուական տարրերի ու ամենից առաջ գյուղացիության վրա, առաջ բերել փլուզում և սով [1]), վորպեսզի կարելի լիներ խեղդել հեղափոխությունը։

Բոլշևիկյան լոզունգները՝ «վերահսկողություն արտադրության և առևտրի վրա», «բոլոր բանկերի ձուլումը մի պետական բանկի մեջ», ամենատարածված լոզունգները դարձան ֆաբրիկա-գործարանային միջավայրում։ Բայց արդյոք կարո՞ղ եր բուրժուական իշխանությունն իր քսակի վրա՞ հսկողություն, վերահսկողություն թույլատրել։—Հարկավ, վո՛չ։ Ուրեմն նշանակում ե,—յեզրակացնում եյին բոլշևիկները, իսկ նրանց յետևից ել բանվոր դասակարգը—հարկավոր ե պրոլետարական հեղափոխություն, հարկավոր ե իշխանության անցումը բանվոր դասակարգի ձեռքը։

---

[1]) Ռուս խոշորագույն ֆաբրիկանտ Ռյաբուշինսկին անհամբերությամբ ու բուռն տենչով սպասում եր, թե «յերբ սովի վոսկրոտ ձեռքը կը բռնի ռուս բանվորի կոկորդը»,—այս նրա սեփական արտահայտությունն ե,—և նա յետ քաշվելով հեղափոխությունից, ծունկ կը չոքի կապիտալիստների առաջ, ոգնություն կաղերսի։

ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

Հեղափոխության մեջ հերթի չեր դրված նույնպես հին, տասնամյակներով հարյուր միլիոնանոց գյուղացիությանը տանջող հողի հարցը։

Առաջ գյուղացիության մի մասը նշանակալի չափով դեռ վստահում եր նույնիսկ բուրժուազիային, նրա կուսակցությանը—կադետներին։ Բայց կադետները կալվածատերերի ու գյուղացիների «հաշտության» հարցն եյին դնում, նրանց հոժարակամ համաձայնության հարցը։ Նրանք կողմնակից եյին հաշտարար հանձնաժողովների, վորոնց մեջ հավասար չափով գյուղացիներ ու կալվածատերեր կը լինեն, իսկ նախագահները՝ չինովնիկներից, այսինքն դարձյալ հենց նույն կապիտալիստներից և կալվածատերերից։ Այս պատճառով զարմանալի չե, վոր շուտով գյուղացիության այդ մասն ել կադետներից հեռացավ։

Սկզբում գյուղացիության վիթխարի մասսան վստահում եր սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությանը։ Գյուղացիությունն ուզում եր հողը խլել կալվածատերերից։ Իսկ ի՞նչ եյին անում դրա համար համաձայնողականները։ Նրանք ասում եյին գյուղացիներին, վոր այժմ հողը գրավել չի կարելի։ Խոսքով և՛ եսերները, և՛ մենշևիկները կողմնակից եյին, վոր հողը գյուղացիներին տրվի, բայց նրանք համոզում եյին գյուղացիներին Հիմնադիր ժողովին սպասել, վորի գումարումը շարունակ ձգձգվում ու ձգձգվում եր։ Նույնիսկ յերբ հողագործության մինիստր եր եսեր Չերնովը (1917 թ.), այդ կուսակցության առաջնորդը, այն ժամանակ ել պարոնայք եսերները ժամանակ չունեցան հողը գյուղացիներին հանձնելու։

Հողային հարցի լուծման մեջ գյուղացիությունը հասկացավ եսերների անոգնականությունը, համաձայնողականությունը, նրանց վախը գյուղացիների «ինքնագլուխ» գործողություններից։

Վլադիմիր Իլյիչը և մեր ամբողջ կուսակցությունը հեղափոխության հենց սկզբից ասում եյին գյուղացիներին, վոր նրանք անհապաղ վերցնեն կալվածատիրական հողը։ Հարկավոր չե Հիմնադիր ժողովին սպասել, հարկավոր ե իսկույն, քանի ուժ կա, վերցնել հողը, միացնել կալվածատերերի դեմ մղվող գյուղի կռիվը կապիտալիստների դեմ մղվող քաղաքի կռվի հետ։

Հողը գյուղացիությանը տալու հարցում թե՛ բանվորները, թե՛ գյուղացիները դարձյալ շատ պարզ տեսնում եյին, վոր հարկավոր ե իշխանությունը բուրժուազիայից խլել, և վոր կապիտալիստների դեմ ուղղված պրոլետարական հեղափոխության շահերը հյուսվում են, ձուլվում կալվածատերերի դեմ ուղղված գյուղացիական հեղափոխության շահերի հետ։

ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ-ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԸ ՅԵՎ ԵՍԵՐՆԵՐԸ — ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԱԶԱԿԻՑՆԵՐ

Բայց ինչպես պատահեց, վոր ապստամբած բանվորներն ու գյուղացիները (զինվորները), վորոնք խորտակեցին ցարական գահը, միևնույն հարվածով միաժամանակ չտապալեցին թե՛ կալվածատերերին և թե՛ բուրժուազիային:

Պատերազմը և հատկապես ինքը՝ փետրվարյան հեղափոխությունը հասարակական կյանքի բարձրացրեց քաղաքական կռվում բոլորովին չփորձված տասնյակ միլիոնավոր մարդկանց, գլխավորապես նա ցնցեց, արթնացրեց գյուղացության, արհեստավորների, ծառայողների ամենալայն ու նույնիսկ ամենահետամնաց շերտերը, վորոնք առաջ, նույնիսկ 1905 թ., չէին մտել հեղափոխական շարժման մեջ:

Ահա հենց այս վոտքի ելած մանր բուրժուազիան ամենից առաջ գնաց մենշևիկների և եսերների հետևից և չէր կարող չազդել հեղափոխության անցքերի ընթացքի վրա: Նրա մանր բուրժուական ազդեցությունը սկզբում տարածվեց նաև բանվոր դասակարգի մի նշանակալի մասի վրա, վորն առաջ նույնպես համաձայնողական մենշևիկների ու եսերների կուսակցությունների հետևից գնաց:

Բացի դրանից, պատերազմի ընթացքում, դաժան հետամտությունները թուլացրել էին մեր կուսակցությունը: Իսկ մենշևիկներն ու եսերները կարող էին ավելի ազատ աշխատել և նրանք հեղափոխության առաջին շրջանում իշխեցին բանվորների և գյուղացիների մեծամասնության մտքերի վրա:

Մանր բուրժուազիան ուզում էր Խորհուրդների «վերահսկողության» տակ իշխանությունը թողնել բուրժուազիայի ձեռքում հանձինս Ժամանակավոր կառավարության: Մենշևիկների և եսերների կուսակցություններն աշխատում էին պաշտպանել բուրժուական Ժամանակավոր կառավարությունը, դեմ էին, վոր գյուղացիներն անհապաղ գրավեն հողը, կողմնակից էին պատերազմը շարունակելուն և դեմ՝ արտադրության վրա վերահսկողություն մտցնելուն:

Այս բոլորից ինքնին բխում է այն յեզրակացությունը, վոր մենշևիկներն ու եսերները 1917 թ. փետրվարից մինչև հոկտեմբեր, և ավելի առաջ մինչև 1905 թ. հեղափոխությունը, նրա ժամանակ, ռեակցիայի և պատերազմի տարիներում բուրժուազիայի աջակիցներն էին, ծառաները: Նրանք իրենց ազդեցությամբ անբարոյականացնում էին պրոլետարիատին, մեղմացնում դասակարգային գժտությունը շահագործողների ու շահագործվողների միջև, նվաստացնում հեղափոխության հեգեմոնի — բանվոր դասակարգի հեղափոխական զորությունը:

ԲՈՒՐԺՈՒԱ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԵՂՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՃՄԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆԻ ՓՈԽՎԵԼՈՒ ՀԱՐՑԻ ԴՆՈՒՄԸ ԼԵՆԻՆԻ ԿՈՂՄԻՑ

Պրոլետարիատի հեղափոխական կուսակցությունը բոլորովին այլ կերպ էր գնահատում հեղափոխության դրությունը և նրա խնդիրները: Վ. Ի. Լենինը սովորեցնում էր, վոր բայլշևիկների առաջվա լոզունգը՝ «Պրոլետարիատի և գյուղացության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրա» հնացել է, վորովհետև նա արդեն իրագործվել է հանձինս բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների խորհուրդների:

Ճիշտ է, բոլորն այնպես չեղավ, ինչպես յենթադրում էին բայլշևիկները 1905 թ., այլ այն փոփոխություններով, վորոնց մասին վերը խոսեցինք (յերկիշխանություն և այլն): Յեվ մեր կուսակցության առաջ Վլադիմիր Իլյիչը դնում էր պառակտման խնդիրն այդ հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի ներսում, պառակտում խորհուրդների ներսում հեղափոխական-պրոլետարական տարրերի (բայլշևիկների) և մանր բուրժուազիայի (մենշևիկների և եսերների) միջև սոցիալիստական հեղափոխության հաղթանակի կռվի համար, բուրժուազիայի տիրապետության (Ժամանակավոր կառավարության) տապալման և խորհուրդների իշխանության հաստատման համար:

Իլյիչն ասում էր, վոր անհրաժեշտ է «համբերատար, համառ, հատկապես մասսաների գործնական կարիքներին հարմարվող» ձևով պարզաբանել այն, վոր Ժամանակավոր կառավարությունը չի կարող վերջացնել պատերազմը, հողը գյուղացիներին տալ, իրականացնել վերահսկողությունն արտադրության վրա, այդ բոլորը նրա դասակարգային-բուրժուական վոգուն դեմ է: Այդ խնդիրները կը վճռի միայն բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների խորհուրդների կառավարությունը: Խաղաղությունը, հողը և վերահսկողությունը — դեռ սոցիալիզմ չէ, բայց մի քայլ է դեպի այն տանող ճանապարհով: «Վոչ թե սոցիալիզմի «մուծում», իբրև մեր անմիջական խնդիր, այլ իսկույն անցում միայն այն բանի, վոր ԲՊԽ (այսինքն Բանվորների Պատգամավորների՝ Խորհրդի) կողմից վերահսկողություն լինի արդյունքների հասարակական արտադրության և բաշխման վրա» (Լենին):

Բայլշևիկների մի փոքրիկ մասը — ընկ. Կամենևն և ուրիշները — լիովին համաձայն չէր Իլյիչի հետ: Այսպես, ընկեր Կամենևը կանգնած էր մնացել բայլշևիկյան առաջվա լոզունգի՝ «պրոլետարիատի և գյուղացության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի» վրա և չէր հասկացել հեղափոխության յուրատեսակությունը, չէր հասկացել,

որ այդ լոզունգն արդեն իրագործվել ե, և հարկավոր ե առաջին քայլն անել դեպի խորհուրդների իշխանությունը և պրոլետարական հեղափոխությունը։ Բոլշևիկների համառուսական կոնֆերենցիան (1917 թ. ապրիլին) Լենինի կողմն անցավ և ընդունեց նրա վճիռները։ Առանձին ընկերների տատանումներին արագ վերջ տրվեց և կուսակցության VI համագումարում (1917 թ. հուլիսին) ԿԿ ընտրվեց, որ ամբողջովին կանգնած եր այն պլատֆորմի վրա, թե անհրաժեշտ ե նախապատրաստել զինված ապստամբություն խորհուրդների իշխանության համար։

ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԿՌԻՎԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՎՐԱ ՈՒՆԵՑԱԾ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Այս նախապատրաստման գլխավոր խնդիրն եր ազատագրել մասսաները համաձայնողականների ազդեցությունից, դեն գցել քողը բանվորների և գյուղացիների աչքերից, որ նրանցից թաքցնում ե խորհուրդների միահեծանության համար մղվող վճռական կռվի անհրաժեշտությունը։ Յեվ մեր կուսակցությունը մարտական ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանք կատարեց։

Ամեն մի արձակուրդ ստացող՝ գյուղում, ամեն մի զինվոր՝ այցելության տեղում մեր ագիտատորն եր պատերազմի դադարեցման համար, բուրժուազիայի տապալման համար։ Մեր կենտրոնական թերթերը՝ «Պրավդան», «Սոլդատսկայա Պրավդան» կարծեք դինամիտով եյին լցված, որոնք համաձայնողականների ձեռքերից խլում եյին ամբողջ գործարաններ, գնդեր և գյուղեր։ Պատերազմի հարցում մենք շարունակ սրում եյինք մեր ագիտացիան և հաջողություններ ունեցանք՝ հունիսին Պիտերի կայազորի մեծ մասը, Մոսկվայի կայազորի մի մասը և մի շարք ֆրոնտում գտնվող գնդեր բոլշևիկների կողմն եյին։

Հունիսի 18-ի հարձակման անհաջողությունը, Ժամանակավոր կառավարության փորձը, որ այն ժամանակի մայրաքաղաքի հեղափոխական կայազորը հանել եր ուզում և այն փոխարինել ավելի «հավատարիմ» մասերով, մեծահասակ զինվորներին ամառվա ամիսներում աշխատանքի գնալու համար արձակուրդ չտալը և այլն,—հուլիսի սկզբին (հուլիսի 3—5 հին տոմարով) առաջ բերեցին բուռն շարժում Պիտերի զինվորների ու բանվորների մեջ։ Բուրժուազիան դրան սպասում եր։ Նա աշխատեց պրոլետարիատին ճակատամարտ տալ ու տրվեց այն մոմենտում, յերբ պրոլետարիատը դեռ բավականաչափ համախմբված և ուժեղ չեր։ Հուլիսյան որերին մայրաքաղաքի պրոլետարիատը պարտություն կրեց, չնայած իսկի յել ջախջախված չեր։

Մեր կուսակցությունը, որ իր վրա վերցրեց մասսաների տարերային յելույթի ղեկավարությունը, դաժան հետապնդումների յենթարկվեց։ Նրա առաջնորդները մասամբ պետք ե՝ ձերբակալությունից խու-

սափելու համար՝ թաքնվեյին, ինչպես Լենինը և Զինովևը, մասամբ ձերբակալվեցին (Տրոցկին, Կամենևը, Լունաչարսկին և ուրիշները)։ «Պրավդան» ավերմունքի յենթարկվեց, ամբողջ յերկրում սկսվեց բոլշևիկների հետապնդումը և հալածանքը։

Բայց այդ անցքերի շնորհիվ մասսաները տեսան, որ միայն մեր կուսակցությունն ե ճիշտ գնում հեղափոխության խնդիրները։ Համակրանքը դեպի նա անզուսպ կերպով սկսեց աճել։

Մ. փոքրիկ ընդմիջումից հետո հեղափոխական ալիքը քաղաքում և գյուղում նորից բարձրանում եր։

Յերբ աշնան դեմ զինվորները ճիշտ լուրեր տարածեցին բոլոր գյուղերում հեղափոխության, բոլշևիկների, Լենինի մասին, և յերբ իրենք գյուղացիները համոզվեցին այն բանում, որ Ժամանակավոր կառավարությունը նրանց հող չի տալիս, այն ժամանակ ինքնագլուխ սկսեցին գրավել այն։ Այդ ժամանակները կառավարությունն արդեն դրսևորել եր իր հակահեղափոխական դեմքը և պատժիչ ջոկատներ եր ուղարկում գյուղացիների դեմ։ Բան դուրս չեկավ, որովհետև զինվորները մեծ մասամբ հենց նույն գյուղացիներն եյին և չեյին համաձայնում գյուղի ապստամբությունը ճնշելու գնալ։

Հեղափոխության այս բոլոր անցքերի փորձից դաս առնելով, բանվորների և գյուղացիների ահագին մեծամասնությունը հեռանում եր համաձայնողականներից և հեղափոխական պրոլետարական կուսակցության կողմն անցնում։

ՀՈԿՏԵՄԲԵՐ

Ոգոստոսին (հին տոմարով) հեղափոխական Պետրոգրադի վրա գեներալ Կորնիլովի հարձակումից հետո, որն ուզում եր ճզմել հեղափոխության կենտրոնը, մասսաների համար պարզվեց, որ անհրաժեշտ ե զինված ապստամբություն։ Բոլշևիկյան խորհուրդներն ամբողջ յերկրում զինված ապստամբություն եյին պատրաստում, ստեղծելով Կարմիր գվարդիայի ջոկատներ։ Հոկտեմբերյան մեծ որերին բանվորները հեղափոխական զինվորների պաշտպանությամբ, Լենինի և մեր կուսակցության ղեկավարությամբ հաղթական պրոլետարական հեղափոխություն կատարեցին։ Պիտերում Կերենսկու, այն ժամանակվա գլխավոր մինիստրի, զորքերի կռիվը յերկար չտևեց։ Բալթյան նավատորմը պաշտպանեց ապստամբությունը, և հոկտեմբերի 25-ին (Նոր տոմարով նոյեմբերի 7-ին) բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդների II համագումարը հայտարարեց բուրժուազիայի իշխանության տապալումը և խորհրդային հանրապետության հաստատումը։ Մոսկվայում կռիվը ձգձգվեց մի շաբաթ, բայց վերջի վերջո բանվորների իշխանությունը հաղթանակեց։

Հոկտեմբերյան հեղափոխության գլխավոր իմաս-

տը նրանում է, վոր նա առաջին անգամ, Պարիզի Կոմմունայի կարճ գոյությունից հետո, իրականացրեց պրոլետարիատի դիկտատուրան և միջազգային պրոլետարական հեղափոխության դռները բացեց:

Հոկտեմբերյան հեղափոխությունը վոչնչացրեց կալվածատերերի հողի սեփականությունը: Նա փշրեց պետական հին ապարատը և ավարտեց բուրժուա-դեմոկրատական հեղաշրջումը: Իսկ իշխանության անցումով պրոլետարիատի ձեռքը Հոկտեմբերը բաց արեց սոցիալիստական հեղափոխության եպոխան:

ԸՆԿ. ՏՐՈՑԿՈՒ ՍԽԱԼԸ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հոկտեմբերյան անցքերի ճիշտ հասկացողությունն ահագին նշանակություն ունի բոլոր բանվորների համար, իսկ հատկապես յերիտասարդության համար, վոր անձամբ չի մասնակցել այդ հերոսական կռվին:

Ընկեր Տրոցկին 1924 թ. աշնանը գրեց «Հոկտեմբերի դասերը» հոդվածը: Նա արդեն ավելի վաղ արտահայտել եր և այժմ այդ հոդվածում ձգնում եր ցույց տալ, վոր 1917 թ. բոլշևիզմն ստիպված եր «իդեապես վերազինվել», վոր նրանք (բոլշևիկները) հրաժարվեցին իրենց առաջվա հայացքից: 1905թ.—մոտավորապես այսպես է դատում ընկ. Տրոցկին,—բոլշևիկներն ասում եյին՝ «պրոլետարիատի ու գյուղացության դիկտատուրա», իսկ յես ասում եյի՝ «միանգամից պրոլետարիատի դիկտատուրա» («առանց ցարի, իսկ կառավարությունը բանվորական»): Այդպես էլ դուրս յեկավ՝ Հոկտեմբերին բոլշևիկների ղեկավարությամբ իրականացավ պրոլետարիատի դիկտատուրան: Նշանակում է, բոլշևիկները համաձայնեցին ինձ հետ (Տրոցկու), կանգնեցին «պերմանենտ հեղափոխության» տեսակետի վրա (տես տասներորդ զրույցը):

Արդյոք ճիշտ է ընկ. Տրոցկու այս պնդումը: Ընկ. Տրոցկին այստեղ աղավաղում է Հոկտեմբերի պատմությունը: Բոլշևիկները չփոխեցին իրենց հին, յերկարատև կռվի փորձով ստուգված, լենինյան հայացքները: Բոլշևիզմ-լենինիզմն ամբողջովին արդարացրեց իրեն բոլոր յերեք հեղափոխության մեջ: Ընկ. Տրոցկին, վոր միշտ թերագնահատում եր գյուղացությունը, մոռանում է, վոր մենք փետրվարից մինչև հոկտեմբեր արդեն ապրում եյինք պրոլետարիատի և գյուղացության դիկտատուրա, բայց, ինչպես Լենինն եր ասում, յերկիշխանության յուրատեսակ ձևով՝ ամբողջ ուժը բանվորների ու գյուղացիների ձեռքում եր, իսկ իշխանությունը նրանք վստահել եյին բուրժուական կառավարությանն ու սոցիալիստ-համաձայնողականներին: Հենց ամբողջ բանն էլ սրա մեջ է: Իսկ յերբ բանվորներն ու ամենաաղքատ գյուղացիները, իրենց փորձի ու բոլշևիկների համբերատար բացատ-

րությունների շնորհիվ, ամեն մի վստահություն կորցրին դեպի ժամանակավոր կառավարությունը և սոցիալիստ-համաձայնողականները, և յերբ ամբողջ գյուղացությունը հասկացավ, վոր բուրժուազիայից ու համաձայնողականներից հողն ստանալու և պատերազմը դադարեցնելու հույս ունենալ չի կարող, այն ժամանակ բոլշևիկները նրանց գրոհի տարան բուրժուազիայի դեմ հանուն պրոլետարիատի դիկտատուրայի:

Ընկ. Տրոցկին արդարացի չէր իր պերմանենտ հեղափոխության թեորիայով, նաև այն ժամանակ, յերբ ասում եր, վոր մեր հեղափոխությունն անպայման կոչնչանա առանց Արևմուտքի բանվորների պետական ոգնության, այսինքն առանց պրոլետարիատի դիկտատուրայի Արևմուտքում: Շուտով պրոլետարիատի իշխանության տասը տարին կը լրանա: Արևմուտքում պրոլետարիատի հաղթանակ դեռ չը կա, իսկ մենք աճում ենք ու սոցիալիզմ կառուցում: Մենք Արևմուտքի բանվորների պաշտպանությունը, իհարկե, ստանում ենք, բայց վոչ պետականը, վորովհետև պրոլետարիատի կողմից իշխանության գրավումը դեռ չի իրականացել:

Հարց. Ինչու հաղթանակեց Հոկտեմբերյան հեղափոխությունը:

2. Խորհրդային իշխանության առաջին քայլերը Հոկտեմբերից հետո

ԴԵԿՐԵՏՆԵՐ ՀՈՂԻ ՅԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հաղթանակի հենց առաջին որը խորհրդային իշխանությունը դիմեց յերկու գլխավորագույն խնդիրների լուծմանը՝ հողի և խաղաղության մասին:

«Հողի կալվածատիրական սեփականությունն անհապաղ, առանց վորևե հատուցման վերացվում է»,—ասում եր հողի խնդրին վերաբերվող խորհրդային դեկրետի առաջին կետը:

Դեկրետը հողի մասին և նրան վերաբերող հրահանգը կազմեցին ձախ եսերները, վորոնք այն ժամանակ բոլշևիկների հետ եյին աշխատում: Հրահանգն իբրև ամբողջություն չէր զուգադիպում մեր ծրագրին, վոր պահանջում եր հողն ազգայնացնել, այսինքն այն պետական սեփականություն դարձնել (ազգայնացման դեկրետը հետո անցկացվեց, 1919 թ. փետրվարին): Հրահանգում շատ եսերական իդեաներ կային, որինակ՝ հրահանգը պահանջում եր հավասարար հողօգտագործում և այլն:

Վ. Ի. Լենինը Խորհուրդների II համագումարում, վոր ընդունեց դեկրետները հողի և խաղաղության մասին, ասում եր, վոր չնայած համագումարում բոլշևիկների թվական մեծամասնությանը, հարկավոր

և ընդունել եսեռական դեկրետը։ Լենինը հենվում եր այն բանին, որ հրահանգը — գյուղացիների կամքն ե, և հարկավոր ե կատարել այն։ Իսկ կյանքը սխալները կուղղի, — գլխավորն այն ե, «որպեսզի գյուղացիությունն ամուր հավաստիք ստանա, թե գյուղում այլևս կալվածատերեր չկան» (Լենինի ճառից Խորհուրդների II համագումարում)։

Այդ հետո այդպես էլ յեղավ։ Հողը մեզ մոտ այժմ ազգայնացված ե, իսկ նրանից գյուղացիներն ոգտվում են ոչ այնպես, ինչպես մըտածում եյին ձախ եսեռները։ Կյանքն ուղղեց նրանց սխալները։

Ինչքա՞ն հող ստացավ գյուղացիությունը Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով։ Ահա թվանշանները. — ԽՍՀՄ մեջ գյուղացիությունն ստացավ 44.5 միլիոն հեկտար (40,7 միլ. դես.) կալվածատիրական և այլ անաշխատ հող, ի թիվս որի ՌՍՖՍՀ մեջ — 23,3 միլիոն հեկտար (21,4 միլ. դեսյատին)։

Մյուս կարևորագույն հարցը, որ անհապաղ լուծում եր պահանջում, պատերազմը վերջացնելու հարցն եր։

Խորհուրդների II համագումարը հեղափոխական ճանապարհով մոտեցավ պատերազմի դադարեցմանը։ Լենինի առաջարկով ընդունվեց դեկրետ խաղաղության մասին։ Դեկրետում առաջարկվում եր բոլոր պատերազմող ժողովուրդներին և նրանց կառավարություններին անհապաղ խաղաղության բանակցությունների դիմել։ Առաջարկվում եր խաղաղություն կնքել արդարացի պայմաններով, այսինքն առանց օտար հողերի ու ժողովուրդների նվաճման և առանց այն բանի, որ պատերազմի վնասները վճարե որևե մեկը կամ որևե մեկին։ Խորհրդային իշխանությունն անհապաղ զինադադար առաջարկեց բոլոր պատերազմող յերկրներին յերեք ամսով։ Խիստ կարևոր ե նշել, որ բոլշևիկները խաղաղության պայմանները վերջնական չեյին համարում։ Դեկրետում ասվում եր, որ Խորհրդային կառավարությունը պատրաստ ե խաղաղության հարցը քննության առնել և այլ հիմունքներով։ Այս ասված եր նրա համար, որպեսզի բուրժուական կառավարությունները չկարողանան ուղղակի հրաժարվել մեզ հետ խոսելուց, վկայություն կանչելով մեր չզիջող լինելը։

Խաղաղության, ինչպես և հողի մասին յեղած դեկրետի գլխավոր իմաստն այն բանին եր հանգում, որպեսզի ամրացվի հեղափոխության հեգեմոնի — պրոլետարիատի — միությունը գյուղացիության հետ։

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԲԱՆԿԵՐԻ ԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

Ինչպես մենք արդեն այս պրույցում ասել ենք, կուսակցությունն անհրաժեշտ եր համարում վերահսկողություն հաստատել արդյունաբերության վրա։ Պրոլետարական հեղափոխությունը հնարավորություն տվեց կենսագործել այդ ձեռնարկումները («որենսդրությունը բանվորական վերահսկողության մասին» ընդունված ե ԿԳԿ կողմից 1917 թ. նոյեմբերին)։ Նույնիսկ իշխանության գրավումից հետո Լենինն ու կուսակցությունը դեռ պատեհ չեյին համարում հենց այն ժամանակ ազգայնացնել արդյունաբերությունը։ Բայց շատ շուտով պարզվեց, որ մենակ արտադրության վերահսկողությունն իր նպատակին չեր հասնում։ Կապիտալիստները սաբոտաժի եյին յենթարկում արտադրությունը և չեյին հնազանդվում կանտրոլին, իսկ որոշ ձեռնարկություններ ուղղակի առանց տերերի եյին մնում։ Այդպիսի դեպքերում տեղական խորհուրդները ձեռնարկությունները գրավում եյին և պետական սեփականություն դարձնում։ Շատ անգամ գրավում եյին մանր ու վատ սարքավորված ձեռնարկությունները։ 1918 թ. հունիսի 28-ին, յերբ բռնկվեց քաղաքացիական պատերազմը, դեկրետ հրատարակվեց ամբողջ խոշոր արդյունաբերության ազգայնացման մասին։ Առ 1-ն դեկտեմբերի 1920 թ. 6908 հաշվառած ձեռնարկությունների ընդհանուր թվից ազգայնացված եր 4547, այսինքն 65% ավելին։

Արդյունաբերության ազգայնացումից էլ ավելի վաղ, 1917 թ. դեկտեմբերի 17-ին ԿԳԿ հայտարարեց բանկերի ազգայնացումը։

Հողի, արդյունաբերության, բանկերի, յերկաթուղային և ջրային տրանսպորտի ու արտաքին առևտրի ազգայնացումը — Հոկտեմբերյան հեղափոխության գլխավորագույն նվաճումներն են։ Այս հրամայող բարձունքները պրոլետարիատին հնարավորություն տվեցին պաշտպանելու մեր յերկիրը հակահեղափոխությունից քաղաքացիական պատերազմում, հնարավորություն տվեցին բարձրացնել մեր ամբողջ տնտեսությունը քաղաքացիական պատերազմից հետո, սոցիալիզմի հիմքը դնել և վարել սոցիալիստական տնտեսության ու հասարակության այն շինարարությունը, որ այժմ կատարվում ե ԽՍՀՄ մեջ։

Բայց դառնանք պատերազմը վերջացնելու հարցին։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԲՐԵՍՏԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Մեր կուսակցության առաջ այս հարցը կանգնեց՝ արդյոք սեպարատ, այսինքն «դաշնակիցներից» անջատ, հաշտություն կնքել, թե շարունակել պատերազմը։ Կուսակցության մեջ այս հարցի վերաբերմամբ միություն չկար՝ առաջ յեկավ այսպես կոչված «ձախ կոմունիստների» խմբակը։ «Ձախերը» ասում եյին, քանի որ յերկրի ներսում մենք տապալեցինք բուրժուազիայի տիրապետությունը, ապա հեղափոխական կուսակցությունը չի սազում հաշտություն կնքել Վիլհելմ II հետ, և կողմնակից եյին պատերազմը շարունակելուն։

Ընկեր Տրոցկին առաջ քաշեց իր լոզունգը՝ «ոչ հաշտություն,

վոչ ել պատերազմ», այսինքն նա հայտարարում եր, վոր խորհրդային հանրապետությունը հրաժարվում ե հաշտություն կնքելուց Վիլհելմ II-ի կողոպտիչ պայմաններով, բայց հրաժարվում ե և պատերազմելուց:

Լենինն ապացուցում եր «ձախերի» «հեղափոխական ֆրազի» և ընկեր Տրոցկու դիրքի ամբողջ կեղծիքը և սնանկությունը: Ամենից առաջ, ասում եր Վլադիմիր Իլյիչը, *մենք չենք կարող պատերազմել, վորովհետև մենք բանակ չունենք, սպառազինում չունենք, ձիու պահեստը հատել ե և տնտեսությունը լիակատար փլուզման հասել*: Մասսաները պատերազմից հոգնել են՝ բանվորներն ու գյուղացիները խաղաղություն են ուզում, նրանց «*դադար*» ե հարկավոր:

«Ձախերն» ասում եյին, վոր գործարք կնքելով գերմանական իմպերիալիզմի հետ, մենք դավաճանում ենք միջազգային համերաշխությանը, մենք դավաճանում ենք հեղափոխության գործին: Լենինը սրան պատասխանում եր «Լավ, իսկ յեթե մենք շարունակում ենք պատերազմը, ապա միթե այդ գործարք չի լինի անգլո-ֆրանսական իմպերիալիզմի հետ: (Անգլիացիները մեզ ուղղակի առաջարկում եյին ամսական ամեն մի զինվորի համար հարյուրական ռուբլի, յեթե մենք շարունակենք պատերազմը): Նույնիսկ յեթե մենք հրաժարվենք «դաշնակիցների» ամեն տեսակ ոգնությունից և միայն մեր ուժերով վարենք պատերազմը, ապա միևնույն ե, իրոք կը ծառայենք Անտանտայի իմպերիալիզմին, վորովհետև առաջվա նման Գերմանիայի ուժերը Ռուսաստանի վրա կզբաղեցնենք»:

Ընկ. Տրոցկու դիրքի մասին Լենինն ասում եր, վոր այժմ չի կարելի ասել՝ «վոչ հաշտություն, վոչ ել պատերազմ»: Հարկավոր ե վճռել—կամ պատերազմ, կամ հաշտություն, վորովհետև հարցն այսպես դնելիս միևնույն ե, գերմանացիները կը գրավեն և կը կողոպտեն մեր հողերը և կը խեղդեն Խորհրդային իշխանությունը:

Կուսակցության VII համագումարը (1918 թ. մարտի 6—8-ին Մոսկվայում) Լենինի կողմն անցավ և վորոշեց հաշտություն կնքել: Դադարը հնարավոր յեղավ և կուսակցության առաջնորդի տակտիկան փայլուն կերպով հաստատվեց հետագա անցքերով: 1918 թ. մարտի 15-ին Խորհուրդների IV արտակարգ համագումարը հաստատեց Բրեստի հաշտությունը[1]), իսկ *նոյեմբերի 13-ին, գերմանական հեղափոխությունից հետո, Համառուսական ԿԳԿ հայտարարեց պայմանագիրը վոչնչացված*:

[1]) Պայմանագիրը կնքվեց Բրեստում, դրա համար ել նա կոչվում ե Բրեստի դաշնագիր: Բրեստն այժմ լեհական քաղաք ե:

«Ձախերի» և ընկ. Տրոցկու սխալների գլխավոր արմատը նրանում եր, վոր նրանք հաշվի չեյին առնում, վոր գյուղացությունը, աշխատավորների մեծամասնությունը, տանջված ե յեռամյա իմպերիալիստական պատերազմից: Հող ստանալով, գյուղացին խաղաղություն ե ուզում, գոնե, դադար, վոր պատերազմի ու փլուզման վերքերը բուժե: Իսկ առանց գյուղացության մենք չենք կարող բանակ ստեղծել, հաց ստանալ պատերազմ մղելու համար, չենք կարող կառուցել մեր տնտեսությունը:

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՉՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Մինչև բուրժուական հեղափոխության հաղթանակը, ասում եր Լենինը, բանվոր դասակարգը պետք ե միություն կնքի *ամբողջ* գյուղացության հետ ցարի ու կալվածատերերի դեմ: Ինչո՞ւ *ամբողջ* գյուղացության հետ:—Հենց այն պատճառով, վոր ամբողջ գյուղացությունը շահագրգռված եր ցարի ու կալվածատերերի իշխանության վոչնչացմամբ, ուզում եր հող ստանալ:

Դրությունը փոխվեց, յերբ փետրվարին տապալվեց ցարական ինքնակալությունը: Ամբողջ գյուղացությունն առաջվա նման ձգտում եր վռնդել կալվածատերերին և վերցնել նրա հողը: Նա տեսավ, վոր բուրժուական կառավարությունը չի ուզում թույլատրել այդ, և այդ պատճառով գյուղացությունը *չխանգարեց*, վոր պրոլետարիատը տապալե այդ կառավարությունը: Բայց այս բանում պրոլետարիատին թե քաղաքում և թե գյուղում ոգնում եր միայն *չքավորությունը*: Մնացածը, հետևաբար և միջակ գյուղացությունը, ինչպես ասում են, *չեզոքացված* եր այն բանի շնորհիվ, վոր միաժամանակ տապալվում եր կալվածատերը, և նրա հողը հանձնվում եր գյուղացությանը: Բայց ահա վրա հասավ քաղաքացիական պատերազմը, Խորհրդային իշխանության համար մղվող կռիվները զինված հակահեղափոխության դեմ: Արդյոք կարո՞ղ եր *ամբողջ* գյուղացությունը բանվոր դասակարգի յետևից գնալ և կռվել պրոլետարական հեղափոխության համար:—Հասկանալի յե, կուլակները նրա դեմ գնացին, վորովհետև նրանք միանգամից տեսան, թե ուր ե տանում բանվորական հեղափոխությունը. Նա ժողովրդի համար վոչ միայն ցարական և կալվածատիրական հողն ե գրավում, այլև կուլակներինը: Այստեղ գյուղական հարուստները պրոլետարիատի ճանապարհով չեն, վոր պիտի գնան: Ահա ինչու մեր կուսակցությունը հակահեղափոխության դեմ կռվելիս ամրացնում եր պրոլետարիատի միությունը գյուղական *չքավորության* հետ ընդդեմ բոլոր բուրժուաների, դրանց թվում նաև ընդդեմ կուլակների: Կուլակները թաքցնում եյին հացը, իսկ այն անհրաժեշտ եր վոչ-հողագործական նահանգների սովալլուկ

գյուղացիների համար, բանվորների և զինվորների համար։ Կուլակները դիմադրում եյին, վոր իրենց հողերն անցնեն գյուղական խորհուրդների ձեռքն և այլն։ Լավ, իսկ միջակի՞ հետ ինչպես վարվել։ Հարկավոր ե, ասում եր Լենինը, չեզոքացնել նրան։ Այդ նշանակում ե, վոր պետք ե այնպիսի քաղաքականություն վարել, վոր միջակը, գոնե, պրոլետարական հեղափոխության դեմ չելնի, կուլակների կողմը չանցնի։ Իսկ ինչու՞ այսպիսի վերաբերմունք պիտի լինի դեպի միջակը բանվորական հեղափոխության առաջին մոմենտում.—ահա թե ինչու.—«միջակը, այդ շուրջը դիտող մարդ ե։ Նա դիտում ե, թե ով կը գերազանցի, սպասում ե, և միայն այն ժամանակ, յերբ դու գերազանցել ես, քշելով կալվածատերերին և բուրժուաներին, նա քեզ հետ միության ե գալիս։ Հենց դրա համար ել նա միջակ ե»։ (Ընկ. Ստալինի ճառից ԿԿ քաղաքական հաշվետվության վերաբերմամբ կուսակցության XIV համագումարում)։ Դեռ հարկավոր եր միջակին համոզել, վոր Խորհրդային իշխանությունն ամուր ե, վոր նա նաև նրա՝ միջակի, շահերի պաշտպանն ե։

Ահա թե ինչու պրոլետարիատը Հոկտեմբերից հետո առաջին շրջանում իր համար դաշնակից եր վորոնում և գտնում գլխավորապես հանձինս գյուղական չքավորության։

1918 թ. հունիսին դեկրետ հրատարակվեց չքավորության կոմիտեների կազմակերպման մասին։ Այդ չքավորության կոմիտեները պրոլետարական Հոկտեմբերյան հեղափոխության անցկացնողներն եյին գյուղում։ Հակահեղափոխությունը պաշտպանություն եր գտնում գյուղի կուլակային շերտերի, իսկ հաճախ և միջակների կողմից։ 1918 թ. ամառն ապստամբություններ յեղան Յարոսլավլում, Տամբովի, Պենզայի և ուրիշ նահանգներում։ Չքավորության կոմիտեները այդ կռվում ահագին ծառայություն մատուցին հեղափոխությանը։ Նրանք նպաստում եյին կուլակներից հողը խլելուն, նրանց ոգնությամբ Խորհրդային իշխանությունը պարեն եր ստանում և զորաժողով անցկացնում։

Սակայն անհրաժեշտ ե նշել, վոր պրոլետարիատի ու գյուղական չքավորության միության այդ ժամանակաշրջանում ել Լենինը և կուսակցությունն արդեն հաշվառում եյին միջակի շահերը։ Հենց եսերական հողային դեկրետն ընդունելու փաստը դրա ոգտին ե խոսում։ Իսկ չքավորության կոմիտեների մասին հրատարակած դեկրետում ուղղակի խոսվում եր միջակներին նրանց մեջ գրավելու անհրաժեշտության մասին։

Իսկ 1919 թվից, ինչպես մենք հետո կը տեսնենք, մեր կուսակցության քաղաքականությունն ընթացավ պրոլետարիատի և

գյուղական չքավորության հաստատուն միության գծով միջակ գյուղացիության հետ։

Հարց. Ինչու՞ միայն պրոլետարական հեղափոխությունից հետո կարելի յե ամուր միություն հաստատել միջակի հետ։

3. Կուսակցությունը յեվ բանվոր դասակարգը ռազմական կոմմունիզմի շրջանում

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Մեր կուսակցության կացությունը քաղաքացիական պատերազմի ժամանակաընթացքում վորոշվում եր այն ռազմական խնդիրներով, վորոնք կանգնած եյին նրա առաջ։ Կուսակցությունը յերկրի իշխանությունը վերցրեց այն մոմենտում, յերբ ամբողջ տնտեսությունը, արդյունաբերականն ու գյուղականը, արմատապես ավերված եր կալվածատերերի, բուրժուազիայի և նրա աջակիցների—մենշևիկների ու եսերների—տնտեսավարությամբ կերենսկիականության ժամանակ։

Բուրժուազիան ջարդված եր, բայց ջախջախված չեր։ Նա հակահեղափոխական սպաների և անգլո-ֆրանսիական կապիտալի ու զորքի (չեխո-սլովակները, անգլիացիները, ամերիկացիները և այլն) պաշտպանությամբ քաղաքացիական պատերազմ սկսեց։ Խորհրդային հանրապետությունը գտնվում եր հակահեղափոխական բանդաների (ավազակախմբերի) «կրակե ողակում»։ Անլուր ծանրություններ ու պատասխանատվություն ընկավ մեր կուսակցության ուսերին։ Հարկավոր եր խորհրդային պետություն կառուցել, հարկավոր եր ապահովել բանվորներին սովամահությունից և կռիվ մղել հակահեղափոխության դեմ։

Այս դժվար խնդիրները լուծվում եյին միայն դաժանագույն դիսցիպլինի և կուսակցության կենտրոնացման շնորհիվ։ Յեթե ամբողջ յերկիրը զինված բանակ եր, ապա կուսակցությունը նրա «շտաբն» եր, բայց այնպիսին, ուր այդ «շտաբի» անդամներն ամենադժվար ու ամենավտանգավոր տեղերում եյին և պատրաստ եյին կատարել այն բոլորը, ինչ ընդունում ե կուսակցությունը։ Չտեսնված դիսցիպլին յերևան բերեց մեր կուսակցությունը և դրանով բանվորներին ու գյուղացիներին տարավ իր յետևից։ Ամեն մի կոմմունիստ ամեն տեսակ գործում, կուսակցության ամեն տեսակ հանձնարարությունների ժամանակ զգում եր իր բարձր պատասխանատվությունը կուսակցության և դասակարգի առաջ։

Սակայն յերիտասարդ ընկերներն ահագին սխալ կանեյին, յեթե քաղաքացիական պատերազմի շրջանի կուսակցական կյանքն այնպես

պատկերացնեյին, յերբ, ինչպես ասում են, կոմմունիստը «ծպտուն հանել» չէր կարող: Ընդհակառակը, կուսժողովները և հենց կազմակերպությունների ամբողջ կյանքը յեռում եյին: Կուսժողովները շարունակ մեծ վոգևորությամբ եյին անցնում: Մարտական ժամանակը խստագույն դիսցիպլինի և ցենտրալիզմի կողքին յեռանդ, ակտիվություն և հեղափոխական համարձակություն եր ծնում:

ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻԶՄ

Այն քաղաքականությունը, վոր այդ ժամանակ (1918—1921 թ. թ.) ստիպված եյին վարել կուսակցությունը և պրոլետարիատը, «ռազմական կոմմունիզմի» քաղաքականությունն եր: Այդ քաղաքականությունը գլխավորապես հանգում եր այն բանին, վոր պրոլետարիատն ստիպված եր վողջ շինարարությունը յենթարկել խորհրդային հանրապետության պաշտպանության խնդիրներին:

Ամենից առաջ հարկավոր եր կերակրել բանակը (մինչև 5 միլիոն), կերակրել ֆաբրիկաների բանվորներին և խորհրդային ծառայողներին: Այս պատճառով մտցրվեց *պարենմասնատրումը*: Նրա եյությունն այն եր, վոր գյուղացիներից վերցվում եյին պարենի բոլոր ավելցուկները: Իհարկե, մասնատրման չափերը գյուղական տնտեսատերերի զանազան խմբակների համար տարբեր եյին:

Գյուղից հաց հանելու այս ծանր յեղանակը —պարենմասնատրումը— այնուամենայնիվ պատերազմական ժամանակ միակն եր: Պարենմասնատրումը սովամահությունից փրկեց բանակը և բանվորներին ու հենց դրանով օգնեց բանվորներին և գյուղացիներին պաշտպանել գործարանները և հողը աշխատանքի հանրապետության թշնամիներից:

Վորովհետև հացի ու սննդի այլ արդյունքների սպեկուլյացիան խիստ զարգացել եր, ահագին չափեր եր ընդունել տոպրակավորությունը, ապա խորհրդային իշխանությունը *վերացրեց նաև մասնավոր առևտուրը*, չնայած այդ միջոցը լրիվ կերպով չեր ել կարելի կիրառել:

Արդյունաբերությունը ծայրահեղ չափով աղքատացված եր, պետական սեփականություն եյին դարձված և մանր, քիչ հասութաբեր ձեռնարկությունները: Բայց հարկավոր եր զինաթափել, ամեն տեսակ նեցուկից զրկել բուրժուազիային քաղաքում և գյուղում, և այս պատճառով խորհուրդները վերցնում եյին բոլոր ֆաբրիկաները և գործարանները: *Արդյունաբերությունը խիստ կենտրոնացված* եր, վոր նշանակում եր տեղական արդյունաբերական ձեռնարկությունների լրիվ յենթարկումը կենտրոնին: Կենտրոնացումն արտահայտվեց այսպես կոչված «գլավկների» և «ցենտրների» ստեղծման մեջ (Գլավրուդա, Գլավուգոլ, Գլավսպիչկա, Ցենտրոյեմենտ, Ցենտրո-

չայ, և ուրիշները): Այդ կենտրոնացումն իր բացասական կողմերն ունեցավ՝ նա կաշկանդում եր տեղերի նախաձեռնությունը և բյուրոկրատիզմ եր ծնում արդյունաբերության կառավարման մեջ: Բայց այս բոլոր և շատ ուրիշ թերություններով միասին ամբողջ արդյունաբերությունը ԺՏԳԽ մեջ միավորված գլավկների և ցենտրների ձեռքում կենտրոնացնելու այս քաղաքականությունը միայն հնարավորություն տվեց բանվոր դասակարգին պահպանել արդյունաբերությունը լիակատար կաթվածից, հնարավորություն տվեց մեկ ձեռքում կենտրոնացնել նրա ամբողջ արդյունքները և բանակի կարիքները հայթհայթել:

Ռազմական կոմմունիզմի ժամանակ բոլոր բանվորներն *ամրացված եյին ֆաբրիկաներին*, հայտարարված եր *աշխատանքի պահկություն*, (ПОВИННОСТЬ), և *բոլոր անաշխատ տարրերը հարկադրված եյին աշխատել*:

Աշխատավորների մատակարարումը կատարվում եր բնարդյունքով (նատուրայով) պետհիմնարկությունների և կոոպերացիայի միջոցով:

Այդ քաղաքականության ժամանակամիջոցում շատ բացասական բան կար (բյուրոկրատիզմ արդյունաբերության մեջ, պարենմասնատրման ծանրություն և այլն), բայց միայն ռազմական կոմմունիզմի օգնությամբ եր, վոր կոմկուսակցությունն աշխատավորներին դեպի հաղթանակ տարավ:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՀԵՐՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Այդ հաղթանակը կապիտալիստների վրա հնարավոր եր, վորովհետև պրոլետարները և գյուղացիները միավորված մեր կուսակցության շուրջը, հայտնաբերեցին հերոսություն և հեղափոխության անձնվեր ծառայելու հրաշքներ:

Մեր Խորհուրդների սոված հանրապետությունը կարողացավ ստեղծել անհաղթ բանվորա-գյուղացական Կարմիր բանակը[1], վոր կազմվեց հենց քաղաքացիական պատերազմի պայմաններում: Բացի զորաժողովից, հարյուրավոր ու հազարավոր բանվորներ ու գյուղացիներ կամավոր կերպով գնում եյին պաշտպանելու խորհուրդները: Միմիայն 1919 թ. արհմիությունները մոտ 80,000 կամավոր տվեցին:

Կարմիր բանակի ուժը տասնապատկվում եր կարմիր թիկունքի պաշտպանությամբ, ուր բանվորներն ու գյուղացիները հայտնաբերում եյին վոչ պակաս հերոսություն: Քաղցելով և ցրտից տանջվելով, բանվորները բացի պարտադիր 8-ժամյա աշխատանքից, կազմակերպում եյին կոմմունիստական շաբաթորյակներ:

Քաղաքացիական պատերազմում հաղթանակն աշխատավորներին

1) Կարմիր բանակ ստեղծելու դեկրետը հրատարակվեց 1918 թ. փետրվարի 23-ին:

ծնաց։ Կարմիր բանակը կարողացավ պաշտպանել հանրապետությունը։ Այդ հնարավոր եր շնորհիվ մեր կուսակցության ամրության ու համախմբվածության, վորի ղեկավարությամբ եր իրագործվում բանվորների ու գյուղացիների միությունը։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ VIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԵՎ ՆՐԱ ՎՃԻՌՆԵՐԸ ՄԻՋԱԿԻ ՄԱՍԻՆ

Այդ միությունը քաղաքացիական պատերազմի հենց առաջին տարվա ընթացքում սկսեց լայնանալ։ Զնայած պարենմասնատրմանը, քանի գնում այնքան ավելի միջակ գյուղացին բանվոր դասակարգին սկսում եր ուղղակի աջակցել խորհրդային իշխանության պաշտպանության գործում։ Այդ բանին եյին դրդում նրան սպիտակ գվարդիականների կողոպուտը, ավերումները, բռնությունները գյուղում։ Այդ նրան սովորեցրեց կալվածատերի վերադարձը գյուղ, վերադարձ, վոր հետևում եր սպիտակ բանակների ժամանակավոր հաղթանակներին։ Հարկավոր եր ամրապնդել ու զարգացնել միջակի այդ սկսված ձգտումը դեպի խորհրդային իշխանությունը։ Այդ հարկավոր եր և՛ այն բանի համար, վոր ջարդեյինք բուրժուա-կալվածատիրական հակահեղափոխությունը, և՛ այն բանի համար, վոր նրա վրա հաղթանակ տանելուց հետո սոցիալիզմ կառուցեյինք։ Առանց միջակի գյուղը չեր կարող նոր սոցիալիստական ձևով վերակառուցել, իսկ առանց գյուղի չեր կարող սոցիալիզմ կառուցել։ Այս պատճառով Վ. Ի Լենինը կուսակցության VIII համագումարի [1]) (1919 թ. մարտին) առաջ դրեց պրոլետարիատի ու գյուղական չքավորության ամուր միության հարցը միջին գյուղացության հետ։

Յեթե շահագործողների վերաբերմամբ մենք գործում եյինք բռնության վճռական միջոցներով. ապա բազմամիլիոն միջին գյուղացության դեմ գործողության այդ յեղանակները ճիշտ չեն։ «Այդտեղ բռնությամբ վոչինչ չես կարող անել։ Բռնությունը միջին գյուղացության վերաբերմամբ ինքնին ներկայացնում է մեծագույն վնաս»—ասում եր Իլյիչը։

Համագումարը կուսակցությանն ամուր ցուցմունքներ ավեց. 1) չշփոթել միջին գյուղացիներին կուլակների հետ. 2) բոլորովին հրաժարվել միջին գյուղացության վրա բռնություն գործադրելուց 3) չհարկադրել գյուղացիներին պարտադրաբար կոմմունաներ կազմակերպել. 4) միջակների վրա չափավոր տուրքեր դնել. 5) նրանց պաշտպանություն ցույց տալ և այլն։

Համագումարը հաստատեց միության քաղաքականությունը միջին գյուղացության հետ։ Այդ քաղաքականությամբ ԽՍՀՄ բանվոր դասա-

1) Այդ համագումարում ընդունվեց կուսակցության ամբողջական ծրագիրը։

կարգը հաջողությամբ վերջացրեց վիթխարի պատերազմը և նրանով մտավ հեղափոխության նոր շրջանը— նեպի շրջանը։

Հարց. Ինչո՞ւ մենք հաղթեցինք քաղաքացիական պատերազմում։

ԿՏՈՐՆԵՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Լենինը յերեք հեղափոխության բնույթի մասին

Մեր հեղափոխությունը բուրժուական է, քանի դեռ մենք գնում ենք գյուղացության, իբրև մի ամբողջության հետ։ Այս մենք պարզից էլ պարզ եյինք գիտակցում, 1905 թ. իվեր հարյուրավոր ու հազարավոր անգամ ասում եյինք, վոր յերբեք պատմական պրոցեսի այդ անհրաժեշտ աստիճանից վոչ կարելի յե ցատկել-անցնել, վոչ էլ դեկրետներով վերացնել այն։

Բայց 1917 թ. ապրիլ ամսից, հոկտեմբերյան հեղափոխությունից, մեր կողմից իշխանության գրավումից շատ առաջ, մենք հայտնապես ասում եյինք և պարզաբանում ժողովրդին, թե հեղափոխությունը չի կարող կանգ առնել դրա վրա, վորովհետև յերկիրն առաջ է գնացել, կապիտալիզմն առաջ է քայլել, չտեսնված չափերի յե հասել քայքայումը, վորը կը պահանջի (ուզո՞ւմ է այդ արդյոք վորեվե մեկը, թե վոչ, այդ միևնույն է), կպահանջի մի քանի քայլ առաջ, դեպի սոցիալիզմ։ Վորովհետև չի կարելի այլ կերպ առաջ գնալ, այլ կերպ փրկել պատերազմից հոշոտված յերկիրը, այլ կերպ թեթևացնել աշխատավորների ու շահագործվողների տանջանքները։

Հենց այնպես յեղավ, ինչպես մենք ասում եյինք։ Հեղափոխության ընթացքը հաստատեց մեր դատողության ճշտությունը։ Սկզբում «ամբողջ» գյուղացության հետ միասին միապետության դեմ, կալվածատերերի դեմ, միջնադարի դեմ (և այդքանով հեղափոխությունը մնում է բուրժուական, բուրժուա-դեմոկրատական)։ Ապա—ամենաաղքատ գյուղացության հետ միասին, կիսապրոլետարիատի հետ միասին, բոլոր շահագործողների հետ միասին կապիտալիզմի դեմ, դրանց թվում գյուղական հարուստների, կուլակների, սպեկուլյանտների դեմ, և այդքանով հեղափոխությունը սոցիալիստական է դառնում։ Փորձել արհեստական չինական պատ քաշել մեկի ու մյուսի միջև, նրանց իրարից ինչ-վոր այլ բանով անջատել, բացի պրոլետարիատի նախապատրաստության աստիճանից և նրա միավորման աստիճանից գյուղական չքավորության հետ, այդ մարքսիզմի մեծագույն խեղաթյուրումն է, նրա գռեհկացումը, լիբերալիզմով փոխարինումը...։

Վերջացնելով բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը գյուղացության հետ ընդհանրապես, Ռուսաստանի պրոլետարիատը

վերջնականապես անցավ սոցիալիստական հեղափոխության, յերբ նրան հաջողվեց պառակտել գյուղը, իրեն միացնել նրա պրոլետարներին ու կիսապրոլետարներին, նրանց միացնել կուլակների ու բուրժուազիայի, դրանց թվում գյուղացական բուրժուազիայի դեմ:

(Վ. Ի. Լենին, Աշխ. ժող. 1 հրատ. հ. XV, եջ 508, 509 և 512):

2. Հաշտություն կնքելու անհրաժեշտության մասին

Հարկավոր ե նահանջել կարողանալ: Անհավատալի դառն իրականությունը ֆրազով թաքցնել չի կարելի: Հարկավոր ե ասել. «տա՜ աստված, որ կիսակարգ նահանջենք»: Մենք կարգով նահանջել չենք կարող, տա՜ աստված կիսակարգ նահանջենք, ամենափոքր ժամանակամիջոցը շահենք, որպեսզի մեր օրգանիզմի հիվանդ մասը գոնե մի քիչ կազդուրվի: Օրգանիզմն իր ամբողջությամբ առողջ ե, նա կը հաղթահարե հիվանդությունը: Չի կարելի պահանջել, որպեսզի նա րոպեյապես հաղթահարի այն, որպեսզի կանգնեցնի փախչող բանակը: Յերբ յես մեր յերիտասարդ բարեկամներից մեկին, որը ձախ լինել եր ուզում, ասացի. «ընկեր, գնացեք ֆրոնտ, տեսեք, թե ինչ ե կատարվում այնտեղ բանակում»,—այդ ընդունվեց իբրև վիրավորական առաջարկ. «Մեզ ուզում են աքսոր ուղարկել, որպեսզի մենք այստեղ ագիտացիա չանենք հեղափոխական պատերազմի մեծ սկզբունքների համար»: Այդ առաջարկելով, յես իսկապես ֆրակցիոն թշնամիներին աքսոր ուղարկելու հաշիվը չեյի անում, այդ մի առաջարկ եր անձամբ հավաստիանալու, որ բանակն սկսել եր անլուր կերպով փախչել: Մենք ավելի վաղ ել գիտեյինք այդ, ավելի վաղ ել չեր կարելի աչք փակել այն բանի հանդեպ, որ քայքայումն այնտեղ հասել ե անլուր փաստերի, մինչ այն, որ զինվորները գրոշներով վաճառում են մեր թնդանոթները գերմանացիներին: Այդ մենք գիտեյինք, ինչպես գիտենք նաև այն, որ նրանց յետ պահել չի կարելի: Այն վերապահությունն ել, թե գերմանացին չի հարձակվի, մեծագույն ավանտյուրա յեր (արկածախնդրություն): Մեզ սպասում են ամենածանր պարտություններ, որովհետև մենք բանակ չունենք, որովհետև մենք կազմակերպություն չունենք, որովհետև այդ յերկու խնդիրը միանգամից լուծել չի կարելի: Յեթե չկարողանաս հարմարվել, տրամադիր չես փորի վրա սողալ ցեխի մեջ, այն ժամանակ դու հեղափոխական չես, այլ դատարկախոս, որովհետև ուրիշ ճանապարհ չկա, որովհետև պատմությունն այնպես տհաճ ե դասավորվել, որ հեղափոխությունը յերկու յերկրներում միաժամանակ պետք ե հասունանա:

(Վ. Ի. Լենին, Աշխ. ժող. 1 հրատ. հ. XV, եջ 125):

3. Լենինը միջին գյուղացության մասին

...Խոսքն այն մասին չե, որպեսզի կոտրենք առաջուց հայտնի շահագործողների դիմադրությունը, հաղթենք նրանց և տապալենք,—մի խնդիր, որ մենք դնում եյինք ավելի առաջ: Վո՛չ, այն չափով, ինչ չափով մենք այդ գլխավոր խնդիրը լուծել ենք, հերթի յեն դրվում ավելի բարդ խնդիրներ: Այդտեղ բռնությամբ վոչինչ չես ստեղծի: Բռնությունը միջին գյուղացության վերաբերմամբ ինքնին ներկայացնում ե մեծագույն վնաս: Այդ—բազմաթիվ, բազմամիլիոն շերտ ե...:

Ամենից ավելի մենք պետք ե հիմնվենք այն ճշմարտության վրա, որ այստեղ բռնության մեթոդներով, հենց ըստ գործի եյության, վոչնչի հասնել չի կարելի: Այստեղ տնտեսական խնդիրը բոլորովին այլ կերպ ե դրված: Այստեղ չկա այն գագաթը, որ կարելի յե կտրել, թողնելով ամբողջ հիմքը, ամբողջ շինությունը: Այն գագաթը, որ քաղաքում կապիտալիստներն եյին, այստեղ չկա: Այստեղ բռնությամբ գործել՝ նշանակում ե ամբողջ գործը փչացնել: Այստեղ հարկավոր ե յերկարատև դաստիարակության աշխատանք: Գյուղացուն, որ վոչ միայն մեզ մոտ, այլ և ամբողջ աշխարհում պրակտիկ ու ռեալիստ ե, մենք պետք ե կոնկրետ որինակներ տանք իբրև ապացույց այն բանի, որ «կոմմունը» ամենից լավն ե...:

Այս հարցի մասին պետք ե ասենք, որ խրախուսում ենք կոմմունաները, բայց նրանք պետք ե այնպես դրված լինեն, որպեսզի վաստակեն գյուղացու վստահությունը: Իսկ մինչև այդ ժամանակ մենք գյուղացիների աշակերտներն ենք և վոչ թե նրանց ուսուցիչները...: Ավելի հիմար բան չկա, քան այն, յերբ գյուղատնտեսության և նրա առանձնահատկությունների անծանոթ մարդիկ, որոնք գյուղ են նետվել միայն այն պատճառով, որ լսել են հասարակական տնտեսության ոգտի մասին, հոգնել են քաղաքային կյանքից և ցանկանում են գյուղում աշխատել,—յերբ այդպիսի մարդիկ ամեն բանում իրենց գյուղացիների ուսուցիչ են համարում: Ավելի հիմար բան չկա, քան մտածելն իսկ բռնության մասին միջին գյուղացու տնտեսական հարաբերությունների ասպարեզում:

Այստեղ խնդիրը հանգում ե վոչ թե միջին գյուղացու եքսպրոպրիացիային, այլ այն բանին, որպեսզի հաշվառենք գյուղացու կյանքի առանձնահատուկ պայմանները, այն բանին, որպեսզի գյուղացիներից սովորենք ավելի լավ կարգի անցնելու յեղանակները և չհամարձակվենք հրամայել: Ահա այն կանոնը, որ սահմանել ենք ինքներս մեզ համար:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պարզեցե՛ք, թե ինչպիսի մասնակցություն են ունեցել ձեր ձեռնարկության բջիջը և բանվորները փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխության մեջ։ Յեզրակացությունները գրեցե՛ք տետրակում։

2. Պարզեցե՛ք, ինչպիսի աշխատանք է վարել ձեր բջիջը «ռազմական կոմմունիզմի» տարիներում և ինչպիսի մասնակցություն են ունեցել ձեր ձեռնարկության բանվորները քաղաքացիական պատերազմում։ Համառոտ յեզրակացությունները գրեցե՛ք տետրակում։

ՀԱՐՑԵՐ

1. Ինչո՞ւմն էր տեսնում Լենինը փետրվարյան հեղափոխության յուրատեսակությունը։

2. Պատմի՛ր, ի՞նչ գլխավոր խնդիրներ էին կանգնած հեղափոխության առաջ փետրվարից հետո, և ի՞նչ լուծումներ էին առաջարկում բոլշևիկները։

3. Ինչո՞ւ հաղթանակեց Հոկտեմբերյան հեղափոխությունը։

4. Բացատրի՛ր, թե ի՞նչումն էին ընկ. Տրոցկու սխալները Հոկտեմբերի գնահատության մեջ։

5. Ի՞նչպես լուծեց պրոլետարիատի դիկտատուրան հեղափոխության կարևորագույն հարցերը և վորոնք էին այդ հարցերը։

6. Ինչո՞ւմն էին ձախ կոմմունիստների և ընկ. Տրոցկու սխալները Բրեստի հաշտությունը կնքելու հարցում։

7. Մանրամասն պատմի՛ր, թե ի՞նչպես կերպարանափոխվեց հեղափոխության ընթացքում պրոլետարիատի միությունը գյուղացիության հետ։

8. Ի՞նչու յեր անհրաժեշտ ռազմական կոմմունիզմը և վո՞րն է նրա նշանակությունը։

9. Ինչո՞ւ հաղթեցինք մենք քաղաքացիական պատերազմում։

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

Բոլշևիկները կուսակցության համար մղվող կռվում Հոկտեմբերից հետո

ԻՆՉԻ ՄԱՍԻՆ Է ԶՐՈՒՅՑԸ

Անցյալ զրույցում մենք տեսանք, թե ինչպես Ռուսաստանի պրոլետարիատը մեր կուսակցության ղեկավարությամբ և նրա ճիշտ քաղաքականության շնորհիվ գյուղացիության վերաբերմամբ, ամրացրեց պրոլետարական հեղափոխությունը դաշնակցած գյուղական չքավորության հետ և պաշտպանեց, ելի նույն չքավորության հետ միասին, իսկ հետո յել միջին գյուղացիության հետ, Հոկտեմբերի նվաճումները բուրժուա-կալվածատիրական հակահեղափոխությունից։

Այս զրույցում մենք կը քննենք. 1) ինչպես մեր կուսակցությունը հաստատեց, այս գրքույկի յերրորդ հատվածից մեզ արդեն հայտնի տնտեսական քաղաքականությունը, վոր դեպի սոցիալիզմ է տանում և՛ քաղաքը, և՛ գյուղը. 2) ինչպես էր պայքարում կուսակցությունն այդ քաղաքականության համար իր միջավայրում յեղած օպպոզիցիոն խմբավորումների դեմ, վորոնք փորձում էին շեղել կուսակցությունն իր լենինյան ուղիից. 3) ինչպես էր պայքարում նա նույն այդ խմբավորումների դեմ հանուն իր միության և ներքին դիսցիպլինի, առանց վորոնց նույնպես անկարելի յե սոցիալիզմի շինարարությունը, ինչպես անկարելի կը լիներ հաղթանակը Հոկտեմբերին և հաղթանակը քաղաքացիական պատերազմում։

1. Կուսակցությունը Նեպին անցնելու շրջանում

ՆԵՊԻՆ ԱՆՑՆԵԼԸ

«Ռազմական կոմմունիզմի» քաղաքականությունը, ինչպես մենք գիտենք, քաղաքացիական պատերազմի հարկադրական, ժամանակավոր քաղաքականությունն էր։ Այլ կերպ, քան պարենմասնատրման միջոցով, մենք չեյինք կարող հաց ճարել բանակի, բանվորների և ծառայողների համար։ Պարենմասնատրում, բանվորների ամրացում ֆաբրիկաներին, աշխատանքի մոբիլիզացիաներ, արդյունաբերության խիստ կենտրոնացում և այլն—«ռազմական կոմմունիզմի» այս բոլոր միջոցներն ուղղված էին մի նպատակի՝ դիմա-

դրել Անրհուրդների Թշնամիներին, պաշտպանել պրոլետարական հանրապետությունը կապիտալիստներից և կալվածատերերից։ Ցեվ այդ քաղաքականությունն իրեն արդարացրեց։ Հակահեղափոխությունը ջախջախվեց։

Նրա դեմ մղած կռվի վերջանալու (մոտավորապես 1920 թ. վերջում) և խաղաղ դրության (զորացրման) անցնելու ժամանակները Անրհուրդների հանրապետությունը խորը տնտեսական և քաղաքական կրիզիս էր ապրում միջազգային հեղափոխության հապաղման պայմաններում։ Հոկտեմբերին հաջորդող առաջին տարիներում Ցեվրոպայում բանվորական հեղափոխության փոթորկալի վերելքի շրջանից հետո, 1926 թվից սկսվեց կապիտալի հարձակումը։ Կոմկուսակցությունների թուլությունը և սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդների դավաճանությունը բուրժուազիային օգնեցին ջախջախելու պրոլետարական հեղափոխական ջոկատները։

Տնտեսական տեսակետից Անրհուրդների երկիրը, որ հոշոտված էր չորսամյա իմպերիալիստական և յերեքամյա քաղաքացիական պատերազմով, կատարյալ քայքայման յեզրին էր կանգնած։ Արդյունաբերության մեջ հատկապես սուր կերպով զգացվում էր վառելիքի ու մետաղի սովը, նույնպես և տրանսպորտի համարյա լիակատար փլուզումը։ Գյուղատնտեսությունն անկման շրջան էր ապրում, որ ել ավելի սրվեց 1920 թ. անբերքությունից (տես №№ 13 և 14 դիագրամները)։

Գյուղացին, որից վերցնում եյին բոլոր ավելցուկները, իսկ յերբեմն ել ոչ միայն ավելցուկները, անձնական շահ չուներ ցանքը մեծացնել, հողի մշակումը լավացնել, անասնապահությունը զարգացնել և այլն։ Ցանքսի տարածությունը կրճատվում եր, անասունների քանակը քչանում, նրանց որակը խիստ ընկնում։

Այդ տնտեսական կրիզիսը քաղաքացիական պատերազմի վերջանալու ժամանակներն ազդեց նաև յերկրի քաղաքական դրության վրա։ Միջին գյուղացությունը, որ քաղաքացիական պատերազմի ժամանակ, կալվածատերերի վերադարձի վտանգի հանդեպ, այս կամ այն կերպ հաշտվում եր պարենմասնատրման հետ և, ինչպես մենք արդեն ասացինք անցյալ գրույցում, միության եր ձգտում բանվոր դասակարգի հետ, այժմ, յերբ գլխավոր վտանգն անցել եր, սկսեց իր անբավականությունն արտահայտել։ Այդ անբավականությունը հաղորդվում եր և գյուղական չքավորությանն ու նույնիսկ բանվորների ավելի հետամնաց շերտերին։ Այդ օգտագործեցին կուլակության և սպիտակ գվարդիականության ճյուղերը։ Կրոնշտադտի (1921 թ. մարտին), Տամբովի նահանգի (անտոնականություն), Սիբիրի ապստամբությու-

ԸՆԴԱՄԵՆԸ ՑԱՆՔՍ ԵՐ ԱՐՎԱԾ



Միլիոն հեկտարներով

ԴՐԱՆԻՑ ՀԱՑԱՀԱՏԻԿՆԵՐ



Միլիոն հեկտարներով

Դիագրամմ № 13. Ինչպես եր ընթանում գյուղատնտեսության վերականգնումը

(Ըստ Պետպլանի վերահսկիչ թվանշանների և նյութերի)



(Միլիոն ռուբլիներով մինչ-պատերազմ. գներով)

Դիագրամմ № 14. Ինչպես եր ընթանում գյուղատնտեսության վերականգնումը։

(Ըստ Պետպլանի նյութերի)

ները ցույց տվեցին, որ ճեղք, պառակտում ե գոյանում բանվորների ու միջին գյուղացության միության մեջ, որ սկսել եր կարգի ընկնել քաղաքացիական պատերազմի ժամանակ։

Դրան ավելացավ և այն, որ միջազգային հեղափոխությունը հապաղեց։ Բուրժուազիան սկսեց հարձակման անցնել բանվոր դասակարգի վրա։

Հարց եր առաջ գալիս՝ արդյոք կարելի յեր այդ պայմաններում սոցիալիզմ կառուցել «ռազմական կոմմունիզմի» քաղաքականության ոգնությամբ։

Մենք արդեն շատ անգամ ասել ենք, որ մեր յերկրում գերակշռում ե փոշիացած, տրոհված, մանր-բուրժուական հետամնաց գյուղացիական տնտեսությունը։ Չնայած մեզ մոտ հողն ամբողջ պետության սեփականությունն ե դարձել, բայց այդ բավական չե ամբողջ գյուղատնտեսության հանրայնացման համար։ Մնացել ե մանր տնտեսատերը, մանր սեփականատերը, գյուղում մնացել ե արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, մնացել են մանր սեփականատերերի նախապաշարմունքները։ Այդ նախապաշարմունքները դեռ այժմ ել նշանակալի չափով խանգարում են միջին գյուղացուն հասկանալ դեպի սոցիալիզմ տանող կոոպերացված տնտեսության ոգուտները։ Ավելի ևս դժվարանում եր սոցիալիզմի շինարարությունն այն ժամանակի տնտեսական կրիզիսի պայմաններում, յերբ այդ շինարարության հենց հիմքը—խոշոր արդյունաբերությունը—համարյա մեռել եր։

Հարկավոր եր մի ուրիշ, պտույտ անող, ավելի յերկար ճանապարհ դեպի սոցիալիզմը։ Հարկավոր եր անձնապես շահագրգռել մանր տնտեսատերերին։ Իլյիչի հանճարեղ ղեկավարությամբ մեր կուսակցությունը X համագումարում (1921 թ. մարտ) նշեց այդ ուղին դեպի սոցիալիզմը—նեպի միջոցով։ Դեպի նոր տնտեսական քաղաքականությունն անցողական մի միջոց եր պարենմասնատրումը պարենտուրքով փոխարինելը։

Այդ փոխարինման մեջ նորն այն եր, որ պարենտուրքը վերցնում եր միայն գյուղացիական պրոդուկցիայի մի մասը և, ինարկե, ավելի քիչ, քան պարենմասնատրումը։ Այսպիսով գյուղացու մեջ իր տնտեսությունը բարձրացնելու շահագրգռությունն առաջ յեկավ և հնարավորություն՝ լավացնելու իր դրությունը։ Պարենտուրքն անցումն եր նշանակում կանոնավոր ապրանքափոխանակության քաղաքի ու գյուղի միջև։

Ինչ պիտի աներ գյուղացին հացի մնացորդներն իր կարիքները բավարարումից և պարենտուրքը տալուց հետո։ Պարզ ե—պիտի ծա-

խեր, փոխեր արդյունաբերական իրեր գներ (տես 5-րդ գլուխն առևտրի մասին)։ Պարենտուրքին անցնելն ինքնին յենթադրում եր առևտրի ազատություն։

Արդյունաբերության վերականգման և զարգացման համար հարկավոր եյին վառելիք, հում նյութ և հաց։ Իսկ առանց գյուղացիական տնտեսության վերականգնման վոչ մի տեղից չեր կարելի ճարել վոչ մեկը, վոչ մյուսը։ Յեվ այս իր հերթին բանվոր դասակարգի համար անհրաժեշտություն եր ստեղծում իր քաղաքականությունը փոխել գյուղացության վերաբերմամբ։ Իլյիչն ասում եր, որ «առաջին հերթին հարկավոր են անհապաղ ու լուրջ միջոցներ բարձրացնելու» գյուղացիական տնտեսությունը։

Նեպին անցնելով պետձեռնարկությունները տնտեսական հաշվի հիմքերի վրա դրվեցին, այսինքն այնպիսի պայմանների մեջ, յերբ ամեն մի գործարան, ամեն մի ֆաբրիկա պետք ե հաշվառեր առևտրական շրջաբերության պայմանները և ցույց տար իր ոգտակարությունը և զարգանալու ընդունակությունը։

«Ռազմական կոմմունիզմի» կենտրոնացման ծայրահեղ աստիճանը վերացվեց։ Գլավկները փոխարինվեցին առանձին, ավելի մանր միավորումներով—տրեստներով (որինակ՝ Գլավտեքստիլի փոխարեն, վոր միացնում են ամբողջ տեքստիլ արդյունաբերությունը, ստեղծվեցին մի շարք տրեստներ՝ Իվանովո-Վոզնեսենսկինը, Սերպուխովինը, Տվերինը և այլն)։ Տրեստները, առանձին ֆաբրիկաները մեծ ինքնուրույնություն ստացան հում նյութի, վառելիքի և այլն մթերման գործում, մի խոսքով լիակատար նախաձեռնության իրավունք ստացան արտադրության մեջ, ինարկե ԺՏԳԽ ղեկավարությամբ։

Վորովհետև ավերումն ու կարիքը շատ մեծ եյին, միանգամից պետական ամբողջ խոշոր արտադրությունը բանի գցել չեր կարելի, իսկ բանի գցած պետարդյունաբերությունը դեռ չեր կարող բավարարել յերկրի բոլոր պահանջները, ապա բանվորական պետությունը թույլատրեց մասնավոր մանր արդյունաբերության զարգացումը և նրա շինվածքների ազատ վաճառքը։ Պետական միջոցների նույն այդ պակասը հասցրեց այն բանին, վոր անհրաժեշտ յեղավ թույլատրել պետական միջին և մանր ձեռնարկությունների արենդը (վարձակալությունը) մասնավոր անձերին։

Այսպիսով «ռազմական կոմմունիզմի» մեթոդներով յերկրի ամբողջ տնտեսությունն անմիջական, ուղղակի ճանապարհով սոցիալիստական սկզբունքներով վերակառուցելու անկարելիությունը հարկադրեց

կուսակցությանը նոր տնտեսական քաղաքականության ուղիի վրա կանգնել։

Առևտրի ազատություն, պետությունից ձեռնարկությունների արենդ, մասնավոր կապիտալի թույլատրումն առևտրի ու արդյունաբերության մեջ և այլն,—այս բոլորը խոսում էր այն բանի ոգտին, վոր կոմկուսակցությունը զիջում էր անում գյուղացությանը, վոր նեպը նահանջ է։ Բայց ինչ բնույթ էր կրում այդ նահանջը։ Լենինը սովորեցնում էր, վոր նեպը մտցնելով, մենք նահանջում ենք կապիտալիզմի ուղղակի «գրոհից», մեզ մոտ սոցիալիզմի ուղղակի «մուծումից»։ Ինչո՞ւ նահանջեցինք մենք։ Նրա համար, վորպեսզի մեր ուժերը հավաքած նոր հարձակում գործենք կապիտալիզմի վրա, բայց արդեն այլ, ավելի դանդաղ ձևով՝ նրան «պաշարելով», նրան պրոլետարիատի դիկտատուրայի յերկրից աստիճանաբար վռնդելով, սոցիալիզմի աստիճանաբար շինարարությամբ բանվոր դասակարգի և գյուղական չքավորության, միջին գյուղացության հետ ունեցած այն միության հիման վրա, վոր մեզ սովորեցնում էր Լենինը։ Այժմ այսպես է տեղի ունենում այդ։ Մենք արդեն այդ մասին մանրամասն խոսել ենք և տեսանք, թե ինչպես վերականգնվել է ԽՍՀՄ ավերված տնտեսությունը, ինչպես ամրացել և այժմ մեր սոցիալիստական արդյունաբերությունը, ինչպես նա արդեն նեղում է նեպի ժամանակ թույլատրված մասնավոր կապիտալին, և ինչպես նա արդեն սկսել է դանդաղ, բայց հաստատ կերպով իր յետևից դեպի սոցիալիզմ տանել գյուղը։

ՄԱՆՐ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՐՔԵՐՈՒՄ

Գյուղացիների անբավականությունը պարենմասնատրումից, 1921 թ. ամառվա ապստամբություններն ըստ էության նշանակում էին մանր բուրժուական գյուղացական տարերքի [1]) վրդովմունքը «ռազմական կոմմունիզմի» ճնշող շրջանակների դեմ (պարենմասնատրում, առևտրի բացակայություն և այլն)։ Այդ տարերքը սկսեց իրեն ճնշող կապանքները կտրել (գյուղացական ապստամբությունները և այլն)։

Բանվոր դասակարգն այն ժամանակ կրում էր (կրում է և այժմ) մանր բուրժուազիայի ազդեցությունը։ Մեր կուսակցությունն այն ժամանակ ինչ-վոր անբնակ կղզում, դասակարգերից դուրս, կյանքի ժխորից դուրս չէր ապրում։ Կուսակցության մի մասը նույնպես կրում էր (կրում է և այժմ) միևնույն տարերքի ազդեցությունը, մանավանդ վոր քաղաքացիական պատերազմի տարիների ընթացքում նրա շարքերն էին լցվել շատ նոր անդամներ, վորոնց ընդունելությունը չէր

[1]) Տարերք—բնության կույր ուժ (որինակ՝ փոթորիկ) կամ անկազմակերպ, անգիտակից հասարակական ուժ։

կարող հատուկ խնամքով կատարվել։ Խոսք չկա, վոր քաղաքացիական պատերազմի ժամանակաընթացքում յեկած կոմմունիստների կադրը Համ. Կ. (բ.) Կ. մեջ, խաղաց (և խաղում է) ահագին դրական դեր, բայց ազնիվ, իսկական հեղափոխականների կողքին կուսակցության մեջ մտան շատ ուղեկիցներ, կուսակցությանը կպած շատ տարրեր [1])։

Բացի այդ, ինտելլիգենցիան, ծառայողները, գյուղացիները, ընդհանրապես անկայուն տարրերն այն հունն էին, վորով մանր-բուրժուական տարերքի ազդեցությունը թափանցում էր կուսակցության մեջ։

Կուսակցության կազմի մեջ իսկ մեծամասնությունը վոչ-պրոլետարական տարրերն էին՝ 100 կուսակցականից 41 բանվոր, 28 գյուղացի և 31 ծառայող։

ՊԱՅՔԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ «ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՊՊՈԶԻՑԻԱՅԻ» և ՏՐՈՑԿԻՍՏՆԵՐԻ ԴԵՄ

Այնուամենայնիվ կուսակցության ահագին մեծամասնությունն ընկ. Լենինի գլխավորությամբ չէր շփոթվում մանր բուրժուական տարերքի ճնշումից։ Կուսակցությունը վորոնեց և մոմենտի դժվարություններից յելքը գտավ ամենից առաջ տնտեսական քաղաքականության այնպիսի փոփոխման մեջ, վոր կոգներ տիրել գյուղացական մանր-բուրժուական տարերքին և իր յետևից տանել գյուղացական մասսան, ամրացնելով միությունը նրա և բանվոր դասակարգի միջև։ Դրա համար էր մտցվում նոր տնտեսական քաղաքականությունը։ Ապա այն հանգամանքը, վոր մանր բուրժուական տարերքն իր մեջ էր քաշում բանվոր դասակարգի մի մասը, կուսակցությանն այն յեզրակացության բերեց, վոր հարկավոր է այդ տարերքին հակադրել արհմիությունների աշխատանքի փոփոխությունը, նրանց դարձնել կոմմունիզմի իսկական դպրոց, վորը բանվոր մասսային դաստիարակում է իր ամենորյա նյութական և կուլտուրական շահերի հողի վրա սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակցելու համար։ Սրանով, ինչպես մենք գիտենք 3-րդ զրույցից, արհմիությունները դառնում էին շարժաբեր փոկեր կուսակցությունից դեպի բանվոր դասակարգի ամենալայն շերտերը, կուսակցության ղեկավարության և ազդեցության հաղորդիչներ բանվորական մասսաներին, իսկ նրանց միջոցով և գյուղացության մասսային։ Վերջապես իր սեփական շարքերի վրա մանր-բուրժուական տարերքի ունեցած ազդե-

[1]) 1921 թ. կուսակցությունը իր շարքերի «զտումը» կատարեց, վորպեսզի ազատվի մորթապաշտներից, կպած տարրերից ու մյուսներից, վորոնք անարժան են նրա շարքերում լինել։ Ընդամենը հեռացվեց 154,000 կուսակցական, կամ կուսակցության ամբողջ կազմի 24% մի քիչ պակաս։

ցությանը կուսակցությունը հակադրում եր միության, դիսցիպլինի և իդեական տոկունության ամրացումը կուսակցության ներսում, ներկուսակցական դեմոկրատիայի աստիճանաբար ծավալման և կուսակցական-դաստիարակչական աշխատանքի զարգացման ճանապարհով։ Այդ ճանապարհը ռազմական կոմմունիզմի շրջանում կիրառելի չեր, յերբ քաղաքացիական պատերազմի պայմաններում կուսակցությունը պետք ե ռազմականորեն գործեր, մարտական հրամանների յեղանակներով։ Բայց այդ ուղին հարկավոր եր մտնել այժմ, յերբ քաղաքացիական պատերազմը հանդարտվում եր, յերբ հարկավոր եր ընդհուպ կռվի անցնել տնտեսական փլուզումի դեմ, յերբ հարկավոր եր բարձրացնել կուսակցության ամեն մի անդամի ակտիվությունը և քաղաքական գիտակցությունը բանվոր դասակարգին ղեկավարելու համար, գյուղացիական մասսաներին գրավելու համար, վորպեսզի բանվորների, գյուղական չքավորության և միջին գյուղացության ընդհանուր ուժերով կարելի լիներ վերականգնել ժողովրդական տնտեսությունը և սոցիալիզմ կառուցել։

Այսպիսով կուսակցության համար, Լենինի գլխավորությամբ, դժվարություններից յելքն այն եր, վոր և՛ տնտեսական, և՛ արհմիութենական, և՛ կուսակցական աշխատանքի ն ո ր ձ և և ր մտցվեյին, բայց այդ նոր ձևերը մի բանի եյին հանգում,—կուսակցության միության ամրապնդմանը և համախմբումին, նրա կողմից բանվոր դասակարգի ու գյուղական չքավորության միությանը միջին գյուղացության հետ։ Իսկ այդ նշանակում եր պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդում սոցիալիզմի շինարարության համար այն նոր պայմաններում, վորոնք ստեղծվել եյին քաղաքացիական պատերազմի ավարտումով։ Սրան ել ծառայում եյին այն վորոշումները, վոր Վ. Ի. Լենինի անմիջական ղեկավարությամբ կուսակցության 10-րդ համագումարն ընդունեց պարենմասնատրումից պարենտուրքին անցնելու մասին, արհմիությունների աշխատանքի և կուսակցության շինարարության մասին ներկուսակցական դեմոկրատիայի սկզբունքներով։

Բայց կուսակցությունը 10-րդ համագումարում այս վճիռներն անցկացրեց միայն համառ կռվից հետո կուսակցության այն մասի դեմ, վորն ամենից ավելի յեր յենթարկված մանր-բուրժուական տարերքի ազդեցությանը։ Այն ժամանակ կուսակցության հենց այդ մասի մեջ կազմվեցին մի քանի ոպպոզիցիոն խմբավորումներ։ Նրանցից գլխավորներն եյին՝ «բանվորական ոպպոզիցիայի» խմբակը և տրոցկիստների խմբակը։

«Բանվորական ոպպոզիցիայի» խմբակը ցանկանում եր, վորպեսզի ժողովրդական տնտեսության կառավարումը պատկաներ «արտա-

դրողների համառուսական համագումարին, վորոնք միանալու յեն արհեստակցական արտադրական միությունների մեջ, այդ միությունները ընտրում են հանրապետության ամբողջ ժողովրդական տնտեսության կառավարող կենտրոնական որգանները»։ Ժողովրդական տնտեսության կառավարումն այս ձևով «արտադրողներին» հանձնելը նշանակում եր նաև մեր խոշոր արդյունաբերությունը, սոցիալիզմի այդ հիմքը, հանձնել վոչ միայն բանվորների կառավարմանը, այլև բարվորների, տնայնագործների, արհեստավորների և ընդհանրապես մանր տնտեսատերերի կառավարմանը, վորոնք մեր յերկրում մեծամասնություն են կազմում։

Այդ կը լիներ մեր արդյունաբերության անցումը մանր բուրժուազիայի ձեռքը, իսկ այդ վոչ այլ ինչ ե, բայց յեթե պրոլետարիատի դիկտատուրայի պայթեցումը, վորովհետև խոշոր արդյունաբերությունն այդ դիկտատուրայի հիմքն ե։ Բայց յեթե նույնիսկ խոսքը վերաբերեր ժողովրդական տնտեսության կառավարումը բանվորական արհեստակցական միություններին հանձնելուն, այդ հանձնումը կոչնչացներ պրոլետարական պետության դերը տնտեսության կառավարման մեջ։ Իսկ այդ պետությունը հենց խորհուրդների մեջ կազմակերպված և բանվոր դասակարգի ավանգարդի—կոմմունիստական կուսակցության կողմից ղեկավարված պրոլետարական դիկտատուրա յե։ Ժողովրդական տնտեսության և ամենից առաջ սոցիալիստական արդյունաբերության կառավարումը Խորհրդային պետության գլխավոր, հիմնական խնդիրն ե։ Մեր կուսակցության ծրագիրը նախատեսնում ե, վոր արհմիությունները կը փոխվեն արդյունաբերության (իսկ հետո յել ամբողջ ժողովրդական տնտեսության) կառավարման որգանների, բայց այդ այն ժամանակ, յերբ արհմիությունները մինչև վերջ կկատարեն կոմմունիզմի դպրոցի իրենց դերը բանվորական մասսայի համար, յերբ ամբողջ բանվորական մասսան կոմմունիստական մասսա կը լինի, յերբ նա իր ամբողջությամբ փորձով կը սովորի կոմմունիստական հասարակություն կառուցել, յերբ դրան՝ մոտ կը լինի նաև գյուղացիական մասսան, վորը հենց նման ձևով այդ սովորած կը լինի կոոպերացիայում, և յերբ կսկսի վերանալ պետական իշխանության անհրաժեշտությունը։ Իսկ մինչև այն ժամանակ ժողովրդական տնտեսության կառավարումն արհմիություններին հանձնելը, արհմիությունները կուսակցությունից ղեկավարվող պրոլետարական պետության տեղը դնելը, պետության պայթեցումը կը լիներ, պրոլետարիատի դիկտատուրայի պայթեցումը։ «Բանվորական ոպպոզիցիայի» խմբակը մոռանում եր, վոր արհմիությունների անդամների մեջ չեն վերջացել մանր-բուրժուական տատանումները (որինակ՝ աշխատավարձի հավասարարության տրամադրու-

թյունները և այլն) և նեղ համքարային շահերը, ամբողջ դասակարգի խնդիրները չհասկանալը և այլն։

Միայն կազմակերպված, համախմբված կոմմունիստական կուսակցությունն ընդունակ է բարձրացնել անկուսակցական արհմիութենական մասսային մինչև ամբողջ պրոլետարիատի շահերի հասկացողության մակարդակը, միայն նա կարող է օգնել, վոր վերանան մանր-բուրժուական տարրերի ճնշման տակ արհմիությունների մեջ ծագած նախապաշարմունքները։ Տվյալ դեպքում նրա ճնշումը արտահայտվեց նաև կուսակցության մի մասի վրա, վոր ստեղծեց «բանվորական օպոզիցիայի» այդ խմբակը։ Նրա հայացքները ցույց եյին տալիս, թե ինչպես մանր-բուրժուական տարրերի ազդեցությունն առանձին կուսակցականների վրա տանում է դեպի պրոլետարական դիկտատուրայի պայթեցման ուղին։ Այդ ուղիով գնալով, այդ օպոզիցիայի առանձին ներկայացուցիչները (Մյասնիկովը, վոր այս կապակցությամբ հեռացվեց կուսակցությունից) հասան այն բանին, վոր խոսեցին բուրժուական «ազատությունների» անհրաժեշտության մասին, վորոնք նշանակում են հակահեղափոխական ագիտացիայի ու պրոպագանդի ազատություն։

Ներկուսակցական ասպարեզում «բանվորական օպոզիցիան» պաշտպանում եր ներկուսակցական դեմոկրատիայի ծայրահեղությունները, մինչև կուսակցության քաղաքականության քննադատության լիակատար ազատությունը և խմբավորումների ազատությունը։

Խոնարհվելով բանվոր-կուսակցականների հետամնաց մասում յեղած տարերային տրամադրությունների առաջ, «բանվորական օպոզիցիան» հակադրում եր կուսակցության «վարերը» «վերևերին», այսինքն նրա ղեկավար օրգաններին, ծագած բոլոր դժվարությունների համար մեղադրում եր այդ ղեկավար օրգաններին և ամենից առաջ կուսակցության ԿԿ։ Վերջապես, նա արշավանք սկսեց կուսակցության մեջ յեղած ինտելլիգենտների դեմ, ինչպիսին ել վոր լինեյին այդ ինտելլիգենտները. ինտելլիգենտ-կուսակցականների անկայուն տարրերի կուսակցական դաստիարակության փոխարեն, նա առաջ եր քշում այն պահանջը, թե նրանք պետք է պարտադրաբար անցնեն արտադրական աշխատանքի բովից։ «Բանվորական օպոզիցիայի» այս բոլոր հայացքները 10-րդ համագումարում մեծ թափով և կատաղորեն պաշտպանում եյին ը. ը. Շլյապնիկովը, Իգնատովը և Կոլլոնտայը։ Համագումարը մերժեց «բանվորական օպոզիցիայի» հայացքները և մի հատուկ, Վ. Ի. Լենինի կողմից առաջարկված, բանաձևում դատապարտեց այն իբրև մանր-բուրժուական թեքում կուսակցության մեջ։

Պակաս վտանգավոր չեր նաև մյուս թեքումը, արտահայտված այն

խմբավորման մեջ, վորի գլուխ եր անցած 10-րդ համագումարից առաջ և 10-րդ համագումարում ընկ. Տրոցկին։ Ընկ. Տրոցկու համար կարծեք վոչինչ չեր փոխվել քաղաքացիական պատերազմից տնտեսական շինարարության անցնելով, նրա համար գոյություն չուներ այն անհրաժեշտությունը, վոր քաղաքացիական պատերազմի առաջ բերած աշխատանքի յեղանակները պետք է փոխարինել նորերով, վորոնք կոգնեյին կուսակցությանը գրավել բանվոր դասակարգի բոլոր շերտերը, քաղաքականապես դաստիարակել նրանց և նրանց միջոցով գրավել գյուղացիական մասսաները։ Ընկ. Տրոցկին այն հաշիվն եր անում, թե կարելի չի բանվորական մասսան մեր արդյունաբերության վերականգնման աշխատանքի մեջ քաշել հրամանի և ճնշման առաջվա ռազմական յեղանակներով։ Կուսակցության կողմից բանվոր դասակարգի և նրա մասսայական կազմակերպությունների—արհմիությունների ղեկավարությունը, արդյունաբերության վերականգնման մեջ նրանց մասնակցության ղեկավարությունն ընկ. Տրոցկին փոխում եր այն բանով, վոր կուսակցությունը հրամայեր արհմիություններին և նրանց պետական օրգաններ դարձներ։ Յեթե «բանվորական օպոզիցիան» առաջարկում եր պետության տնտեսական օրգաններն արհմիություններով փոխարինել, ապա ընկ. Տրոցկին և նրա համախոհները ցանկանում եյին արհմիությունները պետական այդ օրգանների հասարակ կցանը դարձնել։ Այս պատճառով նա խոսում եր այն մասին, վոր կուսակցությունը «վերացնե» արհմիությունները, նրանց «միացնե» պետության տնտեսական օրգանների հետ։ Նրա համար, հակառակ Վ. Ի. Լենինի կարծիքի, արհմիությունները պետք է հանդիսանային վոչ թե կոմմունիզմի դպրոց, վորոնք դաստիարակում են պրոլետարական մասսաները սոցիալիստական շինարարության համար և վոչ ել մասսայական կազմակերպություններ, վորոնք բանվորների նյութական ու կուլտուրական շահերը պահպանում են «բյուրոկրատական խեղաթյուրումներից» խորհրդային պետության տնտեսական ապարատներում, այլ իրենք պիտի դառնային այդ պետության ապարատները։ Արհմիությունների այս «պետականացումը», յեթե այն ընդունվեր կուսակցության կողմից, կը մեռցներ արհմիությունները։ Նրանք չեյին հանդիսանա շարժաբեր փոկեր կուսակցությունից դեպի բանվորների ամենալայն մասսաները, իսկ նրանց միջոցով ել դեպի գյուղացիական մասսաները։ Արհմիությունների վերաբերմամբ հրամանատարություն անելը կը հասցներ գյուղացության վերաբերմամբ հրամանատարություն անելուն, իսկ այդ չեր ամրացնի, այլ ընդհակառակը կքանդեր բանվոր դասակարգի և գյուղական չքավորության միությունը միջակ-գյուղա-

ցու հետ, այսինքն դարձյալ կը հասցներ պրոլետարիատի դիկտատուրայի խախտմանը:

10-րդ համագումարը տրոցկիստների խմբավորման առաջարկությունները նույնպես մերժեց, ինչպես մերժել եր «բանվորական օպոզիցիայինը»: Նա ամբողջովին կանգնեց Վ. Ի. Լենինի տեսակետի վրա, վոր ղեկավարում եր կուսակցական մեծամասնության պայքարն օպոզիցիոն խմբավորումների դեմ: Համագումարն այդ խմբավորումների մեջ միայն սպառնալիք չեր տեսնում կուսակցության ճիշտ քաղաքականության համար քաղաքացիական պատերազմից տնտեսության վերականգնմանն անցնելու դժվարագույն շրջանում: Նա նրանց մեջ ամենալուրջ վտանգ եր տեսնում կուսակցության միության համար հենց այնպիսի մի ժամանակ, յերբ այդ միությունը հատկապես անհրաժեշտ եր և՛ տնտեսական, և՛ քաղաքական խոր կրիզիսի հանդեպ: 10-րդ համագումարը, Վ. Ի. Լենինի առաջարկով, հատուկ վորոշում ընդունեց կուսակցության միության մասին և դատապարտեց ամեն տեսակ խմբավորումները կուսակցության ներսում և, կուսակցությունից հեռացնելու սպառնալիքով, առաջարկեց բոլոր խմբավորումներին դադարեցնել իրենց գոյությունը: Հետագայում 11-րդ համագումարն ստիպված եր մասամբ հեռացնել կուսակցությունից, մասամբ կուսակցական պատիժների յենթարկել նախկին «բանվորական օպոզիցիայի» մի շարք անդամների, վորոնք խախտել եյին այդ վորոշումը:

Այն պայքարը, վոր 10-րդ համագումարում և նրա նախորյակին կուսակցությունը Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ մղեց օպոզիցիոն խմբավորումների դեմ, ահագին նշանակություն ունեցավ կուսակցության և Խորհրդային պետության համար Նեպի ամբողջ շրջանում: Այդ այն քաղաքականության առաջին քայլերի համար մղվող պայքարն եր, վոր մեզ հասցրեց տնտեսական իսկական վերականգնման, կուսակցության կողմից բանվոր դասակարգի և գյուղացության հետ նրա միության ճիշտ ղեկավարության հողի վրա, և սոցիալիզմի շինարարության «առաջին լուրջ հաջողություններին», վորը նշեց 14-րդ համագումարը:

Հարց. Ինչպիսի հանգամանքներ հարկադրեցին կուսակցությանը Նեպին անցնել:

2. Կուսակցության ուժի յեվ ազդեցության աճումը Նեպի զարգացման հետագա շրջանում

ՆԵՊԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԿԱՅՈՒՆ ՏԱՐՐԵՐԻ ՎՐԱ

Պրոլետարիատի գյուղացության հետ ունեցած տնտեսական կապի հիմքի վրա մենք 1926 թ. բարձրացրինք ամբողջ ժողովրդական տնտեսությունը համարյա մինչև նախապատերազմական մակարդակը: Տնտեսության այդ վերելքն արտահայտվեց նաև

պրոլետարիատի ու գյուղացության դեպի կուսակցությունն ունեցած վերաբերմունքի վրա: Կուսակցությունն ամրացավ և գրավեց լայն մասսաների վստահությունը: Բայց նեպն ունեցավ և մինչև այժմ ել իր բացասական ազդեցությունն ունի կուսակցության անկայուն տարրերի վրա:

Վորտեղից է նեպի այս վտանգը: Նախ մեր տնտեսության մեջ սոցիալիզմի տարրերի կողքին մենք ունենք բազմաթիվ մանր ապրանքային տնտեսություններ: Մանր բուրժուազիան իր հայացքներով, գործողություններով, սովորություններով և այլն ազդում է առանձին կուսակցականների վրա: Յերկրորդ՝ նեպը հնարավորություն է տալիս կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը (հատկապես առևտրում), վորոնք առանձին ընկերների վրա նույնպես բացասական իմաստով են ազդում:

Իսկ ինչումն է արտահայտվում նեպի այդ վատ ազդեցությունը: Վորոշ կոմմունիստների մոտ յերևան են գալիս զանազան տեսակ «ավելորդ բաներ», որինակ՝ չափից դուրս գրավվում են իրենց բնակարանի կահավորումով, կոստյումներով, հարբեցողությամբ և այլն: Այստեղ նեպի ազդեցությունը յերևան է գալիս ամբողջ ուժով: Նեպի, մասնավոր-կապիտալիստական շրջանների հետ մշտական գործարար շփումների քայքայիչ ազդեցության շնորհիվ վորոշ անկայուն կուսակցականներ կարող են կորցնել ընկերական կապը բանվորների հետ, բյուրոկրատներ, չոր չինովնիկներ դառնալ: Մի խոսքով, կուսակցության անկայուն շերտերը կարող են այնքան յենթարկվել նեպի ազդեցությանը, վոր մոռանան մեր պայքարի վերջնական նպատակը—կոմմունիստական հասարակության կառուցումը: Մյուս կողմից՝ նեպը ազդում է կուսակցության տատանվող շերտերի վրա այն ուղղությամբ, վոր նրանք սկսում են վստահությունը կորցնել, թե մենք մեր յերկրում սոցիալիզմ ենք կառուցում ու կը կառուցենք: Անկայուն ընկերները տեսնելով առևտուրը, մեր մասնակցությունը նրան, տեսնելով կապիտալիզմի մասնակի աճումը քաղաքում և գյուղում, լքվում են և չեն տեսնում այն, վոր մենք, չնայած այդ բոլորին, հաջողությամբ սոցիալիզմ ենք կառուցում:

Այդ լքումը, մեր ԽՍՀ Միության մեջ սոցիալիզմի շինարարության թերահավատությունը, վոմանց մեջ ել ավելի հեռուն է գնում: Կան—ճիշտ է, շատ քիչ—ընկերներ, վորոնք նեպի ազդեցության տակ սկսում են կասկածել համաշխարհային պրոլետարական հեղափոխության գալու հնարավորության վրա, հենվելով իրենց հայացքներում նրա ժամանակավոր հապաղմանը:

Ամբողջ կուսակցությունը և նրա հատուկ օրգանները—վերա-

հսկիչ հանձնաժողովները—պայքարում են կոմմունիստների նեպային պարուրման դեմ ինչպես նյութական, այնպես էլ իդեական տեսակետից: Վերահսկիչ հանձնաժողովները, վոր ստեղծված են X համագումարի վճռով, խնամքով պարզում են առանձին կուսակցականների հակակոմմունիստական վարմունքները և նայած վարմունքի բնույթին, պայմաններին, վորոնց մեջ կատարվել է այն, իրենց վճիռներն են հանում, վորոնք ուղղված են կուսակցության անդամների մեջ կոմմունիստական կարգի և կուսակցական դիսցիպլինի ամրացմանը:

Իսկ կուսակցությունն իր ամբողջությամբ նեպի ամբողջ շրջանի ընթացքում պայքարում է այն իդեական, քաղաքական թեքումների դեմ, վորոնք առաջանում են մանր բուրժուական ազդեցություններից կուսակցության անկայուն տարրերի վրա:

ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՀԱՐՑԸ

Այդ պայքարը կուսակցությանը մղում է ներկուսակցական դեմոկրատիայի ծավալման հողի վրա: Կուսակցության մեջ դեմոկրատիայի հարցի մասին հարկավոր է լավ պարզել հետևյալը.—դեմոկրատիայի սկզբունքները բոլշևիկների համար յերբեք նպատակ չեն յեղել (դիսկուսիա դիսկուսիայի համար, լիակատար ընտրականություն ամենուրեք և այլն), այլ հանդիսացել են միայն միջոց այս կամ այն խնդիրների կատարման համար: Այս նշանակում է, վոր յեթե պայմանները թույլատրում են և դրա պետքը կա, ապա դեմոկրատիան, նրա սկզբունքները ծավալվում են, իսկ յեթե վոչ,—ապա դեմոկրատիան կուչ է ածվում: Պարզենք օրինակով. —մինչև 1905 թ. հեղափոխությունը կուսակցության մեջ դեմոկրատիզմը շատ թույլ եր, վորովհետև աշխատանքի պայմանները (կոնսպիրացիայի անհրաժեշտությունը, պրովոկատորները *) և այլն) թույլ չեյին տալիս լայն ընտրականություն համագումարների համար, ապա հաշվետվություն և այլն: Համագումարներում մեծ մասամբ ներկա եյին լինում միայն «կոմիտեականները» և այլն: Բայց ահա 1905 թ. վորոշ քաղաքական ազատությունների շունչն զգացվեց, ժողովրդական լայն մասսաներն սկսեցին կենդանի մասնակցություն ունենալ քաղաքական կյանքում,—և Լենինն առաջինը խոսեց ներկուսակցական դեմոկրատիայի ծավալման մասին: Ռեակցիայի տարիները նորից դեմոկրատիզմը համարյա վոչնչացրին: Բավական է մատնանշել, վոր

*) Չնայած հեղափոխական կուսակցությունների զգուշությանը, նրանց մեջ թափանցում եյին պրովոկատորներ: Այսպես, եսէռների մեջ Ազեֆը, մեր կուսակցության մեջ պրովոկատոր Մալինովսկին, վոր նույն իսկ ԿԿ անդամ եր և մի ժամանակ խմբագրում եր «Правда»-ն: Վերջերս (1926 թ. գարնանը) գտնեցին պրովոկատոր Սերեբրյակովային, վորը թեև կուսակցության մեջ չեր յեղել, բայց շատ սերտ կապված եր նրա հետ ցարիզմի ժամանակ:

1907 թ. (V համագումար) մինչև 1917 թ. (VI համագումար) նույնիսկ կուսակցության լրիվ համագումարներ չեն յեղել, այլ տեղի եյին ունենում միայն խորհրդակցություններ և կոնֆերենցիաներ: 1917 թ. ինքնակալության տապալումից հետո, ներկուսակցական դեմոկրատիան նորից ծավալվեց, իսկ քաղաքացիական պատերազմի շրջանում, յերբ հարկավոր եր, վոր կուսակցությունը ռազմական յեղանակով աշխատեր, կրկին կուչ ածվեց այն:

Ինչպես մենք նշեցինք, X համագումարը վորոշեց ներկուսակցական բանվորական դեմոկրատիայի ընթացքը բռնել: Բայց հենց այն ժամանակ այդ լրիվ իրագործել չհաջողվեց: Դրա պատճառներն ինչպես կուսակցության ներսում, այնպես էլ շրջապատող պայմաններում եյին: Կուսակցության ներսում սովորել եյին հրամաններ, վճիռներ սպասել վերևից: Առանձին կուսակցականների անշարժության մեջ մեծ դեր եր խաղում քաղաքական թույլ պատրաստությունը (պատերազմի ժամանակ չկային քաղգրագիտության գրքեր, ինքնակրթության խմբեր և այլն), ընդհանրապես—յերիտասարդ անդամների թեորեական ցած մակարդակը: Խորհրդային ապարատի բյուրոկրատական խեղաթյուրումները նույնպես իրենց նշանակությունն ունեյին: Կուսակցության մեջ, հատկապես վոչ-արդյունաբերական շրջանների կազմակերպությունների մեջ, դեռ չափազանց մեծ եր մանր բուրժուազիայից դուրս յեկածների տոկոսը, վորոնց վրա նշանակալի չափով արտահայտվում եր շրջապատող մանր բուրժուական միջավայրի ազդեցությունը: Այդպիսի պայմաններում լայն ծավալել դեմոկրատիան կնշանակեր ուժեղացնել կուսակցության մեջ անկայուն տարրերի ազդեցությունը: Կուսակցության մեջ դեռ չեր գերակշռում բանվորական կազմը: Յեվ պետք է հիշել, վոր նեպը մտցնելու ժամանակները պրոլետարիատը նշանակալի չափով ապադասակարգայնացած եր, վորովհետև նրա մի մասը բանակում եր, շատը վոչնչացավ հակահեղափոխության դեմ մղած կռվում, մի մասը քաղաքի կիսաքաղց գոյությունը փոխում եր գյուղական կյանքի հետ: Հենց պետձեռնարկություններում մնացածն էլ մասնակի դեմորալիզացիայի չեր յենթարկվել (քայքայվել), այսինքն այնքան չեր աշխատում իր բանվորական պետության համար ամբողջությամբ տված, ինչքան անձամբ իրեն համար (կայծահաններ—зажигалки—եյին շինում, պրիմուսներ նորոգում և այլն, իհարկե, այս բանվորների մեղքը չեր, այլ դժբախտությունը.—հաց չկար): Բանվորների այս մասնակի քայքայումն արտահայտվում եր նաև կուսակցական-բանվորների մի մասի վրա: Պարզ է վոր այդ պայմաններում չեր կարելի միանգամից անցնել ներկուսակցական լայն դեմոկրատիայի: Այս բոլորին ավելանում եր և այն, վոր

խաղաղ դրությունը միանգամից չեկավ (Կրոնշտադի, Տամբովի և Սիբիրի ապստամբությունները, սպիտակ-լեհերի բանդաները (ավազակախմբերը) մեզ անհանգստացնում եյին ամբողջ 1921 թ., 1922 թ. սպիտակ-կարելների ապստամբությունն եր, իսկ Վլադիվոստոկը վերջնականապես խորհրդային դրոշակի տակ մտավ միայն 1922 թ. հոկտեմբերին)։

1923–24 Թ. ԴԻՍԿՈՒՍԻԱՆ ՅԵՎ ՊԱՅՔԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ինչքան վոր հանրապետությունը դուրս եր գալիս տնտեսական փլուզումից, ինչքան վոր պրոլետարիատը նորից հավաքվում եր ֆաբրիկաների շուրջը,—աճում եր բանվոր դասակարգի և առաջին հերթին նրա կուսակցության ակտիվությունը, և սկսեցին ավելի լրիվ իրականացվել դեմոկրատիայի սկզբունքները։ 1923 թ. աշնանը ԿԿ և ԿՎՀ պլենումը կուսակցության առաջ դրեցին ներկուսակցական դեմոկրատիայի լայն ծավալման հարցը։

Այս մոմենտը զուգադիպում եր այն ժամանակին, յերբ խորհրդային հանրապետությունների տնտեսությունը նշանակալի դժվարություններ եր ապրում։ Արդյունաբերությունը յերկու և կես տարվա ընթացքում խիստ աճեց, բայց յերկրի և մասնավորապես գյուղացիության արդյունաբերության իրերի անհապին կարիքի ժամանակ—այդ իրերը չեյին վաճառվում։ Դրա պատճառը գլխավորապես ֆաբրիկա-գործարանային ապրանքների բարձր գներն եյին, վոր առաջ եյին գալիս մասամբ աշխատանքի ցած արտադրողականությունից, մասամբ խոշոր վերադիր ծախքերից, մասամբ ել մեր տնտեսական որգանների չափից դուրս բարձր շահույթի յետև ընկնելուց։ Իսկ հացի գները չեյին համապատասխանում քաղաքային ապրանքների գներին՝ նրանք շատ ցած եյին։ Այս բոլորը հասցրին արդյունաբերական ապրանքների վաճառահանության լճացմանը, կրիզիսի, և սպառնում եյին խզել պրոլետարիատի և գյուղացիության կապը։

Մոմենտի դժվարություններն առաջ բերեցին ոպպոզիցիա։

Ոպպոզիցիայի իդեական ներշնչողն ընկ. Տրոցկին եր։ 1923 թ. դեկտեմբերի 5-ին Պոլիտբյուրոն և ԿՎՀ նախագահությունը բանաձև հրատարակեցին ներկուսակցական դեմոկրատիայի մասին։ Մատնանըշված բանաձևը մ ի ա ձ ա յ ն ընդունելուց յերկու որ հետո ընկ. Տրոցկին հանդես յեկավ «Պրավդայում» «Նոր կուրս» վերնագրով մի նամակով, վոր իրոք «ֆրակցիոն մանիֆեստ եր, ուղղված ԿԿ դեմ» (13-րդ կուսկոնֆերենցիայի բանաձևից)։ Դրանից հետո պայքարը չափազանց սըրվեց։

Ոպպոզիցիան մոբիլիզացիայի յենթարկեց իր բոլոր ուժերը և

Մոսկվայում վորոշ հաջողություն ունեցավ, գլխավորապես զինվորականների և բարձրագույն դպրոցների բջիջներում։ Ամբողջ կամպանիան տարվում եր ԿԿ հեղինակությունը խախտելու նպատակով, նա մեղադրվում եր այն բանում, վոր իբր սխալ տնտեսական քաղաքականություն ե վարում և խանգարում ե, վոր կուսակցությունն ուղղի այդ քաղաքականությունը, խոսքով բարբառելով ներկուսակցական դեմոկրատիայի մասին, իսկ գործով արգելք լինելով նրա ծավալմանը։ «Իմ կարծիքով,—գրում եր «Պրավդայում» ոպպոզիցիայի առաջնորդներից մեկը, ընկեր Պրեոբրաժենսկին,—ահա յերկու տարի յե, վոր կուսակցությունը հիմնականում սխալ գիծ ե վարում իր ներկուսակցական քաղաքականության մեջ»։

Այդ դիսկուսիան բառացի կերպով վերացնցեց ամբողջ կուսակցությունը։ Լենինյան սկզբունքների համար կռվելու դժվարությունը նրանում եր, վոր ինքն Իլյիչն արդեն հիվանդ եր, և Համ ԿԿ (բ) առաջին անգամ առանց առաջնորդի ստիպված եր դիմադրել մանր-բուրժուական ազդեցությանը կուսակցության վրա։ Այնուամենայնիվ կուսակցությունը կարողացավ պաշտպանել իր սկզբունքը, և 13-րդ կուսկոնֆերենցիան (1924 թ. հունվար), իսկ հետո 13-րդ համագումարը (1924 թ. մայիս) դատապարտեց ոպպոզիցիային։

Վոր ոպպոզիցիան արտացոլում եր մանր-բուրժուական հայացքները, յերևում ե հետևյալ որինակներից։ Ոպպոզիցիայի կողմնակիցներից մեկը ժողովում ասում եր. «Մեր գործն ե՝ վորոշել, իսկ ԿԿ գործն ե՝ գործադրել և ավելի քիչ դատել», իսկ մի կուսակցական ուսանող հարցնում եր. «Ի՞նչ ե մեզ մոտ. պրոլետարիատի՞ դիկտատուրա, թե՞ կուսակցության դիկտատուրա պրոլետարիատի վրա» և այլն։ Ոպպոզիցիան իր կողմնակիցներին հասցնում եր այնպիսի ճառերի, վորոնք ժխտում եյին կուսակցության ղեկավար դերի անհրաժեշտությունը պրոլետարիատի վերաբերմամբ, իսկ ԿԿ—կուսակցության վերաբերմամբ։ Հասկանալի յե, իրենք ոպպոզիցիայի առաջնորդներն ավելի փաղաքշաբար եյին խոսում, բայց ըստ եյության նույնը։ Իսկ մենշևիկներն իրենց թերթերում սարի պես կանգնած եյին ոպպոզիցիայի թիկունքին. «Շնորհակալ լինենք նրան (ոպպոզիցիային), վոր նա լուրջ բարոյական ու կազմակերպչական հարված հասցրեց ՌԿԿ։ Շնորհակալ լինենք նրան այն բանի համար, վոր նրա աշխատանքը հեշտացնում ե այն բոլորի գործը, ով խորհրդային իշխանության տապալման մեջ տեսնում ե սոցիալիստական կուսակցությունների անելիքը» (մենշևիկյան «Заря»-ի հոդվածից)։ Այս քաղվածները պարզ ասում են, թե ում հայացքներն եր արտացոլում ոպպոզիցիան, յերբեմն ել ակամա։

Ինչպես հաստատեց 13-րդ կոնֆերենցիան, կուսակցության մեծամասնության և ոպպոզիցիայի միջև յեղած տարաձայնությունները հանգում եյին հետևյալին.

1. Ոպպոզիցիան ընկ. Տրոցկու գլխավորությամբ անհրաժեշտ եր համարում ամբողջ կուսապպարատի բեկումը: «Կուսապպարատական» բառը հայհոյական բառ եր ոպպոզիցիայի բերանում: Կուսակցությունն իրենից չեր թաքցնում, վոր կուսապպարատում թերություններ կան, բյուրոկրատիզմ էլ կա, մասնակի կտրվածություն մասսայից և այլն, բայց կուսակցությունը թույլ չտվեց ջարդել իր վոսկրատիքը—կուսապպարատը:

2. Ոպպոզիցիան և գլխավորապես ընկ. Տրոցկին փորձում եյին կուսակցության վզին փաթաթել այն համոզմունքը, վոր կուսակցության հիմնական հենարանը յերիտասարդությունն է: Ոպպոզիցիան նրան հակադրում եր կուսակցության բանվորական հիմնական կորիզին և ԿԿ:

3. Ընկ. Տրոցկին «Նոր կուրսում» ակնարկում եր, վոր մեր կուսակցության առաջնորդները վերասերվելով համաձայնողականներ են դարձել և հենց դրանով խախտում եր ԿԿ բարձր հեղինակությունը վոչ միայն կուսակցության, այլև բոլոր բանվորների ու գյուղացիների առաջ:

4. Ոպպոզիցիան ցույց տվեց, վոր չի հասկանում բոլշևիկյան դիսցիպլինը և նրա նշանակությունը (ընկ. Տրոցկու յելույթը դեկտեմբերի 5-ին միաձայն ընդունած բանաձևից հետո և այլն):

5. Ոպպոզիցիան խախտեց 10-րդ համագումարի վորոշումը կուսակցության ներսում ֆրակցիաների արգելման մասին:

6. Տնտեսական հարցերի լուծման համար ոպպոզիցիան վոչ մի լուրջ առաջարկ չարեց: Նա դատում եր մեծ պլանավորման անհրաժեշտության մասին, նրա մի մասը խոսում եր այն մասին, վոր Կենտրոնական Կոմիտեն բավականաչափ զիջող չե ոտարերկրյա կապիտալի վերաբերմամբ, իսկ մյուս մասը, ընդհակառակը, հանդիմանում եր ավելորդ զիջողականության մեջ և այլն:

Վոչ վոք, իհարկե, չեր առարկում պլանավորման դեմ: Բայց ճիշտ հաշվառման, հաշվետվության համար, պլան կազմելու համար ամենից առաջ հարկավոր եր ամուր դրամական միավոր (չերվոնեց), իսկ ոպպոզիցիան դրամական ռեֆորմին դեմ եր: Տնտեսական կրիզիսի եությունը նրանում եր, վոր քաղաքի ապրանքների գները բարձր եյին, և չնայած 1923 թ. արդյունաբերությունը բարձրացավ միայն նախապատերազմյան մակարդակի մինչև 2/5, յերկիրն աղքատ եր, իսկ ապրանքները չեյին ծախվում: Կուսակցությունն ասում եր. «Շահույթ ըստացիր ֆաբրիկա-գործարանային իրերից, վերականգնիր արդյունաբերությունը, բայց հարմարվիր գյուղացու վճարունակությանը»: Իսկ ոպպոզիցիան պնդում եր բարձր գների ու բարձր շահույթների վրա արդյունաբերության մեջ ինչ էլ վոր լիներ, իսկ այդպիսի քաղաքականությունը միայն կնպաստեր հետագա կրիզիսին:

Կոնֆերենցիան համերաշխորեն վճռեց, «վոր հանձինս այժմյան ոպպոզիցիայի մենք մեր առաջ ունենք վոչ միայն բոլշևիզմի վերաքննության փորձ, վոչ միայն ուղղակի հեռացում լենինիզմից, այլև ակնհայտ արտահայտված մանր-բուրժուական թեքում»:

Ոպպոզիցիայի հայացքների վրա կանգնած ընկերները չեյին գիտակցում, վոր նրանց դատողությունները ջուր եյին ածում բուրժուական ջրաղացին: Պատահական չե, վոր կուսակցության ներսում յեղած պայքարով հետաքրքրվեցին նեպմանային բուրժուազիայի և բուրժուական ինտելլիգենցիայի շրջանները: Սկսեցին դատել քաղաքական իրավունքների լայնացման մասին բուրժուազիայի համար, ընդհանրապես պրոլետարական դիկտատուրայի թուլացման մասին և այլն: Պատահական չե, վոր մենշևիկներն ու եսերներն արտասահմանում համակրանքով վերաբերվեցին ոպպոզիցիային, համարելով նրա գործողությունների ծրագիրն ուղիղ և անհրաժեշտ:

Այդ դիսկուսիան, չնայած այն բանին, վոր կուսակցությունից շատ ուժեր խլեց նրա անմիջական աշխատանքից մեր տնտեսության շինարարության ասպարեզում, իր լավ կողմերն ունեցավ: Նա ցույց տվեց, վոր բանվորական բջիջները, ամուր կերպով լենինյան սկզբունքների կողմն են,—նրանք արագ ու վճռականապես մերժեցին ոպպոզիցիայի տատանումները: Այն փաստը, վոր դիսկուսիայում ամենաջերմ մասնակցություն եյին ունենում կուսակցության շարքային անդամները, բարձրացրեց կուսակցության ամբողջ մասսայի ակտիվությունը, բարձրացրեց կուսակցականների գիտակցականությունը:

XIII կուսկոնֆերենցիան, իսկ հետո XIII համագումարն ամենակատեգորիկ ձևով դատապարտեցին ոպպոզիցիային և մի շարք միջոցներ ձեռք առան վերացնելու լենինյան սկզբունքների խախտումը:

ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՉԸ ՅԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ XIII կոնֆերենցիան կուսակցության ամրապնդման գլխավոր միջոցներից մեկը տեսնում եր այն բանում, վոր մի տարվա ընթացքում (1924 թ.) կուսակցության կազմը մեծացվի 100,000 նոր անդամով—դազգյահի բանվորներով: Հոսանքը դեպի կուսակցություն տեղի յեր ունենում մեր արդյունաբերության աճման և բանվորների կենցաղի լավացման հետ միասին ամբողջ 1923 թ., բայց կոմկուսակցությունն անհրաժեշտ եր համարում իրեն ավելի ամուր ապահովագրել մանր բուրժուական ազդե-

դեցությունից, ու այդ նպատակով էլ նա առաջ քաշեց մասնանշված խնդիրը։

XIII կուսկոնֆերենցիայից մի քանի օր հետո կուսակցությունը կորցրեց իր առաջնորդին։ Մեռավ Վլադիմիր Իլյիչը։ Նրա մահը ցնցեց ամբողջ բանվորական մասսան։ Բանվորները հասկանում էին, թե ում կորցրեց կուսակցությունը, և վճռեցին մասսայորեն կուսակցության մեջ մտնելով օգնել նրան նրա ծանր մոմենտում։ Իլյիչի մահն ահագին դեր խաղաց կուսակցության մեջ 250,000 բանվորների կոչի գործում։ Այդ կոչն էլ լենինյան անվանվեց։ Նա հաստատեց օպպոզիցիայի ամբողջ սխալը, որը մեր ԿԿ մեղադրում էր «ներկուսակցական սխալ քաղաքականության մեջ»։ Դազգյահի բանվորների մասսայական մուտքը կուսակցության մեջ նախապատրաստված էր կուսակցության ու նրա ԿԿ նախկին ամբողջ աշխատանքով։ Մասսաները տեսնում էին, որ կոմկուսակցությունը նրանց հաղթանակի հասցրեց քաղաքացիական պատերազմում և փլուզումի դեմ մղած կռվում։ Արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը վերականգնվում էին, և բանվորները տեսնում էին, որ այդ իրենք ու գյուղացիներն են արել կոմկուսակցության ղեկավարությամբ։ Լենինյան կոչը պրոլետարիատի վստահության արտահայտությունն էր իր կուսակցությանը։

Լենինյան կոչը կուսակցությանն ավելի ևս ամուր կապեց մասսաների հետ և ամրացրեց նրա հիմնական բանվորական կորիզը (տես № 1 դիագրամմը)։ Նա խորտակեց պրոլետարիատի դիկտատուրայի բոլոր հակառակորդների այն հույսերը, որ կապված էին մեր կուսակցության վերասերման, նրա ջախջախման հետ։ Նա կուսակցության բանվոր դասակարգի համար մղվող բազմամյա կռվի ամփոփումն արեց։ Նա ցույց տվեց, որ բանվոր դասակարգի իսկական ավանգարդը, նրա իսկական առաջնորդը միայն Լենինի կուսակցությունն է։

Հարց. Ինչո՞ւ չէր կարելի իրականացնել ներկուսակցական դեմոկրատիան կուսակցության X համագումարից հենց իսկույն հետո։

3. Համ. ԿԿ (բ) XIV համագումարը յեվ նրա նշանակությունը

ՀԱՄ. ԿԿ (բ) XIV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ, ՆՐԱ ՏԵՂՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արդյունաբերության վերելքը, պրոլետարիատի աճումը և գյուղատնտեսության զարգացումը հետագա տարիներում (1924 և 1925) տեղի ունեցան շատ արագ կերպով(տես № 13 դիագրամմը)։ Այդ վերելքի հիմքի վրա կուսակցությունը որակապես ու քանակապես աճեց։ Լենինյան կոչը միանգամից փոխեց կուսակցության կազմը դեպի լավացումը, դեպի նրա բանվորականացումը։

Կուսակցության XIV համագումարը (1925 թ. դեկ. 13—31), որ

գումարվեց նեպի հնգամյակի նախօրյակին, ամփոփեց նրա գրավումները և նշեց դեպի սոցիալիզմ տանող հետագա ուղին։

XIV համագումարի առանձին վճիռները մենք մանրամասն քննության առանք կուսակցության տնտեսական քաղաքականությանը վերաբերող գլուխներում։ Այժմ հարկավոր է, որ մենք ընդհանուր ամփոփում անենք և բացատրենք այն ահագին նշանակությունը, որ XIV համագումարն ունեցավ կուսակցության համար։

Ի՞նչպիսի միջազգային ու ներքին պայմաններում էր աշխատում XIV համագումարը։ «Դադարը», որի համար բանվորներն ու գյուղացիները կռվում էին Բրեստի բանակցությունների ժամանակ, փոխվեց հանրապետությունների Միության խաղաղ կենակցության մի յերկարատև շրջանի բուրժուական պետությունների հետ։ XIV համագումարի ժամանակ մեզ արդեն ճանաչել էին աշխարհի խոշորագույն պետությունները, բացառությամբ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների։ Այս ապացուցում է, որ մեր թշնամիները, բոլոր բուրժուական կառավարություններն իրենց բանակներով ու ֆաշիստական կազմակերպություններով չեն կարողանում վոչնչացնել մեզ։

Յերկրորդը, որով որոշվում էր դրությունը XIV համագումարի պահուն, այդ ԽՍՀՄ տնտեսության արագ և անշեղ վերելքն էր։ Համագումարն այսպես բնութագրեց այն իր բանաձևում.

«Անցած տարին բնորոշվեց վողջ ժողովրդական տնտեսության բուռն աճմամբ, նա մոտեցավ նախապատերազմյան մակարդակին և աճեցին նրա առանձին ճյուղերը—արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, տրանսպորտը, արտաքին առևտուրը, ներքին առևտուրը, բանկերը և վարկային սիստեմը, պետական ֆինանսները և այլն։ Ժողովրդական տնտեսության ներսում նրա բաղկացուցիչ մասերի բազմազանությամբ հանդերձ (բնական—գյուղացիական տնտեսություն, մանր-ապրանքային արտադրություն, մասնավոր-սեփականատիրական կապիտալիզմ, պետական կապիտալիզմ և սոցիալիզմ) խիստ կերպով բարձրանում է սոցիալիստական արդյունաբերության, պետական և կոոպերատիվ առևտրի, ազգայնացրած վարկի և պրոլետարական պետության մյուս գերիշխող բարձունքների տեսակարար կշիռը։

Այսպիսով ակներև է պրոլետարիատի տնտեսական հարձակումը տնտեսական նոր քաղաքականության հիմունքներով և ԽՍՀՄ եկոնոմիկայի առաջխաղացումը դեպի սոցիալիզմ։ Պետական սոցիալիստական արդյունաբերությունը քանի գնում, ավելի յե դառնում

ժողովրդական տնտեսության այն առաջապահը, վորն իր յետևից է տանում ամբողջ ժողովրդական տնտեսությունը։

Համագումարն արձանագրում է, վոր այդ հաջողություններին հասնել անկարելի յեր, յեթե բանվորական լայն մասսաներն ակտիվորեն չմասնակցեյին սոցիալիստական արդյունաբերական ընդհանուր շինարարության գործին (աշխատանքի արտադրողականության բարձրացման պայքար, արտադրական խորհրդակցություններ և այլն)։

(Համ. ԿԿ (բ) XIV համագումարի բանաձևերը և վորոշումները, հայերեն հրատ. Պետհրատ, 1926 թ. եջ 9-10)։

Սակայն Լենինի կուսակցությունը չեր կարող այդ աճման ժամանակ ուշադրություն չդարձնել մի շարք բացասական կողմերի վրա, այդ աճման հակասությունների վրա, այդ աճմամբ առաջացրած վըտանգների ու դժվարությունների վրա։ XIV համագումարն այդ վտանգներն ու դժվարություններն այն բանում եր տեսնում, վոր սոցիալիզմի հրամայող բարձունքների տեսակարար կշռի բարձրացման կողքին աճում է (չնայած և ավելի դանդաղ, քան տնտեսության սոցիալիստական տարրերը) մասնավոր կապիտալը, հատկապես առևտրում (տես №№ 9 և 13 դիագրամները)։

Գյուղում ուժեղանում է շերտավորումը։ Աճում է կուլակը և նրա ազդեցությունը գյուղի միջակային շերտերի վրա։ Քաղաքային բուրժուազիան փորձում է յուրատեսակ «կապ» հաստատել իր և կուլակության միջև, վորպեսզի միջակին իրեն յենթարկի, նրան իր կողմը գրավի։ ԽՍՀՄ մեջ աճում է սոցիալիզմը, բայց աճում է մասնավոր-կապիտալիստական տարրերի հակազդեցության պայմաններում։

Հանրապետությունների Միության ներքին դրության մեջ նորն ապա այն է, վոր նոր տնտեսական քաղաքականության հիմքի վրա մեր տնտեսությունը համարյա հասել է իր մինչպատերազմյան մակարդակին և առաջին լուրջ քայլերն է արել դեպի սոցիալիզմ։

Այս միջազգային ու ներքին պայմաններում կուսակցությունը XIV համագումարում կարծես թե հարցնում եր ինքն իրեն, կարծես թե ստուգում եր ինքն իրեն «դեպի ուր ենք աճում մենք՝ դեպի կապիտալիզմ, թե՞ սոցիալիզմ։ Արդյոք ուղի՞ղ է մեր ուղին։ Արդյոք ճի՞շտ են պրոլետարիատի հարաբերությունները գյուղացության հետ։ Արդյոք կարո՞ղ ենք մենք սոցիալիզմ կառուցել մեր հետամնաց յերկրում համաշխարհային հեղափոխության հապաղման պայմաններում»։

XIV համագումարում կուսակցությունն ստուգեց դեպի սոցիալիզմ տանող մեր ճանապարհի ճշտությունը, նրա իրականացման յեղանակների ճշտությունը և վո-

րոշեց մեր աշխատանքի հիմնական գծերը մոտակա պատմական շրջանի համար։ XIV համագումարի բացառիկ նշանակությունը նրանում է, վոր նա, Լենինի ուսմունքին խիստ համապատասխան, լուծեց այն բոլոր խնդիրները, վորոնք կանգնած են մեր հեղափոխության առաջ նըրա զարգացման ներկա շրջանի պայմաններում և դիմադրեց նոր ոպպոզիցիային, վոր կասկածի յեր յենթարկել կուսակցության լենինյան քաղաքականության հիմնական ձեռքբերումները և հիմնական գիծը։

XIV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՅԵՎ ՈՊՊՈԶԻՑԻԱՆ

Այս նոր ոպպոզիցիան ընկերներ Զինովևի, Կամենևի և Կրուպսկայայի գլխավորությամբ յերևան յեկավ դեռ մինչև համագումարը։ Իսկ համագումարում նրա յետևից ամբողջովին գնում եր Լենինգրադի կազմակերպության պատգամավորությունը։ Հարց է ծագում, իսկ ինչպես կարող եր մեր լավագույն կազմակերպություններից մեկը տարակարծել ամբողջ կուսակցության հետ։ Բանը նրանում է, վոր ոպպոզիցիոներները Լենինգրադում ռայոնական և նահանգական կոնֆերենցիաներում հանդես եյին գալիս «Մենք ԿԿ կողմն ենք» դրոշակի տակ։ Յեթե նրանք Լենինգրադի կազմակերպության առաջ ուղղակի ասեյին՝ «Մենք չենք վստահում ԿԿ, նրա քաղաքականությունը սխալ եր» և այլն, ապա լենինգրադցիները նրանց իբրև իրենց ներկայացուցիչներ համագումար չեյին ուղարկի։ Այդ իրոք այդպես էլ եր, վորովհետև Լենինգրադի բոլոր կոլլեկտիվների, ռայկոմների և նահանգկոմների վերընտրությունները, վոր կատարվեցին համագումարից հետո հենց կուսակցության անդամների պահանջով, ցույց տվեցին, վոր լենինգրադցի կուսակցականները գնում են ամբողջ կուսակցության հետ միասին և ամբողջովին համաձայն են համագումարի վճիռներին։

Համագումարից առաջ «Լենինգրադսկայա Պրավդա»-ում և ապա համագումարում նոր ոպպոզիցիան արդեն բոլորովին աշկարա հանդես յեկավ կուսակցության, և նրա ԿԿ քաղաքականության քննադատությամբ։ Նա զարգացրեց իր հայացքները թե այն դրության մասին, վորի մեջ գտնվում է մեր յերկիրը, և թե այն խնդիրների մասին, վորոնք կանգնած են մեր առաջ։ Այս գրքի յերրորդ հատվածում, «ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության ուղիներին» վերաբերող գլուխներում, մենք արդեն կանգ ենք առնել ոպպոզիցիայի տնտեսական քաղաքականության հիմնական հարցերին վերաբերող ինչպես այս հայացքների վրա, այնպես էլ նրա վրա, թե ինչ ասաց համագումարը նրանց առթիվ։ Այստեղ չենք կրկնի բոլորը, վոր ասված է այնտեղ։ Միայն համառոտ նշենք, թե ինչի յեր հանգում այն, վոր ոպպոզիցիան

առաջ եր քաշում իբրև հակակշիռ մեր տնտեսական կարգի, նրա զարգացման ուղիների ու մեր անելիքների ըմբռնման ընդհանուր կուսակցական գծին։

Կուսակցությունը, ինչպես և նրա առաջնորդը, Վ. Ի. Լենինը, ընդունում է, թե նեպը, որ իր առաջին աստիճանում նահանջ եր և ուժերի վերախմբավորում սոցիալիզմի շինարարության համար գյուղական չքավորության և միջին գյուղացության հետ միասին, հետո դարձավ հարձակում, մեր ամբողջ տնտեսության շարժում դեպի սոցիալիզմ։ Օպպոզիցիան դեռ մինչև համագումարը հանձինս ընկ. Զինովևի, նրա «Լենինիզմ» գրքում, պնդում եր, որ նեպը—նահանջ է, և համագումարում նեպի հարձակողական բնույթը մթագնում եր։

Կուսակցությունը, դարձյալ Լենինի հետ միասին, պնդում է, որ մեր տնտեսական կարգն անցողական է կապիտալիզմից դեպի սոցիալիզմ, որ նրա մեջ տեղի յե ունենում սոցիալիստական տարրերի կռիվը կապիտալիստականների դեմ և թե նեպը մի քաղաքականություն է, որ հաշվի առած ունի այդ կռիվը և սոցիալիստական տարրերի հաղթանակը կապիտալիստականների վրա։ Օպպոզիցիան պետական-կապիտալիստական, այսինքն կապիտալիզմ է համարում այն կարգը, որ կարգավորվում և վերահսկվում է պրոլետարական պետության կողմից։ Նրա համար նեպը—պետական կապիտալիզմի քաղաքականություն է։

Կուսակցությունը պնդում է, որ նեպի հինգ տարվա հետևանքով մենք արդեն հասել ենք սոցիալիստական տարրերի գերակշռությանը կապիտալիստականների հանդեպ, արդեն արված են առաջին լուրջ քայլերը դեպի սոցիալիզմ։ Օպպոզիցիան համարում է, որ այս—արտահայտվելով ընկ. Կամենևի բառերով—նեպի գունագարդումն է։

Կուսակցությունը, մատնանշելով մեր տնտեսության աճման հետ կապված վտանգների գոյությունը, մասնավորապես կուլակի աճումը գյուղում, նրա կապը մասնավոր կապիտալի հետ քաղաքում, նրանց միատեղ ձգտումն իրենց ազդեցությանը յենթարկելու միջակին,—Վ. Ի. Լենինին հետևելով ասում է, որ այդ վտանգն այնուամենայնիվ «սարսափելի չէ» մեզ համար։ Մենք նրանից գլուխ կը հանենք, յեթե շարունակենք բանվոր դասակարգի և գյուղական չքավորության, միջին գյուղացության հետ միություն պահելու մեր քաղաքականությունը, աղքատներին կազմակերպենք այդ միությունն ամրապնդման համար, իրագործենք այն, որ պրոլետարիատը ղեկավարե

այդ միությունը և ոգնենք կոոպերացիայի զարգացմանը պետական սոցիալիստական արդյունաբերության և մեր տնտեսության մյուս հրամայող բարձունքների տնտեսական ղեկավարությամբ։

Օպպոզիցիան, ընդհակառակը, մեծացնում եր կուլակային վտանգը, պանիկայի յենթարկվում նրա առաջ, իսկ այդ վտանգի դեմ կռվելու հիմնական զենքը—բանվոր դասակարգի և գյուղական չքավորության միությունը միջին գյուղացության հետ—հակառակ Լենինի ավանդներին, այս կետում տրոցկիզմին մոտենալով, մեկ բոլորովին մոռանում եր (ինչպես ընկ. Զինովևն իր դեռ մինչև համագումարը գրած հոդվածներում), մեկ՝ յերրորդական տեղ տալիս։ Նա լռության եր տալիս և կոոպերացիայի նշանակությունը, որ գյուղի գլխավոր ճանապարհն է դեպի սոցիալիզմ։

Կուսակցությունն ասում է, որ կուսակցականների մեջ յերկու թեքումն ել վտանգավոր են—թե կուլակային վտանգի նվազեցումը և թե միջակի հետ միություն ունենալու և գյուղի կոոպերացման դերի ու նշանակության լռության մատնելը, մթագնելը,—բայց ամենից առաջ հարկավոր է հարվածել յերկրորդ թեքումը, որովհետև առանց միջակի հետ միություն ունենալու և առանց կոոպերացիայի չի կարելի հաղթել և կուլակին։ Օպպոզիցիան, ինքը տառապելով յերկրորդ թեքումով, ժխտում է նրա դեմ կռվելու առաջնակարգ կարևորությունը։

Կուսակցությունը, Վ. Ի. Լենինի հետ միասին, պնդում է, որ մենք ոչ միայն կառուցում ենք սոցիալիզմ, այլև կարող ենք մինչև վերջ կառուցել այն մենակ մեր յերկրում, որ դրա համար մենք բոլոր պայմաններն ունենք—հրամայող տնտեսական բարձունքների իշխանությունը պրոլետարիատի ձեռքում լինելուց մինչև միջին գյուղացության հետ միություն ունենալու ճիշտ քաղաքականությունը և գյուղի կոոպերացումը։ Օպպոզիցիան, լիովին հակասելով Վ. Ի. Լենինին և դարձյալ մոտենալով տրոցկիզմին, ժխտում է սոցիալիզմ կառուցելու հնարավորությունն իսկ, մինչև որ չհաղթանակի պրոլետարական հեղափոխությունը, մինչև որ պրոլետարիատն իշխանության չհասնի ուրիշ յերկրներում։ Հենց այս թերահավատությամբ դեպի սոցիալիզմի շինարարությունը մեր յերկրում, ամբողջովին տոգորված են նոր օպպոզիցիայի բոլոր հայացքները, բոլոր սկզբունքները։ Այս թերահավատությունը միացած միջակ գյուղացության հետ միություն ունենալու նշանակության թերագնահատությանը, նոր օպպոզիցիային հասցնում է այն հայացքներին, այն քաղաքականությանը, որ առաջ եր քաշում 1923/24 թ. օպպոզիցիան ընկ. Տրոցկու գլխավորությամբ։ XIV համագումարն

նույնպես վճռականորեն մերժեց ու դատապարտեց նոր օպոզիցիայի գիծը, ինչպես XIV կուսկոնֆերենցիան և XIV համագումարը մերժեցին ու դատապարտեցին 1923/24 թ. օպոզիցիայի գիծը։

Ո՞ւմ տրամադրություններն ու մտքերն է արտահայտում նոր օպոզիցիան։ Այդ մանր-բուրժուական տրամադրություններն են։ Այդ այն կես-բանվորների կես-գյուղացիների տրամադրություններն են, որոնք ատում են կապիտալիզմը, բայց դեռ չեն հավատում սոցիալիզմ կառուցող պրոլետարիատի ուժին, դեռ չեն հասկանում այդ շինարարության ուղիները. դեռ չեն հասկացել այն նշանակությունը, որ նրա համար ունեն թե պետական սոցիալիստական արդյունաբերությունը և թե կոոպերացիան, և այս պատճառով դեռ վախով են նայում մեր երկրի կուլակին, մասնավոր առևտրականին, կապիտալիստական տարրերին։ Այսպիսի կես-բանվորները, կես-գյուղացիներն այժմ նեպի ժամանակ լցվում են բանվոր դասակարգի շարքերը և իրենց տրամադրություններով վարակում են նրա հետամնաց մասը։ Այդ տրամադրությունները հաղորդվում են և կուսակցականների անկայուն տարրերին։ Դեպի այս տրամադրությունները, տատանումները և կասկածները և ոչ թե դեպի պրոլետարիատի հիմնական մասսայի ձայնը, ոչ էլ դեպի նրա հաստատուն, առաջավոր մասի ձայնն է, որ թեքել է իր ականջը նոր օպոզիցիան, որորվելով մեր քաղաքականության կարևորագույն հարցերում լենինիզմի և տրոցկիզմի միջև։

ԿՈՒՍԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ XIV ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

Նոր օպոզիցիան, ինչպես և առաջվա բոլոր օպոզիցիոն խմբավորումները, տարակարծիք էր կուսակցության հետ կուսակցական շինարարության հարցերի վերաբերմամբ նույնպես։

Նա առաջ քաշեց կուսակցության շարքերի հսկայական մեծացման անհրաժեշտության իդեան (տես առաջին գլուխը)։ Համագումարը հաստատապես վճռեց, որ հարկավոր է իրագործել կուսակցության հետագա մեծացումը դազգյահի բանվորների հաշվին, բայց չի կարելի թույլ տալ կուսակցության նոսրացումը, չի կարելի նպատակ դնել նրա մեջ քաշելու այն բոլոր բանվորներին, որոնք զբաղված են պետարդյունաբերության մեջ։ Համագումարը հիշեցրեց կուսակցությանը, որ մեզ մոտ պրոլետարիատի մեջ հենց նոր գյուղից-եկած շատ նոր բանվորներ կան։ Նրանք դեռ չեն անցել ոչ մի պրոլետարական դպրոց, չեն քաշված արհմիութենական աշխատանքի մեջ։ Համագումարը լենինորեն վարվեց՝ թվի ետևից մի ընկնի, այլ որակը լավացրու։ Օպոզիցիայի առաջարկն ընդունելն այն հետևանքը կունենար, որ կուսակցությունը կը հեղեղվեր բանվորների ամենահե-

տամնաց շերտերով, կիսապրոլետարներով։ Բանվոր դասակարգի ավանգարդից նա կը վերածվեր այն «լայն բանվորական կուսակցության», որ մի ժամանակ մենշևիկներն առաջարկում էին ստեղծել։ Նա անկայուն կը դառնար, անընդունակ դիմադրելու մանր բուրժուական տարերքի ազդեցությանը, իր միջավայրի տատանումներին և թեքումներին, անընդունակ ամուր կերպով ղեկավարելու սոցիալիստական շինարարությունը։

Դեպի այս ղեկավարության թուլացումն էին տանում նոր օպոզիցիայի բոլոր ելույթները, որ կապված էին ներկուսակցական հարցերի հետ։ ԿԿ ամուր ներկուսակցական գիծը նոր օպոզիցիան (ինչպես և 1923/24 թ. օպոզիցիան) Լաշևիչի բերանով կնքեց իբրև ճնշման, տեղերում ղեկավար աշխատողների արհեստական ընտրանքի, նրանց տեղափոխության, ներկուսակցական դեմոկրատիայի մշտական խախտման քաղաքականություն։ Նա պահանջում էր ղեկավարությունը փոխել և ԿԿ քարտուղարների դերը տեխնիկական կատարածուների դերի իջեցնել։

Նոր օպոզիցիան, ինչպես և 1923/24 թ. օպոզիցիան, փաստապես պահանջում էր ֆրակցիաների թույլատրում։ Հենց Լենինգրադի պատգամավորությունը հանդես եկավ իբրև համախմբված ամբողջություն, իբրև ֆրակցիա, որ իրեն հակադրում էր ամբողջ կուսակցությանը։ Նրանից հետո էլ, երբ համագումարի ահագին մեծամասնությունն օպոզիցիայի գիծը մերժող բանաձև ընդունեց, «Լենինգրադսկայա Պրավդան», օպոզիցիայի թերթը շարունակում էր ֆրակցիոն պայքար վարել ամբողջ կուսակցության դեմ։ Նա փորձում էր վիճելի համարել բարձրագույն կուսակցական օրգանի վճիռները։

Ընկեր Զինովյևը պնդում էր, որ կուսակցությունը նախկին բոլոր ֆրակցիոն խմբավորումներին էլ թույլատրի աշխատել։ Օպոզիցիան պահանջում էր, որպեսզի օպոզիցիայի մեջ եղած Լենինգրադի պատասխանատու աշխատողներն իրենց տեղերում մնան, և հենց դրանով ուզում էր Լենինգրադն իր ֆրակցիոն կենտրոնը դարձնել կուսակցության դեմ մղվելիք հետագա կռվի համար։ Ու նույնիսկ այն ժամանակ, երբ նրան չհաջողվեց Լենինգրադում այդպիսի կենտրոն ստեղծել, երբ Լենինգրադի կազմակերպությունը փոխեց օպոզիցիային պատկանող իր ղեկավար աշխատողներին և գնաց ամբողջ կուսակցության ընդհանուր ճանապարհով, օպոզիցիան շարունակեց իր աշխատանքը՝ ուղղված կուսակցական ընդհանուր գծի և կուսակցու-

թյան այն ղեկավարման դեմ, վոր իրագործում է ԿԿ XIV համագումարի վճիռների հիման վրա։

Նոր ոպպոզիցիայի այս ֆրակցիոնական աշխատանքն արտահայտվեց այն բանում, վոր նա փորձեց կուսկազմակերպությունների մեջ անլեգալ ոպպոզիցիոն խմբակներ ստեղծել և ծածուկ պայքարել ԿԿ և XIV համագումարի վճիռների դեմ։ Ոպպոզիցիայի չտեսնված վարմունքը, վոր սպառնում եր կուսակցության միությանը, խիստ գժգոհություն առաջ բերեց կուսակցության կողմից։ Պայքարը լենինիզմից հեռացող մանր բուրժուական տատանումների և թեքումների դեմ, վորոնք յերևան են յեկել ինչպես նոր ոպպոզիցիայի, այնպես էլ բոլոր նախկին ոպպոզիցիոն խմբավորումների մեջ, պայքարը հանուն կուսակցության, նրա միության, իդեական տոկունության,—ամեն մի կուսակցական կազմակերպության, ամեն մի կուսակցականի անելիքն է։

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿԻՑ

Մեր կուսակցության պատմության այս համառոտ ակնարկից մենք կարող ենք յերեք գլխավոր յեզրակացություն անել.

1. Համ. ԿԿ (բ.) շարունակ պայքարել է և պայքարում է միասնական, դիսցիպլինով համախմբված կուսակցության համար, իբրև պրոլետարիատի ավանգարդի։ Այս պայքարում կուսակցությունը շարունակ հաստատ լենինյան գիծ է անցկացրել մանր բուրժուական քայքայման հեղհեղուկ ոպպորտյունիզմի դեմ։ Պայքարում էլ նա կոփել է այդ գիծը։

Ոպպորտյունիզմը մեր յերկրի հեղափոխական շարժման մեջ և կուսակցության ներսում յերևան եր գալիս զանազան պայմաններում և զանազան ձևով (մենշևիզմ, լիկվիդատորություն, սոցիալ-պաշտպանողականություն, սոցիալ-համաձայնողականություն, իսկ կուսակցության ներսում—ոտզովիզմ՝ ռեակցիայի շրջանում, «ձախ կոմմունիզմ»՝ Բրեստի ժամանակ, բանվորական ոպպոզիցիա, տրոցկիզմ՝ 1923/24 թ. ոպպոզիցիայի հետ և, վերջապես, նոր ոպպոզիցիա)։

Ոպպորտյունիզմի արմատները մեր յերկրի տնտեսական հետամնացության մեջ են, պրոլետարիատին շրջապատող մանր բուրժուական տարերքի մեջ։

Լենինի մեծագույն ծառայությունն այն է, վոր նա կուսակցությանը սովորեցրեց ոպպորտյունիզմը տեսնել դեռ սաղմի մեջ և սովորեցրեց վճռականորեն կռվել նրա դեմ։

Կուսակցության յերիտասարդ անդամները պետք է սովորեն այդ արվեստը, լենինյան հմտությունը՝ բացել ու հարվածել ոպպորտյունիզմը։

2. Մեր կուսակցությունը Լենինի ղեկավարությամբ դեռ մինչև իր ծագումը, իբրև ամբողջական կուսակցություն, հասարակական ուժերի ուսումնասիրության հիման վրա տեսավ, վոր պրոլետարիատը հեղափոխության հեգեմոնն է լինելու։ Այս մեծ իդեան—պրոլետարիատը հեղափոխության գլխավոր ուժն է, առաջնորդը, նրա ղեկավարը—մեր կուսակցությունը պաշտպանում եր լիբերալ բուրժուազիայի, մենշևիկների և բոլոր տեսակի ու յերանգի ոպպորտյունիստների դեմ մղած կռվում։ Կռիվը հանուն այդ իդեայի հաջողությամբ պսակվեց և փաստերով արդարացրեց իրեն.—առաջին հեղափոխության նախորյակին պրոլետարիատը գնում եր մյուս բոլոր հեղափոխական ջոկատների առջևից, իբրև նրա հիմնական ուժը, 1905 թ. նա ինքնակալության և ցարիզմի դեմ մղվող պատերազմի սկսողն եր ու ղեկավարը, վերելքի տարիներում նա ընդառաջ եր գնում հեղափոխությանը բոլոր դասակարգերի գլուխ անցած։ Իմպերիալիստական պատերազմի տարիներին պրոլետարիատը մեր կուսակցության ղեկավարությամբ կռիվ սկսեց պրոլետարական հեղափոխության համար։ 1917 թ. փետրվարին, Հոկտեմբերյան մեծագույն հաղթական հեղափոխության ժամանակ նա աշխատավորների առաջնորդն եր բուրժուազիայի դեմ մղվող կռվում։ Պրոլետարիատն այժմ էլ բոլոր աշխատավորների առաջնորդն է, սոցիալիզմի կառուցողը ԽՍՀՄ։

3. Կուսակցության հենց ծագման որից լենինիստները տեսնում եյին, վոր պրոլետարիատի դաշնակիցը նրա մղած կռվում ցարիզմի, կալվածատերերի և բուրժուազիայի դեմ գյուղացիությունն է լինելու։ Պրոլետարիատի գյուղացիության հետ միության այս իդեայի համար լենինյան կուսակցությունը նույնպես պայքարել է բոլոր յերանգի ոպպորտյունիզմի դեմ (դրանց թվում և տրոցկիզմի դեմ), վորոնք գյուղացիությանը հեղափոխության ընդունակ չեյին համարում։ Այդ միությունը գյուղացիության հետ կերպարանափոխվում եր ըստ այն խնդիրների, վորոնք կանգնում եյին հեղափոխության առաջ։ Բոլոր գյուղացիության հետ միասին կամ համարյա միասին բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ (1905 թ., 1917 թ. փետրվարին), չքավորության հետ դեպի իշխանության նվաճում (պրոլետարիատի դիկտատուրա—խորհրդային իշխանություն) և նրա ամրապնդում, չքավորության և միջին գյուղացիության հետ դեպի յերկրի լիակատար վերակազմություն սոցիալիստական սկզբունքներով։

Սրանք են Համ. ԿԿ (բ.) պատմության մեր համառոտ ակնարկի յերեք հիմնական դասը։

ՀԱՏՎԱԾՆԵՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Լենինը «ռազմական կոմունիզմի» յեվ Նեպին անցնելու մասին

Յուրատեսակ «ռազմական կոմունիզմը» նրանում եր, վոր մենք փաստապես գյուղացիներից վերցնում եյինք բոլոր ավելցուկները և նույնիսկ յերբեմն վոչ միայն ավելցուկները, այլ գյուղացուն անհրաժեշտ պարենի մի մասը,—վերցնում եյինք բանակի ծախքերը ծածկելու և բանվորներին պահելու համար։ Վերցնում եյինք մեծ մասամբ պարտքով, թղթադրամով։ Այլ կերպ մենք չեյինք կարող հաղթել կալվածատերերին և կապիտալիստներին քայքայված մանր բուրժուական յերկրում։ Յեվ այն փաստը, վոր մենք հաղթեցինք (հակառակ այն պաշտպանության, վոր մեր շահագործողներին ցույց եյին տալիս աշխարհի ամենահզոր պետությունները), ցույց է տալիս վոչ միայն այն, թե հերոսության ինչպիսի հրաշքների յեն ընդունակ բանվորները և գյուղացիներն իրենց ազատության համար մղված կռվում...։ Այդ պետք է մեր ծառայությունը համարել։ Բայց պակաս անհրաժեշտ չէ իմանալ այդ իսկական ծառայության չափը։

Մեզ դեպի «ռազմական կոմունիզմ» մղեց պատերազմը և քայքայումը։ Նա պրոլետարիատի տնտեսական խնդիրներին համապատասխանող մի քաղաքականություն չեր և չեր կարող լինել։ Նա ժամանակավոր միջոց եր։ Մանր-գյուղացիական յերկրում իր դիկտատուրան իրականացնող պրոլետարիատի ճիշտ քաղաքականությունը հանդիսանում է հացի փոխանակությունը գյուղացուն անհրաժեշտ արդյունաբերական արդյունքների հետ։ Միայն այդպիսի պարենավորման քաղաքականությունն է համապատասխանում պրոլետարիատի խնդիրներին, միայն նա յե ընդունակ ամրացնելու սոցիալիզմի հիմքերը և նրան լիակատար հաղթանակի հասցնելու։

(Վ. Ի. Լենին, Աշխ. ժող. I հրատ. հ. XVIII, մասն I, եջ 214, ռուս. հրատ.)։

1921 թ. գարնան դեմ պարզվեց, վոր մենք պարտություն կրեցինք «գրոհի», այսինքն ամենակրճատ, արագ, անմիջական յեղանակով արտադրության և բաշխման սոցիալիստական հիմունքներին անցնելու փորձում։ 1921 թ. գարնան քաղաքական դրությունը մեզ ցույց տվեց, վոր անխուսափելի յե մի շարք տնտեսական հարցերում դեպի պետական կապիտալիզմի դիրքերը յետ քաշվել, «գրոհից» անցնել «պաշարման»։

Յեթե այսպիսի անցումը վոմանց կողմից գանգատներ, լացեր, վհատություն և վրդովմունք է առաջացնում, ապա հարկավոր է ասել, վոր այն-

քան վտանգավոր չէ պարտությունը, ինչքան վտանգավոր է իր պարտությունն ընդունելու վախը, այստեղից բոլոր յեզրակացությունները հանելու վախը։ Ռազմական պայքարը շատ ավելի հեշտ է, քան սոցիալիզմի պայքարը կապիտալիզմի դեմ, և մենք հաղթում եյինք Կոլչակներին և ընկ. այն պատճառով, վոր չեյինք վախենում ընդունել մեր պարտությունները, չեյինք վախենում սովորել նրանց դասերից, շատ անգամ նորից սկսել կիսատ կամ վատ արածը։

Այդպես պետք է վարվել նաև սոցիալիստական եկոնոմիկայի կապիտալիստականի դեմ մղած շատ ավելի բարդ և դժվար կռվի ասպարեզում։ Չպետք է վախենալ իր պարտությունն ընդունելուց։ Պետք է սովորել պարտության փորձից։ Ավելի խնամքով, ավելի զգույշ, ավելի սիստեմատիկ կերպով նորից անել այն, ինչ վատ է արված։ Յեթե մենք համաձայնեյինք այն հայացքին, վոր պարտության ընդունումն առաջացնում է լքում և յեռանդի թուլացում կռվի մեջ, ինչպես դիրքերի հանձնումը, ապա հարկավոր կը լիներ ասել, վոր այդպիսի հեղափոխականները վոչ մի բանի պետք չեն։

Իսկ յես հույս ունիմ, վոր վոչ վոքի չի հաջողվի այդ ասել քաղաքացիական պատերազմի յեռամյա փորձում կոփված բոլշևիկների մասին, բացառությամբ յեզակի դեպքերի։ Մեր ուժն եր և կը լինի այն, վոր բոլորովին զգաստ հաշվառենք ամենադժվար պարտությունները, նրանց փորձից սովորենք, թե մեր աշխատանքի մեջ ինչ պիտի փոխենք։ Յեվ այս պատճառով հարկավոր է ուղղակի ասել։ Այս հետաքրքիր է կարևոր է վոչ միայն թեորիական ճշմարտության տեսակետից, այլև պրակտիկ կողմից։ Չի կարելի այսօր իր անելիքները նոր հնարներով վճռել սովորել, յեթե յերեկվա փորձը մեր աչքերը բաց չի արել հին հնարների սխալ լինելու նկատմամբ։

Նոր տնտեսական քաղաքականության անցման խնդիրն էլ այն է, վոր անլուր չափերով դժվարին պայմաններում, քաղաքացիական պատերազմի պայմաններում, այն պայմաններում, յերբ բուրժուազիան մեր վզին եր փաթաթում դաժան կռվի ձևեր, անմիջական սոցիալիստական շինարարության փորձից հետո, մեր առաջ 1921 թ. գարնանը կանգնեց մի պարզ դրություն՝ վոչ թե անմիջական սոցիալիստական շինարարություն, այլ եկոնոմիկայի մի շարք ասպարեզներում նահանջ դեպի պետական կապիտալիզմը. վոչ թե ուղղակի գրոհ, այլ մի ամբողջ շարք նահանջների հետ կապված յերկարատև պաշարման շատ ծանր, դժվար և տհաճ խնդիր։ Ահա թե ինչ է անհրաժեշտ այն բանի համար, վորպեսզի մոտենանք տնտեսական հարցի լուծմանը, այսինքն սոցիալիզմի հիմունքների տնտեսական անցման ապահովությանը։

(Վ. Ի. Լենին, Աշխ. ժող. I հրատ. հ. XVIII, մասն I, եջ 395-397)։

2. Կուսակցության միասնականության յեվ Ֆրակցիաների մասին

... Համագումարը կուսակցության բոլոր անդամների ուշադրությունն է դարձնում և այն բանի վրա, վոր նրա շարքերի միությունը և համախմբվածությունը, կուսակցության անդամների միջև լիակատար վստահությունը և իրոք համերաշխ, իրոք պրոլետարիատի ավանգարդի կամքի միասնականությունը մարմնավորող աշխատանքի ապահովումը հատկապես անհրաժեշտ է ներկա մոմենտում, յերբ մի շարք հանգամանքներ ուժեղացնում են յերերումը յերկրի մանր բուրժուական բընակչության մեջ...:

... Անհրաժեշտ է, վորպեսզի բոլոր գիտակից բանվորները պարզ գիտակցեն ամեն տեսակ ֆրակցիոնականության վնասը և անթույլատրելիությունը, վոր իրոք անխուսափելիորեն տանում է դեպի համերաշխ աշխատանքի թուլացումը և կառավարական կուսակցությանը կպած նրա թշնամիների յեռանդագին կրկնվող փորձերը, վոր նպատակ ունեն խորացնել բաժանումը և ոգտագործել այն հակահեղափոխության համար:

(ՌԿԿ (բ) իր համագումարների և կոնֆերենցիաների բանաձևերում, 2-րդ հրատ., եջ 234, X համագումարի բանաձևերից կուսակցության միասնականության մասին, ռուս. հրատ.):

Կուսակցության ղեկավար դերը կարելի չե ամբողջապես ապահովել միայն կուսակցության կամքի բացարձակ միասնականությամբ, կուսակցական շարքերի համախմբումով ու կուսակցության մեջ պահպանելով ու ամրապնդելով բոլշևիկյան պրոլետարական դիսցիպլինան:

Համագումարը խրախուսում է Կենտկոմի քաղաքականությունը, վորի նպատակն է յեղել թույլ չտալ բացահայտ դիսկուսիա Լենինգրադի կազմակերպության մի քանի ղեկավարների և Կենտկոմի կազմին պատկանող նրանց առանձին համախոհների հետ, վոր աշխատել է վերջ տալ տարաձայնություններին ներքին կարգով և ապահովել կուսակցության կոլեկտիվ ղեկավարությունը:

Համագումարը հանձնարարում է Կենտկոմին վճռական պայքար մղել կուսակցության միասնականության խախտման ամեն տեսակի փորձերի դեմ, անկախ այն բանից, թե վորտեղից են ծագում դրանք և ում ղեկավարությամբ կկատարվեն:

Համագումարն իր հաստատուն վստահությունն է հայտնում, վոր Լենինգրադի կազմակերպությունը կը կանգնի մեր լենինյան կուսակցության համախմբվածության ու միասնականության համար մարտնչողների առաջին շարքերում — միասնականություն, վորը պետք է պահպանել և ամրացնել ինչ ուզում է լինի:

(Համ. ԿԿ (բ) XIV համ. բանաձևերը և վորոշումները, Պետհրատ, 1926 թ. Յերևան, եջ 22—23):

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պարզեցեք.

1. Ձեր բջիջի աշխատանքի բնույթը ռազմական կոմմունիզմի տարիներին:
2. Ի՞նչպես անցավ ձեր բջիջում 1923/24 թ. դիսկուսիան, ի՞նչպես եր անցնում և ի՞նչ տվեց լենինյան կոչը ձեզ մոտ:
3. Ի՞նչ վիճակում է այժմ կուսաշխատանքը ձեր ձեռնարկության մեջ:

Համառոտ յեզրակացությունը գրեցեք տետրակում:

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ նպատակով կուսակցությունը «ռազմական կոմմունիզմի» քաղաքականությունից նեպին անցավ:
2. Ի՞նչով կը բացատրեք խմբավորումների յերևան գալը կուսակցության ներսում X համագումարից առաջ («բանվորական ոպպոզիցիա» և տրոցկիստներ), և ինչումն է նրանց սխալը:
3. Ինչում արտահայտվեցին ոպպոզիցիայի սխալները 1923/24 թ. դիսկուսիայում:
4. Ի՞նչ նշանակություն ունի XIV համագումարը մեր կուսակցության կյանքում:
5. Ինչումն է XIV համագումարի ոպպոզիցիայի սխալների արմատը:
6. Ի՞նչ գլխավոր յեզրակացություններ կարելի յե անել Համ.ԿԿ(բ.) պատմության ուսումնասիրությունից

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ

ՀԱՄ. ԿԿ (Բ.), ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ՅԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

Համ. Կ (բ.) յեվ Կոմինտերնը

ԻՆՉԻ ՄԱՍԻՆ Է ԶՐՈՒՅՑԸ

Նախորդ զրույցում կուսակցության պատմության ակնարկից յեզրակացություններ անելով, մենք մատնանշեցինք, վոր Համ. ԿԿ(բ.) աճեց ոպպորտյունիզմի դեմ մղվող յերկարատև անհաշտ կռվում։ Հենց իրենց հեղափոխական անհաշտության շնորհիվ բոլշեվիկներն ստեղծեցին կենտրոնացած և կարգապահ կուսակցություն՝ պրոլետարական վոգով, տոկուն ծրագրով ու տակտիկայով։ Ճիշտ այդպես էլ միայն համաձայնողական կուսակցությունների և իր ներսում յեղած ոպպորտյունիստական խմբակների և հոսանքների դեմ պայքարելով, Համ. ԿԿ(բ.) կարողացավ բանվոր դասակարգին իշխանության նվաճմանը հասցնել և հաստատել նրա դիկտատուրան։

Բոլշևիկներն անհապճեպ փորձ են կուտակել բոլոր տեսակի ու յերանգի համաձայնողականների դեմ մղվող կռվում, իշխանության համար, պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող կռվում։ Այդ փորձը յուրացնում են մույս բոլոր կոմմունիստական կուսակցությունները, վոր ավելի յերիտասարդ են։

Ներկա զրույցի խնդիրն է ցույց տալ, թե ինչպես և ինչումն է օգտագործում Կոմմունիստական Ինտերնացիոնալը բոլշևիզմի փորձն ոպպորտյունիզմի դեմ կռվելու համար, իր շարքերը ամրացնելու և զտելու համար, բանվորական մասսաների կազմակերպության համար, կապիտալիստական յերկրների պրոլետարիատին իշխանության նվաճմանը նախապատրաստելու համար։

Այս նպատակով քննության կառնենք. 1) թե ինչպես Համ.ԿԿ(բ.) օրինակով ոպպորտյունիզմի դեմ մղվող կռվում կազմվում էին Կոմմունիստական Ինտերնացիոնալի կուսակցությունները. 2) թե ինչպես նրանք, օգտվելով Համ.ԿԿ(բ.) պատմության դասերից, պրոլետարիատի հեղափոխական շարժման գլուխ են անցնում, նվաճելով II Ինտեր-

նացիոնալի համաձայնողական կուսակցություններից այն ազդեցությունը, վոր նրանք ունեն բանվորական մասսաների վրա. 3) թե ինչպես բոլոր կոմմունիստական կուսակցությունները պրակտիկայում կիրառում են Լենինի ուսմունքը պրոլետարիատի և գյուղացության միության մասին։

I. Համ. ԿԿ (բ.) փորձը Կոմինտերնի կազմակերպչական շինարարության մեջ

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Լենինի ուսմունքը մեզ պարզաբանում է, վոր կապիտալիզմն իմպերիալիստական պատերազմի սկզբից, 1914 թ., մոտեցել է իր կործանին, պրոլետարական հեղափոխությանը։

Իհարկե, հեղափոխությունն ինքն իրեն չի գալիս։ Ամենուրեք այն նախապատրաստում է և անցկացնում բանվոր դասակարգի հեղափոխական կուսակցությունը, կոմմունիստական կուսակցությունը։ Առանց այդ կուսակցության բանվոր դասակարգը չի կարող իր դիկտատուրան հաստատել ու պահել։

Ներկա պայմաններում պրոլետարական կուսակցությունների խնդիրն է՝ իր ազդեցության ներքո նվաճել ամենալայն բանվորական մասսաները, կազմակերպել նրանց, նախապատրաստել բանվոր դասակարգին հարուստ իշխանության մղվելիք ուղղակի կռվի և բարեհաջող մոմենտում այդ նախապատրաստությունից անցնել զինված ապստամբության և իշխանության նվաճման։

ՀԱՄ. ԿԿ (բ.) ՓՈՐՁԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՀԱՄԱՐ

Այս խնդիրը մյուս յերկրներում պետք է լուծել առաջին անգամ (յեթե չհաշվենք 1871 թ. Փարիզի բանվորների կողմից իշխանության կարճատև գրավումը)։ Հեշտ չէ այն։ Բայց այն լուծելու ժամանակ Կոմինտերնի բոլոր կուսակցություններին մեծ օգնություն է ցույց տալիս Համ. ԿԿ (բ.) փորձը։ Մեր կուսակցությունն առաջինն է, վոր իրագործեց իշխանության գրավումը բանվոր դասակարգի կողմից, և մյուս բոլոր կոմմունիստական կուսակցություններն այդ սովորում են նրա փորձով։

Մեր կուսակցությունն առաջինն էր, վոր դեռ պատերազմի սկզբից կոչ արեց III Ինտերնացիոնալ ստեղծել։ 1919 թ. նա նրա հիմնադիրների առաջին շարքերում էր, պայքարում էր և այժմ էլ պայքարում է Կոմինտերնի հաջողության և հաղթանակի համար։ Համ. ԿԿ (բ.)—Կոմմունիստական Ինտերնացիոնալի ամենաուժեղ, ամուր և մեծ կուսակցությունն է (տես № 15 դիագրամը)։

Դիագրամմ **№ 15.** ***Քանի իսկական անդամ ունեյին կոմկուսակցությունները 1925 թ. վերջին։***

(Ըստ Կոմինտերնի Գործկոմի Համ. ԿԿ (բ.) ներկայացուցչության զեկուցումի Համ. ԿԿ (բ.) XIV համագումարում և ըստ «Համ. ԿԿ (բ.) թվանշաններով» ժողովածուի, պրակ III և IV, 1925 թ.)։

Համ. ԿԿ (բ.)—Կոմինտերնի գլխավոր ուժն է։ Բայլ-շևիզմ-լենինիզմը—նրա թեորիան է և Համ. ԿԿ (բ.) պայքարի փորձը--այն աղբյուրը, վորից Կոմինտերնը ցուցմունքներ է քաղում իր աշխատանքի համար։

ԲԱՅԼՇԵՎԻԶՄԻ ՓՈՐՁԸ ՅԵՎ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կուսակցության պատմությունից հայտնի յե, թե ինչպես բայլշևիկներն աչալուրջ կերպով հետևում եյին, վորպեսզի ապորտյունիստները չկարողանան սողոսկել հեղափոխական կուսակցության մեջ և ներսից քայքայեն այն։

Միևնույն քաղաքականությունը վարեց և Կոմինտերնը։

Վոր կազմակերպության հարցերում Կոմինտերնի կուսակցությունները յուրացնում են բայլշևիզմի հիմունքները, պարզ կլինի, յեթե վերցնենք նրա կանոնադրությունը։ Նախ՝ ըստ այդ կանոնադրության կոմմունիստական կուսակցությունների անդամները վոչ միայն պետք է ընդունեն իրենց կուսակցության և Կոմինտերնի ծրագիրն ու կանոնադրությունը, այլև *ակտիվ աշխատեն* կուսակցության ստորին կազմակերպություններից մեկում։ Այս հենց այն պահանջներն են, վոր դնում են կուսակցության անդամների առաջ բայլշևիկները, տարբերվելով մենշևիկներից։

Յերկրորդ՝ Կոմինտերնի կուսակցությունները կառուցվում են դեմոկրատական ցենտրալիզմի և խիստ դիսցիպլինի սկզբունքներով։ Ստորին կազմակերպությունները յենթարկվում են բարձրերին։ Յերբ կուսակցության վճիռն ընդունված է, ապա կուսակցության բոլոր անդամները պետք է յենթարկվեն և հանդես չգան նրա դեմ։ Այս դարձյալ բայլշևիկյան կանոն է։

Յերրորդ՝ ամեն մի կոմմունիստական կուսակցության ստորին կազմակերպությունը պետք է լինի ձեռնարկության բջիջը, վորպեսզի կուսակցությունն ընդհուպ մոտենա բանվորներին արտադրության մեջ, կարողանա նրանց մեջ կատարած ամենօրյա աշխատանքի ժամանակ կազմակերպել պրոլետարիատին մասսայական կռվի համար։ Այս էլ Համ. ԿԿ (բ.) կանոնադրությունից է փոխ առնված։ Համաձայնողական կուսակցությունները, վորոնց համար ամենից կարևոր է պառլամենտի աշխատանքը, համաձայնությունը բուրժուազիայի հետ, իրենց կազմակերպությունը հարմարեցնում են միայն պառլամենտի ընտրություններին։ Այս պատճառով նրանք իրենց անդամներին միացնում են ըստ բնակության տեղի՝ փողոցներով, թաղերով և այլն ու կտրվում են բանվորի կյանքից ու կռվից արտադրության մեջ։ Սկզբներում կոմկուսակցությունները ճիշտ նույն ձևով եյին կառուցվում,

և այդ խանգարում էր նրանց սերտորեն կապվել բանվոր դասակարգի մասսաների հետ։

Ինչպես տեսնում ենք, Կոմմունիստական Ինտերնացիոնալն ամբողջովին ու լիակատար կերպով ընդունել է կուսակցության կազմակերպության բոլշևիկյան սկզբունքները (կանոնները)։ Համ. ԿԿ(բ.) կազմակերպչական փորձն անցնում է Կոմինտերնի բոլոր կուսակցություններին։ Այն յուրացնելու շնորհիվ կոմկոմկուսակցություններն ամրացան ու աճեցին։

ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԳՈՐԾԿՈՄԻ ՊԱՅՔԱՐԸ ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ԴԱՐՁՆԵԼ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ՀԱՐԳԱՊԱՀ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բոլշևիկյան հիմունքներով է կառուցված նաև Կոմինտերնը։ Նույն կանոնադրությունն ասում է. «Բանվորների միջազգային ընկերությունը ներկայացնում է զանազան յերկրների կոմմունիստական կուսակցությունների միավորումը պրոլետարական միասնական կուսակցության մեջ»։

Կոմինտերնի կոնգրեսների վորոշումները պարտադիր են նրա մեջ մտնող բոլոր կուսակցությունների համար։ Յերկու կոնգրեսների միջև Կոմինտերնի բարձրագույն որգանն է նրա Գործադիր Կոմիտեն (ԿԻԳԿ), վորը հետևում է կոնգրեսների վճիռների կատարմանը, կենսագործում է միջազգային դիսցիպլինը և միասնականությունը։

Կոմինտերնի այսպիսի կառուցումն անհրաժեշտ է կոմկուսակցությունների ամրացման, միջազգային մասշտաբով ոպպորտյունիզմի դեմ կռվելու, բոլոր յերկրների բանվոր դասակարգի հեղափոխական շարժման ղեկավարության միասնականության համար։

Կոմինտերնի Գործկոմը, իհարկե, ամենավճռական կռիվ է մղում միջազգային դիսցիպլինի բոլոր խախտումների դեմ։

Բերենք մի օրինակ։ 1920 թ. Կոմինտերնի իտալական կուսակցության մեջ գերակշռություն ստացան անկայուն, տատանվող ընկերները։ Նրանք չեյին ուզում արտաքսել ոպպորտյունիստներին, կատարել II կոնգրեսի վճիռները («ընդունելության 21 պայմանը»)։ Կոմինտերնն առաջարկեց իր կողմնակիցներին անջատվել ու ինքնուրույն կոմմունիստական կուսակցություն կազմել։ Համ. ԿԿ(բ.) փորձը և Վ. Ի. Լենինի պնդումներն օգնեցին, վոր անցկացվի այդ ամուր բոլշևիկյան գիծը։

Մյուս կոմկուսակցությունների պատմությունից կարելի յե շատ օրինակներ բերել, թե ինչպես ԿԻԳԿ պայքարել է հանուն լենինյան գծի, հանուն ամուր միջազգային դիսցիպլինի։ Ինչպես 1920 թ. Իտալիայում, այնպես էլ այլ դեպքերում դիսցիպլինը խախտում եյին նրանք, ովքեր ուզում եյին Կոմինտերնը շեղել լենինյան հեղափոխական ուղիից։

Համարյա միշտ այդպիսի ընկերները վերջիվերջո մտնում եյին հակահեղափոխական կուսակցությունների շարքերը։ Այդպես վարվեցին Կոմինտերնից հեռացված խմբակները — Լեվիինը Գերմանիայում, Տրանմելինը Նորվեգիայում, Հեգլունդինը Շվեցիայում և այլն։

Այստեղից հետևում է, վոր անհրաժեշտ է ԿԻԳԿ պայքարը հանուն միջազգային միության և խիստ դիսցիպլինի կոմկուսակցությունների շարքերում։

Հասկանալի յե, այս չի նշանակում, վոր կոմկուսակցությունների ղեկավարության մեջ ԿԻԳԿ չի հաշվառում պրոլետարիատի պայքարի հատուկ պայմաններն ամեն մի առանձին յերկրում և կոմկուսակցություններից ամեն մեկի աշխատանքի համապատասխան առանձնահատկությունները։ Դեռ ավելին, ԿԻԳԿ խնդիրն է՝ ընդհանրացնել բոլոր կոմկուսակցությունների աշխատանքի փորձը և հենվել նրանց վրա։ Այս նպատակով ինչքան վոր ամրանում են առանձին կոմմունիստական կուսակցությունները, ինչքան վոր ստեղծվում է նրանցում ամուր և տոկուն ղեկավարություն, այնքան էլ նրանք պետք է շարունակ ավելի մեծ մասնակցություն ունենան ԿԻԳԿ աշխատանքին։ Այդ նշված է նաև Համ. ԿԿ(բ.) XIV համագումարի բանաձևում, վոր մատնանշել է, թե անհրաժեշտ է անցկացնել այն գիծը, վոր «տարբերկրյա կոմկուսակցությունների ազդեցությունն աճե Կոմմունիստական Ինտերնացիոնալի ղեկավարության մեջ»։

ԿԻՄ-ը ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՊԱՀԵՍՏ

Բոլշևիկյան ձևով է կառուցվում նույնպես և յերիտասարդության միջազգային կոմմունիստական շարժումը։ Յերիտասարդության Կոմինտերնը (ԿԻՄ) բոլոր յերկրների կոմմունիստական յերիտասարդության կազմակերպությունների կենտրոնացրած միավորումն է։ Այդ — բանվոր յերիտասարդության միջազգային միասնական կազմակերպությունն է։ ԿԻՄ-ը կազմակերպչական տեսակետից ինքնուրույն է, այսինքն ինքն է վճռում իր կազմակերպության հարցերը, զանազան յերկրներում ղեկավարում յերիտասարդության առանձին միությունները և այլն։

Բայց քաղաքական տեսակետից ԿԻՄ-ը ղեկավարվում է Կոմինտերնի Գործկոմի կողմից և կատարում միջազգային կոնգրեսների բոլոր վճիռները։

ԿԻՄ-ը Կոմինտերնի պահեստն է, ինչպես վոր Համ. ԼԿՅԵՄ Համ. ԿԿ(բ) պահեստն է։

Հարց. Վորոնք են Կոմինտերնի կանոնադրության կարևորագույն կետերը, և ինչու յենք այն անվանում բոլշևիկյան։

և այդ խանգարում էր նրանց սերտորեն կապվել բանվոր դասակարգի մասսաների հետ։

Ինչպես տեսնում ենք, Կոմունիստական Ինտերնացիոնալն ամբողջովին ու լիակատար կերպով ընդունել է կուսակցության կազմակերպության բալշևիկյան սկզբունքները (կանոնները)։ Համ. ԿԿ (բ.) կազմակերպչական փորձն անցնում է Կոմինտերնի բոլոր կուսակցություններին։ Այն յուրացնելու շնորհիվ կոմկուսակցություններն ամրացան ու աճեցին։

ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԳՈՐԾԿՈՄԻ ՊԱՅՔԱՐԸ ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ԴԱՐՁՆԵԼ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ՀԱՐԳԱՊԱՀ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բալշևիկյան հիմունքներով է կառուցված նաև Կոմինտերնը։ Նույն կանոնադրությունն ասում է. «Բանվորների միջազգային ընկերությունը ներկայացնում է զանազան յերկրների կոմունիստական կուսակցությունների միավորումը պրոլետարական միասնական կուսակցության մեջ»։

Կոմինտերնի կոնգրեսների վորոշումները պարտադիր են նրա մեջ մտնող բոլոր կուսակցությունների համար։ Յերկու կոնգրեսների միջև Կոմինտերնի բարձրագույն որգանն է նրա Գործադիր Կոմիտեն (ԿԻԳԿ), վորը հետևում է կոնգրեսների վճիռների կատարմանը, կենսագործում է միջազգային դիսցիպլինը և միասնականությունը։

Կոմինտերնի այսպիսի կառուցումն անհրաժեշտ է կոմկուսակցությունների ամրացման, միջազգային մասշտաբով ոպպորտյունիզմի դեմ կռվելու, բոլոր յերկրների բանվոր դասակարգի հեղափոխական շարժման ղեկավարության միասնականության համար։

Կոմինտերնի Գործկոմը, իհարկե, ամենավճռական կռիվ է մղում միջազգային դիսցիպլինի բոլոր խախտումների դեմ։

Բերենք մի օրինակ։ 1920 թ. Կոմինտերնի իտալական կուսակցության մեջ գերակշռություն ստացան անկայուն, տատանվող ընկերները։ Նրանք չեյին ուզում արտաքսել ոպպորտյունիստներին, կատարել II կոնգրեսի վճիռները («ընդունելության 21 պայմանը»)։ Կոմինտերնն առաջարկեց իր կողմնակիցներին անջատվել ու ինքնուրույն կոմունիստական կուսակցություն կազմել։ Համ. ԿԿ (բ.) փորձը և Վ. Ի. Լենինի պնդումներն օգնեցին, վոր անցկացվի այդ ամուր բալշևիկյան գիծը։

Մյուս կոմկուսակցությունների պատմությունից կարելի յե շատ օրինակներ բերել, թե ինչպես ԿԻԳԿ պայքարել է հանուն լենինյան գծի, հանուն ամուր միջազգային դիսցիպլինի։ Ինչպես 1920 թ. Իտալիայում, այնպես էլ այլ դեպքերում դիսցիպլինը խախտում եյին նրանք, ովքեր ուզում եյին Կոմինտերնը շեղել լենինյան հեղափոխական ուղիից։

Համարյա միշտ այդպիսի ընկերները վերջիվերջո մտնում եյին համաձայնողական կուսակցությունների շարքերը։ Այդպես վարվեցին Կոմինտերնից հեռացված խմբակները — Լևիինը Գերմանիայում, Տրանմելինը Նորվեգիայում, Հեգլունդինը Շվեցիայում և այլն։

Այստեղից հետևում է, վոր անհրաժեշտ է ԿԻԳԿ պայքարը հանուն միջազգային միության և խիստ դիսցիպլինի կոմկուսակցությունների շարքերում։

Հասկանալի յե, այս չի նշանակում, վոր կոմկուսակցությունների ղեկավարության մեջ ԿԻԳԿ չի հաշվառում պրոլետարիատի պայքարի հատուկ պայմաններն ամեն մի առանձին յերկրում և կոմկուսակցություններից ամեն մեկի աշխատանքի համապատասխան առանձնահատկությունները։ Դեռ ավելին, ԿԻԳԿ խնդիրն է՝ ընդհանրացնել բոլոր կոմկուսակցությունների աշխատանքի փորձը և հենվել նրանց վրա։ Այս նպատակով ինչքան վոր ամրանում են առանձին կոմունիստական կուսակցությունները, ինչքան վոր ստեղծվում է նրանցում ամուր և տոկուն ղեկավարություն, այնքան էլ նրանք պետք է շարունակ ավելի մեծ մասնակցություն ունենան ԿԻԳԿ աշխատանքին։ Այդ նշված է նաև Համ. ԿԿ (բ.) XIV համագումարի բանաձևում, վոր մատնանշել է, թե անհրաժեշտ է անցկացնել այն գիծը, վոր «տարբերկրյա կոմկուսակցությունների ազդեցությունն աճե Կոմունիստական Ինտերնացիոնալի ղեկավարության մեջ»։

ԿԻՄ-ը ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՊԱՀԵՍՏ

Բալշևիկյան ձևով է կառուցվում նույնպես և յերիտասարդության միջազգային կոմունիստական շարժումը։ Յերիտասարդության Կոմինտերնը (ԿԻՄ) բոլոր յերկրների կոմունիստական յերիտասարդության կազմակերպությունների կենտրոնացրած միավորումն է։ Այդ — բանվոր յերիտասարդության միջազգային միասնական կազմակերպությունն է։ ԿԻՄ-ը կազմակերպչական տեսակետից ինքնուրույն է, այսինքն ինքն է վճռում իր կազմակերպության հարցերը, զանազան յերկրներում ղեկավարում յերիտասարդության առանձին միությունները և այլն։

Բայց քաղաքական տեսակետից ԿԻՄ-ը ղեկավարվում է Կոմինտերնի Գործկոմի կողմից և կատարում միջազգային կոնգրեսների բոլոր վճիռները։

ԿԻՄ-ը Կոմինտերնի պահեստն է, ինչպես վոր Համ. ԼԿՅԵՄ Համ. ԿԿ (բ) պահեստն է։

Հարց. Վորո՞նք են Կոմինտերնի կանոնադրության կարևորագույն կետերը, և ինչո՞ւ յենք այն անվանում բալշևիկյան։

2. Կոմինտերնը բանվորական մասսաների համար մղվող կռվում

ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԿՌԻՎԸ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՍՍԱ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կոմինտերնը միայն իր կազմակերպությունների կառուցման մեջ չէ, վորկ իրառում է լենինյան ուսմունքը։ Կոմինտերնի ամբողջ աշխատանքն է, վոր կառուցվում է Լենինի ուսմունքի հիմունքով։ Լենինյան ձևով է փորձել Կոմինտերնը նաև կոմկուսակցությունների գլխավոր խնդիրը՝ գրավել պրոլետարական մասսաներն իր կողմը, իր յետևից տանել բանվորների մեծամասնությունը, կազմակերպել նրանց պայքարի համար։

Մինչև այժմ կապիտալիստական յերկրների մեծամասնության մեջ կոմմունիստների յետևից գնում է միայն բանվորների փոքրամասնությունը։ 1920 թ. հետո կապիտալիստական տնտեսությունը մի քիչ վոտքի յե կանգնել։ Բանվորի դրությունը, հետպատերազմյան տարիների (1918—1921 թ. թ.) համեմատությամբ մի քիչ լավացել է։ Համաձայնողական կուսակցությունները նորից մի քիչ ամրացել են, կարողացել են իրենց ազդեցության տակ պահել պրոլետարների նշանակալի մասսաներ, իսկ վոր գլխավորն է—նրանց վախեցնել հեղափոխության դժվարություններով։

Յ և վ ա յ ս պ ա տ ճ ա ռ ո վ Կ ո մ ի ն տ ե ր ն ն ա յ ժ մ ա ռ ա ջ ի ն պ լ ա ն ն է ք ա շ ո ւ մ ա յ ն խ ն դ ի ր ը, վ ո ր պ ե տ ք է ն վ ա ճ ե լ բ ա ն վ ո ր ա կ ա ն մ ա ս ս ա ն ե ր ը II Ի ն տ ե ր ն ա ց ի ո ն ա լ ի հ ա մ ա ձ ա յ ն ո ղ ա կ ա ն կ ո ւ ս ա կ ց ո ւ թ յ ո ւ ն ն ե ր ի ց, հ ա մ ո զ ե լ բ ա ն վ ո ր ն ե ր ի ն ա յ դ կ ո ւ ս ա կ ց ո ւ թ յ ո ւ ն ն ե ր ի դ ա վ ա ճ ա ն ո ւ թ յ ա ն մ ե ջ և կ ո մ մ ո ւ ն ի ս տ ա կ ա ն պ ա հ ա ն ջ ն ե ր ի ճ շ տ ո ւ թ յ ա ն ո ւ հ ե ղ ա փ ո խ ո ւ թ յ ա ն ա ն հ ր ա ժ ե շ տ ո ւ թ յ ա ն մ ե ջ։

Ուրիշ խոսքով, Կոմինտերնն իրեն խնդիր է առաջադրում կռվել II Ինտերնացիոնալի դեմ բանվորական մասսաների համար։

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԻԱՍՆԱ-ԿԱՆ ՖՐՈՆՏԻ ԼՈԶՈՒՆԳԸ ՅԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒ-ԹՅՈՒՆԸ

Առանց կռվելու կապիտալի դեմ շարքային բանվորի կենսական պահանջների համար, կոմկուսակցությունները չեյին կարող իրագործել այդ խնդիրը և պրոլետարական կուսակցություններ էլ չեյին լինի։ Այդ պահանջների համար—բանվորական օրի կրճատում, աշխատավարձի բարձրացում, կռիվ միապետական ռեժիմի կողմնակիցների դեմ և այլն—կոմմունիստները կոչ են անում կռվել բոլոր բանվորներին առանց կուսակցությունների և ուղղությունների խտրության, առաջարկում են միասնական ֆրոնտով գնալ կապիտալի դեմ։ Կոմմունիստների նպատակն է—պաշտպանել բանվորներին կապիտալիստների կատաղի գրոհից և միևնույն ժամանակ ապացուցել, վոր առանց հեղափոխության չի կարելի լուրջ բարվոքումների հասնել։ Կ ա պ ի տ ա-

լ ի ս տ ա կ ա ն յ ե ր կ ր ն ե ր ի կ ո մ մ ո ւ ն ի ս տ ա կ ա ն կ ո ւ ս ա կ ց ո ւ թ յ ո ւ ն ն ե ր ն ա մ ե ն օ ր յ ա պ ա հ ա ն ջ ն ե ր ի հ ա մ ա ր մ ղ վ ո ղ կ ռ վ ի ց կ ա մ ո ւ ր ջ ե ն գ ց ո ւ մ դ ե պ ի պ ր ո լ ե տ ա ր ի ա տ ի դ ի կ տ ա տ ո ւ ր ա յ ի հ ա ր ց ը։ Ա յ դ կ ա մ ո ւ ր ջ ո վ ն ր ա ն ք տ ա ն ո ւ մ ե ն բ ա ն վ ո ր դ ա ս ա կ ա ր գ ի ն դ ե պ ի վ ճ ռ ա կ ա ն կ ռ ի վ ո ւ հ ա ղ թ ա ն ա կ։ Ա հ ա ի ն չ ո ւ մ ն է մ ի ա ս ն ա կ ա ն ֆ ր ո ն տ ի տ ա կ տ ի կ ա յ ի ի մ ա ս տ ը։

Այս տակտիկան անցկացնելով, կոմմունիստական կուսակցությունները առաջարկում են սոցիալ-դեմոկրատներին, նրանց տեղական կազմակերպություններին և նույնիսկ համաձայնողական ամբողջ կուսակցություններին միանալ բանվորների վճռական պահանջների համար մղվող ընդհանուր կռվին և կռվել նրանց համար միասին ու մինչև վերջ։ Իհարկե, համաձայնողական կուսակցությունները դեմ են դուրս գալիս բանվորական միասնական ֆրոնտին, խախտում են այն, հենց դրանով մերկացնելով իրենց իսկական դեմքը։ Բանվորները տեսնելով, վոր միայն կոմմունիստներն են լրջորեն ու գործով կռվում պրոլետարական շահերի համար, շարունակ ավելի ու ավելի յեն անցնում կոմկուսակցությունների ղեկավարության տակ, հեղափոխության կողմը։ Նրանք հեռանում են սոցիալ-դեմոկրատներից, վորովհետև նրանք շարունակ մատնում են, դավաճանում, ամեն տեսակ պատրվակներով հրաժարվում են միասին պայքարից կամ առերևույթ համաձայնելով, կես ճանապարհից յետ են դառնում։

Պարզենք մի օրինակով, թե ինչումն է միասնական ֆրոնտի տակտիկայի էությունը։ 1926 թ. Գերմանիայում տապալված կայսրը, թագավորները և իշխանները մոտ մեկ ու կես միլլիարդ ռուբլի վճար եյին պահանջում իրենցից խլված գույքի և հողի համար։

Սոցիալ-դեմոկրատներն արդեն սկսեցին համաձայնության գալ բուրժուական կուսակցությունների հետ այն մասին, թե ինչքան և ինչպես վճարեն։ Իսկ կոմմունիստները չսահմանափակվեցին սոցիալ-դեմոկրատների դավաճանությունը և իշխանական պահանջների կողոպտիչ բնույթը խոսքերով մերկացնելով։ Նրանք այդ առթիվ կազմակերպեցին համաժողովրդական քվեարկության համար ստորագրություն հավաքելու գործը, վորպեսզի չթույլատրվի ժողովրդական փողերի վճարումը տապալված թագավորներին, կայսրին և իշխաններին, վորպեսզի նրանց կալվածներն առանց վորևէ փոխհատուցման գրավվի։ Ամենուրեք ստորագրություններ հավաքող կոմիտեներ կազմվեցին զանազան կուսակցությունների ու հայացքների բանվորների, դրանց թվում և սոցիալ-դեմոկրատների, մասնակցությամբ։ Կոմմունիստները ճիշտ մոտեցան մասսաներին, հաշվառեցին նրանց

շահերը․ կոմկուսակցության հաջողությունն այնքան մեծ էր, որ սոցիալ-դեմոկրատների կուսակցությունն ստիպված էր փոխել իր դիրքը և ընդունել կոմմունիստների առաջարկությունը պլեբիսցիտի (համաժողովրդական քվեարկություն, հանրաքվե) համար միասին պայքարելու մասին։ Հետևանքն այն յեղավ, որ ավելի քան 12 միլիոն մարդ իրենց ստորագրությունները տվեցին, և գերմանական կառավարությունը հարկադրված էր թույլատրել պլեբիսցիտը։ Քվեարկությունը տեղի ունեցավ 1926 թ. հունիսի 20-ին։ $14^1/_2$ միլիոն ձայն տրվեց կոնֆիսկացիայի օգտին։

Այդ բավական չէր կոնֆիսկացիան կենսագործելու համար, որովհետև գերմանական օրենքներով պահանջվում էր, որ 20 միլիոն ընտրող մասնակցած լինեն քվեարկությանը, իսկ բուրժուական կուսակցությունները հրաժարվեցին մասնակցել նրան (նրանք հասկանում էին, որ չեն կարող ձայների մեծամասնություն ստանալ)։ Բայց չնայած այս առերևույթ անհաջողությանը և սոցիալ-դեմոկրատների տատանումին՝ բուրժուազիայի հետ համաձայնության գալու ուղղությամբ՝ այնուամենայնիվ կոմկուսակցությունն իր ուզածին հասավ։

Ստորին շերտերի ճնշումը հարկադրեց սոցիալ-դեմոկրատական ֆրակցիային, որ պարլամենտում դեմ արտահայտվի կառավարական փոխհատուցման օրինագծին և պահանջի ռայխստագի [1]) ցրում։ Պարլամենտում հարկավոր մեծամասնությունը չգտնվեց և կառավարությունն օրինագիծը յետ վերցրեց։

Պլեբիսցիտի համար մղված կռվում մասսաների առաջ կանգնեց նաև կենտրոնական հարցը—իշխանության հարցը։ Միապետության կողմնակիցները, խոշոր կապիտալիստների և խոշոր կալվածատերերի կուսակցությունները տեսան, որ պրոլետարիատը և մյուս աշխատավորներն իշխանների դեմ են, և կոմմունիստների հաջողությունից վախենալով, սկսեցին բռնական հեղաշրջում պատրաստել։ Գերմանական հանրապետության նախագահ Հինդենբուրգը ծածուկ պաշտպանում էր դավադիրներին։ Դավադրությունը բացվեց, բայց նրա պարագլուխներն իշխանության գլուխ կանգնած մնացին։

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼՈԶՈՒՆԳԸ Սոցիալ-դեմոկրատները մթագնում են այն փաստը, որ «հանրապետական կառավարությունը» քծնում է միապետությանը։ Նրանք պաշտպանում են այդ կառավարությունը։ Միայն կոմմունիստներն են կռվի ուղիղ ճանապարհը ցույց տալիս։ Միայն բանվորական կառավարությունն է,

[1]) Ռայխստագ—գերմանական պարլամենտը։

ասում են նրանք մասսաներին, որ չի թույլատրի միապետության վերադարձը։ Յեվ բանվորական կառավարության լոզունգը թափանցում է Գերմանիայի և ուրիշ յերկրների աշխատավորների լայն շերտերը։ Այդ լոզունգը լրացնում ու շարունակում է միասնական ֆրոնտի տակտիկան։

Բանվոր դասակարգի և բուրժուազիայի միջև յեղած բոլոր սուր ընդհարումների ժամանակ, յերբ բուրժուական իշխանությունը հայտնապես ու կոպտորեն իր սուր ծայրով ուղղված է պրոլետարիատի դեմ, կոմմունիստներն առաջարկում են բանվորական կառավարություն ստեղծել։

Բանվորական կառավարության լոզունգը հարկավոր է, քանի պրոլետարիատի լայն մասսաները դեռ պատրաստ չեն ապստամբության, քաղաքացիական պատերազմի, բայց արդեն հարկադրված են իշխանության հարցը դնել։ Թող բանվորական կառավարության մեջ մտնեն և համաձայնողական կուսակցությունները.—մասսաների մեջ իրոք հեղափոխական վերելքի ժամանակ կոմմունիստները չեն հրաժարվի մասնակցել նրան համաձայնողականների հետ միասին։ Ուղիղ տակտիկայի դեպքում կոմմունիստները կկարողանան վճռական ճակատամարտ նախապատրաստել բուրժուազիայի դեմ, հենվելով հեղափոխական մասսաների պաշտպանության վրա։ Հասկանալի է, կապիտալիստները չեն հաշտվի այդպիսի բանվորական կառավարության հետ, որի մեջ հեղափոխական աշխատանք են կատարում կոմմունիստները։ Համաձայնողականները կառավարության մեջ, իսկ ավելի ևս նրա բանվորական մասսաների թիկունքում, համաձայնության կը գան բուրժուական կուսակցությունների հետ, ամեն կերպ կը ջանան խուսափել կռվից, առանց կռվի հանձնել իշխանությունը։ Կոմմունիստները բանվորական կառավարության ներսում կռիվ կը մղեն բուրժուազիայի ու համաձայնողականների դեմ, կը զինեն պրոլետարներին և նրանց քաղաքացիական պատերազմի, կը պատրաստեն անխնա կը մերկացնեն կեղծ սոցիալիստների վախկոտությունը և դավաճանությունը։ Այդ բոլորը նրանց կօգնի վերջնականապես նվաճելու բանվորական մասսան և զինված բանվորների գլուխ անցած, կործանելով բուրժուազիայի և համաձայնողականների դիմադրությունը, գնալ դեպի խորհրդային իշխանություն, դեպի պրոլետարիատի իսկական դիկտատուրա։ Ահա ինչումն է «բանվորական կառավարություն» լոզունգի իմաստն ու նպատակը։ Այդ մի լոզունգ է, որի յետևը թաքնված է

պայքարը խորհրդային իշխանության համար, նրա նպատակն է ֆրոնտի լիակատար միասնականության հասնել այն պայքարում, վոր վարում է պրոլետարիատը իր դիկտատուրայի համար,—միասնականության հասնել այնպիսի մոմենտում, յերբ բանվորների նշանակալի մասսաները դեռ տատանվում են իշխանությունն ուղղակի և ինքնակամ կերպով գրավելու գործում:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՖՐՈՆՏԻ ՏԱՔՏԻԿԱՅԻ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄԸ

Այսպիսով միասնական ֆրոնտի տաքտիկան կոմկուսակցության ձեռքում հիանալի զենք է բանվորական մասսաների համար մղած կռվում. դրանով նա ծառայում է հենց իրենց՝ կոմկուսակցությունների աճմանը: Բայց միասնական ֆրոնտի տաքտիկան չի կարող մատնանշված արդյունքները տալ, յեթե կոմկուսակցությունն անցկացնելով այն, ուղիղ լենինյան գծից աջ կամ ձախ է թեքվում:

Աջ թեքումն այն է, վոր ձգտում է ավելի կամ պակաս չափով ամուր միություն հաստատել համաձայնողականների հետ, յերբ նրանք ընդառաջում են «միասնական ֆրոնտին»: Այդպիսի թեքման ժամանակ կոմմունիստները չափազանց վստահում են համաձայնողականների խոսքերին, առաջ չեն քաշում անհաշտ հեղափոխական պահանջներ, դադարում են կռվել սոցիալ-դեմոկրատների դեմ, մատնանշել նրանց սխալները և տատանումները: Հենց սրանով աչքաթող է արվում այն, վոր անհրաժեշտ է մեր շուրջը կազմակերպել բանվորներին, տանել մասսաներին դեպի կռիվ հանուն իշխանության, մոռացվում է և խեղաթյուրվում Լենինի ուսմունքը պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող կռվի մասին, կուսակցության անելիքների մասին այդ կռվում: Այդպիսի դեպքում «միասնական ֆրոնտը» միայն կուսակցությունների համաձայնություն է, միայն վերևից է անցկացվում, այլասերվում է:

Աջ թեքման և նրա վնասի վառ օրինակ է գերմանական կոմկուսակցության ԿԿ մեծամասնության քաղաքականությունը 1923 թ., յերբ Գերմանիան կանգնած էր հեղափոխության շեմքին: Այն ժամանակ հաջողվեց հարկադրել սոցիալ-դեմոկրատներին, վոր Սաքսոնիայում (Գերմանիայի մի մասը) կոմմունիստների հետ բանվորական կառավարություն սարքեն: Բայց կոմմունիստները չկարողացան դրանից օգտվել բանվորներին զինելու, հակահեղափոխության դեմ կռվելու համար: Նրանք չէին նախապատրաստում ֆաբրիկաների ու գործարանների գրավումը բուրժուազիայից, չէին կազմակերպում իրենց շուրջը բանվոր դասակարգի մեծամասնությունը հանուն իշխանության գրավման:

Նրանք ավելի շատ հոգում էին սոցիալ-դեմոկրատների հետ հաշտություն ունենալու, քան մասսաների մեջ աշխատանք կատարելու մասին:

Կոմմունիստ-մինիստրները նույնիսկ հայտարարում էին, վոր նրանք չեն էլ մտածում օրենքների խախտման մասին, վոր նրանք ամբողջովին պատասխանատու յեն պարլամենտի առաջ, բոլորը նրա համար, վորպեսզի չխրտնեցնեն օրենքի հլու սոցիալ-դեմոկրատներին: Սոցիալ-դեմոկրատները, իհարկե, հակահեղափոխության առաջին գրոհի ժամանակ դավաճանեցին ս բանվորական կառավարությունն ընկավ, չդառնալով, ինչպես այդ պետք է լինի, մի աստիճան դեպի խորհուրդների իշխանությունը, դեպի պրոլետարիատի դիկտատուրան:

Հաշվառելով աջ թեքման վնասը, Կոմինտերնի V-րդ կոնգրեսը դատապարտեց միասնական ֆրոնտի տաքտիկայի միայն վերևից իրագործումը:

Միասնական ֆրոնտի տաքտիկայում «ձախ» թեքումը թեթևամիտ վերաբերմունք է նշանակում դեպի զանազան կուսակցությունների բանվորների միատեղ գործողությունը: «Ձախ» ընկերները միասնական ֆրոնտի տաքտիկան սոսկ բանավոր հարձակման են փոխում համաձայնողականների վրա, անհնար են դարձնում բանակցությունները նրանց հետ և իրենցից հրում են դեռ վոչ-հեղափոխական մասսաներին: «Ձախերն» ուզում են միայն մեկ կուսակցության ուժերով գործել, չեն հասկանում վոր անհրաժեշտ է կոմմունիստների կողմը գրավել լայն մասսաներին:

«Ձախերը» չեն ձգտում ընդհանուր լեզու գտնել սոցիալ-դեմոկրատ բանվորների հետ, միատեղ աշխատանքի համար այնպիսի պայմաններ են դնում, վորոնց հետ այդ բանվորները դեռ դժվարությամբ կարող են համաձայնել, նրանցից լիովին նույնն են պահանջում, ինչ վոր կոմմունիստ-բանվորներից: «Ձախերի» սխալներից օգտվում են համաձայնողական առաջնորդները, վորպեսզի կոմմունիստներին ներկայացնեն իբրև պառակտիչներ, համոզեն սոցիալիստ-բանվորներին, վոր կոմմունիստների հետ միատեղ գործել անհնար է, վոր կոմկուսակցությունը միայն խոսքով է պայքարում միասնական ֆրոնտի համար: Այսպիսի ճանապարհով հաճախ սոցիալ-դեմոկրատներին հաջողվում է մասսաներին անջատել կոմմունիստական կուսակցությունից: Այսպիսի տակտիկայի յեն հետևում և այսպիսի տակտիկա յեն հանձնարարում, օրինակ՝ Գերմանիայի «ձախ» կոմմունիստները:

Կոմինտերնը դատապարտում է այս «ձախ» թեքումը: Ով բոլորովին անհնար է դարձնում ճնշումը սոցիալ-դեմոկրատական վերնաշերտերի վրա և ընդհանուր

լեզու չի գտնում սոցիալ-դեմոկրատ բանվորների հետ, նա հրաժարվում է բանվոր դասակարգի նվաճումից, անջատում է կուսակցությունը մասսաներից։ «Ձախերը» խանգարում են, որ միասնական ֆրոնտը ներքևից իրագործվի, որ կարգի գցվի միատեղ աշխատանքը պրոլետարիատի ստորին մասսայական կազմակերպություններում։

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՖՐՈՆՏԻ ԼՈԶՈՒՆԳԸ ԱՐՀՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ, ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՒՄՆԵՐԸ

Այս աշխատանքի վրա կոմմունիստները պետք է իրենց գլխավոր ուշադրությունը դարձնեն։ Այստեղ առաջին պլանի վրա կանգնած են արհմիությունները, վորոնց նշանակության մասին կապիտալիզմի ժամանակ մենք արդեն խոսել ենք (տես չորրորդ գլուխը)։

Գլխավորելով արհմիությունները, սոցիալ-դեմոկրատներն ամուր հենարան են գտնում և անպատիժ վարում են իրենց համաձայնողական քաղաքականությունը, յեթե կոմմունիստները չեն միջամտում։ Կոմկուսակցությունները պետք է արհմիություններում ակտիվորեն աշխատեն, պաշտպանեն բանվորների շահերը, պայքար մղեն բանվորական օրվա կրճատման, աշխատավարձի բարձրացման, աշխատանքի պայմանների լավացման համար։ Կոմմունիստները պետք է այդպիսով բանվորներին ցույց տան, թե ով է գործով պաշտպանում նրանց կապիտալի հարձակումից։

Արհմիություններում աշխատող կոմմունիստների ղեկավարությամբ կատարված ամեն մի հաջող գործադուլ շատ ավելի յե խախտում դեպի համաձայնողականները յեղած վստահությունը, քան տասնյակ ճառեր ու թռուցիկներ։

Յերբ արհմիությունները սոցիալ-դեմոկրատների ձեռքից կոմմունիստներին են անցնում, նշանակում է, մասսան վստահում է կոմկուսակցությանը։ «Արհմիությունների նվաճումը նշանակում է մասսաների նվաճում,—ասում է Կոմինտերնի V կոնգրեսի բանաձևը։— Բոլոր կոմմունիստական կուսակցություններն այս ճանապարհով մի առաջին քայլ առաջ են գնացել։ Հարկավոր է ավելի առաջ գնալ, ինչպիսին ել վոր լինեն արհմիութենական բյուրոկրատիայի[1]) դավաճանությունները, ժամանակավոր պարտությունները և այս հարցի նկատմամբ մասսաներում յեղած տատանումները»։

Այս նպատակներով Կոմինտերնը յեռանդագին պարտավորեցնում է բոլոր կապիտալիստական յերկրների կոմկուսակցությունների անդամներին մտնել համաձայնողական Ամստերդամյան Ինտերնացիոնալին պատկանող արհեստակցական միությունների մեջ և աշխատել նրանցում։ «Խնդիրը նրանում է կայանում, վորպեսզի Արևմուտքի կոմմունիստական կուսակցությունները կապվեն արհմիությունների հետ։ Այդ խնդիրը նրանում է, վորպեսզի զարգացվի ու մինչև վերջ հասցվի արհշարժման միասնականության կամպանիան, վորպեսզի կոմմունիստները պարտադրաբար և անպայման մտնեն արհմիությունների մեջ, այնտեղ սիստեմատիկ աշխատանք կատարեն՝ միավորելու բանվորներին միասնական ֆրոնտում ընդդեմ կապիտալի և այդպիսով ստեղծեն պայմաններ, վորոնք հնարավորություն են տալիս կոմմունիստական կուսակցություններին հենվել արհմիությունների վրա։ Առանց այս խնդրի իրագործման անկարելի յե վոչ կոմմունիստական կուսակցություններն իրոք մասսայական կուսակցություններ դարձնել, վոչ ել պրոլետարիատի հաղթանակի համար անհրաժեշտ պայմաններ նախապատրաստել» (Ստալին)։

Արհշարժման միասնական ֆրոնտի լոզունգը մեծ հաջողություն ունի բոլոր կուսակցությունների և ուղղությունների բանվորների մեջ։

Ահա ինչ ասաց այդ հարցի առթիվ Կոմինտերնի Գործկոմի ընդլայնված պլենումը (1925 թ. ապրիլ)․ «Խոր արձագանքը, վոր պրոլետարիատի լայն մասսաներում գտավ միության կամպանիան, փայլուն կերպով հաստատում է Կոմինտերնի V կոնգրեսի նշանառած գծի ճշտությունը։ Արդի պայմաններում դասակարգային կռվի զարգացումն ուժեղացնում է կոմմունիստական ազդեցությունից դուրս գտնված բանվորական մասսաների հետաքրքրությունը դեպի այն կազմակերպությունները, վորոնք անձնուրաց ու հետևողականորեն պայքարում են արհմիությունների միջազգային միության վերականգնման համար։ Այս պատճառով Կոմինտերնի Գործկոմի ընդլայնված պլենումն անհրաժեշտ է համարում նորից ու նորից ընդգծել միության համար մղվող սիստեմատիկ, համառ կռվի անհրաժեշտությունը, վորովհետև միության համար մղվող կռիվը նշանակում է կռիվ մասսաների համար ընդդեմ բուրժուազիայի և նրա կամակատարների»։

Մեծ համակրանք ունեն դեպի այս լոզունգն անգլիական բանվորները։ Ընդհանուր գործադուլից շատ առաջ կոմիտե յեր կազմակերպված ռուսական և անգլիական արհմիությունների (ՀԱՄԿԽ-ВЦСПС և անգլիական միությունների գլխավոր խորհրդի) ներկայացուցիչներից արհմիությունների միասնական Ինտերնացիոնալի համար պայքարելու համար։ Գլխավոր Խորհուրդը չնայած այն բանին, վոր գտնվում եր Թոմասի և ընկ. ձեռքին, վորոնք հետո Անգլիայում դավաճանեցին ընդհանուր գործադուլին, բանվորական մասսաների ճնշման տակ հար-

[1]) Արհմիութենական բյուրոկրատիա—արհմիությունների պաշտոնատար անձինք, վոր մեծ մասամբ սոցիալ-համաձայնողականներ են։

լեզու չի գտնում սոցիալ-դեմոկրատ բանվորների հետ, նա հրաժարվում է բանվոր դասակարգի նվաճումից, անջատում է կուսակցությունը մասսաներից: «Ձախերը» խանգարում են, վոր միասնական ֆրոնտը ներքեվից իրագործվի, վոր կարգի գցվի միատեղ աշխատանքը պրոլետարիատի ստորին մասսայական կազմակերպություններում:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՖՐՈՆՏԻ ԼՈԶՈՒՆԳԸ ԱՐՀՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ, ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՒՄՆԵՐԸ

Այս աշխատանքի վրա կոմմունիստները պետք է իրենց գլխավոր ուշադրությունը դարձնեն: Այստեղ առաջին պլանի վրա կանգնած են արհմիությունները, վորոնց նշանակության մասին կապիտալիզմի ժամանակ մենք արդեն խոսել ենք (տես չորրորդ պրակը):

Գլխավորելով արհմիությունները, սոցիալ-դեմոկրատներն ամուր հենարան են գտնում և անպատիժ վարում են իրենց համաձայնողական քաղաքականությունը, յեթե կոմմունիստները չեն միջամտում: Կոմկուսակցությունները պետք է արհմիություններում ակտիվորեն աշխատեն, պաշտպանեն բանվորների շահերը, պայքար մղեն բանվորական օրվա կրճատման, աշխատավարձի բարձրացման, աշխատանքի պայմանների լավացման համար: Կոմմունիստները պետք է այդպիսով բանվորներին ցույց տան, թե ով է գործով պաշտպանում նրանց կապիտալի հարձակումից:

Արհմիություններում աշխատող կոմմունիստների ղեկավարությամբ կատարված ամեն մի հաջող գործադուլ շատ ավելի յե խախտում դեպի համաձայնողականները յեղած վստահությունը, քան տասնյակ ճառեր ու թռուցիկներ:

Յերբ արհմիությունները սոցիալ-դեմոկրատների ձեռքից կոմմունիստներին են անցնում, նշանակում է, մասսան վստահում է կոմկուսակցությանը: «Արհմիությունների նվաճումը նշանակում է մասսաների նվաճում,—ասում է Կոմինտերնի V կոնգրեսի բանաձևը:— Բոլոր կոմմունիստական կուսակցություններն այս ճանապարհով մի ահագին քայլ առաջ են գնացել: Հարկավոր է ավելի առաջ գնալ, ինչպիսին ել վոր լինին արհմիութենական բյուրոկրատիայի[1]) դավաճանությունները, ժամանակավոր պարտությունները և այս հարցի նրկատմամբ մասսաներում յեղած տատանումները»:

Այս նպատակներով Կոմինտերնը յեռանդագին պարտավորեցնում է բոլոր կապիտալիստական յերկրների կոմկուսակցությունների անդամներին մտնել համաձայնողական Ամստերդամյան Ինտերնացիոնալին պատկանող արհեստակցական միությունների մեջ և աշխատել նրանցում: «Խնդիրը նրանում է կայանում, վորպեսզի Արևմուտքի կոմմունիստական կուսակցությունները կապվեն արհմիությունների հետ: Այդ խնդիրը նրանում է, վորպեսզի զարգացվի ու մինչև վերջ հասցվի արհշարժման միասնականության կամպանիան, վորպեսզի կոմմունիստները պարտադրաբար և անպայման մտնեն արհմիությունների մեջ, այնտեղ սիստեմատիկ աշխատանք կատարեն՝ միավորելու բանվորներին միասնական ֆրոնտում ընդդեմ կապիտալի և այդպիսով ստեղծեն պայմաններ, վորոնք հնարավորություն են տալիս կոմմունիստական կուսակցություններին հենվել արհմիությունների վրա: Առանց այս խնդրի իրագործման անկարելի յե վոչ կոմմունիստական կուսակցություններն իրոք մասսայական կուսակցություններ դարձնել, վոչ ել պրոլետարիատի հաղթանակի համար անհրաժեշտ պայմաններ նախապատրաստել» (Ստալին):

Արհշարժման միասնական ֆրոնտի լոզունգը մեծ հաջողություն ունի բոլոր կուսակցությունների և ուղղությունների բանվորների մեջ:

Ահա ինչ ասաց այդ հարցի առթիվ Կոմինտերնի Գործկոմի ընդլայնված պլենումը (1925 թ. ապրիլ). «Խոր արձագանքը, վոր պրոլետարիատի լայն մասսաներում գտավ միության կամպանիան, փայլուն կերպով հաստատում է Կոմինտերնի V կոնգրեսի նշանառած գծի ճշտությունը: Արդի պայմաններում դասակարգային կռվի զարգացումն ուժեղացնում է կոմմունիստական ազդեցությունից դուրս գտնված բանվորական մասսաների հետաքրքրությունը դեպի այն կազմակերպությունները, վորոնք անձնուրաց ու հետևողականորեն պայքարում են արհմիությունների միջազգային միության վերականգնման համար: Այս պատճառով Կոմինտերնի Գործկոմի ընդլայնված պլենումն անհրաժեշտ է համարում նորից ու նորից ընդ-ծել միության համար մղվող սիստեմատիկ, համառ կռվի անհրաժեշտությունը, վորովհետև միության համար մղվող կռիվը նշանակում է կռիվ մասսաների համար ընդդեմ բուրժուազիայի և նրա կամակատարների»:

Մեծ համակրանք ունեն դեպի այս լոզունգն անգլիական բանվորները: Ընդհանուր գործադուլից շատ առաջ կոմիտե յեր կազմակերպված ռուսական և անգլիական արհմիությունների (ՀԱՄԿԽ-ВЦСПС և անգլիական միությունների գլխավոր խորհրդի) ներկայացուցիչներից արհմիությունների միասնական Ինտերնացիոնալի համար պայքարելու համար: Գլխավոր Խորհուրդը չնայած այն բանին, վոր գտնվում եր Թոմասի և ընկ. ձեռքին, վորոնք հետո Անգլիայում դավաճանեցին ընդհանուր գործադուլին, բանվորական մասսաների ճնշման տակ հար-

[1]) Արհմիութենական բյուրոկրատիա—արհմիությունների պաշտոնատար անձինք, վոր մեծ մասամբ սոցիալ-համաձայնողականներ են:

կադրված էր համաձայնել այդպիսի կոմիտե կազմելուն։ Այդ ճընշմանը նպաստեց անգլիական արհշարժման հեղափոխական փոքրամասնության շարժումը, որ բոլոր կարևորագույն հարցերում գնում է կոմմունիստների յետևից։ 1926 թ. այդ փոքրամասնությունն իր շարքերում ուներ մեկ միլիոնից ավելի արհմիությունների կազմակերպված անդամ։ Արհմիության մեջ կատարած իր հմուտ աշխատանքով անգլիական փոքրիկ[1] կոմկուսակցությունը (6,000 անդամ) հարյուր հազարավոր բանվորների գրավեց արհմիությունների հեղափոխական փոքրամասնության կողմը։

1926 թ. մայիսի ընդհանուր գործադուլը յերևան բերեց Անգլիայի բանվորների չտեսնված ձգտումը դեպի միություն, դեպի միասին կռիվ կապիտալի դեմ, նրանց տոկունությունը և դիմացկունությունը։ Մեծ գործադուլը մի բան էլ ապացուցեց՝ Գլխավոր Խորհրդի աջ և այսպես կոչված «ձախ» առաջնորդների այդպիսի կռիվը ղեկավարելու լիակատար անընդունակությունը և չկամությունը։ Միլիոնավոր բանվորներ հերոսաբար պայքարում էին աշխատավարձի կրճատման և բանվորական օրի յերկարացման դեմ, որ սպառնում էր ածխահատներին, իսկ նրանց յետևից նաև Անգլիայի բոլոր պրոլետարներին։ Նրանք չէին էլ մտածում անձնատուր լինել։ Իսկ արհմիությունների առաջնորդները, Գլխավոր Խորհուրդը, խայտառակորեն դավաճանեցին ածխահատներին, նրանց իրենց բախտին ձգելով, պայթեցրին ընդհանուր գործադուլը, դավաճանեցին անգլիական ամբողջ բանվոր դասակարգին։ Միությունների ղեկավարները հակառակ մասսաների կամքի հանձնվեցին բուրժուազիայի վողորմածությանը և զայրույթին։ Տեսնելով որ պրոլետարիատը կարող է, ուզում է և հակադրված կը լինի կապիտալիստների կառավարության դեմ գնալ, որը զորաժողովել էր բուրժուական պետության բոլոր ուժերը բանվորների դեմ, նրանք իբրև բուրժուազիայի հավատարիմ դաշնակիցներ ու բարեկամներ, կատարեցին իրենց ստոր, բայց իրենց համար սովորական, դավաճանության գործը։ Միայն կոմմունիստական կուսակցությունը և հեղափոխական փոքրամասնության շարժման գործկոմը կողմնակից էյին մինչև վերջ մղվող ընդհանուր պայքարին, պաշտպանում էյին բանվորական մասսաների միասնական ֆրոնտը, անխնա մերկացնելով և խարազանելով արհմիությունների առաջնորդների դավաճանությունը։

Ընդհանուր գործադուլի դասերն Անգլիայում, ուր դեռ վերջերս բանվորական շարժումն ամենաաջերից, իր պահանջներում ամենաչափավորներից մեկն էր, լայն հիմք ստեղծեցին արհմիություններում

[1] Ածխահատների գործադուլի ընթացքում անգլիական կոմկուսն իր ճիշտ քաղաքականության շնորհիվ, կարողացավ իր անդամների թիվը հասցնել 12,000-ի։

կոմմունիստների հեղափոխական աշխատանքի համար, արհմիությունների նվաճման համար, նրանցում հեղափոխական փոքրամասնության շարժման աճման համար, արհշարժման միասնական ֆրոնտի համար։ «Գործադուլի ընթացքն ու յելքը,—ասում է ընկ. Ստալինը,—չէին կարող չը համոզել Անգլիայի բանվորական մասսաներին հին ղեկավարների անպետքության մեջ, հին առաջնորդների անպետքության մեջ»։ «Անգլիական բանվորներն ընդհանուր գործադուլի դժվարին մոմենտում չէյին կարող չը համոզվել, յերբ զանազան կուսակցությունների պլատֆորմներն ու ծրագիրները գործով ստուգվում էյին, թե միակ կուսակցությունը, վորը կարող էր պաշտպանել բանվոր դասակարգի շահերը մինչև վերջ համարձակ ու վճռականորեն, հանդիսանում է կոմմունիստների կուսակցությունը»։

«Առաջնորդների դավաճանությունը և բանվորական մասսայի կողմից արժեքների մեծ վերագնահատությունը,—ասում է միևնույն առիթով Կոմինտերնի Գործկոմը,—բազա յե ստեղծում Անգլիայի կոմմունիստական մասսայական կուսակցության զարգացման համար»։

ՋԱԽ ԹԵՔՈՒՄՆԵՐ ԱՐՀԵՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ, ՆՐԱՆՑ ԱՆՀԻՄՆ ԼԻՆԵԼԸ ՅԵՎ ՎՆԱՍԸ

Արհշարժման միասնական ֆրոնտի հարցի մասին Կոմինտերնը նույն այդ «ձախ» թեքման դեմ համառ կռիվ է մղում։ Այդ թեքումը կա ինչպես Արևմուտքի կոմկուսակցությունների մեջ, այնպես էլ Համ. ԿԿ մեջ (Նոր օպպոզիցիայի հայացքներն անգլիական անցքերի դասերի մասին և այլն)։ «Արհմիությունները,—դատում են այդ իբր թե «ձախերը»—սոցիալ-համաձայնողականների ձեռքում են։ Արհմիությունները պոկել համաձայնողականների ձեռքից մեզ չի հաջողվի, նրանք մեր դեմ կռվում են բոլոր յեղանակներով, հեռացնում են մեզ, թույլ չեն տալիս արտահայտվել։ Իսկ համաձայնողականների ձեռքում արհմիությունները չեն կարող օգուտ բերել բանվորին։ Այս պատճառով հարկավոր է քանդել այդ արհմիությունները, կոչ անել բոլոր հեղափոխական բանվորներին դուրս գալ նրանցից և ստեղծել իրենց սեփական հեղափոխական արհմիությունը կամ բանվոր դասակարգի այլ կազմակերպություն»։

Անգլիայում, արհմիությունների առաջնորդների կողմից ընդհանուր գործադուլը պայթեցնելուց հետո, հեղափոխականորեն տրամադրված բանվորների մեջ նույնպես սկսեց միտք ծագել արհմիություններից հեռանալու մասին։ Այնտեղ,—ինչպես ասում է ընկեր Բուխարինը,—բանվորների վորոշ մասը նույնպես սկսեց մոտավորապես այսպես դատել. «Մեր արհմիությունների առաջնորդները գործներս փչացրին, են, գրողը տանի նրանց. այդ փթած կազմակերպություն է, յեկեք հեռանանք և նորը կառուցենք»։ Նույնը սկսեցին ասել անգլիա-

կան արհմիությունների մասին, միայն ավելի քողարկված ձևով, նաև մեր կուսակցության մեջ վորոշ ընկերներ 1923—24 թվականի ոպպոզիցիոներներից և նոր ոպպոզիցիայից: «Արհմիություններից դուրս գալու այս իդեան,—ասում է ընկեր Բուխարինը,—ինչպիսի բարեհնչյուն ֆրազների տակ էլ վոր նա թագնվի, ինչքան էլ վոր նա հեղափոխականորեն հնչի, իրոք տվյալ ժամանակում ամենավտանգավոր իդեան է: Ամենավտանգավոր իդեան, վորը այժմ կարող է գոյություն ունենալ բանվոր դասակարգի ավելի կամ պակաս ձախ շրջաններում, այդ արհմիություններից դուրս գալու իդեան է: Մի ժամանակ Գերմանիայում սոցիալ-դեմոկրատիայի առաջնորդների և արհմիությունների գերմանական միության առաջնորդների դավաճանական վարմունքից հետո խիստ ուժեղ էր ռեակցիոն միություններից դուրս գալու ձգտումը, այն ժամանակ կազմակերպվեցին հեղափոխական փոքրիկ միություններ: Սակայն փորձը ցույց տվեց, վոր այդ գիծն ամբողջովին սխալ է, վոր անհրաժեշտ է դուրս չգալ արհմիություններից, բայց վոր անհրաժեշտ է խցկվել նրանց մեջ, խրվել նրանց մեջ, խորասուզվել նրանց մեջ, ակտիվ կերպով աշխատել նրանցում, միություններից հեռացնել այժմյան լիդերներին (առաջնորդներին), ապահովել այնտեղ մեր ազդեցությունը և վոչ թե արհմիությունը թողնել մենակ ռեֆորմիստական (բարենորոգչական) առաջնորդների ազդեցության տակ: Այս գիծը մենք պետք է պաշտպանենք ամբողջ ուժով, ամբողջ վճռականությամբ, ամբողջ պարզությամբ, ամբողջ վորոշակիությամբ»: Այս գիծը շարունակ պաշտպանում էր Վ. Ի. Լենինը Արևմուտքի «ձախ» կոմմունիստների դեմ մղած իր կռվում:

Այս գիծը հաստատուն կերպով անց է կացնում այժմ նաև Կոմինտերնը: Կոմինտերնի լենինյան այս գծի դեմ է դուրս գալիս նույն այդ նոր ոպպոզիցիան ընկեր Զինովևի գլխավորությամբ, յերբ նա ասում է, վոր մեր արհմիությունների ներկայացուցիչները պետք է հեռանան վերը հիշված անգլո-ռուսական կոմիտեյից: Այսպես են դատում. «Այնտեղ մեր ընկերների հետ միասին նստած են արհմիությունների անգլիական գլխավոր խորհրդի հենց այն ներկայացուցիչները, վորոնք դավաճանեցին ընդհանուր գործադուլին, դավաճանեցին հանքափորներին և նույնիսկ հրաժարվեցին ընդունել ԽՍՀՄ բանվորների դրամները: Նրանց հետ միասին մենք այլևս վոչինչ չունենք անելու: Հարկավոր է հեռանալ»: Այս տեսակ դատողություններին Կոմինտերնի Գործկոմը պատասխանում է, վոր ԽՍՀՄ արհմիությունները յերբեք էլ հույս չեն դրել այդ դավաճանների հետ ունենալիք հասարակ բանակցությունների վրա, վոր նրանք գնացել են այդտեղ Անգլիայի բան-

վորական մասսայի հետ կապ պահպանելու համար, այն բանի համար, վորպեսզի «ամրացնեն յեղբայրական կապը Մեծ Բրիտանիայի բանվոր դասակարգի և ԽՍՀՄ բանվոր դասակարգի միջև. վորպեսզի միջազգային արհշարժման միության վերականգնման ճանապարհը հարթեն, նման այն բանին, ինչպես ռուսական հեղափոխության զարգացման ամենադժվարին և հակահեղափոխական շրջաններում (օրինակ՝ 1917 թ. հուլիսին) բոլշևիկները խորհուրդներից դուրս չեյին գալիս, նույնիսկ այն ժամանակ, յերբ խորհուրդները զինաթափում եյին բանվորներին» (Բուխարին): Բոլշևիկները դուրս չեյին գալիս, կռվում եյին խորհուրդների ներսում, մերկացնում եյին մենշևիկներին ու եսերներին և նվաճեցին խորհուրդները, հաղթեցին: Հնարավոր է, վոր անգլիական արհմիությունների առաջնորդներն այժմ յետ կը դառնան, «իրենք կը ջանան խորտակել անգլո-ռուսական կոմիտեն կամ տիրել նրան նեղը գցելով», բայց այդ կը լինի նրանց նոր ինքնամերկացումը, այդ նրանց ընդհարման մեջ կը դնի մասսայի այն մասի հետ, վորը դեռ գնում է նրանց յետևից»: «Անգլո-ռուսական կոմիտեյի պայթեցումն անգլիական տրեդ-յունիոնների լիդերների (այսինքն անգլիական արհմիությունների առաջնորդների կողմից), ասում է Կոմինտերնի գործկոմը,—այնպիսի ցույց կը լիներ բանվորների դեմ, վոր նշանակալի չափով առաջ կը հրեր անգլիական բանվորական մասսաների հեղափոխականացման պրոցեսը»: Ընդհակառակը «դուրս գալու նախաձեռնությունը ԽՍՀՄ արհմիությունների կողմից, չնայած այն բանին, վոր գլխավոր խորհրդի կողմից ԽՍՀՄ բանվորների դրամն ստանալուց հրաժարվելը հարված էր նշանակում միջազգային միության գործին և անգլո-ռուսական կոմիտեյին, խիստ «հերոսական», բայց քաղաքականապես մանկական և աննպատակահարմար մի ժեստ կը լիներ»: Կոմինտերնի Գործկոմի այս մատնանշումն ընկեր Բուխարինն այսպես է պարզաբանում. «Մեր հերոսական ժեստը, վոր մենք կանեյինք՝ «ախ, դուք մեր դրամը չընդունեցիք, ախ, դուք դավաճաններ, այս պատճառով էլ մենք չենք կարող ձեզ հետ մեկ սեղանի շուրջը նստել»—իրոք անգլիական բանվոր դասակարգի մասսան կընդուներ արհմիություններից դուրս գալու գծով: Մենք բոլորս համերաշխ ենք այն բանում, վոր արհմիություններից դուրս գալը մեզ համար կորուստ կը նշանակեր, վորովհետև Թոմասները, Կլայնսները և Մակդոնալդները քնում են և յերազում տեսնում, թե ինչպես մեզ դուրս քշեն արհմիություններից, վորովհետև մենք—հեռագրասյուն ենք ճանապարհի մեջ տեղը, վորովհետև մենք փուշ ենք նրանց աչքում: Այս հիմար գիծ է: Յեվ ահա նրա համար, վորպեսզի նրանց դրությունը չը հեշտացնենք, նրա համար, վորպեսզի այդ հիմար գիծը չբռնենք, մենք ասում ենք.—մեր

մեջ կատաղի ձիեր կան, վորոնք սիրում են սլանալ փողոցով, ամբոխներով դոփյուն հանելով, բայց մենք հիմարություն չենք անի, վորը բոլորովին չի սազում անգլիական բանվորական շարժմանը»։

Այսպես Կոմինտերնը, մասսաների նվաճման շահերի տեսակետից «ձախ» թեքումների դեմ կռվելով, արհշարժման մեջ միասնական ֆրոնտի տակտիկան է անցկացնում։

ՄԱՍՍԱՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ ՊԱՐԼԱՄԵՆՏՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ

Բանվորական մասսաների, նույնպես և գյուղացական մասսաների այդ նույն նվաճմանն է ծառայում կոմմունիստական կուսակցությունների աշխատանքը բուրժուական յերկիրների պարլամենտներում։ Այստեղ էլ Արևմուտքի, հատկապես Գերմանիայի կոմկուսակցությունների «ձախ» կոմմունիստները, ինչպես մի ժամանակ մեր ոտզովիստները ցարական Պետական Դումայի վերաբերմամբ, հանդես եյին գալիս բուրժուական պալամենտում աշխատելու դեմ։ Վ. Ի. Լենինը և Կոմինտերնի կոնգրեսներում և մամուլում կռվում եր այդ «ձախ» կոմմունիստների դեմ, ինչպես վոր հնում ոտզովիստների դեմ։ Նա այդպիսի «ձախությունը» անվանում եր կոմմունիզմի մանկական հիվանդություն։ Կոմինտերնն իր ամբողջությամբ և բոլոր կոմկուսակցությունները այս հարցում, ինչպես և մյուսներում, գնում եյին և գնում են լենինյան ուղիով, ժխտելով «ձախերի» տեսակետը։ Նրանք աշխատում են պարլամենտներում, ինչպես և արհմիություններում։ Բայց դարձյալ այնպես չեն աշխատում, ինչպես այդ անում են սոցիալիստ-համաձայնողականները։ Նրանք գնում են պարլամենտները վոչ թե նրա համար, վորպեսզի բուրժուազիայի հետ համաձայնության գան, այլ նրա համար, վորպեսզի մերկացնեն այն խարդավանքները, վոր այդ բուրժուազիան սարքում է պարլամենտի ոգնությամբ և վորը նա ուղղում է բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների դեմ։ Կոմմունիստներն այնտեղ դիտում են ու մերկացնում սոցիալիստ-համաձայնողականների նաև այն առևտուրը բուրժուազիայի հետ, այն դավաճանությունը, վոր որ որի վրա անում են այդ պարոնները։ Նրանց քաղաքականությանը կոմմունիստները հակադրում են աշխատավորների շահերի հետևողական պաշտպանությունը։ Բուրժուական յերկիրների բանվորական և գյուղացական մասսաները դեռ հավատում են այն բանին, վոր կապիտալիզմի ժամանակ պալամենտների միջոցով կարելի յե հասնել իրենց դրության լուրջ բարվոքումներին։ Կոմմունիստները մերկացնելով բուրժուազիային և սոցիալիստ-համաձայնողականներին և պաշտպանելով աշխատավորների շահերը, դրա հետ միասին պարլամենտական աշխատանքում ոգտվում են ամեն մի դեպքից, վոր պարզաբանեն, թե միայն պրոլետարական հեղափոխության մեջ է բոլոր աշխատավորների

փրկությունը։ Այսպես այդտեղ էլ նրանք մասսաները պոկում են 2-րդ Ինտերնացիոնալի համաձայնողական կուսակցությունների ազդեցությունից։ Ահա մի որինակ.—հաշվառելով բանվորների դժգոհությունը Սիրիայի և Մարոկկոյի ճնշված ժողովրդների դեմ մղած պատերազմից, ֆրանսիական կոմկուսակցությունը կամպանիա սկսեց նրա դեմ։ Պարլամենտում կոմմունիստական պատգամավորները պատերազմի համար դրամ բաց թողնելու դեմ քվեարկեցին, պահանջում եյին ֆրանսիական զորքերը հանել Մարոկկոյից և Սիրիայից, կոչ եյին անում յեղբայրանալ ռիֆֆերի հետ (Մարոկկոյի ապստամբած ժողովուրդը), ցույցեր ու գործադուլներ անել պատերազմի դեմ։ Նրանց ճառերը տպվում եյին բոլոր թերթերում, տարածվում ամբողջ յերկրում։ Կոմմունիստական կուսակցությունն ագիտացիա մղեց բողոքի ընդհանուր գործադուլի ոգտին և մեծ հաջողության հասավ։ 800,000 բանվոր գործադուլ արեց ամբողջ Ֆրանսիայում։ Կուսակցության յետևից գնացին բանվորների և այլ աշխատավորների ամենալայն մասսաները։ Նրանք համոզվեցին, վոր մեն-միայն նա յե վճռականորեն դուրս գալիս կապիտալի դեմ։ Կուսակցության ուժը և նրա ազդեցությունը մասսաների վրա աճեցին։

Այս որինակից յերևում է, վոր պարլամենտական գործունեությունը կարելի յե կապել մասսաների մեջ կատարվող հեղափոխական աշխատանքի հետ, պաշտպանելով նրանց կենսական շահերը։

Բայց Սաքսոնիայի բանվորական կառավարության փորձն ասում է, վոր սրա հետ միասին հարկավոր է զգուշանալ և աջ թեքումից։ Չը պետք է մոռանալ, վոր կոմմունիստների համար պարլամենտում աշխատելը մասսաներին իրենց կողմը գրավելու միջոց է միայն։ Չպետք է կարծել, վոր իբր թե կարելի յե վորևէ բանի հասնել մեն-միայն պարլամենտի աշխատանքով։

ԼԵՆԻՆՅԱՆ ԳԾԻՑ ԱՋ ՅԵՎ ՁԱԽ ԹԵՔՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՄՂԱԾ ԿՌԻՎԸ — ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՂԱԾ ԿՌՎԻ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆ Է

Այս հարցում էլ, ինչպես և ընդհանրապես միասնական ֆրոնտի տաքտիկան անցկացնելու ժամանակ և Կոմինտերնի ամբողջ աշխատանքում, լենինյան գծից աջ և ձախ թեքումներն սպառնում են կուսակցությանը պոկել բանվորական մասսաներից։

Կոմինտերնն ստիպված է շարունակ կռվել այդ թեքումների դեմ, վորպեսզի բանվոր դասակարգի մեծամասնությունն [illegible] իր կողմը գրավի։ ՀամԿԿ (բ) բազմամյա փորձը և մյուս յերկիրների կոմկուսակցությունների այժմ արդեն հարուստ փորձը մատնանշում են այդ ուղիղ ճանապարհը։

Կոմինտերնն ոգտագործում է այդ փորձը և վճռականորեն պայքարում կոմկուսակցությունների աջ և

ձախ թեքումների դեմ լենինյան գծից։ Ընդսմին հարկավոր է գլխավոր ուշադրությունը շարունակ դարձնել այն թեքման հաղթահարման վրա, վոր ավելի ուժեղ է կուսակցության մեջ և վտանգավոր նրա համար։ Միայն այս դեպքում կոմինտերնի մասսաների համար մղած կռիվը հաջողություն կունենա։

Հարց. Ինչո՞ւմն է միասնական ֆրոնտի տակտիկան և այն ինչո՞ւ յէ հարկավոր։

3. Կոմինտերնի անելիքները գյուղացության վրա ազդեցություն ձեռք բերելու համար մղվող կռվում

ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՈՒ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Միջազգային հեղափոխության բախտի համար ահագին նշանակություն ունի կոմինտերնի կողմից բոլշևիկների փորձի հաջող օգտագործումը Յեվրոպայում և Արևելքում պրոլետարական հեղափոխությունը գյուղացիական շարժման հետ կապելու համար։

Գյուղացիությունը կազմում է յերկրագնդի բնակչության մեծ մասը։ Բանվոր դասակարգը պետք է խլի գյուղացիության մեծամասնությունը բուրժուազիայից, իր յետևից տանի նրան, այլապես պրոլետարական հեղափոխության հաջողությունը կասկածելի յէ։

Այստեղ վոչ մի անհնար բան չկա, վորովհետև բոլոր յերկրներում գյուղացիության մեծամասնությունը ճզմված է սակավահողությամբ և ծանր տուրքերով, ճորտացած է կալվածատերերից, բուրժուազիայի պարտքի տակ ընկած։ Շատ յերկրներում աշխատավոր գյուղացիությունը պայքարում է խոշոր կալվածատերերի դեմ, պահանջում է հողաբաժանություն, կալվածատիրական հողի վարձավճարի նվազեցում։ Գյուղացիներն ուզում են տուրքերի և իրենց հողերի գրավագրերի տոկոսների ցածացում, հողեր, վոր գրավ են դրված բանկերում խոշոր բուրժուազիայի մոտ։

Արևելքում սրան ավելանում է իմպերիալիստների, ոտարերկրյա հարստահարողների—ֆրանսիական, անգլիական և ուրիշ կապիտալիստների—ճնշման դեմ մղած կռիվը։

Կոմինտերնի կուսակցություններն ամենուրեք պաշտպանում են գյուղացների նման պահանջները։ Միաժամանակ նրանք պարզաբանում են գյուղացիներին, վոր բուրժուական կարգի ժամանակ հողաբաժանությունը, տուրքերի ու վճարումների ցածացումը գյուղացիներին չեն փրկի կապիտալիստների ավերումից ու ճորտացումից։ Կոմկուսակցություններն առաջ են քաշում ավելի վճռական, հեղափոխական պահանջներ՝ ձրիաբար խլել հողը կալվածատերերից և հատկացնել

գյուղացիներին, վերացնել տուրքերը և վոչնչացնել փոխառությունների ու վարձակալության վճարումները։

Ի հարկե, կոմունիստներն ընդգծում են, վոր գյուղացիության լիակատար բավարարումն անհնար է, մինչև վոր իշխանությունը չը գրավեն բանվորները և կոչ են անում աշխատավոր գյուղացիությանը պաշտպանել պրոլետարական հեղափոխությունը։

Կոմինտերնը Արևմուտքում և Արևելքում պաշտպանելով գյուղացիների պահանջներն ընդդեմ կապիտալիստների ու կալվածատերերի, ձգտում է գյուղացիությունը տանել իր հեղափոխական լոզունգների յետևից։

Այդպիսով նա ապահովում է պրոլետարական հեղափոխության կապը գյուղացիական ապստամբությունների հետ ընդդեմ կալվածատերերի և իմպերիալիստական բուրժուազիայի։

ԼԵՆԻՆԸ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ԴԵՊԻ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԶԱՆԱԶԱՆ ՇԵՐՏԵՐԸ

Սակայն յերբեք գյուղացիության բոլոր շերտերին չի կարելի միատեսակ հեշտությամբ դեպի հեղափոխության ուղին գրավել։ Ինչպես ընկ. Լենինը Կոմինտերնի II կոնգրեսում մատնանշում եր, կոմկուսակցությունները պետք է գյուղացիության ներսում տարբերեն հինգ տարբեր խմբակ։

Նրանցից առաջին յերկուսը գյուղատնտեսական բանվորներն են ու կիսաբանվորները (կիսապրոլետարները), այսինքն մի փոքրիկ պատառ հող ունեցող գյուղացիները, վորը բավական չե ապրուստի համար, և նրանք ստիպված են բատրակ վարձվել։ Դրանք—արդյունաբերական բանվորների հաստատուն նեցուկն են գյուղում, հուսալի դաշնակից կապիտալի դեմ մղվող կռվում։ Նրանց կարելի յե և պետք է գրավել պրոլետարական հեղափոխության կողմը։ Սրա համար անհրաժեշտ է, վոր գյուղում կառուցվեն դասակարգային կազմակերպություններ՝ բատրակների, գյուղատնտեսական բանվորների միություններ։

Յերրորդ խմբակը—մանր գյուղացիներն են, վորոնք հազիվ հազ կերակրում են իրենց, աշխատելով սեփական կամ արենդով վերցրած հողի վրա։ Մանր գյուղացիները շահագրգռված են պրոլետարիատի հաղթությամբ։ Նրանք գյուղի մյուս շերտերից ավելի են ճորտացած, բուրժուազիայի ու կալվածատերերի պարտքի տակ ընկած։ Ճիշտ է, բատրակների ու կիսաբատրակների համեմատությամբ նրանք ազատ առևտրի ու մասնավոր սեփականության կողմը կը թեքվեն։ Բայց պրոլետարական հեղափոխության վճռական մոմենտում նրանք կարող են հանդես գալ պրոլետարիատի հետ միասին։

Բատրակները, կիսաբատրակները և մանր գյուղացիները, այսինքն գյուղական չքավորները կապիտալիստական յերկրներում գյուղացության մեծամասնությունն են կազմում։ Այդ մեծամասնությունը կոմկուսակցությունների ճիշտ քաղաքականության ժամանակ բանվորական հեղափոխության կողմը կանցնի։

Բանվոր դասակարգի յետևից չեն գնա, այլ բուրժուազիայի կողմը կանցնեն խոշոր գյուղացիները, գյուղական կապիտալիստները։ Նրանք վարձու աշխատանքով բավական խոշոր տնտեսություն են վարում։ Նրանց դեմ կռիվը անխուսափելի յե, ինչպես իշխանության գրավման, այնպես ել պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ։

ՄԻՋԱԿԻ «ՉԵԶՈՔԱՑՈՒՄԸ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԼՈԶՈՒՆԳ—ՄԻՆՉԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՎՈՒՄԸ

Բայց դեռ կա գյուղացիների հինգերորդ բազմաթիվ խմբակը—միջին գյուղացությունը,—վոր ավելի լավ ե ապրում, յերբեմն ավելցուկներ կուտակում և հաճախ բատրակներ վարձում։ Միջակ գյուղացությունը մեծ ուժ ե—նրա ձեռքում ե գյուղատնտեսական արտադրության նշանակալի մասը. նա մեծ կշիռ ունի գյուղում։ Նա շատ չե շահագրգռված կապիտալիզմի պահպանումով, վորովհետև գլխավորապես անձնական աշխատանքով ե ապրում և վոչ թե վարձու աշխատանքով։ Բայց պրոլետարական հեղափոխության յետևից ել նա չի գնա, մինչև վոր իր աչքերով բանվոր դասակարգի իշխանությունից ոգուտ չտեսնի։

Կոմկուսակցություններն իրենց քաղաքականությամբ պետք ե և կարող են այն բանին հասնել, վոր միջին գյուղացին հեղափոխությանը թշնամաբար չվերաբերվի, վճռական րոպեյում կապիտալիստներին չպաշտպանի։ Ուրիշ խոսքով կոմմունիստներն ըստ հնարավորին պետք ե ապահովեն միջակի բարեկամական չեզոքությունը[1]) իրենց վերաբերմամբ մինչև այն ժամանակ, յերբ կամրանա Խորհրդային իշխանությունը։ Իսկ արդեն այն ժամանակ կարելի կլինի միջին գյուղացությանը գործնականում ապացուցել սոցիալիզմի ոգուտները և նրան պրոլետարիատի հաստատուն դաշնակիցը դարձնել։

Այս մենք տեսնում ենք Համ. ԿԿ (բ) որինակից, վորի փորձը դարձյալ ոգտագործում են Կոմինտերնի և Արևմուտքի ու Արևելքի բոլոր կոմկուսակցությունները։ Մեր կուսակցությունն իշխանությունը գրավելով, միջին գյուղացության չեզոքացման լոզունգից նրա հետ

1) Չեզոքություն (նեյտրալիտետ)—պատերազմին չմասնակցելը, յերկու կռվող կողմերին ոգնելուց հրաժարվելը. բարեկամական չեզոքություն—պատերազմին չմասնակցելը և մի կողմին համակրելը, կողմնակի կերպով պաշտպանելը։

հաստատուն միության քաղաքականությանն անցավ (հիշենք 12 և 8 գլուխները)։

Սխալ ե ասել, ինչպես այդ փորձեց հաստատել ընկ. Զինովյևը, վոր իբր թե միջակի չեզոքացման լոզունգը բոլորովին ընդհանուր ե Կոմինտերնի բոլոր կուսակցությունների համար և ընդմիշտ պետքական։ Միջակի չեզոքացման լոզունգը պետքական ե միայն այն կոմկուսակցությունների համար, վորոնք գնում են դեպի իշխանություն։ Պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ կոմմունիստների խնդիրն ե՝ ձգտել հաստատուն միության միջակի հետ։

ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄԵՆՈՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Կոմմունիստների համար անհրաժեշտ ե ճիշտ վերաբերմունք սահմանել դեպի գյուղացական շարժումը և գյուղացության զանազան շերտերը։

Բայց այս բավական չե, վորպեսզի գյուղացիների մեծամասնությունն իրենց կողմը գրավեն։ Հարկավոր ե նաև կոմմունիստների ամբողջ աշխատանքը մոտեցնել գյուղացական մասսային որ որի վրա, ցույց տալ, վոր բանվոր դասակարգը պայքարում ե այդ մասսային ոգտակար պահանջների համար։ Հարկավոր ե քաղաքականության ամեն մի հարցում ապացուցել գյուղացուն—չունևորին և միջակին, վոր նրա ուղին նույնն ե պրոլետարի հետ, կոմմունիստական կուսակցության հետ։

Այժմ գյուղացության շահերն ամենից ավելի շոշափում են հետևյալ հարցերը։ Առաջին՝ բարձր տուրքերը, վորովհետև անհրաժեշտ ե վճարել կապիտալիստներին այն դրամները, վոր նրանցից փոխ են առել բուրժուական պետությունները 1914—1918 թ. թ. պատերազմը վարելու համար։ Ֆրանսիայում, օրինակ, 1915 թ. մինչև 1924 թ. տուրքերի ծանրությունն աճել ե յերկու յերրորդականով։ Յերկրորդ՝ կապիտալիստների միությունների—տրեստների և սինդիկատների—կողմից արդյունաբերական առարկաների գների բարձրացումը։ Յերրորդ՝ նոր պատերազմների մշտական սպառնալիքը, պատերազմներ, վոր նշանակում են ամբողջ մարզերի ավերում և միլիոնավոր գյուղացիների ըսպանությունը։ Այս յերեք հարցերի ու նրանց նմանների վրա յե, վոր կոմկուսակցությունները պետք ե կենտրոնացնեն իրենց ուշադրությունը։ Մամուլում, բերանացի ագիտացիայի միջոցով և պառլամենտում կոմմունիստները պետք ե պայքարեն բարձր տուրքերի դեմ, պահանջեն արդյունաբերական արդյունքների գների ցածացում և ամեն կերպ ընդդիմանան նոր պատերազմների հնարավորությանը, վորպեսզի նըվաճեն գյուղացության վստահությունը։

ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԼՈԶՈՒՆԳԸ ՅԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այն յերկիրներում, ուր գյուղացիությունը բնակչության նշանակալի մասն է կազմում (օրինակ՝ Ֆրանսիայում կամ Բուլղարիայում,) կոմմունիստական կուսակցությունները հեղափոխական շարժման վերելքի մոմենտում բանվորա-գյուղացիական կառավարության լոզունգն են առաջադրում։ Այս լոզունգը գյուղացիական բնակչության նշանակալի մասսա ունեցող յերկրի համար նույնպիսի նշանակություն ունի, ինչպես վոր բանվորական կառավարության լոզունգը, ասենք, Անգլիայի համար։ Կոմմունիստների մասնակցությամբ բանվորա-գյուղացիական կառավարության ստեղծումը, բանվորական և գյուղացիական հեղափոխական շարժման բարենպաստ պայմաններում, պետք է այն հետևանքներին հասցնի, վորոնց մասին մենք արդեն խոսեցինք բանվորական կառավարության առիթով, այսինքն զինված կռվի պրոլետարիատի դիկտատուրայի համար։ Կոմմունիստների գլխավորությամբ այդ կռիվը բանվորների հետ միասին կը մղեն նաև չունևոր գյուղացիները։

Բանվորա-գյուղացիական կառավարության լոզունգը պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող կռվի լոզունգն է, վոր տված է գյուղացիական մասսային հասկանալի բառերով։

ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈԼՇԵՎԻԿԱՑՈՒՄԸ

Կոմկուսակցությունները Կոմինտերնի ղեկավարությամբ բոլշևիկյան փորձ են ձեռք բերում, բոլշևիկանում են։ Նրանք բոլշևիկյան ձևով են կառուցում իրենց կազմակերպությունները, անցկացնում ճկուն տակտիկա այն կռվում, վոր մղվում է բանվորական մասսաների և գյուղացիական մասսայի հետ միություն ունենալու համար։ Բանի գնում է, այնքան կոմկուսակցություններն ավելի ամուր են անցկացնում բոլշևիկյան գիծը ձախ և աջ թեքումների դեմ մղվող կռվում։ Բայց չի կարելի կարծել, վոր արդեն հասել է կոմկուսակցությունների այս բոլշևիկացման վերջը։

Պրոլետարական հեղափոխությունն առայժմ դանդաղ է աճում։ Համաձայնողականությունը դեռ լրիվին ջախջախված չէ։ Ոպպորտյունիզմը վորոշ տեղերում ապրում է և մյուս յերկիրների կոմկուսակցությունների շարքերում դեռ շատ ավելի մեծ չափերով, քան մեր կուսակցության շարքերում, մեր օպպոզիցիոն խմբավորումներում։ Բուրժուական յերկիրներում կոմմունիստների համար պայմանները շատ բարդ ու դժվար են։ Շատ տոկունություն, ամրություն ու համառություն է հարկավոր հեղափոխական աշխատանքում։

Այսպիսի պայմաններում թեքումներից խուսափել անկարելի չէ, և թեքումները շարունակում են ծագել կոմկուսակցությունների մեջ։

Հիշեցնենք, վոր 1926 թ. ԿԻԳԿ պլենումում ֆրանսիական աջերը և իտալական «ձախերը» իրար ձեռք մեկնեցին ձեռնարկությունների բջիջների, կուսակցության բոլշևիկյան կազմակերպության հիմունքներից մեկի, դեմ մղած կռվում։

Կոմինտերնը և նրա գործկոմը յեռանդուն կռիվ են մղում աջ և ձախ թեքումների դեմ։ Նա խոսքով ու գործով չի դադարում մատնանշել, վոր լենինյան գծի հաստատուն իրագործումը պահանջում է Կոմինտերնի բոլոր կուսակցություններից յեռանդագին ուշադրություն դարձնել և ուսումնասիրել Համ. ԿԿ (բ) և մյուս առաջավոր կոմկուսակցությունների փորձը։ Միայն այս ճանապարհով կարելի յե ամենուրեք, ամբողջ աշխարհում մասսայական պրոլետարական հեղափոխական շարժում ստեղծել Մարքսի ու Լենինի իդեաների դրոշի տակ։ Սրանում են կոմկուսակցությունների բոլշևիկացման նպատակը և իմաստը։

Հարց. Կոմինտերնն ինչու յե պաշտպանում գյուղացիների պահանջները հողի, տուրքերի և արենդի մասին, և ինքն ինչ է առաջարկում գյուղացիներին այդ հարցերում։

ԿՏՈՐՆԵՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

I. Միասնական ֆրոնտի տակտիկան—մասսաների համար մղվող կռվի ուղի

Միասնական ֆրոնտի տակտիկան վոչ այլ ինչ է, բայց յեթե մի առաջարկ, վոր կոմմունիստները միատեղ կռիվ մղեն մյուս կուսակցությունների կամ ուրիշ խմբակների պատկանող բոլոր բանվորների և բոլոր անկուսակցական բանվորների հետ բանվոր դասակարգի տարրական (ամենահասարակ) կենսական շահերի պաշտպանության համար ընդդեմ բուրժուազիայի։ Ամեն մի յելույթ ամենորյա ամենաչընչին պահանջի համար հանդիսանում է հեղափոխական լուսավորության և հեղափոխական դաստիարակության աղբյուր, վորովհետև այդ ճակատամարտի փորձը կը համոզի աշխատավորներին հեղափոխության անխուսափելիության և կոմմունիզմի նշանակության մեջ...։

Ընդ վորում, սակայն, կոմմունիստները վորոշ պայմաններում չեն կարող հրաժարվել թշնամական բանվորական կուսակցությունների առաջնորդների հետ բանակցելուց։ Բայց մասսաները պետք է շարունակ իրազեկ պահվեն այդ բանակցությունների ընթացքին։ Այնուամենայնիվ առաջնորդների հետ բանակցելու ժամանակ կոմմունիստական կուսակցության և նրա ագիտացիայի ինքնու-

րույնությունը չի կարող սահմանափակման յենթարկվել։

Ինքնին հասկանալի յե, վոր միասնական ֆրոնտի տակտիկան զանազան յերկրներում պետք ե զանազան ձևերով կիրառվի, համապատասխան կոնկրետ պայմաններին։ Բայց այն դեպքերում, յերբ կարևորագույն կապիտալիստական յերկրներում օբյեկտիվ պայմաններն արդեն հասունացել են սոցիալիստական հեղաշրջման համար և յերբ սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները, ղեկավարվելով հակահեղափոխական առաջնորդների կողմից, գիտակցաբար ձգտում են բանվոր դասակարգի պառակտմանը,—այդ դեպքերում միասնական ֆրոնտի տակտիկան վճռական նշանակություն կունենա մի ամբողջ եպոխայի (յերկար ժամանակաշրջանի) համար։

(Կոմինտերնի IV կոնգրեսի բանաձևից)

2. Բանվորական մասսաների նվաճումը արհմիությունների միջոցով յեվ «ձախ» թեքումի վնասը

... Յեթե կոմմունիստական կուսակցությունները ցանկանում են իրոք մասսայական ուժ դառնալ, ընդունակ առաջ մղելու հեղափոխությունը, նրանք պետք ե կապվեն արհմիությունների հետ և հենվեն նրանց վրա։

Հաշվի չառնել դրության այս առանձնահատկությունը Արևմուտքում, այդ նշանակում ե—անկասկածելիորեն կործանել կոմմունիստական շարժման գործը։

Այնտեղ, Արևմուտքում այժմ դեռևս կան առանձին «կոմմունիստներ», վորոնք չեն ուզում հասկանալ այս առանձնահատկությունը և վորոնք շարունակում են զբաղվել հակապրոլետարական և հակահեղափոխական «դուրս արհմիություններից» լոզունգով։ Հարկավոր ե ասել, վոր վոչ վոք չի կարող այնպես վնասել կոմմունիստական շարժմանն Արևմուտքում, ինչպես այդ և դրանց նման «կոմմունիստները»։ Այդ մարդիկ մտածում են դրսից «գրոհ տալ» արհմիությունների վրա, համարելով նրանց թշնամու բանակ։ Նրանք չեն հասկանում, վոր այսպիսի քաղաքականության ժամանակ բանվորները նրանց կը գնահատեն հենց իբրև թշնամիների։ Նրանք չեն հասկանում, վոր վատ են, թե լավ արհմիությունները, բայց մասսայական բանվորն այնուամենայնիվ նրանց համարում ե իր ամրոցները, վոր նրան օգնում են պահպանել աշխատավարձը, աշխատաժամը և այլն։ Նրանք չեն հասկանում, վոր այդպիսի քաղաքականությունը չի հեշտացնում, այլ խափանում ե կոմմունիստների թափանցումը բանվոր դասակարգի միլիոնավոր մասսաների մեջ։

«Դուք գրոհ եք տալիս իմ ամրոցի վրա,—կարող ե ասել այդպիսի «կոմմունիստներին» միջակ մասսայական բանվորը,—դուք ուզում եք խորտակել այն գործը, վոր յես ստեղծել եմ տասնամյակներով, ապացուցելով ինձ, վոր կոմմունիզմն ավելի լավ ե տրեդ-յունիոնիզմից (համաձայնողական արհմիություններից)։ Չգիտեմ, գուցե դուք արդարացի յեք ձեր թեորիական հաշիվներում կոմմունիզմի մասին,—իմ, հասարակ բանվորիս ինչ բանն ե գլուխ հանել ձեր թեորիաներից,—բայց յես մի բան գիտեմ, վոր ունեմ իմ արհմիութենական ամրոցները, նրանք ինձ կռիվ եյին տանում, նրանք պաշտպանում եյին ինձ—լավ թե վատ—կապիտալիստների հարձակումներից և ամեն վոք, ով մտածում ե խորտակել այդ ամրոցները, նա խորտակում ե իմ սեփական բանվորական գործը։ Դադարեցեք գրոհ տալ իմ ամրոցների վրա, մտեք արհմիությունները, աշխատեցեք այնտեղ մի հինգ տարի, գուցե և ավելի շատ, օգնեցեք, վոր լավացնենք ու ամրացնենք այն, իսկ յես կը տեսնեմ, թե ինչպիսի տղերք եք դուք, և յեթե դուք իրոք հարմար տղերք դուրս յեկաք, իհարկե յես չեմ հրաժարվի ձեզ պաշտպանելուց» և այլն։

Այսպես, կամ մոտավորապես այսպես ե դիմավորում այժմյան միջակ, մասսայական բանվորը հակապրոֆեսիոնալիստներին (արհմիություններում աշխատելու «ձախ» հակառակորդներին)։

Ով չի հասկացել Յեվրոպայի միջակ բանվորի հոգեբանության այս առանձնահատկությունը, նա վոչինչ չի հասկանա մեր կոմմունիստական կուսակցությունների դրությունից տվյալ մոմենտում։

Ինչումն ե սոցիալ-դեմոկրատիայի ուժն Արևմուտքում։

Նրանում, վոր նա հենվում ե արհմիությունների վրա։

Ինչումն ե մեր կոմմունիստական կուսակցությունների թուլությունն Արևմուտքում։

Նրանում, վոր նրանք դեռ չեն կապվել, իսկ այդ կոմմունիստական կուսակցությունների վորոշ տարրերը չեն ուզում կապվել, արհմիությունների հետ։

Այս պատճառով տվյալ մոմենտում Արևմուտքի կոմմունիստական կուսակցությունների հիմնական խնդիրն այն ե, վորպեսզի զարգացնեն ու մինչև վերջ հասցնեն արհշարժման միության կամպանիան, բոլոր կոմմունիստները մտնեն արհմիությունները, այնտեղ սիստեմատիկ (մշտական ու պլանաչափ), համբերատար աշխատանք կատարեն բանվոր դասակարգի համախմբման գործում ընդդեմ կապիտալի և այդպիսով հասնեն այն բանին, վորպեսզի կոմմունիստական կուսակցությունները կարողանան հենվել արհմիությունների վրա։

Այս է արհշարժման միության համար մղած մեր կամպանիայի իմաստը։

Այս է Կոմինտերնի ընդլայնած պլենումի վճիռների իմաստն Արևմուտքի կոմմունիստական կուսակցությունների հերթական խընդիրների մասին տվյալ մոմենտում։

(Ստալին, Լենինիզմի հարցերը, էջ 218—219)։

3. Կոմինտերնը պայքարում է գյուղացության վրա ազդեցություն ձեռք բերելու համար

Պատմության ընթացիկ շրջանը կատարյալ իրավունքով կարելի յէ վորոշել իբրև պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև տեղի ունեցող կատաղի կռվի շրջան վոչ միայն պրոլետարիատի հետամնաց շերտերի համար, այլև գյուղացության լայն շերտերի համար։ Այն կոմկուսակցությունները, վորոնք չեն հասկանում դասակարգային ուժերի այս հիմնական դասավորությունը, հետևաբար, չեն նկատում այն ահագին վտանգը, վոր սպառնում է պրոլետարական շարժմանն այն դեպքում, յեթե բուրժուազիային հաջողվի ավելի ամուր կապել իրեն հետ գյուղացության լայն շերտերը։

Բոլորովին անմիտ է խոսել կոմկուսակցությունների բայլշևիկացման մասին, առանց իսկական աշխատանք կատարելու գյուղացական մասսաների գրավման համար։ Վոչ-բայլշևիկյան ու նույնիսկ հակաբայլշևիկյան թեքումները, վոր գոյություն ունեն կոմկուսակցությունների մեջ, ամենից առաջ արտահայտվում են ագրարային (հողային) — գյուղացական պրոբլեմի և նրա հետ կապված գաղութային հարցերի ամբողջ կարևորությունը չհասկանալու մեջ։

Անհրաժեշտ է հասկանալ, վոր տվյալ մոմենտում բանն ամենևին միայն—ու նույնիսկ գլխավորապես—նրանում չէ, վոր պրոպագանդ անենք մեր ձեռք առնելիք միջոցների մասին իշխանության գրավումից հետո, այլ նրանում, վոր ակտիվ ու իսկական կռիվ մղենք գյուղացության վրա ազդեցություն ձեռք բերելու համար ակտուալ (կենսական, հերթական) տնտեսական ու քաղաքական լոզունգների օգնությամբ, վորոնց հողի վրա հարկավոր է գյուղացությանը քաշել կապիտալի դեմ մղվող կռվի մեջ։

Առաջին հերթին գյուղում հենվելով գյուղատնտեսական պրոլետարիատի, գյուղացության չունևոր ու մանր շերտերի վրա, կոմկուսակցությունները պետք է արդեն այժմ յեռանդուն աշխատանք կատարեն նաև միջին գյուղացության չեզոքացման համար։ Այն հանգամանքը, վոր միջին գյուղացությունը կարող է հաստատուն կերպով պրոլետարիատի կողմն անցնել միայն պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդումից հետո, վոչ մի կերպ և վոչ մի պայմանում չի կարող հիմք ծառայել ներկայումս այդ աշխատանքը զանցառելու համար։ Նրա դժվարությունը մեզ թելադրում է վոչ թե պասսիվություն, այլ ընդհակառակը մեր ուժերի բացառիկ լարում։

Միայն ներկայիս այսպիսի քաղաքականությամբ կոմկուսակցությունները կարող են նախապատրաստել նաև պրոլետարիատի հաղթանակը հեղափոխության մեջ և այն կապը բանվոր դասակարգի ու գյուղատնտեսական մանր արտադրողի միջև, վորի հողի վրա յէլ հնարավոր է միայն հաջող կերպով առաջ շարժվել դեպի սոցիալիզմ պրոլետարական դիկտատուրայի պայմաններում։

(Կոմինտերնի Գործկոմի ընդլայնած պլենումը (1925 թ. ապրիլ)։ Ստենոգրաֆիական (սղագրական) հաշվետվություն, էջ 543—544)։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Պրավդա» թերթում մի շաբաթվա ընթացքում հետևեցեք միջազգային հեղափոխական շարժմանը վերաբերող հեռագրներին ու հոդվածներին և պարապմունքի ժամանակ զեկուցում տվեք. «Ի՞նչ նոր բան կա միջազգային բանվորական շարժման մեջ շաբաթվա ընթացքում» թեմայով։

Զեկուցումը պետք է պատասխանի հետևյալ հարցերին. 1) ի՞նչ փաստեր են խոսում կապիտալի հարձակման մասին բանվոր դասակարգի վրա. 2) ի՞նչպես եյին պաշտպանվում բանվորներն այդ հարձակումից. 3) ի՞նչպես եյին գործում համաձայնողականները, և ի՞նչ յեղավ նրանց կուսակցություններում. 4) ի՞նչպես եյին աշխատում կոմմունիստները և ի՞նչի հասան նրանք միասնական ֆրոնտ հաստատելու գործում, արհմիությունների աշխատանքում, գյուղացության հետ միությունն ամրապնդելու ասպարիզում. 5) Արդյոք յերևան յեկա՞ն կոմմունիստների մեջ թեքումներ լենինյան գծից, և ի՞նչպես ընթացավ նրանց դեմ մղվող պայքարը։

Հ Ա Ր Ց Ե Ր

1 Ինչո՞ւ յէ հարկավոր միջազգային դիսցիպլինը, և ի՞նչպես է կռվում Կոմինտերնի Գործկոմը նրա համար։

2. Ի՞նչպիսի թեքումներ գիտեք դուք լենինյան գծից միասնական ֆրոնտի, արհմիությունների և պարլամենտի մեջ աշխատելու հարցի վերաբերմամբ։

3. Ինչումն է այս թեքումներից ամեն մեկի, հատկապես «ձախի» վտանգը և ի՞նչպես պետք է կռվել նրանց դեմ։

4. Ի՞նչ խմբակներ ե զանազանում Կոմինտերնը գյուղացության մեջ, և ինչպես պետք ե մոտենան մյուս յերկրների կոմկուսակցությունները նրանցից ամեն մեկին։

5. Ինչու չի կարելի միջակի «չեզոքացման» լոզունգը միշտ և Կոմինտերնի բոլոր կուսակցությունների համար պետքական համարել։

6. Ինչումն ե բանվորա-գյուղացական կառավարության լոզունգի եյությունը և նպատակը։

ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԽՍՀՄ յեվ համաշխարհային հեղափոխության հեռանկարները

ԻՆՉԻ ՄԱՍԻՆ Ե ԶՐՈՒՅՑԸ

Տասնչորսերորդ զրույցից մենք տեսանք, թե ինչպիսի խնդիրներ են դրված մեր յեղբայրական կոմկուսակցությունների առաջ մասսաների ղեկավարության գործում, համաշխարհային պրոլետարական հեղափոխության պայքարի գործում։ Ներկա զրույցում մենք պետք ե քննենք, թե այժմ ինչպես ե համաշխարհային կապիտալիզմի դրությունը, ինչքան հաստատուն ե այն ժամանակավոր կայունացումը, վորին հասել ե կապիտալիզմը։ Մենք կը տեսնենք, վոր կապիտալիստական տնտեսության քայքայումն անխուսափելի յե, նրան ջլատող այն մշտական թշնամության շնորհիվ, վոր գոյություն ունի առանձին կապիտալիստական յերկրների միջև, այդ պատճառով ել անխուսափելի յե համաշխարհային պրոլետարական հեղափոխությունը։ Մենք կը քննենք նույնպես, թե համաշխարհային պրոլետարական հեղափոխության համար ինչպիսի կարևոր դեր են խաղում սոցիալիզմի շինարարության հաջողությունները մեզ մոտ, ԽՍՀՄ։

Սրա համար մենք կապացուցենք. 1) վոր կապիտալիզմի կայունացումը (ստաբիլիզացիան) վերջին տարիների ընթացքում ժամանակավոր ե և անհաստատ. 2) վոր ԽՍՀՄ տնտեսական աճումը, սոցիալիզմի հաջողությունները մեր յերկրում ուժեղացնում են հեղափոխական շարժումն ամբողջ աշխարհում և թուլացնում կապիտալիզմը, 3) վոր մենակ մեր յերկրում ել դեպի սոցիալիզմ ավելի հեռուն գնալը հնարավոր ե, վոր կուսակցությունը կարող ե հաղթահարել դեպի սոցիալիզմ տանող ճանապարհի ն ե ր ք ի ն դժվարությունները։

1. Կապիտալիզմի մասնակի կայունացումը (ստաբիլիզացիան)

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

№ 16 դիագր. (եջ 357) մենք տեսնում ենք, վոր Յեվրոպայում գլխավոր կապիտալիստական յերկրների արտադրությունը բոլորովին մոտենում ե մինչպատերազմյան մակարդակին (բացառություն չի կազմում նաև պարտված Գերմանիան), իսկ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նա-

հանգներում նա անցել է այդ մակարդակը։ Բայց այս չի նշանակում, որ կապիտալիստական տնտեսության կացությունը հաստատուն է և անսասան։

Ընդհակառակը, մենք մի շարք նշաններ ունենք նրա կայունացման անհաստատ ու վոչ լրիվ, մասնակի լինելու մասին։

1925 թ. Անգլիայում արդյունաբերության զարգացումը վորոշ մասերում յետ գնաց.— 1924 թ. համեմատությամբ չուգունի արտադրությունն իջել է 15%, պողպատինը— 13%, ածուխինը 10%։ Անգլիան առաջվա նման չի կարող մրցել ուրիշ յերկրների հետ և լայնորեն վաճառահանել իր ապրանքներն արտասահմանում։ Լճացումն անգլիական արդյունաբերության մեջ չի ընդհատվում։ Գործազրկությունը շարունակ շատ բարձր է (առ 1-ն սեպտեմբերի 1925 թ. ցուցակագրված գործազուրկները միայն 1,336,000 հոգի յեն), իսկ ընդհանուր գործադուլից և մանավանդ ածխահատների գործադուլի պարտությունից հետո գործազրկությունը հասավ 1,500,000։

Գերմանիայում, դարձյալ արտահանման բացակայության պատճառով, 1925/26 թ. արդյունաբերությունն ուժեղ կրիզիսի հասավ։ Գործազրկությունը 1925 թ. վերջին ահագին չափերի հասավ։ 2½ միլիոն է գործազուրկների թիվը և մեծ բարվոքում չի նախատեսնվում։ Աշխատավարձը մի քառորդով ցած է մինչպատերազմյանից։ 1926 թ. վերջերին սկսեց մի նոր տնտեսական կրիզիս Գերմանիայում։

Ֆրանսիայում դժբախտությունը գալիս է այլ կողմից։ Ֆրանսիական դրամը (ֆրանկը) մեկ տարվա ընթացքում 30% ընկավ և 1925 թ. դեկտեմբերին արժեր մինչպատերազմյանի միայն մեկ հինգերորդը։ 1924/25 թ. բյուջեյի ավելի քան կեսը (54% ավելի) գնաց տոկոսների վճարման և ներքին պարտքերի շիջուցման վրա։ Իսկ ընկնող դրամը վերջիվերջո տնտեսական քայքայման կը հասցնի։ 1926 թ. կեսից ֆրանկը կայունացավ, սակայն տարվա վերջին սկսեց տնտեսական կրիզիս, և գործազրկությունն օր օրի վրա մեծանում է։

Լեհաստանում ծանր կրիզիս է՝ համարյա լրիվին կանգ է առել արդյունաբերությունը, 400,000 գործազուրկ կա, անտեսությունն անելանելի դրության մեջ է, և լայն ժողովրդական մասսաները դժգոհ են։

Պարզ է, վոր յեվրոպական տնտեսության լավացումը չի կարող յերկար ու հաստատուն լինել։

ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՆԳ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԱԿ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ

Այս եվ ավելի հասկանալի կը դառնա, յեթե պարզենք, թե ինչպիսի գնով եր ձեռք բերված հետպատերազմյան լավացումը և ինչպիսի միջոցներով է պաշտպանում բուրժուազիան իր տնտեսությունը։

Զվետք է աչքաթող անել, վոր յեվրոպական տնտեսությունը մենակ իր ուժերով չբարձրացավ, այս նպատակի համար Ամերիկան Յեվրոպային դրամ տվեց։ Յեվրոպական պետությունները պարտք են Միացյալ Նահանգներին 26 միլլիարդ ռուբլի և այդ պարտքերի համար ամեն տարի վճարում են ահագին գումարներ։ Վորպեսզի այդ դրամները հավաքի, բուրժուազիան մեծացնում է տուրքերի ծանրությունը, տուրքեր, վոր գլխավորապես ընկնում են աշխատավոր մասսաների վրա։ Նրանց դրությունը վատանում է, աճում վրդովմունքը բուրժուազիայի իշխանության դեմ։

Կապիտալիստները (որինակ անգլիականները), վորպեսզի արտադրությունը լայնացնեն, աշխատում են ցածացնել գները, այլապես նրանց ապրանքներն արտասահմանում չեն վաճառվում։ Իսկ կապիտալիստներ ձգտում են գները ցածացնել բանվոր դասակարգի հաշվին։ Սրա պայծառ որինակն է Անգլիայի ածխարդյունաբերությունը։ Անգլիական ածուխն առաջվա պես լավ չի վաճառվում արտասահմանում։ Ուրիշ յերկիրներ ածուխն ավելի եժան են մշակում և վաճառում։ Յեվ անգլիական ածխարդյունաբերողները պահանջում են ածխահատների աշխատավարձի ցածացում, աշխատաժամի յերկարացում, մշակման չափի (выработка) բարձրացում։ Հետևանքը— 1,200,000 ածխահատի գործադուլը, իսկ նրանց հետևեց— 3 և կես միլլիոնից ավելի մյուս բանվորներինը, — աշխատանքի կատաղի կռիվը կապիտալի դեմ։

Կապիտալիստական տնտեսության մասնակի կայունացումը (ստաբիլիզացիան) տեղի յե ունենում բանվոր դասակարգի հաշվին։ Այս պատճառով նա անխուսափելիորեն նշանակում է պրոլետարիատի կռվի աճում բուրժուազիայի դեմ։ Ահա առաջին հակասությունը, վոր չի թույլատրում կապիտալիզմին կայունանալ։

Կապիտալիստական տնտեսության վերականգման մյուս խոչընդոտը և բուրժուազիայի իշխանության ըսպառնալիքը— դա հաղթող յերկիրների ճնշումն է 1914—1918 թ. թ. պատերազմում պարտված յերկիրների վրա։

Ահա մի որինակ.—

Գերմանիան պետք է դաշնակիցներին — Անգլիային, Ֆրանսիային, Ամերիկային և ուրիշներին — վճարի 65 միլլիարդ ռուբլի։ Վորպեսզի այդ դրամը ձեռք բերվի, հարկավոր է ապրանքներ արտածել ուրիշ յերկիրներ, կանխիկ վոսկի ձեռք բերել։ Հարկավոր է արտածել եժան գնով, այլապես չի կարելի մրցակիցներին հարվածել։ Յեվ գերմանական կապիտալիստները փակում են ձեռնարկությունների մեծամասնությունը, թողնում են միայն լավագույնները, ուր արտադրությունն

ավելի եժան ե նստում, այնտեղ են փոխադրում ամբողջ արտադրությունը։ Աճում ե գործազրկությունը, իսկ կապիտալիստները, ոգտվելով դրանից, ուզում են ցածացնել աշխատավարձը և ել ավելի եժան արտադրել։ Դրա փոխարեն ուրիշ յերկիրներում գերմանական մրցության շնորհիվ արտադրությունը կրճատվում ե, տնտեսությունն ընկնում։ Իսկ հենց Գերմանիայում աճում ե բանվոր դասակարգի դժգոհությունը, մոտենում ե հեղափոխությունը։

Պատերազմից հետո կապիտալիզմին ամրանալ չի թողնում նաև այն կռիվը, վոր տեղի ունի հաղթողների միջև առաջնության համար.—Անգլիայի ու Ամերիկայի միջև ամբողջ աշխարհում ունենալիք առաջնության համար, Ֆրանսիայի ու Անգլիայի միջև Յեվրոպայում ունենալիք գլխավորության համար, Ամերիկայի և Յապոնիայի միջև ասիական յերկիրների վրա (Չինաստան և ուրիշները) ունենալիք իշխանության համար և այլն։

Այսպես, որինակ, Ամերիկան և Անգլիան ամենուրեք կռվում են նավթաբեր հողերի համար, վորոնց պակասն զգում ե Ամերիկան։ Ով նավթ կտանա, նրա ծովային նավատորմն ել, ռազմական և առևտրական, ուժեղ կը լինի, վորովհետև նավերում այժմ նավթ են վառում։ Միայն նավթահանքեր ունենալով կարելի յե զարգացնել ավտոմոբիլային տրանսպորտը և գործարանների մի նշանակալի մասը։ Նավթի համար մղվող կռիվը մեծ չափով վճռում ե, թե «ով ում»։ Ամերիկան ուժեղացել ե և ուզում ե Անգլիայից խլել նրա արտասահմանյան տիրապետությունները, ուր արտադրվում են կաուչուկ և այլ հում նյութեր, վոր պակասում են Միացյալ Նահանգներին։ Միացյալ Նահանգներն արդեն Անգլիայի վորոշ գաղութներ (որինակ՝ Կանադան) կիսով չափ իրենց կողմն են քաշել, իրենց յենթարկել նրանց տնտեսությունը, գնել այդ գաղութների արդյունաբերությունը։ Անգլիան պաշտպանվում ե, չի ուզում վերջնականապես յերկրորդական յերկիր դառնալ ամեն բանում կախված Ամերիկայից։ 1918 թ. հաղթանակած դաշնակիցները թշնամիներ են դառնում։

Հաղթողների միջև ընդհանրապես տեղի ունեցող կռվի կողքին հատուկ նշանակություն ե ձեռք բերում աղքատացած և պարտքի տակ ընկած ամբողջ Յեվրոպայի կռիվն Ամերիկայի դեմ։ Յեվրոպայի ստրկացած յերկիրների աշխատավոր մասսաների վրա կրկնակի ծանրություն ե բարդված՝ նրանցից, բացի «իրենց» կապիտալի սովորական շահույթից, կողոպտչական տոկոսներ են քամում նաև «ամերիկյան քեռիների» համար։ Այս պատճառով յեվրոպական տնտեսության ամերիկյան վերահսկողության յենթարկվելը տանում ե, առաջին, դեպի այն

վոր յեվրոպական կապիտալը կռվում ե ամերիկյանի դեմ, յերկրորդ, դեպի այն, վոր բանվոր դասակարգը բոլոր աշխատավորների պաշտպանությամբ կռվում ե «իր» և ամերիկյան կապիտալի կրկնակի շահագործման դեմ։ Վերջապես, կապիտալիզմը խախտված ե—և ամենաուժեղ կերպով—Խորհրդային Միության գոյության ու աճման փաստով։

Յերկրագնդի մի վեցերորդ մասը կապիտալի իշխանությունից դուրս ե յեկել։ ԽՍՀՄ ահագին տարածությունները դադարել են համաշխարհային բուրժուազիայի շուկան և հեշտ ավարը լինելուց։ Հենց այս պատճառով ել անկարելի յե կատաղի վճարումներ քամել Գերմանիայից.—միակ տեղը, ուր նա կարող ե վաճառահանել իր ապրանքը—մեր յերկիրը, կորած ե գերմանական, ինչպես և ամեն մի այլ կապիտալի համար։

ԽՍՀՄ ուժի և ամրության աճումը հեղափոխականացնում ե Արևմուտքի ու Արևելքի բանվորական մասսաները։

ԽՍՀՄ ժողովուրդների որինակը, վորոնք հեղափոխության միջոցով ազատագրվեցին ազգային ճնշումից, խրախուսում ե մյուս յերկիրներին, վորոնք ճնշված են խոշոր կապիտալիստական պետություններից (գաղութներ ու կիսագաղութներ)։

Այդ յերկիրների ժողովրդները ջանում են դեն ձգել ճնշման և շահագործման լուծը։ Նրանք վոտքի յեն կանգնում, վոր կռվեն իրենց ազատության ու անկախության համար։ Այս նշանակում ե, վոր համաշխարհային կապիտալին վտանգն ե սպառնում՝ զրկվել հում նյութից (որինակ՝ հնդկական և յեգիպտական բամբակից), եժան բանվորական ուժից և վաճառահանության շուկաներից։ Այս—թվով հինգերորդ ուժն ե, վոր խախտում ե բուրժուական կարգի կայունությունը։

ԱՐԵՎԵԼՔԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ, ԻԲՐԵՎ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԸՆԹԱՑԻԿ ՇՐՋԱՆԻ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Վերջին ժամանակներս այն արագ աճում ե, հատկապես Արևելքում՝ Թյուրքիայում, Հնդկաստանում, Չինաստանում։

Այդ յերկիրներում ծնվում ե իրենց արդյունաբերությունը, աճում են ֆաբրիկաները և գործարանները, աճում ե պրոլետարիատը։ Բանվոր դասակարգն արագ կազմակերպվում ե, հեղափոխական խոշոր ուժ դառնում։ Արթնանում ե բազմամիլիոն գյուղացիությունը, վոր ճզմված ե ծանր տուրքերից և կալվածատիրական ճորտությունից։

Նույնիսկ տեղական (չինական, հնդկական, յեգիպտական) բուրժուազիան նույնպես փրկվել ե ուզում «ոտար» կապիտալիստներից։

Նրա համար ավելի հարմար է, որ «իր տանը» ինքը կատարի բոլոր գործերը. ճիշտ է, այնտեղ, ուր պրոլետարիատը խոշոր ուժ է դարձել, տեղական բուրժուազիայի մի մասը բանվորների ահից համաձայնության է գալիս օտարերկրյա կապիտալի հետ։ Այդպիսի երկրներում բանվոր դասակարգը և գյուղացությունն ստիպված են հաղթահարել օտար և իրենց բուրժուազիայի համաձայնողական մասի միացյալ զորությունը։ Բայց այնուամենայնիվ, ընդհանուր առմամբ, ամբողջ Արևելքում աճում է համաժողովրդական հզոր ազատագրական շարժումը հափշտակիչների և բռնազավթողների դեմ, իմպերիալիզմի դեմ։

Վերջին տարիներում հեռագիրն անընդհատ լուր է բերում գործադուլների, ցույցերի և զինված ընդհարումների մասին Հնդկաստանում, Յեգիպտոսում, Չինաստանում։

«Հնդկաստանը և Չինաստանը,—գրում էր Վ. Ի. Լենինը իր վերջին հոդվածներից մեկում,—այդ 700 միլիոնից ավելի մարդ է նշանակում։ Այդ, ավելացրած շրջակա և նրանց լիովին նման ասիական երկրները,—երկրագնդի բնակչության կեսից ավելին է։ Այնտեղ մոտենում է, անզուսպ ու շարունակ ավելի արագ մոտենում է 1905 թ., այն էական ու ահագին զանազանությամբ, որ 1905 թ. Ռուսաստանում հեղափոխությունը դեռ կարող էր ընթանալ (գոնե սկզբում) մեկուսացած, այսինքն միանգամից հեղափոխության մեջ չքաշելով մյուս երկրները։ Իսկ Հնդկաստանում և Չինաստանում աճող հեղափոխությունն արդեն այժմ մտնում է հեղափոխական կռվի, հեղափոխական շարժման, միջազգային հեղափոխության մեջ»։ (Վ. Ի. Լենին, Աշխ. ժող. I հրատ., հատոր XVIII, մասն 2, էջ 74)։

Յեզրակացությունը պարզ է՝ Արևելքի ազգային-ազատագրական պայքարն այն գլխավոր ուժերից մեկն է, որոնք խախտում են աշխարհի վրա կապիտալի ունեցած իշխանության կայունությունը, նա ներկայիս կապիտալիզմի ամենախոշոր հակասություններից մեկն է։

ԱՐԵՎԵԼՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԴԵՄ ՄՂԱԾ ՊԱՅՔԱՐԻ ՍՐՎԵԼԸ ՅԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ ԴԱՌՆԱԼԸ

Այդ պայքարն արդեն հասցրել է մի շարք ազատագրական պատերազմների։ Մի քանի տարի առաջ Թուրքիան պատերազմում էր Հունաստանի դեմ, իսկ իրոք նաև անգլիական իմպերիալիզմի դեմ (անգլիացիները պաշտպանում էին Հունաստանին զենքով, դրամով, վերջապես, իրենց նավատորմն ու զորքն ուղարկելով)։

Ապա Ֆրանսիական բռնության դեմ յելան Սիրիայի և Մարոկկոյի

ժողովուրդները։ Մի տարուց ավելի նրանք կռվեցին մինչև ատամները տեխնիկայի վերջին խոսքով զինված ֆրանսիացիների դեմ։

Արթնացել է Չինաստանը։ Հարավում, Կանտոն քաղաքի մարզում, արդեն ստեղծվել է հեղափոխական-դեմոկրատական կառավարություն։ Նրա գլուխ է անցած Գոմինդան հեղափոխական կուսակցությունը։

1926 թ. աշնանը Չինաստանի ազատագրական հեղափոխությունը տարավ մեծ հաղթանակներ և ամբողջ միջին Չինաստանն ազատվեց ռեակցիոն գեներալների լծից։ Նույն ժամանակներում Սումատրա և Յավա կղզիներում բանվորա-գյուղացիական ապստամբություններ պոռթկացին հոլանդական իմպերիալիզմի տիրապետության դեմ։ Կասկած չի կարող լինել, որ Արևելքի ժողովուրդների պայքարն իմպերիալիստների դեմ արդեն առաջ է բերել և ապագայում առաջ է բերելու դաժան ճակատամարտ մի բուռն ուժեղագույն կապիտալիստական երկրների ու երկրագնդի բնակչության մեծամասնության միջև։

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՍՏԱԲԻԼԻԶԱՑԻԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՈՒ ԱՆԿԱՅՈՒՆ ԲՆՈՒՅԹԸ

Այժմ մենք կարող ենք ըստ արժանվույն գնահատել կապիտալիզմի այժմյան ստաբիլիզացիան (կայունացումը)։

Այդ մասնակի ստաբիլիզացիան անկասկած է, բայց այդ—փթած ստաբիլիզացիա չէ։ Կապիտալիստական տնտեսությունը կարող է ամրանալ միայն ժողովրդական լայն մասսաների, առաջին հերթին—պրոլետարիատի հաշվին։ Այստեղից է բխում բանվոր դասակարգի կապիտալիզմի դեմ մղված կռվի ուժեղացումը։

Բոլոր կապիտալիստական երկրներն անկարող են միաժամանակ աճել։ Շուկաները, հում նյութի պաշարները և այն տեղերը, ուր կարելի է շահույթով զետեղել կուտակած կապիտալը, բոլորի համար հերիք չեն։ Ինչպես մինչև պատերազմն էր, այժմ էլ համաշխարհային կապիտալիստական պետությունների տեղը նեղ է, ինչպես սարդերինը բանկայի մեջ։ Կատաղի կռիվ է տեղի ունենում հաղթողների ու հաղթվածների, Գերմանիայի ու դաշնակիցների միջև։ Իրենք հաղթողները կռիվ են մղում իրար դեմ։ Բոլոր իմպերիալիստների դեմ են յելնում գաղութները և մյուս ճնշված երկրները, առաջին հերթին—Արևելքը։ ԽՍՀՄ—մի պալար է համաշխարհային կապիտալի մարմնում, հեղափոխության մշտական սպառնալիք, կապիտալիզմի անհաշտ թշնամիների ամրացրած բանակ։

Հարցը պարզ է՝ ինչքան էլ համաձայնողականները փող փչեն, խաբելով բանվորներին, թե «Յեվրոպան մի ամբողջ հարյուրամյակով

պատրաստ է նոր կյանքի», փաստերը համառորեն բոլորովին ուրիշ բան են ասում պրոլետարիատին:

Կապիտալիզմի ստաբիլիզացիան—փթած է: Հասկանալի չէ, չի կարելի թերագնահատել այն—այդ կլիներ «ձախ» յերեխայություն:

Բայց յերկարատև չէ այն: Կապիտալիզմը դատապարտված է և պրոլետարական հեղափոխությունն անխուսափելի:

ՆՈՐ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ

Նոր համաշխարհային պատերազմի սպառնալիքը դեռ նույնպես կախված է մարդկության գլխին:

Անգլիան չի ուզում Ամերիկային զիջել իր հզորությունը, հում նյութի և նավթի համաշխարհային պաշարները, գաղութների վրա ունեցած իր իշխանությունը:

Ֆրանսիան առանց կռվի չի զիջի Անգլիային յեվրոպական պետությունների վրա ունեցած իր ազդեցությունը:

Գերմանիան չի հրաժարվի այն մտքից, վոր պատերազմով յետ առնի այն հողերը և հարստությունները, վոր իմպերիալիստական պատերազմից հետո Ֆրանսիան, Անգլիան ու Լեհաստանը խլել են նրանից:

Անգլիան արդեն օգնեց ռիֆֆերին զենքով (գուցե և դրամով) Ֆրանսիայի դեմ, ինչպես Ֆրանսիան օգնեց Թուրքերին անգլիացիների դեմ:

Արդեն այժմ Ամերիկան Չինաստանում հաճախ դուրս է գալիս մյուս բոլոր պետությունների դեմ:

Յեվրոպայի հեղափոխության, Ասիայի ժողովրդների ազատագրության հանդեպ ունեցած վախն իմպերիալիստներին հարկադրում է առժամանակ համաձայնության գալ իրար հետ: Բայց միայն առժամանակ:

Պատերազմի նախապատրաստությունն ընթանում է ամբողջ թափով: Հաղթող յերկիրները, վորոնք, կարող էր թվալ, վոչ վոքից վախենալու պետք չունեն, զինվում են մինչև ատամները (տես 17 դիագր. եջ 359): Ֆրանսիան հրեշավոր արագությամբ կառուցում է աշխարհում չտեսնված օդային տորմիղ: Ամբողջ թափով նրան հասնել է ուզում Անգլիան:

Ամերիկան ծածուկ մթերում է ահագին չափերով չտեսնված ուժի թունավոր գազեր:

Բոլոր հաղթող յերկիրները մեծացնում են բանակները: Ծովային ռազմական նավատորմն ամենուրեք աճում է:

Յապոնիան և Անգլիան այն կառուցում են Ամերիկայի դեմ:



Դիագրամ № 16. **Ինչպես եր կարեվորագույն յերկիրների տնտեսության դրությունը մինչեվ պատերազմը, պատերազմից հետո յեվ ներկայումս:** *(Ըստ Պետպլանի նյութերի)*

Միացյալ Նահանգները շարունակ նոր նավեր են ջուր իջեցնում Անգլիայի ու Ամերիկայի դեմ:

Յերկրորդ համաշխարհային պատերազմը չտեսնըված նոր սարսափներով ծեծում է Յեվրոպայի, Ասիայի ու Ամերիկայի դուռը: Իսկ նրա յետևից, ինչպես ստվեր, ինչպես անխուսափելի հետևանք, գալիս են քաղաքացիական պատերազմը և պրոլետարական հեղափոխությունը:

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԴԵՄ ՄՂԱԾ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՌՎԻ ՍՐՈՒՄԸ (ԱՆԳԼԻԱՆ 1926 Թ.)

Պրոլետարական հեղափոխության ուժերն աճում են: Մենք մատնանշեցինք, վոր ամենուրեք ստաբիլիզացիայի ծանրությունը բարդվում է բանվոր դասակարգի և աշխատավոր մասսաների վրա: Այդ կատաղի կռիվ է առաջ բերում, վոր խախտում է կապիտալիզմի կայունացումը: Պրոլետարիատի ու բուրժուազիայի ընդհարումները լայնանում են և արդեն շարունակ ավելի խոշոր չափեր են ընդունում: Անգլիայի ընդհանուր գործադուլը դրա լավագույն օրինակն է: Մենք արդեն շատ անգամ ենք կանգ առել այդ գործադուլի վրա:

Վերականգնեցեք հիշողությունների մեջ պատկերը: Հինգ միլիոն գործադուլավոր. կանգ առած յերկաթուղիներ, տրամվայներ. ավտո-

մոբիլներ առանց շոֆերների. ամայացած շախտեր, ֆաբրիկաներ ու գործարաններ. հանգած կաթսաներ ու հնոցներ. անգործության մատնված նավահանգիստներ—ահա անգլիական տնտեսությունն այն օրերում: Երկիրը պաշարողական դրության մեջ. կառավարության արտակարգ կոմիսարներն անսահման լիազորություններով բոլոր շրջաններում. կամավորների կոչ վոստիկանության շարքերը. բանակի մարտական զորաժողով. բոլոր «ազատությունների» վերացում. կոմմունիստների և գործադուլավոր բանվորների ձերբակալում. ծեծ և բանտարկելու դատավճիռներ աջ ու ձախ—ահա կառավարության նախապատրաստությունը բանվորների դեմ վճռական կռիվ մղելու համար: Անսասան տոկունություն և կազմակերպություն—պրոլետարիատի կողմից. ցասում և զայրույթ կառավարության քաղաքականության դեմ. հարձակում շտրեյկբրեխերների վրա. ընդհարումներ վոստիկանության հետ ամբողջ յերկրում. Նույնիսկ համաձայնողական առաջնորդները կոչ են անում բանվորական մարտական խմբեր (դրուժինաներ) կազմակերպել. կոմյերիտմիության լոզունգը՝ «կռվեցեք սատանաների նման, վորպեսզի հաղթենք»,—մասսան վորդեգրում է, ահա ապացույցներ, վոր բանվորները պատրաստ եյին վճռական ճակատամարտի բռնվել:

Արհմիությունները հեղափոխական փոքրամասնության նախաձեռնությամբ կազմակերպում են գործողության կոմիտեներ, վորոնք, ինչպես ասում է Կոմինտերնի գործկոմը, «փաստապես աճում եյին, փոխվում ռայոնական խ ո ր հ ո ւ ր դ ն ե ր ի»: Արհմիությունների գլխավոր խորհուրդին կից կազմակերպվում են բաժիններ, նման Պետերբուրգի 1917 թ. խորհրդի բաժիններին փետրվարյան հեղափոխությունից հետո: Անգլիայի կոմմունիստական կուսակցությունն առաջ է քաշում «կորչի՛ ձեռնարկատերերին պաշտպանող Բոլդուինի կառավարությունը», լոզունգը, ինչպես բոլշեվիկները 1917 թվին առաջ քաշեցին «կորչե՛ն կապիտալիստ-մինիստրները» լոզունգը: Իսկ այդ լոզունգի կողքին Անգլիայի նույն այդ կոմկուսակցությունն առաջադրում է՝ «ամբողջ իշխանությունը տեղերում—գործողության կոմիտեներին» լոզունգը և «ամբողջ իշխանությունը գլխավոր խորհրդին» լոզունգը: Այդ լոզունգն Անգլիայի համար, նրա պայմաններում, նույնն եր, ինչ վոր մեր լոզունգն՝ «ամբողջ իշխանությունը խորհուրդներին» 1917 թվի այն շրջանում, յերբ խորհուրդները դեռ մենշևիկների ու եսերների ղեկավարության տակ եյին: Այն ժամանակ, 1917 թ., հուլիսյան օրերում, այս լոզունգը, վոր վորդեգրեցին բանվորական մասսաները, հանդիպեց խորհուրդների այն ժամանակվա առաջնորդների դիմադրությանը, դավաճանությանը և յերկչոտությանը: Բայց նա նվաճեց մասսաները, և յերկու-յերեք ամիս հետո խորհուրդներն արդեն բոլ-



Դիագրամմ № 17. Ինչպես են զինվում համաշխարհային պատերազմում հաղթողները: (Ըստ Պետպլանի նյութերի)

չևիկների ղեկավարության տակ եյին։ Անգլիայում «ամբողջ իշխանությունը գլխավոր խորհուրդին» լոզունգը հանդիպեց անգլիական մենշևիկների—արհմիությունների առաջնորդների, արհմիությունների գլխավոր խորհրդի անդամների դավաճանությանը և յերկչոտությանը։ Այս անգամ նրանք հաղթեցին, ինչպես հաղթեցին մենշևիկներն և եսերները 1917 թ. հուլիսին։ Թե յերբ կոմմունիստները կը հաղթեն արհմիությունների այժմյան առաջնորդներին, ճշգրիտ ասել չի կարելի։ Բայց պարզ ե, վոր 1926 թ. ընդհանուր գործադուլում, անգլիական ածխահատների համառ կռվում, վորին դավաճանեցին գլխավոր խորհուրդի առաջնորդները, Անգլիայի պրոլետարիատը «չեր կարող իր սեփական մեջքի վրա չփորձել, վոր դեպի նպատակ տանող ճանապարհի վրա հիմնական արգելքը հանդիսանում ե կապիտալիստների քաղաքական իշխանությունը». պարզ ե, վոր «անգլիական բանվորները չեն կարող այժմ չհասկանալ, վոր իշխանության հարցը՝ նրանց դժվար կռվում կազմակերպված կապիտալի դեմ՝ այժմ հանդիսանում ե հիմնական հարցը» (Ստալին)։ 1926 թ. փորձի հետևանքով Անգլիայի բանվորները չեն կարող չհասկանալ, վոր նրանք պետք ե փոխեն վոչ միայն արհմիությունների այժմյան անպետք առաջնորդներին, այլև անգլիական այժմյան սահմանադրությունը, «իբրև բուրժուազիայի զենքը, վոր ուղղված ե բանվորների դեմ, իրենց բանվորական սահմանադրությամբ, իբրև մի զենքով, վոր ուղղված ե բուրժուազիայի դեմ»։ Այս քաղաքական դասը, վոր անգլիական բանվորներն առան 1926 թ. մղած իրենց կռվից, վերջնական հաշվով նրանց կը բերի Կոմինտերնի դրոշի տակ «ամբողջ իշխանությունը խորհուրդներին» լոզունգով։ Տեղից շարժվեց, առաջին քայլերն ե անում դեպի պրոլետարական հեղափոխությունն այն յերկրի բանվոր դասակարգը, վոր հանդիսանում եր իմպերիալիզմի գլխավոր նեցուկներից մեկը։

1926 թ. անգլիական անցքերը ցույց են տալիս, վոր կապիտալիզմի այժմյան ստաբիլիզացիան չի փրկի բուրժուազիային պրոլետարական հեղափոխության աճումից։

Հարց. Ինչո՞ւ չի կարելի կայուն հաշվել կապիտալիզմի այժմյան ստաբիլիզացիան։

2. ԽՍՀՄ դերն արդի շրջանում

ԽՍՀՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄՆ ԱՄՐԱՑՆՈՒՄ Ե ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Արևմուտքի և Արևելքի բոլոր հեղափոխական շարժումների ամուր հենարանը ԽՍՀՄ ե։ Նրանցից ամեն մեկը պաշտպանություն ե վորոնում ու գտնում Խորհրդային Միության մեջ։ Ով չի հիշում անգլիական գործադուլին տված աջակցությունը,

ցույց տված համակրանքը և ոգնությունը մեր յերկրի աշխատավորների կողմից։ Ուրիշ վո՞ր յերկրում յերևան յեկան ավելի մեծ համակրանքներ դեպի Չինաստանի մղած կռիվը հափշտակիչ-իմպերիալիստների դեմ։ Այլ կերպ լինել չի կարող՝ սոցիալիստական հեղափոխության յերկիրը ինքը չի կարող գոյություն պահպանել առանց ամբողջ աշխարհի հեղափոխական շարժման պաշտպանության, հակառակ դեպքում նրան կը ճզմեն։ Չի կարող զարգանալ հեղափոխությունը մյուս յերկիրներում առանց կապվելու խորհրդային յերկրի պրոլետարիատի հետ, առանց ոգտագործելու նրա փորձը և ընկերական պաշտպանությունը։

Մեր կոմմունիստական կուսակցությունն ոգնում ե համաշխարհային հեղափոխական շարժման աճմանը չորս ճանապարհով. առաջին՝ պաշտպանելով յեղբայրական կոմկուսակցություններին ամբողջ աշխարհում. յերկրորդ՝ ամրացնելով Արևմուտքի արհեստակցական միությունների միությունը և բարեկամությունը ԽՍՀՄ բանվորների հետ. յերրորդ՝ սերտ կապվելով ճնշված յերկիրների ազատագրական շարժման հետ, վոր մեր դաշնակիցն ե համաշխարհային կապիտալի դեմ մղած կռվում. չորրորդ՝ սոցիալիզմ կառուցելով սեփական յերկրում։

Դեռ Վլադիմիր Իլյիչն եր ասում. «Այժմ մենք միջազգային հեղափոխության վրա գլխավոր ներգործությունն անում ենք մեր տնտեսական քաղաքականությամբ։ Բոլորը Ռուսաստանի Խորհրդային Հանրապետությանն են նայում, բոլոր աշխատավորներն աշխարհի բոլոր յերկիրներում, առանց վորևե բացառության և առանց վորևե չափազանցության...։ Յեթե վճռենք այս խնդիրը, այն ժամանակ մենք միջազգային մասշտաբով անյերկբա ու վճռականորեն շահել ենք։ Այս պատճառով տնտեսական շինարարության հարցերը մեզ համար բոլորովին բացառիկ նշանակություն են ստանում»։ (Վ. Ի. Լենին, Աշխ. ժող. հրատ. I. հ. XVIII, մ. I. եջ 282)։

Արևմուտքի բանվորները, գոնե նրանցից շատերը, դեռ համոզված են, վոր բանվոր դասակարգն առանց բուրժուազիայի չի կարող կառավարվել։ Սոցիալիզմի աճումը ԽՍՀՄ հակառակն ե ապացուցում։ Արևմուտքի բանվորները նրա որինակով համոզվում են, վոր պրոլետարիատն իշխանությունը վերցնելով, կարող ե վոչ միայն խորտակել հինը, այլև սոցիալիզմ կառուցել։

Այստեղից բանվորները քայլ առ քայլ այն յեզրակացության են գալիս, վոր կոմկուսակցությունը ճիշտ ուղի յե ցույց տալիս, վոր կապիտալիստական կարգի տանջանքներից ու թշվառություններից իսկական յելքը հեղափոխությունն ե, վոր հարկավոր ե կոմմունիստների յետևից գնալ։

Մեր տնտեսության ամրացումը խախտում է համաձայնողականների ազդեցությունը, բանվորական մասսայի նրանց վրա ունեցած վստահությունը, հրում է բանվորներին կոմունիստների կողմը, ամրացնում է կոմունիստական կուսակցությունների ազդեցությունը։ Նրանից է կախված կոմունիզմի հաղթությունն ամբողջ աշխարհում։

ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԱՄԱԿՐԱՆՔԸ ԴԵՊԻ ԽՍՀՄ ԱՃՈՒՄ Է

Մոսկվան, Խորհրդային Միությունն իրենց վրա են սևեռում աշխարհի բոլոր բանվորների հայացքները։ Նրանք տեսնում են, որ այդտեղ կարելի է կռվել սովորել կապիտալիզմի և ուժեղ ժողովուրդների կողմից թույլերին ճնշելու դեմ։

Այս յերևում է այն բանվորական պատգամավորություններից, վոր վերջին տարիների ընթացքում հաճախակի այցելում են մեզ։

Մեր տնտեսական հաջողությունները ցնցեցին Արևմուտքի բանվորների լայն շերտերը։ Նրանք բնազդով զգացին ճշմարտությունը, դադարեցին համաձայնողականների բամբասանքներին հավատալուց, վոր իբր թե ԽՍՀՄ մեջ միայն քայքայում ու բռնություն կա բանվոր դասակարգի նկատմամբ։ Վերջին տարիների ընթացքում Անգլիայում և Գերմանիայում, Ավստրիայում, Շվեցիայում գործարան գործարանի յետևից, արհմիություն արհմիության յետևից վորոշում եյին՝ դրամ հավաքել և պատգամավորներ ուղարկել ԽՍՀՄ,—թող ամեն ինչ իմանան, թող ճշմարտությունը պատմեն Խորհրդային իշխանության, խորհրդային շինարարության մասին։

Յեվ շարքային բանվորների տասնյակ պատգամավորություններ — վոչ թե կոմունիստներից, վոչ, այլ նրանցից, վորոնք դեռ ծուռ են նայում կոմունիզմին, վորոնք չեն հավատում հեղափոխությանը, ամեն կողմից գալիս եյին մեզ մոտ։ Ուշադիր, գործնականորեն, անվստահությամբ, մանրազնին քննում եյին, թե մեզ մոտ ինչ է արվում և ինչպես է արվում։ Պատգամավորությունները լսում եյին մեր տնտեսության ղեկավարների հաշվետվությունները, հաճախում եյին ֆաբրիկաները, գործարանները, իջնում եյին շախտերը, դիտում եյին մանկատները և մսուրները, ճաշարաններն ու հիվանդանոցները։

Տուն վերադառնալով, նրանք բոլոր ագիտատորներից ավելի լավ եյին բաց անում բանվորների աչքերը բոլշևիկների հաջողությունների, համաձայնողականների սուտ ու բամբասանքի նկատմամբ (տես սույն գրքույկի հավելվածներ ընթերցանության համար, § 3), ոգնում կոմունիզմի հաջողությանն իրենց յերկիրներում։

Իզուր չէ, վոր ԽՍՀՄ-ից յեկած պատգամավորներին, միևնույն սոցիալ-դեմոկրատներին, համաձայնողական թերթերը ծածկում եյին զրպարտությունների տարափով, հայհոյում իբրև բոլշևիկների։ Իզուր չէ, վոր գերմանական բանվորական պատգամավորության նախագահ ընկ. Ցրայբերգերին սոցիալ-դեմոկրատները կուսակցությունից հեռացրին։ Ճշմարտությունը ծակում է նրանց աչքը։ Իսկ բանվորական մասսայի համար պարզվում է, թե ով է արդարացի, ում յետևից պետք է գնալ։

Այժմ արդեն չի կարելի կանգնեցնել Արևմուտքի պրոլետարների բարեկամության ու համակրանքի աճումը դեպի ԽՍՀՄ։ Փաստերն ավելի ուժեղ են զրպարտությունից։ Նրանք անում են ու կանեն իրենց գործը։ Արդեն այժմ, ինչպես ցույց են տալիս բանվորական պատգամավորությունների այցելությունները մեր յերկիրը, արևմտյան բանվորների լավագույն մասը ԽՍՀՄ համարում է հարազատ պրոլետարական պետություն և նրան առնում իր պաշտպանության տակ։

Ամեն մի նոր պատգամավորություն վկայում է, վոր այդ մասն աճում է։ Ամեն մի նոր պատգամավորություն իր հերթին արագացնում է այդ աճումը։ Նա թուլացնում է համաշխարհային կապիտալիզմը և ուժեղացնում ԽՍՀՄ։ Բանվորներն սկսում են պատերազմել իրենց բուրժուազիայի դեմ և նրան չեն թողնում պատերազմել մեր դեմ։

Յեվ մեր պարտականությունն է, հաշիվ տալով մյուս յերկիրների պրոլետարներին հանձինս նրանց պատգամավորությունների, բաց անելով նրանց առաջ մուտքը դեպի այն բոլորը, ինչ արվում է մեր յերկրում, հնարավորություն տալ նրանց համոզվելու, «վոր մենք այն միակ բանվորական պետությունն ենք, վորի համար արժե կռվել Արևմուտքում և վորին արժե պաշտպանել իրենց կապիտալիզմի դեմ» (Ստալին)։

ՀԱՄ. Կ Կ (բ) ԳՅՈՒՂԱՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ՈՒՆԵՆԱԼԻՔ ՃԻՇՏ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ Է ԿԱԽՎԱԾ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՇՏԱԲՈՎ

ԽՍՀՄ հանդիսանում է միջազգային պրոլետարիատի պինդ ամրացրած դիրքը սոցիալիզմի համար մղվող նրա կռվում։ ԽՍՀՄ ամրությունը և նրանում սոցիալիզմի շինարարության հաջողությունը կախված է այն բանից, թե ինչքան ճիշտ կը լինեն պրոլետարիատի փոխհարաբերությունները գյուղացության հետ։

Իզուր չէ, վոր Վլադիմիր Իլյիչը դեռ նեպին անցնելու ժամանակ գրում էր. «10—20 տարի ճիշտ հարաբերություններ գյուղացության հետ և հաղթանակն ապահովված է համաշխարհային մասշտաբով (նույնիսկ պրոլետարական աճող հեղափոխությունների ձգձգման ժամանակ)»։ (Պարենտուրքին վերաբերող բրոշյուրի պլանը և կոնսպեկտը, «Большевик № 7, 1925 թ.)։ «10—20 տարի ճիշտ հա-

րաբերություններ գյուղացության հետ», այդ—կոոպերացիայի ու սոցիալիստական արդյունաբերության աճման, մասնավոր կապիտալի դուրս մղման, միջակի հետ հաստատուն միության 10—20 տարի չի նշանակում: Ուրիշ խոսքով, այդ—մեր յերկրում սոցիալիզմի աճման 10—20 տարի չի նշանակում:

Լենինից բերած բառերի իմաստը պարզ է՝ մեր կուսակցությունից է կախված ճիշտ հարաբերություններ հաստատել գյուղացության հետ: Այդ կապահովի սոցիալիզմի անսահմանափակ աճումը յերկրի ներսում, հաղթանակը մեր յերկրի կապիտալիզմի վրա:

Մեր գրավումները կոգնեն Արևմուտքի կոմմունիստներին, կը մղեն բանվորներին դեպի կոմմունիզմ, ամենուրեք կը բազմապատկեն հեղափոխության ուժերը: Համաշխարհային կոմմունիստական շարժումն արագ քայլերով առաջ կերթա, և պրոլետարիատի վերջնական հաղթանակը միջազգային կապիտալի վրա կապահովվի:

ՄԵՐ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՎՆԱՍԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԲԱԽՏԻ ՀԱՄԱՐ

Մենք արդեն ասել ենք, վոր օպպոզիցիան Համ.ԿԿ (բ.) XIV համագումարում լենինիզմից հեռացավ մեր յերկրում սոցիալիզմի կառուցման հարցում: Նա չեր հավատում, վոր չունևոր և միջին գյուղացությանը կոոպերացիայի միջոցով կարելի յե դեպի սոցիալիզմ տանել մենակ մեր յերկրի պրոլետարիատի ուժերով: Օպպոզիցիան պնդում եր, վոր մենք մենակ կը կործանվենք մեր տնտեսության աղքատության ու հետամնացության շնորհիվ: Այս նշանակում է, վոր նա պնդում եր, թե անհնար է նաև մեր յետևից տանել մյուս յերկիրները դեպի սոցիալիստական հեղափոխություն: Վորովհետև ինչպես կարելի յե ուրիշներին դեպի սոցիալիզմ տանել, սոցիալիստական հեղափոխության հիմքը լինել, յեթե չես կարող սոցիալիզմ կառուցել քո սեփական տանը:

Համ.ԿԿ(բ.) XIV համագումարը, ինչպես գիտենք, դատապարտեց «Թերահավատությունը դեպի սոցիալիզմի շինարարության գործը մեր յերկրում», կոչ արեց կռվել նրա դեմ: Յեվ վոչ միայն այն պատճառով, վոր թերահավատությունը մտքեր է սերմանում միջին գյուղացության հետ պառակտվելու մասին, ԽՍՀՄ մեջ սոցիալիզմի համեմատությամբ կապիտալիզմի ուժեղանալու մասին: Թերահավատությունը դեպի սոցիալիզմի շինարարությունը վնասակար է միջազգային կոմմունիստական շարժման համար: Նա վնասակար է համաշխարհային հեղափոխության գործի համար:

Ահա ինչ է գրում տվյալ հարցի մասին ընկ. Ստալինը.

«..Թերահավատությունը դեպի սոցիալիստական շինարարության հաղթանակը, այդ թերահավատության քարոզը տանում է մեր յերկրի, իբրև համաշխարհային հեղափոխության բազայի, վարկաբեկումը, իսկ մեր յերկրի վարկաբեկումը տանում է դեպի համաշխարհային հեղափոխական շարժման թուլացումը: Ինչով եյին խրտնացնում մեզանից բանվորներին պ. պ. սոցիալ-դեմոկրատները:—Այն քարոզով, թե «ռուսները բան դուրս չեն բերի»: Այժմ ինչով ենք հարվածում մենք սոցիալ-դեմոկրատներին, դեպի մեզ գրավելով բանվորական պատգամավորությունների ամբողջ շարքեր և հենց դրանով ամրացնելով կոմմունիզմի դիրքերն ամբողջ աշխարհում:—Մեր հաջողություններով սոցիալիզմի շինարարության ասպարեզում: Բայց միթե սրանից հետո պարզ չէ, վոր ով քարոզում է թերահավատություն դեպի մեր հաջողությունները սոցիալիզմի շինարարության ասպարեզում, նա կողմնակի կերպով օգնում է սոցիալ-դեմոկրատներին, նա թուլացնում է միջազգային հեղափոխական շարժման թափը, նա անխուսափելիորեն հեռանում է ինտերնացիոնալիզմից». («Լենինիզմի հարցերը», եջ 56):

Համաձայնողականներն այսպես էլ ամբողջ ուժով ջանում են բոլոր յերկրների բանվորների գլուխը մտցնել, վոր ռուս բոլշևիկները բան դուրս չեն բերի: Ով ասում է՝ «մենք մենակ չենք կարող սոցիալիզմ կառուցել», նա օգնում է նրանց, վոր բանվորական մասսան իրենց ձեռքում պահեն:

Բանվորները չեն կարող դեպի կոմմունիզմ ձգտել, յեթե իրենք առաջավոր ռուս կոմմունիստները հայտարարում են՝ մենք դժվարությունները հաղթահարել չենք կարող:

Մենք թուլամորթներ կը լինենք, յեթե յենթարկվենք այդպիսի մտքերի, ձեռքներս ծալենք և սկսենք ախ ու վաշ անել:

ԽՍՀՄ բոլշևիկները չեն մոռանա իրենց պարտականությունը մոտեցող միջազգային հեղափոխության առաջ: Նրանք անդադար կը շարունակեն թագուն, աննկատ, բայց կատաղի ու հաջող կռիվը կապիտալիզմի դեմ, կռիվ, վոր նեպի ժամանակ յեռում է մեզ մոտ:

Խորհրդային Միության կոմմունիստներն առաջվա նման ամենուրեք կը խախտեն կապիտալիզմի արմատները մեր յերկրում կատարվող սոցիալիստական շինարարությամբ, ճանապարհ ցույց կը տան բոլոր յերկրների պրոլետարներին, նրանց հաջող կռվի օրինակ

կը տան, իրենց փորձը կը հաղորդեն նրանց։ ԽՍՀՄ ամբողջ աշխարհի ճնշվածների ու շահագործվողների փարոսը և հույսը կը մնա։

Մենք կիրագործենք Վլադիմիր Իլյիչ Լենինի ավանդը—հասնել այն բոլորին՝ ինչ վոր «իրագործելի յե մեկ յերկրում հեղափոխությունը բոլոր յերկրներում զարգացնելու, պաշտպանելու, արթնացնելու համար»։

Հ ա ր ց.—Ինչո՞ւ մեր տնտեսական աճումն ամրացնում է կոմունիստական շարժումն Արևմուտքում։

ՀԱՏՎԱԾՆԵՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Յեվրոպական տնտեսության ստաբիլիզացիան Ամերիկային յենթարկվելու գնով յեվ աշխատավոր մասսաների հաշվին չի կարող հաստատուն լինել

... Կապիտալիզմը դուրս է գալիս կամ արդեն իսկ դուրս է յեկել արդյունաբերության, առևտրի և ֆինանսների ասպարեզում տիրող այն քաոսից, վոր վրա հասավ պատերազմից հետո։ Այս բանին կուսակցությունը տվեց կապիտալիզմի մասնակի կամ ժամանակավոր ստաբիլիզացիայի (կայունացման) անունը։ Այդ ինչ է նշանակում։ Այդ նշանակում է, վոր կապիտալիստական յերկիրների արդյունաբերությունն ու առևտուրը, վորոնք մի ժամանակ խիստ անկման վիճակ եյին ապրում հետ-պատերազմյան կրիզիսի շրջանում (յես նկատի ունիմ 1919—20 թ. թ.), սկսել են առաջադիմել, իսկ բուրժուազիայի քաղաքական իշխանությունն սկսել է քիչ-շատ ամրանալ։ Այդ նշանակում է՝ կապիտալիզմը ժամանակավորապես դուրս է յեկել այն քաոսից, վորի մեջ նա ընկել եր պատերազմից հետո...։

... Յեվրոպական կապիտալիզմի ժամանակավոր ստաբիլիզացիան, վորի մասին յես վերը խոսեցի, ձեռք է բերված գլխավորապես ամերիկյան կապիտալի ոգնությամբ և Յեվրոպան ֆինանսապես Ամերիկային յենթարկելու գնով։ Այս բանն ապացուցելու համար բավական է բերել այն թվերը, վորոնք վերաբերում են Յեվրոպայի պետական պարտքին Ամերիկային։ Այդ պարտքի գումարը հավասար է վոչ պակաս քան 26 միլլիարդ ռուբլու։ Յես ել չեմ խոսում յեվրոպական յերկիրների մասնավոր պարտքերի մասին, այսինքն այն գումարների մասին, վոր Ամերիկան դրել է Յեվրոպայի ձեռնարկությունների մեջ, և վորոնք մի քանի միլլիարդի յեն հավասար։

Այս բոլորն ինչ են ասում։ Այն են ասում, վոր Յեվրոպան քիչ թե շատ սկսել է վոտքի կանգնել ի հաշիվ Ամերիկայից (մասամբ ել Անգլիայից) հոսող կապիտալի։ Ի՞նչ գնով։—Յեվրոպան ֆինանսապես Ամերիկային յենթարկելու գնով։

... Վորպեսզի կարողանա իր պարտքերի տոկոսները, ինչպես և այդ պարտքերը վճարելու հնարավորություն ունենալ, Յեվրոպան հարկադրված է ծանրացնել բնակչության հարկերի բեռը, վատացնել բանվորների դրությունը։ Հենց այդ է, վոր ներկայումս կատարվում է Յեվրոպայի յերկիրներում...։ Ինչ ասել կուզի, վոր ամենամոտիկ ապագայում հարկային բեռի ծանրությունն ավելի ևս կաճի։ Այս պատճառով Յեվրոպայի աշխատավորության և ամենից առաջ բանվոր դասակարգի նյութական դրությունն անպատճառ վատանալու յե, իսկ բանվոր դասակարգն ել անխուսափելիորեն հեղափոխականանալու։ Այդ հեղափոխականացման նշաններն արդեն կան ինչպես Անգլիայում, այնպես ել Յեվրոպայի մյուս յերկիրներում։ Յես նկատի ունեմ Յեվրոպայի բանվոր դասակարգի վորոշ ձախացումը։

Սրանք են այն հիմնական փաստերը, վորոնք վկայում են, վոր այն ստաբիլիզացիան, վորին հասել է Յեվրոպան, փթած հողի վրա բուսած փթած ստաբիլիզացիա յե։

(Ստալին, ՀամԿԿ (բ.) կենտկոմի քաղ. հաշվետվությունը XIV կուսհամագումարին, հայերեն թարգ. Յերևան 1926 թ., եջ 4—5 և 7—8)։

2. ԽՍՀՄ նշանակությունը համաշխարհային հեղափոխության համար

Այն որից ի վեր, յերբ աշխարհ յեկավ Խորհուրդների յերկիրը, այն որից իվեր, յերբ հին Ռուսաստանը վերածվեց Խորհրդային Միության,—այդ որից ի վեր ամբողջ աշխարհն ընդգրկող համայնապարփակ կապիտալիզմ այլևս չկա։ Ամբողջ աշխարհը յերկու բանակի յե բաժանվել—իմպերիալիզմի բանակի և իմպերիալիզմի դեմ պայքարի բանակի։ Այդ առաջինն է, վոր պետք է նշել։

Յերկրորդը, վոր այս ասպարեզում յես պետք է նշեմ, այն է, վոր կապիտալիստական յերկիրների գլուխ են անցնում յերկու հիմնական յերկիրներ—Անգլիան ու Ամերիկան, վորպես անգլո-ամերիկյան դաշնակցություն։ Իսկ դժգոհների, իմպերիալիզմի դեմ մահու մարտ մղողների գլուխ է անցնում մեր յերկիրը—Խորհրդային Միությունը։

Իմ հիշատակելիք յերրորդ փաստն այն է, վոր ստեղծվում են ձգողության յերկու հիմնական, բայց հակադիր կենտրոններ, և դրա համաձայն ամբողջ աշխարհում ստեղծվում է ձգողության յերկու ուղղություն.—անգլո-ամերիկյան՝ բուրժուական կառավարությունների համար և Խորհրդային Միության՝ Արևմուտքի բանվորների ու Արևելքի հեղափոխականների համար։ Անգլիան և Ամերիկան գրավում են իրենց հարստությամբ, նրանցից կարելի յե վարկեր ստանալ։

Խորհրդային միությունը գրավում է իր հեղափոխական փորձով, բանվորներին կապիտալիզմի լծից և ճնշված ժողովուրդներին իմպերիալիզմի լծից ազատելու համար պայքարելու փորձով։ Յես ասում եմ այն ձգման մասին, վոր ունեն Յեվրոպայի բանվորները և Արևելքի հեղափոխականները դեպի մեր յերկիրը։ Դուք գիտեք, թե ինչ նշանակություն ունի Յեվրոպայի բանվորի կամ ճնշված յերկրների հեղափոխականների համար մեր յերկիր այցելելը. գիտեք, թե ինչպես են նրանք ուխտագնացություն կազմակերպում դեպի մեր յերկիրը, և ինչպես են դեպի մեր յերկիրը ձգտում յերկրագնդի բոլոր ազնիվ ցանկություններով տոգորված ու հեղափոխական մարդիկ։

Յերկու բանակ կա ներկայումս, ձգողության յերկու ուժ։

Չորրորդ փաստն այն է՝ վոր մյուս բանակում, կապիտալիզմի բանակում շահերի նույնություն ու սերտ կապ չկա բոլորի մեջ, վոր այնտեղ շահերի պայքար է, անկում.—պայքար հաղթողների ու հաղթվածների միջև, պայքար բոլոր իմպերիալիստական յերկրների միջև գաղութների համար, շահույթների համար։ Յեվ այս բոլորի պատճառով ստաբիլիզացիան այս բանակում հաստատուն լինել չի կարող։ Մինչդեռ մեր յերկրում կատարվում է առողջ և ամրացող ստաբիլիզացիա, մեր տնտեսության աճումը, մեր սոցիալիստական շինարարության աճումը, իսկ, մեր ամբողջ բանակում կատարվում է այն, վոր աստիճանաբար, անշեղ կերպով մեր յերկրի պրոլետարիատի շուրջն են համախմբվում ինչպես Արևմուտքի, այնպես էլ Արևելքի բոլոր դժգոհ տարրերը և շերտերը, նրանց համախմբումն է կատարվում Խորհրդային Միության շուրջը։

Այնտեղ, կապիտալիզմի բանակում—տարաձայնություն և քայքայում։ Այստեղ, սոցիալիզմի բանակում—համախմբվածություն և շահերի միասնականություն, վոր գնալով ուժեղանում է ընդդեմ ընդհանուր թշնամու, ընդդեմ իմպերիալիզմի։

(Ստալին, ՀամԿԿ (բ.) Կենտկոմի քաղ. հաշվետվությունը XIV կուսհամագումարին, հայ. թարգ., Յերևան 1926 թ., էջ 18—19)։

3. Արևմուտքի բանվորների համակրանքի աճումը դեպի ԽՍՀՄ մեր տնտեսական վերելքի հիման վրա

Պատգամավորությունը միահամուռ այն կարծիքին յեկավ, վոր Խորհրդային Ռուսաստանը փաստապես գտնվում է սոցիալիզմի հիմնադիրների դրած նպատակի իրականացման ճանապարհի վրա, վոր բանվոր դասակարգն իրոք իր ձեռքում ունի իշխանությունը, վոր նա հանդիսանում է քաղաքականապես ամենաազատ դասակարգն ամբողջ աշխարհում, և վոր տնտեսական շինարարությունն իրականացվում է սոցիալիզմի ուղղությամբ՝ բանվորական լայն մասսաների մասնակցությամբ։ Շատերին այնքան ատելի պրոլետարիատի դիկտատուրան իրոք հանդիսանում է իսկական բանվորական դեմոկրատիա, վոր խիստ առավելություններով զանազանվում է արևմտյան յերկրների այսպես կոչված դեմոկրատիաներից։ Բանվորները, գյուղացիները, ինժեներները, տեխնիկները, ուսուցիչները և գիտնականներն իրենց ճնշող մեծամասնությամբ խորհրդային սիստեմի և գոյություն ունեցող կառավարության կողմն են։ Յեվ ուրիշ կերպ էլ լինել չեր կարող։ Բանվորները փաստապես ունեն ամուր 8-ժամյա աշխատանքի օր (շաբաթը 46 ժ.), մանկահասակները և վնասակար արտադրությունների բանվորներն որական միայն 6 ժամ են աշխատում։ Ամբողջ աշխարհում վո՞րտեղ ունի բանվոր դասակարգը սրա նման մի բան։

Ֆաբրիկա-գործարանային կոմիտեները մեծ ազդեցություն ունեն բանվորներին վերաբերող բոլոր հարցերում։ Կարմիր դիրեկտորների հետ միատեղ նրանք զբաղված են տնտեսության սոցիալիստական շինարարությամբ։ Արդեն այժմ ռուսական միջին բանվորը գերմանականից վատ չի ապրում։ Անկասկած նա ավելի շատ սննդի մթերքներ ունի։ Նա գերմանական բանվորից յետ է մնում միայն բնակարանի և հագուստի կողմից։ Նա ստիպված չէ սոցիալական ապահովագրության վճարումներ անել, վորովհետև այդ ծախքերը ձեռնարկությունն է անում։ Նա կարող է իր արձակուրդն ու հանգիստն անցկացնել մեծ պալատներում և վիլլաներում։ Կառավարությունը հոգում է բանվորուհիների ու մայրերի աշխատանքի լիակատար պաշտպանության մասին։ Յերեխաները հատուկ սիրառատ հոգացության առարկա յեն և սոցիալիստական վոգով են դաստիարակվում։ Բանվորը տուրքեր է վճարում միայն 75 ռ. ավելի աշխատավարձ ունենալու դեպքում։ Գյուղացիներն ստացել են խոշոր կալվածատերերի հողը։ Կառավարությունը կուլտուրա յե մտցնում գյուղ՝ ելեկտրական կայարանների մեծ ցանցի կառուցումով։ Արվեստն ու գիտությունը ծառայում են պրոլետարիատի գործին։ Վերջին տարիների ընթացքում ռուսական բանվորի միջավայրում նկատելի յե կուլտուրական վերելք։ Նրա քաղաքական գրագիտությունը նույնպես խիստ բարձր է։ Արդյունաբերության մեջ, վոր գերմանականի համեմատությամբ դեռ մասնակի կերպով հետամնաց է և տեխնիկապես անկատար ցարիզմի ժառանգության շնորհիվ, նկատելի յե ուժեղ վերելք։

Ռուս բանվորի դրության համար ամենակարևորը և վճռականն այն է, վոր նրա կյանքի մակարդակը վերջին յերկու տարվա ընթացքում անընդհատ, չնայած և դանդաղ, բարձրանում եր, և ամենամոտիկ ապագայի նշանները պետք է չափազանց բարեհաջող համարել։

(1925 թվի գերմանական բանվորական պատգամավորության հաշվետվությունից)։

4. Համ. ԿԿ (բ)—մարտական միջազգային կուսակցություն, համաշխարհային հեղափոխության ավանգարդ

Որո՞նք են մ ի ջ ա զ գ ա յ ի ն հեղափոխական շարժման բնագավառում կուսակցության անելիքները։

Նախ և առաջ պետք է աշխատել ամրապնդել Արևմուտքում կոմունիստական կուսակցությունները, նրանց կողմից բանվորական մասսաներում մեծամասնություն նվաճելու գծով։ Երկրորդ՝ պետք է աշխատել ուժեղացնել այն պայքարը, որ մղում են Արևմուտքի բանվորներն արհմիությունների միասնականության, մեր Միության պրոլետարիատի ու կապիտալիստական յերկրների պրոլետարիատի բարեկամության համար։ Այս խնդրի մեջ է մտնում նաև ուխտագնացության այն շրջանը, որի մասին յես խոսեցի և որի նշանակությունը վերն ուրվագծեցի։ Երրորդ՝ պետք է աշխատել ամրապնդել մերձեցումը մեր յերկրի պրոլետարիատի և հարստահարված յերկրների ազատագրական շարժման միջև, որովհետև նրանք—մեր դաշնակիցներն են համաշխարհային կապիտալիզմի դեմ մղվող պայքարում։ Եվ չորրորդ՝ պետք է աշխատել ամրապնդել մեր յերկրի սոցիալիստական տարրերը, աշխատել, որ այդ տարրերի ու կապիտալիստական տարրերի պայքարում առաջինները հաղթող հանդիսական, մի հաղթանակ, որը վճռական նշանակություն ունի բոլոր յերկրների բանվորների հեղափոխականացման համար։ Միջազգային հեղափոխական շարժման ասպարեզում մեր կուսակցության ունեցած խնդիրների մասին խոսելիս մեր ընկերները սովորաբար սահմանափակվում են առաջին յերեք խնդիրներով և մոռանում են չորրորդ խնդիրը—այն, որ մեր յերկրում մղած մեր պայքարը, այն պայքարը, որ մղում ենք մենք, որպեսզի սոցիալիստական տարրերը հաղթեն կապիտալիստական տարրերին մեր յերկրում, ինչպես և մեր շինարարական պայքարը, նույնպես միջազգային են և ինտերնացիոնալիստական իրենց նշանակությամբ, որովհետև մեր յերկիրը համաշխարհային հեղափոխության բազան է, որովհետև մեր յերկիրը միջազգային հեղափոխական շարժման ծավալման հիմնական լծակն է, և յեթե մեզ մոտ շինարարությունն ընթանում է պատշաճ թափով, այդ նշանակում է, որ մենք մեր աշխատանքը միջազգային հեղափոխական շարժման մյուս բոլոր ճյուղերում ևս կատարում ենք ճիշտ այնպես, ինչպես պահանջում է մեզնից մեր կուսակցությունը։ Բայց այդ մոռանալ չի կարելի։

Սրանք են կուսակցության անելիքները միջազգային հեղափոխական շարժման ասպարեզում։

(Ստալին, Համ. ԿԿ (բ.) Կենտկոմի քաղաքական հաշվետվությունը XIV կուսհամագումարին, հայ. թարգ., Երևան 1926 թ., էջ 29-30)։

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. Մեկ շաբաթվա ընթացքում «Պրավդայում» ուշադրությամբ կարդացեք միջազգային հարցերին վերաբերող հեռագրերը և հոդվածները։ Տետրակում նշեցեք հետևյալ հարցերին վերաբերող թվանշանները, փաստերը և անցքերը.

1) Ինչում է յերևում կապիտալիստական տնտեսության ամրացումը և ինչում նրա անկումը (գործազրկություն. արտադրության և առևտրի կրճատում, դրամի անկում)։

2) Ինչպես է ընթանում պրոլետարիատի կռիվը բուրժուազիայի դեմ (գործադուլներ, ցույցեր, ընդհարումներ ոստիկանության հետ)։

3) Ինչպես է ընթանում պայքարն Անգլիայի ու Ամերիկայի, Ֆրանսիայի ու Անգլիայի, դաշնակիցների ու Գերմանիայի միջև։

4) Ինչպես է առաջ ընթանում Արևելքի ժողովուրդների ազատագրական պայքարը (ի՞նչ է կատարվում Հնդկաստանում, Չինաստանում, Մարոկկոյում, Սիրիայում և այլն)։

5) Արդյոք նոր պատերազմի պատրաստություն տեսնվում է և ինչպես (սպառազինումներ, բանակի և ոդային նավատորմի աճում, ռազմական միություններ պետությունների միջև)։

II. Մի շաբաթ (իսկ ավելի լավ է մի ամիս) հետևեցեք այն բոլոր հաղորդագրություններին, որ վերաբերում են բանվորների մղվող կռվին կապիտալիստների դեմ մյուս յերկրներում։ Նշեցեք տետրակում կարևորագույն թվանշանները և փաստերը։

ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչպես և ինչո՞ւ յե ներկայումս ծավալվում պայքարը բանվոր դասակարգի և բուրժուազիայի միջև Արևմուտքում։

2 Ինչո՞վ է խախտում կապիտալիզմը և աջակցում համաշխարհային հեղափոխության հաջողությանը Արևելքի ժողովրդների պայքարն իրենց ազատագրության համար, և ինչպես է ընթանում այն։

3. Ինչո՞ւ յե աշխարհին նոր իմպերիալիստական պատերազմ սպառնում։

4. Ի՞նչ էր հասկանում Լենինը գյուղացիության հետ ճիշտ հարաբերություն ունենալու տակ, և ինչո՞ւ յեր նա այդպիսի հարաբերու-

թյունը միջազգային հեղափոխության հաղթանակի գրավական համարում։

5. Ինչու է վնասակար օպպոզիցիայի թերահավատությունը դեպի մեր յերկրի սոցիալիստական շինարարության հաջողությունը։

ՀԱՎԵԼՎԱԾ

Համ. ԿԿ (բ.) ԿԿ յեվ ԿՎՀ միացյալ պլենումի բանաձեվից (1926 թ. հուլիս)

Խորհուրդների աշխուժացման քաղաքականությունը, իբրև հերթական քայլ խորհրդային դեմոկրատիզմի (պրոլետարական դեմոկրատիայի) զարգացման գործում, պետք է հենվի այն բանի վրա, վորպեսզի «ամբողջ պետական ապպարատի մշտական ու միակ հիմքը» (տես Համ. ԿԿ ծրագիրը) լինեն պրոլետարները և ամենաաղքատ կիսապրոլետար-գյուղացիները։ Այս վոչ միայն չի բացասում, այլ ուղղակի յենթադրում է, հատկապես խորհրդային իշխանության ամրապնդման պայմաններում, վոր անհրաժեշտ է իրոք ու շարունակ ավելի լայն չափով խորհրդային շինարարության մեջ քաշել գյուղացության ամբողջ հիմնական մասսան։ Տվյալ մոմենտում այս խնդիրը պրոլետարական դիկտատուրայի համար բացառիկ կարևոր նշանակություն ունի։ Այս պատճառով այժմ առանձնապես ընդգծվում է պրոլետարիատի միության ամրապնդման խնդիրը գյուղացության հետ։ «Դիկտատուրայի բարձրագույն սկզբունքը, այդ--պրոլետարիատի միության պահպանումն է գյուղացության հետ, վորպեսզի պրոլետարիատը կարողանա պահել ղեկավար դերը և պետական իշխանությունը» (Լենին)։ Այստեղից բղխում է գյուղում կուսակցության շուրջը լայն անկուսակցական չունևորների-միջակների ակտիվ ստեղծելու կարևորությունը...։

Նրա հետ միասին պրոլետարիատի միությունը գյուղացության հետ պրոլետարիատի դիկտատուրայի ամուր հենարան կը լինի միայն այն ժամանակ, յերբ այդ միության մեջ իրոք ապահովված կը լինի պրոլետարիատի ղեկավար դերը։ Այս պատճառով խորհուրդների աշխուժացման քաղաքականությունը, իբրև դասակարգային, իսկական պրոլետարական քաղաքականություն, յենթադրում է պրոլետարիատի ակտիվության, ինքնագործունեյության և կազմակերպվածության հետագա ամեն կերպ զարգացումը և մանավորապես նրա մաքսիմալ ակտիվ մասնակցությունը խորհուրդների վերընտրություններին և նրանց ամբողջ աշխատանքին։

... Մի քանի քաղաքական կուսակցությունների գոյությունը— և հենց դրանով նրանց միջև իշխանության համար մղվող կռվի գոյությունը—այլ բան լինել չեր կարող, քան այնքան թանկ գնով նվաճված և այժմ ամրապնդվող պրոլետարիատի ու գյուղացության կապի ուղղակի խզումը։ Այդ կը նշանակեր պրոլետարական դիկտատուրայի հենց հիմունքների լրիվ քայքայումը և ուղղակի խախտումը։ Քաղաքական կուսակցությունների (նույնպես և միասնական կուսակցության մեջ ձևավորված ֆրակցիաների) կռվի գոյությունը ներհակ է պրոլետարիատի հաղթական դիկտատուրային ըստ եյության այլ բան չեր լինի, քան այս կամ այն ձևով բուրժուական դեմոկրատիայի վերածնունդը։ Այս պատճառով պրոլետարական դիկտատուրայի պայմաններում «մենք չենք ընդունում բուրժուական պարլամենտարիզմի «սովորական բուրժուական կուսակցության» հենց հիմքը» (Լենին)։ Պրոլետարական հեղափոխության փորձը մեր յերկրում ամբողջովին հաստատեց պրոլետարական դիկտատուրայի զարգացման այս սկզբունքը։

... Այն փաստը, վոր պրոլետարական հեղափոխության ընթացքում Համ. ԿԿ (բ.) պրոլետարական դիկտատուրայի անվիճելի ու միակ ղեկավարը դարձավ, պրոլետարիատի ահագին պատմական նվաճումն է և դրա հետ միասին պրոլետարական հեղափոխության իրոք հաղթական զարգացման ամենակարևոր և արմատական պայմաններից մեկը։ Այդ փաստը մատնանշում է նույնպես այն, թե ինչպիսին պիտի լինի (իր հիմնական գծերով) կոմմունիստական կուսակցությունը, սոցիալիզմի հաղթանակի կուսակցությունը, ուղիղ հեղափոխական-պրոլետարական քաղաքականություն վարելու իր ընդունակության իմաստով, նրա համար ամենահաստատուն արմատներ ունենալու անհրաժեշտության իմաստով ամենից առաջ, ընդհանրապես, բանվորների և աշխատավորների լայն մասսաների մեջ, վերջապես, յերկաթե դիսցիպլինան իսկական ներկուսակցական դեմոկրատիայի հետ միացնելու հմտության իմաստով։ Խորհրդային դեմոկրատիզմի զարգացումը յենթադրում է, վոր պրոլետարական դիկտատուրայի կազմակերպված ավանգարդը և ղեկավարը—պրոլետարիատի կուսակցությունն առաջին հերթին ինքը պետք է ընթանա իսկական ներկուսակցական դեմոկրատիայի ուղիով, իր յերկաթե դիսցիպլինայի, անպայման միության և կուսակցական շարքերի իսկական պրոլետարական միաձուլության պահպանումով ու հետագա ամրացումով։ Կոմմունիստական կուսակցությունը կարող է ապահովել պրոլետարական հեղափոխության հաղթանակը միայն իբրև միասնական կուսակցություն և միայն իբրև պրոլետարական դիկտատուրայի միասնական առաջնորդ ու ղե-

կավար...: Սակայն պրոլետարիատի դիկտատուրայի յերկրում միակ կուսակցությունը, կոմմունիստների կուսակցությունը, պետք է շարունակ ավելի ուժեղացնի անկուսակցական բանվորական և գյուղացիական մասսաներին խորհրդային շինարարության ամբողջ գործի մեջ մտցնելու աշխատանքը:

(Խորհուրդների վերընտրությունների արդյունքներին վերաբերող բանաձևից):

Վերջին ժամանակներում նոր օպպոզիցիան կուսակցությանը կանգնեցրել է այդպիսի մի ամբողջ շարք ֆրակցիոն քայլերի առաջ, վորոնք արտահայտվել են անլեգալ, գաղտնի ժողովների կազմակերպման մեջ. այն բանի մեջ, վոր արտատպվել են և ուղարկվել ինչպես Մոսկվա, այնպես էլ ուրիշ քաղաքներ դիտմամբ ջոկված գաղտնի կուսակցական դոկումենտներ, վորոնք ուղղված են յեղել դեպի կուսակցության գծի վարկաբեկումը. այն բանի մեջ, վոր ագենտներ են ուղարկվել մյուս կուսակցական կազմակերպությունները՝ այնտեղ ֆրակցիոն ընդհատակյա խմբակներ ստեղծելու նպատակով:

Անհրաժեշտ է արձանագրել, վոր օպպոզիցիայի այս ֆրակցիոն քայլերի բոլոր թելերը տանում են դեպի ԿԻԳԿ ապպարատը, վորի գլուխ է կանգնած պոլիտբյուրոյի անդամ ընկեր Զինովյեվը:

Նոր օպպոզիցիայի աճող ֆրակցիոնականությունը նրան այնտեղ հասցրեց, վոր նա խաղում է յերկու կուսակցության իդեայի հետ և չափազանց սրեց օպպոզիցիայի հակալենինյան թեքումները՝ թերահավատությունը դեպի պրոլետարիատի ուժերը և հոռետեսությունը սոցիալիստական շինարարության գործի վերաբերմամբ ընդհանրապես և սոցիալիստական արդյունագործության (ինդուստրիայի) շինարարության գործի—մասնավորապես. սրեց այն միտումը, վոր պրոլետարիատի կապերը խզի գյուղացիության (միջակի) հետ, այսինքն այն սկզբունքի ժխտումը, վոր, ըստ Լենինի, մեզ մոտ «պրոլետարական դիկտատուրայի բարձրագույն սկզբունքն» է. սրեց այն միտումը, վոր պաշտպանում է և թաքցնում ծայրահեղ-աջերին, աշկարա դեպի մենշևիզմ գլորվող թեքումները մեր կուսակցության մեջ... Չմտցնելով գործնական առաջարկներ, արտաքուստ ձախ ֆրազ բանեցնելով, վոր թաքցնում է օպպորտյունիստական աջ բովանդակությունը, նոր օպպոզիցիան անցնում է նաև շարունակ ավելի անթույլատրելի, պառակտման տանող կռվի մեթոդներին...:

Կուսակցության XIV համագումարը լիակատար հնարավորություն տալով օպպոզիցիայի կողմնակիցներին, վոր պաշտպանեն իրենց հայացքները ԿԿ ներսում նրանց հենց ԿԿ և ԿՎՀ մեջ ընտրելու փաստով, միևնույն ժամանակ այս հրահանգը տվեց. «Վճռական կռիվ մղել կու-

սակցության միությունը խախտելու բոլոր փորձերի դեմ, վորտեղից էլ վոր բղխեն նրանք և ումից էլ վոր գլխավորվեն նրանք»: Այս վճիռը հանդիսանում է կուսակցության X համագումարի վճռի հաստատումը միայն, վոր ընդունված է ընկեր Լենինի առաջարկությամբ, հատկապես սրված ֆրակցիոնական պայքարի մոմենտում...: Համագումարի այս վորոշումը չկատարելու հետևանքը պետք է լինի կուսակցությունից անպայման, անհապաղ հեռացնելը»:

Օպպոզիցիայի աշխատանքը, վոր ուղղված է միության դեմ, մինչև այժմ մեր կուսակցության վոչ մի կազմակերպության մեջ վոչ մի պաշտպանություն չի գտել, սակայն օպպոզիցիայի ֆրակցիոնական աշխատանքի հետագա զարգացումը կուսակցությանը պառակտման լուրջ վտանգի առաջ կը կանգնեցներ: Լենինյան կուսակցությունն առաջիկայում էլ պառակտում չի թույլատրի իր շարքերում և ամենավճռական դիմադրություն ցույց կը տա ֆրակցիոնական պայքարի ամեն մի փորձի...:

(Ընկեր Լաշևիչի և ուրիշների գործին ու կուսակցության միության վերաբերող բանաձևից):

ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

Պատանեկական շարժման հարցերը

ԻՆՉԻ ՄԱՍԻՆ Է ԶՐՈՒՅՑԸ

Մեր այս զրույցում մենք կը քննենք այն հարցը, թե ինչու յե անհրաժեշտ ինքնուրույն պատանեկական շարժումը և ինչ ընդհանուր պատճառներ նպաստեցին ու նպաստում են նրա ծագմանն ու զարգացմանը։ Ապա մենք հենց այս զրույցում կը ջանանք պարզել համամիութենական կոմսոմոլի դասակարգային եյությունը, կոմսոմոլի նշանակությունը, իբրև քաղաքական, մարտական և դաստիարակչական մասսայական կազմակերպության, և կանգ կառնենք կոմսոմոլական ոպպոզիցիայի սխալների վրա, վորոնք վերաբերում են պատանեկական շարժման այս արմատական հարցերին։ Յեվ, վերջապես, կը լուսաբանենք կոմսոմոլի հերթական խնդիրների հարցը։

I. Կոմսոմոլը, նրա նշանակությունը, դասակարգային եյությունը յեվ կուսակցական ղեկավարությունը

ԻՆՉՈՒՄՆ ԵՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Պրոլետարական յերիտասարդությունը հանդիսանում է ամբողջ պրոլետարիատի բաղկացուցիչ անկապտելի մասը։ Նրա դասակարգային, տնտեսական և քաղաքական շահերը վոչնչով չեն զանազանվում ամբողջ պրոլետարիատի շահերից։ Յերիտասարդությունը չի ունեցել, չունի և չի կարող ունենալ վորևե տարբեր քաղաքականություն ու տարբեր շահեր քան ամբողջ պրոլետարիատը։

Պրոլետարական յերիտասարդության, իբրև մասի, ամբողջ պրոլետարիատի հետ ունեցած դասակարգային ընդհանրությունն ավելի ուժեղ է վորևե հասակի առանձնահատկություններից, հասակի տարբերություններից։

Բայց չնայած դրան յերիտասարդությունը մի ամբողջ շարք հասակի այնպիսի առանձնահատկություններ ունի, վորոնք չհակասելով պրոլետարական յերիտասարդության և ամբողջ պրոլետարիատի դասակարգային շահերի ընդհանրությանը, այնուամենայնիվ կյանքի յեն կոչում պրոլետարական յերիտասարդության հատուկ պատանեկական

կազմակերպությունները, վորոնք այդպիսով դառնում են բանվորական շարժման ձևերից մեկը։

Կապիտալիստական յերկրների պայմաններում, ուր իշխանության գլուխ է կանգնած բուրժուազիան, այդ հատուկ պատանեկական կազմակերպությունների ուղղակի ու հիմնական նախադրյալները սրանք եյին.

1. Յերիտասարդ բանվորների ուժեղ շահագործումը ֆաբրիկաներում և ուրիշ ձեռնարկություններում, շահագործում, վոր դիմադրության չեր հանդիպում հասակավորների սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների կողմից և վորը (շահագործումը) դրդում եր յերիտասարդության ամենաառաջավորներին ու գիտակիցներին կազմակերպել պատանեկական միավորումներ, վորոնք կարող լինեյին դիմադրել այդ շահագործումին։

2. Միլիտարիզմը—տիրող դասակարգերի ռազմական քաղաքականությունը, վորը նույնպես հարկավոր դիմադրության չեր հանդիպում սոցիալ-դեմոկրատների կողմից և վոր ամենից ավելի ծանր կերպով անդրադառնում եր յերիտասարդության վրա, խեղելով այդ յերիտասարդությանն ինչպես հոգեպես, այնպես ել ֆիզիքապես։

3. Վերջապես բանվոր յերիտասարդության բուրժուական դաստիարակությանը հակազդելու անհրաժեշտությունը, դաստիարակություն, վոր իրագործվում եր յեկեղեցու, դպրոցի, մամուլի, բուրժուական պատանեկական կազմակերպությունների և այլն միջոցով, նույնպես յերիտասարդության միությունների ծագման պատճառներից մեկն եր։ Այս ել նշանակալի չափով վորոշում եր նաև յերիտասարդության միությունների խնդիրների շրջանակը։ Կռիվը յերիտասարդության տնտեսական պահանջների համար, կռիվը պատերազմի դեմ, կռիվը դաստիարակչական աշխատանքի համար յերիտասարդության այդ միությունների գործունեյության հիմքը կազմեցին։

Անհրաժեշտ է նկատի ունենալ նույնպես և այն, վոր բացի հատուկ պայմաններից, վորոնց մեջ ստիպված է աշխատել ու ապրել յերիտասարդությունը, նրան հատուկ են նաև հասակավորներից տարբեր ֆիզիոլոգիական (բնախոսական) ու հոգեբանական հատկություններ, ինչպես՝ նոր իդեաներ ընդունելու ավելի մեծ զգայնություն, ավելի մեծ ենտուզիազմ (խանդավառություն), դյուրըզգացություն և այլն։

Սկզբում այդ պատանեկական կազմակերպություններն իրենց ճանապարհի վրա հանդիպում եյին միայն հասակավորների հակազդեցությանը և լավագույն դեպքում անհասկացողությանը։ Բայց իմպերիալիստական պատերազմից սկսած պատանեկական պրոլետարական

շարժումն իր համար գոյության իրավունք նվաճեց, յերիտասարդության շահերը ներկայացնելու իրավունք։

Դեռ մինչև պատերազմը մի շարք յերկրներում պրոլետարական պատանեկական շարժումը բանվորական շարժման բաղկացուցիչ մասը դարձավ, բանվորական շարժման ձևերից մեկը, հիմնված այն շերտի առանձնահատկությունների հաշվառման վրա, վորին ընդգրկում է այդ ձևը։

ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԴԵՐԸ ՅԵՎ ՏԵՂԸ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԻ ՄԵՋ

Բանվորական շարժման կարևորագույն ձևը հանդիսանում է պրոլետարական կուսակցությունը (ավանգարդ), պրոլետարիատի առաջավոր ամենագիտակից մասը, վոր ղեկավարում է դասակարգը և նրա մասսայական կազմակերպությունները, վորոշում բուրժուազիայի դեմ մղվող կռվի ստրատեգիան և տակտիկան։ Նրանից հետո գալիս է պրոլետարիատի մասսայական կազմակերպությունը – արհմիությունները, վոր միացնում է պրոլետարիատին նրա տնտեսական պահանջների համար մղվող կռվի հիման վրա։ Ընկեր Լենինի սահմանման համաձայն արհմիությունները հանդիսանում են կոմմունիզմի դպրոց և շարժաբեր փոկ, վոր միացնում են ավանգարդը (կուսակցությունը) մասսաների հետ։

Իշխանության և պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող կռվի պայմաններում ծագում է պրոլետարիատի կազմակերպության շարժաբեր փոկերից ու տիպերից մեկն ևս – խորհուրդները։ Նրանց դերի վրա մենք արդեն մանրամասն կանգ ենք առել նախորդ զրույցներում։

Հենց ճիշտ նույնպիսի շարժաբեր փոկի դեր է խաղում նաև կոմսոմոլը, վոր կապում է կուսակցությունը պրոլետարական ու աշխատավոր յերիտասարդության մասսաների հետ։

Դրա հետ միասին յերիտասարդության կոմմունիստական կազմակերպությունները հանդիսանում են բանվոր յերիտասարդության կոմմունիստական մարտական դաստիարակության մասսայական կազմակերպություններ, կոմմունիզմի մասսայական մարտական դպրոց յերիտասարդության համար, դաստիարակության մարտական դասակարգային կոմմունիստական ձև, — մարտական և դասակարգային այն իմաստով, վոր յերիտասարդությունը կռվի ու աշխատանքի մեջ կոմմունիստորեն դաստիարակվում է և կոփվում։

Սրանք են կոմսոմոլների ընդհանուր սկզբունքները և տեղը պրոլետարիատի դասակարգային մյուս կազմակերպությունների սիստեմում։

ԿՈՄՍՈՄՈԼԻ ԴԵՐԻ ՄԱՍԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԵՊՈԽԱՅՈՒՄ

Ինչ վերաբերում է մեր միութենական կոմսոմոլին, ապա նա բացառիկ պայմաններում է գտնվում, և նրա դերն ու խնդիրները նշանակալի չափով զանազանվում են Արևմուտքում գոյություն ունեցող պրոլետարական պատանեկական կազմակերպությունների դերից ու խնդիրներից։ Իհարկե, բոլոր վերն ասածները վերաբերում են նաև ԽՍՀՄ կոմսոմոլին, բայց դրա հետ միասին, սակայն, անհրաժեշտ է միշտ հիշել, վոր միութենական կոմսոմոլը ծնունդ է առել և գոյություն ունի ուրիշ յերկրներից տարբեր պայմաններում։ ԽՍՀՄ կոմսոմոլի գլխավոր և հիմնական տարբերությունն ուրիշ յերկրների կոմսոմոլներից այն է, վոր նա գոյություն ունի մի յերկրում, ուր իշխանությունը պրոլետարիատի ձեռքում է, մի յերկրում, ուր պրոլետարիատն իրականացնում է իր դիկտատուրան, սոցիալիզմ կառուցում, դրա հետ միասին պայքարելով միջազգային պրոլետարական հեղափոխության պաշտպանության ու զարգացման համար։

ԽՍՀՄ պրոլետարիատի առաջ իշխանության գրավումից հետո կանգնեցին դժվարագույն խնդիրներ, վոր մինչև այդ ժամանակ վոչ վոքի առաջ չեյին կանգնել։ Սոցիալիզմի վերջնական հաղթանակի համար մղվող կռվի պրոցեսում, գյուղացության հետ ունեցած միության և պրոլետարիատի ղեկավար դրության ժամանակ, այդ խնդիրների համար մղվող կռվում—առաջ է գալիս նույնպես գյուղացական ամբողջ հիմնական մասսայի և մասնավորապես նրա աճող սերնդի— գյուղացական յերիտասարդության վերափոխման, վերադաստիարակության խնդիրը։

Չունենալով տարբեր խնդիրներ, քան պրոլետարիատը, կոմսոմոլը տվյալ պայմաններին համապատասխան նույնպես պետք է վերափոխե իր գործունեյությունը։ Բուրժուական պետության դեմ մղվող կռվի տեղ, առաջ է գալիս պրոլետարական պետության համար, պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող կռվի խնդիրը։ Դաստիարակության բուրժուական սիստեմի դեմ մղվող կռվի տեղ, առաջ է քաշվում լուսավորության և դաստիարակության սիստեմի համաձայնեցման, բարվոքման և պաշտպանության խնդիրը պրոլետարական պետության մեջ։ Կարճ ասած—պրոլետարիատի կողմից իշխանությունը գրավելուց հետո և՛ պրոլետարական յերիտասարդության, և՛ նրա կազմակերպությունների առաջ նույնպես բոլորովին այլ, նոր խնդիրներ են կանգնում։

Մասնավորապես կարևորագույն նշանակություն է ձեռք բերում պրոլետարական յերիտասարդության և նրա կազմակերպության — ԿՅԵՄ վրա դրած խնդիրը, այն է՝ վերափոխել ու դաստիարակել վոչ միայն

պրոլետարական յերիտասարդությանը, այլև գյուղացիության աճող սերնդի մի նշանակալի մասը—չունևոր ու միջակ յերիտասարդությանը—պրոլետարիատի դաշնակցին:

ԿՅԵՄ դաստիարակչական աշխատանքը նույնպես բոլորովին նոր հնարավորություններ ու պայմաններ է ստեղծում: Բուրժուական պետության և նրա ամբողջ տնտեսական ու քաղաքական սիստեմի խորտակման խնդրի տեղ առաջ է քաշվում պրոլետարական ու գյուղացիական յերիտասարդությունը սոցիալիստական ակտիվ շինարարության, սոցիալիստական եկոնոմիկայի և նոր հասարակական ու կենցաղային հարաբերությունների ակտիվ ստեղծման մեջ գրավելու խնդիրը:

Դրա հետ միասին ամբողջ պրոլետարիատի և պրոլետարական յերիտասարդության միջև, պրոլետարիատի ավանգարդի—կուսակցության և յերիտասարդության կազմակերպության—կոմսոմոլի—միջև հաջորդականությունը և մերձեցումը հատկապես անհրաժեշտ ու պարտադիր է դառնում: Իշխանության գրավումից հետո պրոլետարիատի արդի սերնդի և նրա կուսակցության սկսած գործի շարունակողների հարցն ամենակարևորագույն հարցն է, մի հարց, վոր այնքան սուր և ուժեղ կերպով ծառանում է պրոլետարիատի առաջ, հատկապես իշխանության գրավումից հետո:

ԿՈՄՍՈՄՈԼԸ—ՇԱՐԺԱԲԵՐ ՓՈԿ ԴԵՊԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱ ՊԱՀԵՍՏԸ ՅԵՎ ՈԳՆԱԿԱՆԸ

Այս բոլորը միասին առած կոմսոմոլին առաջ են քաշում ամենակարևոր տեղերից մեկը պրոլետարական դասակարգային կազմակերպությունների սիստեմում: Հենց այս պատճառով կոմսոմոլը վոչ միայն շարժաբեր փոկ է, վոր կապում է կուսակցությունը պրոլետարիատի մարտական ջոկատներից մեկի—յերիտասարդության հետ, այլև նրա պահեստն է և ոգնականը:

Կոմսոմոլի այս դերը, իբրև շարժաբեր փոկ և իբրև կուսակցության պահեստ ու ոգնական, ամբողջովին բխում է կոմսոմոլի այն առանձնահատկությունից, վոր նա ունի, իբրև պրոլետարական յերիտասարդության մասսայական, մարտական, կոմմունիստական դաստիարակչական կազմակերպություն:

Բայց կոմսոմոլի խնդիրները գյուղացիական յերիտասարդության վերաբերմամբ, գյուղացիական յերիտասարդության չունևոր ու լավագույն միջակ շերտերի վերադաստիարակության ու վերափոխման վերաբերմամբ պահանջում են պարզաբանություն և հենց կոմսոմոլի եյության ավելի ճշգրիտ սահմանում:

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՈՄՍՈՄՈԼԸ

Նախ քան կոմսոմոլի դասակարգային եյության սահմանումին անցնելը, անհրաժեշտ է պարզել, թե ինչպես է կոմսոմոլը գործնականապես իրագործում աճող գյուղացիական յերիտասարդության դաստիարակության և վերափոխման խնդիրը, ինչպիսի խուղակներով (կանալներով) և իրականացնում պրոլետարական յերիտասարդությունն իր ղեկավարի դերը գյուղացիական յերիտասարդության նկատմամբ:

Առաջինը, վոր պետք է նկատի ունենալ, այդ այն է, վոր պրոլետարական հեղափոխությունը գյուղացիությանն ակտիվ հասարակական ու քաղաքական գործունեության համար թափահարելով և արթնացնելով, այս տեսակետից, առաջին հերթին, անդրադարձավ գյուղական յերիտասարդության վրա: Քաղաքացիական պատերազմի տարիները, Կարմիր բանակից ավելի կամ պակաս չափով քաղաքականապես դաստիարակված յերիտասարդության գյուղ լցվելը, վոր ձգտում եր քաղաքական գործունեության, ընդհանուր տնտեսական ու կուլտուրական վերելքը և այս հիմքի վրա յերիտասարդության աճող ակտիվությունը և կազմակերպման ձգտումը—այս բոլորը գործնականապես կոմսոմոլի առաջ դրեց այդ յերիտասարդության կազմակերպման ձևերի հարցը, այն ձևերի, վորոնք կարող կը լինեյին ապահովել այդ յերիտասարդության վրա կոմսոմոլի պրոլետարական, կոմմունիստական ազդեցության հնարավորությունը:

Պատմականորեն բանն այնպես դասավորվեց, վոր կոմսոմոլն իր կազմակերպչական ձևավորման մոմենտում, առաջին համագումարում, արդեն կանգնած եր գյուղացիական յերիտասարդության կազմակերպված հասարակական գործունեության ուժեղ ձգտման փաստի առաջ:

Այս պայմաններում միակ ճիշտ քաղաքականությունը հանդիսանում եր և հանդիսանում է՝ ամեն կերպ զարգացնել չունևոր և լավագույն միջակ գյուղացիական յերիտասարդության ակտիվությունը և նրան գրավել կոմսոմոլի շարքերը: Կոմսոմոլի քաղաքականությունը չի կարելի կառուցել վոչ քնից արթնացած գյուղացիական յերիտասարդության ակտիվությունը և ինքնագործունեությունը զսպելու և կասեցնելու, վոչ էլ այդ յերիտասարդությանը կոմսոմոլից յետ մղելու վրա: Ընդհակառակը, այդպիսի քաղաքականությունը—յետ մղել և վախենալ յերիտասարդությունից, նրա լավագույն տարրերը ԼԿՅԵՄ շարքերն ընդունել չցանկանալ—անխուսափելիորեն այն հետևանքը կունենար, վոր գյուղացիական յերիտասարդությունը կկազմակերպեր ինքնուրույն շարժում: Հասարակական քաղաքական գործունեության իր ձգտման մեջ գյուղացիական յերիտասարդությունն այդ պայմաններում անխուսափելիորեն կընկներ մեր յերկրի բուրժուական և կուլակային

տարրերի ղեկավարության տակ։ Կոմսոմոլի այդպիսի գիծը, յեթե այն ավելի հեռու գնա, պետք է նշանակեր և նշանակում է հրաժարվել պրոլետարիատի ղեկավարությունից գյուղացության վրա, խզել պրոլետարիատի և գյուղացության միությունը։ Ճիշտ այնպես, ինչպես պրոլետարական յերիտասարդությունը հանդիսանում է պրոլետարիատի մի մասը, ճիշտ այդպես էլ գյուղացական յերիտասարդությունը հանդիսանում է գյուղացության (վոր իր կազմով միատեսակ չէ) մի մասը և յերիտասարդության հետ կապերի այդպիսի խզումն անխուսափելիորեն խզման կը հասցնի ամբողջ գծով։

Հենց այս պատճառով կոմսոմոլի գիծը կայանում եր և կայանում է նրանում, վոր կոմսոմոլի շարքերը գրավվեն գյուղացական յերիտասարդության լավագույն տարրերը—բատրակ, չունևոր յերիտասարդությունը և միջակների լավագույն մասը։ Այդ յերիտասարդությանը կոմսոմոլի շարքերում կոմմունիստական մշակման յենթարկելով, նրան մի լավ յեփելով, ինչքան այդ հնարավոր է, նրան պրոլետարիատի տեսակետին բերելով և այդ նպատակով նրան սոցիալիզմի շինարարության մեր ստեղծագործական աշխատանքի մեջ գրավելով, մենք հենց դրանով իրագործում ենք Լենինի ավանդը պրոլետարիատի կողմից գյուղացության ղեկավարման մասին։

ԿՈՄՍՈՄՈԼԻ ԱՃՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Վորպեսզի կոմսոմոլն իրոք ընդունակ լինի լուծելու յերիտասարդության լայն մասսաների դաստիարակության այդ խնդիրը, անհրաժեշտ է կոմսոմոլի կազմի ճիշտ կարգավորում։

Այս հարցում հիմնական գիծն այն է, վոր գյուղում կոմսոմոլի անդամ ընդունելիս առավելություն պիտի տալ առաջին հերթին պրոլետարական (բատրակային) և կիսապրոլետարական (չունևոր) տարրերին։ Դրա հետ միասին միջակներից կոմսոմոլի մեջ պետք է ընդունել նրան, ով հասարակական աշխատանքի յե ձգտում, ով պաշտպանում է կուսակցության և կոմսոմոլի գիծը, ով չունևորների հետ միասին կռվում է կուլակի դեմ և ով գործով ձգտում է հողագործման հավաքական և ավելի օգտակար ձևերին։ Պարզ է, վոր այս գործնական գիծն ամբողջովին ու լրիվ հանգում է կոմսոմոլի եյության այն ըմբռնումին, վոր ձևակերպել է կոմսոմոլի VII համագումարը։

ԿՈՄՍՈՄՈԼԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Դասակարգային եյության այն ձևակերպումը, վոր տվել է ՀամԼԿՅԵՄ VII համագումարը, ասում է. «ՌԼԿՅԵՄ, լինելով իր կազմով բանվորա-գյուղացական կազմակերպություն, իր դասակարգային քաղաքականության, նպատակների և խնդիրների եյությամբ պրոլետարական, կոմմունիստական կազմակեր-

պություն է, վորի մեջ ղեկավար դերը պատկանում է բանվոր յերիտասարդությանը։ Այստեղից էլ բխում են ՌԼԿՅԵՄ խնդիրներն իր շարքերում բանվոր և գյուղացի յերիտասարդությունն ընդգրկելու գործում։

Ձգտելով այն բանին, վոր լրիվ կերպով իր շարքերը գրավի բոլոր բանվոր և բատրակ յերիտասարդությանը, ՌԼԿՅԵՄ միևնույն ժամանակ պետք է կազմակերպչորեն ընդգրկի չունևոր յերիտասարդության լայն շերտերը և միջակների լավագույն տարրերը։

ՌԼԿՅԵՄ պետք է վճռականորեն պայքարի ինչպես միության պրոլետարական եյության մթագնման և ՌԼԿՅԵՄ համար պրոլետարական ղեկավարության նշանակության թերագնահատման դեմ, այնպես էլ գյուղում յերիտասարդ միջակների լավագույն տարրերի նվաճման թերագնահատության դեմ։ Գյուղում ՌԼԿՅԵՄ հիմնական քաղաքական խնդիրը ներկա շրջանում այն է, վոր ամեն կերպ օգնի կուսակցությանն ամրապնդելու պրոլետարական և գյուղական չունևորների միությունը գյուղացական հիմնական մասսայի—միջակի հետ։ Այս պատճառով, յելնելով Համ. ԿԿ XIV համագումարի վորոշումներից, ՌԼԿՅԵՄ կուլակների վտանգի թերագնահատման դեմ կռվելու հետ միասին, պետք է վճռական դիմադրություն ցույց տա միջակին թերագնահատող թեքումին»։

Պրոլետարիատի կողմից իշխանության նվաճումից հետո, համամիութենական կոմսոմոլի դասակարգային եյության այս ձևակերպումը եյական լրացում և զարգացում է հանդիսանում այն բանի, ինչ առաջ ասված եր պատանեկական պրոլետարական շարժման եյության հարցի մասին ընդհանրապես։

Այս ձևակերպման հիմնական իմաստն այն է, վոր այստեղ հնարավոր ու անհրաժեշտ է ճանաչվում կոմսոմոլի կազմը չսահմանափակել միայն պրոլետարական յերիտասարդությամբ, այլ հնարավոր է համարվում—միևնույն բանաձևի մի այլ տեղում ուղղակի մատնանշվում է այդ—հնարավոր է համարվում կոմսոմոլի մեջ ընդունել նաև վոչ-պրոլետարական տարրեր, այսինքն տվյալ դեպքում գյուղացական յերիտասարդությունը։ Մենք արդեն վերը պարզեցինք, թե ինչու յե անհրաժեշտ այդ միջոցը։ Այնտեղ մենք հաստատեցինք, վոր այդ է միակ միջոցը վոչ-պրոլետարական յերիտասարդության քաղաքական ակտիվությունը մեզ հարկավոր կողմն ուղղելու համար։ Բայց նույն այդ ձևակերպման մեջ պարզորոշ ու կտրուկ ընդգծ-

վում է, որ կոմսոմոլն իր խնդիրներով, իր քաղաքականությամբ պետք է պրոլետարական, կոմունիստական կազմակերպություն մնա։

Բացի այդ, հենց նույն ձևակերպման մեջ ընդգծվում է և այն նշանակությունը, որ պետք է խաղա բանվոր յերիտասարդությունը կոմսոմոլի այդ պրոլետարական գծի ապահովման գործում։ Կոմսոմոլում «ղեկավար դերը պատկանում է բանվոր յերիտասարդությանը»։ Այս նշանակում է, որ բանվոր յերիտասարդությունը պետք է հարկավոր ձևով «պայքարի», յեթե նա իրոք ուզում է պահպանել իր ղեկավար դրությունը ԿՅԵՄ մեջ։

Արդեն այս ձևակերպումից պարզ է, թե ինչքան բարդ են կոմսոմոլի խնդիրները և ինչքան մեծ նշանակություն ունի այս պայմաններում կոմսոմոլի եյության ճիշտ ձևակերպումը։

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄՍՈՄՈԼՈՒՄ

Բայց կոմսոմոլի դերի հենց այս բարդացումը, որի վրա ընկնում է վոչ միայն պրոլետարական յերիտասարդության դաստիարակության, այլև գյուղացական յերիտասարդության մի նշանակալի մասի վերափոխման, վերադաստիարակության խնդիրը, յերիտասարդության այդ մասսաների ղեկավարության խնդիրը,—հենց այս դրությունն առաջին տեղերից մեկն է քաշում կոմսոմոլում պրոլետարական յերիտասարդության ղեկավար դերի ապահովման հարցը, ԿՅԵՄ մեջ պրոլետարական կորիզի հարցը։

Դեռ Համ. ԼԿՅԵՄ համամիութենական IV կոնֆերենցիայում պրոլետարական ղեկավարության հարցը դրված եր ու ճիշտ վճռվեց։ Համ. ԼԿՅԵՄ համամիութենական VII համագումարը հաստատեց կոնֆերենցիայի այդ հարցի վերաբերող վորոշման ճշտությունը։

Կոմսոմոլի պրոլետարական ղեկավարության հարցի վերաբերմամբ IV համամիութենական կոնֆերենցիան ընդունեց, որ «միության հսկայական աճումը գյուղացության հաշվին, նրա դասակարգային կազմի վոչ-միատեսակ լինելը, կոմունիստական դաստիարակության ուժեղացման և կոմսոմոլիստների լայն մասսաների ու ամբողջ բանվորական և գյուղացական յերիտասարդության սոցիալիստական շինարարության մեջ գրավելու խնդիրը կուսակցության և ՌԼԿՅԵՄ առաջ իր ամբողջ հասակով դնում է կոմսոմոլի կուսակցական ղեկավարության ուժեղացման և նրա գյուղացական մասի վրա պրոլետարական ազդեցության ապահովման հարցը»։

Կոնֆերենցիան հաստատեց Համ ԼԿՅԵՄ ԿԿ հունվարյան պլենումի այն վճիռը, որ միության մեջ պրոլետարական ղեկավարությունն ապահովվում է վոչ թե կոմսոմոլի զանազան սոցիալական խմբակների միջև հաստատուն տոկոսային հարաբերություններ հաստատելով, այլ ուղիղ քաղաքական գծով, որ տանում է դեպի բանվորա-գյուղացական միության ամրապնդումը կոմսոմոլի շարքերում միության պրոլետարական մասի ղեկավարությամբ, կոմսոմոլի ակտիվի ամրությամբ ու կուսակցական տոկունությամբ, կոմսոմոլի պրոլետարական մասի հետագա մեծացումով, կուսակցական կորիզի հետագա լայնացումով և ամրացումով և վերջապես, ամբողջ կոմսոմոլական մասսայի ուղիղ հիմքի վրա դրված լենինյան դաստիարակությամբ։

Նշելով միության ձեռքբերումները բանվոր յերիտասարդությունը միության մեջ գրավելու գործում $(50^{0}/_{0})$, կոնֆերենցիան, սակայն, անհրաժեշտ համարեց ամեն կերպ ուժեղացնել բոլոր կոմսոմոլական կազմակերպությունների աշխատանքը, վորպեսզի իրագործվի ՌԼԿՅԵՄ համամիութենական VI համագումարի վճիռն ամբողջ բանվոր յերիտասարդությունը միության շարքերը գրավելու մասին։ Կոնֆերենցիան նույնպես ամենալուրջ ուշադրություն դարձրեց ամբողջ միութենական աշխատանքը պրոլետարական կենտրոններում, հատկապես ֆաբրիկա-գործարանային բջիջներում ուժեղացնելու վրա։ Ինչքան ավելի ամուր, համախմբված, քաղաքականապես գիտակից, կուսակցականորեն-տոկուն, կարգապահ կը լինի միության բանվորական բջիջը, այնքան ավելի մեծ հաջողությամբ կարող է ծավալվել ՌԼԿՅԵՄ աշխատանքն աշխատավոր գյուղացական յերիտասարդության ամենալայն մասսաների դաստիարակության և սոցիալիստական շինարարության մեջ գրավելու գործում։

Կոմսոմոլում պրոլետարական ղեկավարության ապահովման կարևորությունն ընդգծելն անհրաժեշտ եր մանավանդ այն պատճառով, վոր կոմսոմոլի շարքերում գոյություն ունեյին հայացքներ, վորոնք թերագնահատում եյին բանվոր յերիտասարդության այս ղեկավար դրության դերը և նշանակությունը։

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՑԵՐԱՇԽԻՔԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ Է ԿՈՄՍՈՄՈԼԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Մենք ներքևում մանրամասն կանգ կառնենք այդ հայացքների վրա և ուշադրությամբ կը քննենք այն։

Իսկ այստեղ անհրաժեշտ է միայն նշել, վոր միության մեջ պրոլետարական մասի այդ ուժեղացումը, սակայն, դեռ բավական չէ։ Անկասկած կոմսոմոլում պրոլետարական կորիզի աճումը և ամրացումը հանդիսանում է և պետք է հանդիսանա կոմսոմոլում բանվոր յերիտասարդության ղեկավար դրության ապահովման ամենակարևոր միջոցներից մեկը։ Բայց այդ այ-

նուամենայնիվ ԿՅԵՄ մեջ պրոլետարական ղեկավարության ապահովման միակ ու ամենագլխավոր միջոցը չեր: Դեռ Համ. ԼԿՅԵՄ համամիութենական IV կոնֆերենցիայում այս հարցի առթիվ ասված եր, թե «ՌԼԿՅԵՄ մեջ պրոլետարական ղեկավարության ապահովման հիմնական յերաշխիքը հանդիսանում ե միության ամուր կուսակցական ղեկավարության գոյությունը, վոր իրագործվելու յե միության պրոլետարական կորիզի միջոցով և առաջին հերթին ՌԼԿՅԵՄ ամբողջ կուսակցական ակտիվի միջոցով»:

Համամիութենական VII համագումարը մեկ անգամ ել ընդգծեց այդ խնդիրը, պարզաբանելով թե «կուսակցական ղեկավարության ուժեղացումը կապահովի հետագա հաջող զարգացումը և տեղական կազկերպությունների աշխատանքի ուղիղ քաղաքական գիծը: Կուսակցության ղեկավարությունը գլխավոր պայմանն ե, վոր ապահովում ե պրոլետարական ազդեցությունը կոմսոմոլի գյուղացիական մասի վերաբերմամբ»:

ԿՈՄՍՈՄՈԼՅԱՆ ՕՊՊՈԶԻՑԻԱՆ ՅԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ

Սակայն չնայած միության այս վորոշումներին պատանեկական կոմմունիստական շարժման ամենագլխավոր սկզբունքային հարցերի վերաբերմամբ, այնուամենայնիվ միության մեջ՝ տեղի ունեցան վորոշ ընկերների քողարկված և ուղղակի փորձեր կոմսոմոլը շեղելու այս միակ ուղիղ գծից: Խոսքը վերաբերում ե այսպես կոչված «կոմսոմոլական ոպպոզիցիային», վորն այս հարցերում հենց ճիշտ հակառակ դիրքը բռնեց: Չնայած այն բանին, վոր կոմսոմոլի քաղաքականության հիմնական հարցերին վերաբերող բոլոր վճիռները կամ նրանց մեծամասնությունն ընդունվում եյին այդ ոպպոզիցիայի դեմ մղած կռվում, չնայած այն բանին, վոր նրա առաջարկները մերժվում եյին կոմսոմոլի կողմից, այնուամենայնիվ այսպես կոչված կոմսոմոլական ոպպոզիցիան վարում եր իր ֆրակցիոնական և քայքայիչ գործունեությունը:

Այսպես կոչված կոմսոմոլական ոպպոզիցիայի դեմ մղած պայքարի դասերի նշանակությունն այնքան մեծ ե, նրա սխալներն այնքան նշանակալի և կարևոր են, վոր արժե նրանց վրա մանրամասնորապես կանգ առնել: Ամբողջ միությունը պետք ե ամենաուշադիր կերպով հետևի այդ ոպպոզիցիայի զարգացման ընթացքին և ուսումնասիրե այն:

Ինչի՞ց եր յելնում կոմսոմոլական ոպպոզիցիան, յերբ առարկում եր և պայքարում այն սկզբունքային գծի դեմ, վոր վարում եր ամբողջ կոմսոմոլը և վորի մասին մենք խոսեցինք վերը: Ինչի վրա եյին հիմնված նրա առարկությունները և ինչն եր դրդում կոմսոմոլական ոպպոզիցիային կռվելու կոմսոմոլի այս միակ ուղիղ գծի դեմ:

ԿՈՄՍՈՄՈԼՅԱՆ ՕՊՊՈԶԻՑԻԱՆ ՄԻԱԲԱՆՈՒՄ ԵՐ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՕՊՊՈԶԻՑԻԱՅԻ ՀԵՏ

Կոմսոմոլական ոպպոզիցիայի հիմնական սխալը, վորից բխում եյին մնացած բոլոր սխալները, այն եր, վոր կոմսոմոլական ոպպոզիցիան միաբան եր XIV համագումարի այսպես կոչված կուսակցական «Նոր» ոպպոզիցիայի հետ: Նախորդ և հետագա գրույցներում պարզաբանվում ե, թե ինչումն եյին կուսակցական ոպպոզիցիայի սխալները: Այստեղ մենք միայն կը թվենք այն, վորպեսզի ավելի պարզ յերևան մեր կոմսոմոլական ոպպոզիցիայի սխալները, վորն ամբողջովին, լրիվ կերպով և անվերապահորեն կուսակցական հարցերում միաբանում եր կուսակցական ոպպոզիցիայի հետ:

Կոմսոմոլական ոպպոզիցիան ամբողջովին կրկնում եր «Նոր կուսակցական ոպպոզիցիայի» սխալները, վոր չեր հավատում սոցիալիզմի շինարարության հնարավորությանը մեր յերկրում, թերագնահատում եր պրոլետարիատի համար բանվորների միության վճռական նշանակությունը գյուղացիության հիմնական մասսայի (միջակի) հետ, վոր ժխտում եր մեր պետական ձեռնարկությունների սոցիալիստական բնույթը, վոր չեր հասկանում կոոպերացիայի, իբրև գյուղը դեպի սոցիալիզմ տանող հիմնական ուղիի, նշանակությունը վոր խախտում եր բոլշևիկյան կուսակցության կազմակերպչական կառուցվածքի լենինյան սկզբունքները:

Ամբողջովին միաբանելով «Նոր ոպպոզիցիայի» այս պլատֆորմի հետ, կոմսոմոլական ոպպոզիցիան, սակայն, միայն կուսակցական ոպպոզիցիայի հասարակ շարունակությունը չեր կոմսոմոլում: Միաբանելով նրա հետ և ամբողջովին պաշտպանելով նրան, հիմնվելով «կուսակցական Նոր ոպպոզիցիայի» պլատֆորմի վրա, ջանալով կուսակցական ոպպոզիցիայի հայացքներն անցկացնել նաև կոմսոմոլում, դրա հետ միասին կոմսոմոլական ոպպոզիցիան պայքարում եր նրա համար, վոր կուսակցական ոպպոզիցիայի վոգու և հայացքների համապատասխան փոխե հենց կոմսոմոլի գիծը: Կոմսոմոլական ոպպոզիցիան մասնավորապես կոմսոմոլական և պատանեկական հարցերի վերաբերմամբ այնպիսի դիրք եր բռնում, վոր ամբողջովին բխում ե ընդհանուր քաղաքական և կուսակցական հարցերին վերաբերող նրա հայացքներից:

Այսպիսով, յելնելով կուսակցական կազմակերպչական իր հայացքներից, կոմսոմոլական ոպպոզիցիան վերաքննության յենթարկեց պատանեկան շարժման հիմնական հարցերը, փորձեց վերաքննել պատանեկական շարժման լենինյան հիմնական սկզբունքները: Հասկանալի յե, կոմսոմոլական ոպպոզիցիան պատանեկական շարժման հիմնական հարցերին վերաբերող իր այս գիծը իրագործում եր (ավելի ճիշտ, իրագործելու համար պայքարում եր), խախտելով բոլշևիկյան հիմնա-

կան կազմակերպչական սկզբունքները—գխացիալինը: Ֆրակցիոն աշխատանք—ահա այն կազմակերպչական ձևը, վոր ընդունեց նրանց գործունեությունը

Իսկ ինչ վերաբերում է կոմսոմոլական օպպոզիցիայի սկզբունքային հայացքներին, ապա նրանք (յեթե դիտենք նրանց իրենց զարգացման ընթացքի համաձայն) հիմնականում հանգում են հետևյալին:

ԳՅՈՒՂԱՑՅԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ԴԵՐԻ ՅԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԹԵՐԱԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՕՊՊՈԶԻՑԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ

Կոմսոմոլական օպպոզիցիայի առաջին և հիմնական սխալը—այդ պրոլետարական դիկտատուրայի պայմաններում գյուղացության աճող սերնդի (վոչ միայն բատրակ-չունևոր, այլ և միջակ յերիտասարդության) վերափոխման նշանակության թերագնահատությունն է: Այդ սխալը ցույց է տալիս, վոր կոմսոմոլական օպպոզիցիան չի հասկանում գյուղացության մեծամասնության հետ պրոլետարիատի միության պահպանման կարևորությունը և այդ պայմաններում պրոլետարիատի ղ ե կ ա վ ա ր ո ղ դերությունը:

Այս, արմատապես սխալ, միտումը գործնականապես արտահայտվեց նրանում, վոր փորձեր յեղան սահմանափակելու կոմսոմոլի ազդեցության շրջանը և գյուղացիական յերիտասարդության, հատկապես նրա միջակ տարրերի, ընդգրկումը:

Այսպես, օրինակ, կոմսոմոլական օպպոզիցիայի ներկայացուցիչներից մեկը, Համ. ԼԿՅԵՄ համամիութենական IV կոնֆերենցիայից քիչ առաջ հրատարակած մի հոդվածում պնդում էր, վոր կոմսոմոլի հետագա աճումը հնարավոր է միայն մեր արդյունաբերության աճման հեռանկարների հաշվառման և նրանում զբաղված բանվոր յերիտասարդության կադրի մեծացման պայմաններում:

Այս հայտարարության իմաստն այն է, վոր օպպոզիցիոներները անհրաժեշտ են համարում շարունակել կոմսոմոլի աճումը գյուղացիական յերիտասարդության հաշվին միայն այն դեպքում, յերբ բանվոր յերիտասարդության թիվը կը մեծանա արդյունաբերության և կոմսոմոլի մեջ:

ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՅՈՒՂԱՑՅԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ ՉԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՓՈՐՁԵՐ

Նման տեսակետն ըստ էության գյուղի կոմսոմոլի աճման մեխանիկական կարգավորման մի փորձ է, թելադրված այն վախից, վոր օպպոզիցիան ունի, թե միջակ յերիտասարդությունը կը հեղեղի կոմսոմոլը:

Իսկ առարկայորեն նման առաջարկը կը խախտեր գյուղացիական յերիտասարդության պրոլետարական ղեկավարությունը, կհրեր ԿՅԵՄ-ից գյուղացիական յերիտասարդությանը: Բացի այդ, մասսաների հետ գործ

ունեցող քաղաքական կազմակերպության ղեկավարության նման մոտեցումը վոչ մի կապ չունի լենինիզմի հետ: Չի կարելի միության աճումը կարգավորելիս հաշվի չառնել գյուղացիական յերիտասարդությանը, չի կարելի մոռանալ նրա տրամադրությունը, նրա կազմակերպության, հասարակական գործունեության ձգտումը և, մասնավորապես, ձգտումը դեպի կոմսոմոլ: Իսկ այդ ձգտումներն այն բանով չեն վորոշվում, թե արդյոք մեզ մոտ արդյունաբերության մեջ բավականաչափ յերիտասարդություն զբաղված է, թե վոչ, այլ ավելի բարդ պատճառներով: Հաշվի չառնել այդ պատճառները և այն հետևանքները, վոր բխում են նրանցից—վոչ մի կերպ չի կարելի:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱԿՏԻՎԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես մենք արդեն վերն ասել ենք, գյուղացիական յերիտասարդության մերձեցման այսպիսի միակողմանիությունը հղի է վտանգներով: Պակաս վտանգավոր չէ նույնպես գյուղի համար վոչ միայն բանվոր, այլև գյուղացիական յերիտասարդությունից ակտիվ դաստիարակելու ամբողջ կարևորությունը և նշանակությունը չհասկանալը: Իր ճառերից մեկում ընկ. Ստալինն ընդգծում էր գյուղացիական յերիտասարդությունից ակտիվ դաստիարակելու հենց այս խնդիրը, ակտիվ, վորը մեր բազան պիտի լինի գյուղում: Կոմսոմոլական օպպոզիցիան այս նույնպես չէր հասկացել, այդ դեռ քիչ է, նա պայքարում էր այդպիսի ակտիվի դաստիարակության դեմ, ձևականորեն յենթադրելով, վոր պրոլետարական ղեկավարություն նշանակում է, թե գյուղական բջիջներում պարտադրաբար պետք է ջահել բանվորը նստի: Անկասկած այս յեզրակացությունը խորապես սխալ է: Միության փոքր, բայց ամուր, քաղաքականապես գիտակից, կարգապահ պրոլետարական կորիզը կարող է և պետք է ղեկավարի գյուղացիական յերիտասարդության կոմսոմոլական մասսան, սրա համար օգտագործելով և դաստիարակելով ակտիվ նաև գյուղացիական յերիտասարդության լավագույն տարրերից:

ԳՅՈՒՂԱՑՅԱԿԱՆ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ

Կոմսոմոլական ազդեցությունը գյուղացիական յերիտասարդության վրա թուլացնելու և միության մեջ գյուղացիական յերիտասարդության մուտքն արգելելու այդպիսի փորձերի իբրև յերկրորդ օրինակ, կարելի է մատնանշել կոմսոմոլական օպպոզիցիայի առաջարկը գյուղացիական յերիտասարդության պատգամավորական ժողովների մասին կինբաժնի տիպով (այսինքն մշտական կազմով):

Խոսելով գյուղացիական յերիտասարդության մասին, կոմսոմոլական օպպոզիցիոներները գտնում էին, մոտավորապես, հետևյալ ձևով.«Մենք,—ասում էին նրանք,—պետք է մոտենանք միջակին նրա տնտեսության տեսակետից, արդյոք ուղղված է նա սոցիալիստական

անտեսության կողմը, արդյոք խիստ ձգտում չունի կուլակի կողմը...:»
Բայց ախր ո՞ւր կորչի միջակ յերիտասարդության այն մասը, վորին մենք մի անգամից մեր միության շարքերը չենք առնում: «Մենք,— ասում եյին ոպպոզիցիոներները,—պետք ե հարց դնենք միջակ յերիտասարդության ակտիվությունը կազմակերպելու մեր միության շուրջը: Մենք այդ ակտիվությունը կազմակերպելու խիստ շատ ձևեր ունենք՝ գյուղերիտդպրոց, գյուղատնտեսական խմբեր, ինչու առաջ չքաշենք նաև յերիտասարդության պատգամավորական խորհրդակցությունների ձևը»:

Այս առաջարկում նույնպես, ինչպես ավելի առաջ շարադրվածում, բոլորովին պարզ կերպով դրսևորվեց միջակի վախը: Առաջարկելով միության մեջ ընդունել միայն այն միջակներին, վորոնց տնտեսությունը —ինչպես արտահայտվում եր ոպպոզիցիան—ուղղված ե սոցիալիստականի կողմը, ոպպոզիցիան հենց դրանով, առաջին՝ ժխտում եր Համ. ԼԿՅԵՄ համամիութենական կոնֆերենցիայի այս հարցին վերաբերող տեսակետը միջակին միության մեջ ընդունելու մասին, և յերկրորդ՝ փաստապես միության դուռը փակում եր միջակ յերիտասարդության ճնշող մասսայի համար, վոր ապրում ե ու աշխատում մանր-սեփականատիրական, անհատական տնտեսության մեջ: Ոպպոզիցիան հենց դրանով փաստապես առաջարկում եր, վոր ինքը կոմսոմոլը կազմակերպե գյուղացիական յերիտասարդության մի այլ միություն, վորը վերջին հաշվով իրեն կը հակադրեր կոմսոմոլին և պրոլետարական ղեկավարությանը:

Անկասկած ե, վոր կոմսոմոլական ոպպոզիցիայի այս տրամադրությունները միևնույն տրամադրությունների արտացոլումն եյին, վորոնք կային կուսակցական ոպպոզիցիայի մեջ միջակի ու նրա նշանակության հարցի մասին:

Միջակի թերագնահատումը, նրա վախը նկատվում ե ինչպես առաջին, այնպես ել յերկրորդ դեպքում:

ԿՈՄՍՈՄՈԼԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Բացի այս սխալից—գյուղացիական յերիտասարդության վերադաստիարակության դերն ու նշանակությունը թերագնահատելուց և պրոլետարական ղեկավարության պայմանով պրոլետարիատի միությունը գյուղացության հետ պահելուց,—բացի սրանից, ոպպոզիցիայի յերկրորդ սխալն ե հանդիսանում կոմսոմոլում պրոլետարական ու կուսակցական ղեկավարության հակադրությունը, միությունը կուսակցության հակադրելը:

Կոմսոմոլական ոպպոզիցիան, քննելով ԿՅԵՄ կազմի և զանազան

սոցիալակ. խմբակների հաշվին (բանվորներ, գյուղացիներ, «մյուսները») միության աճման կարգավորման հարցը, մեխանիկորեն կոմսոմոլի վրա յեր տարածում կարգավորման նույն ձևերը և այդ հարցի այն մոտեցումը, ինչ վոր կուսակցության մեջ ե: Նրանք, մոտավորապես, հետևյալ ձևով եյին դատում. «Մեր կուսակցությունը պրոլետարական ե: Նա ձգտում ե իր շարքերում ունենալ բանվորների մեծամասնությունը: Կուսակցությունը գյուղացիներին ընդունում ե միայն բացառիկ դեպքերում և խիստ փոքր տոկոսով: Նույնն ե հարկավոր և կոմսոմոլում, վորովհետև, ասում են, թե «կոմսոմոլը նույնպես կոմմունիստական և պրոլետարական կազմակերպություն ե»: Այստեղ ակնհայտ մտքի խակություն կա: Մեր կուսակցությունը պրոլետարական, կոմմունիստական ե, կոմսոմոլն ել նույնպես—այս ճիշտ ե: Բայց դրա հետ միասին, կա և զանազանություն: Կուսակցությունը—ամբողջ պրոլետարիատի ավանգարդը և առաջնորդն ե: Իսկ կոմսոմոլը միայն յերիտասարդության կազմակերպությունն ե, ընդ վորում մասսայական կազմակերպությունը, վոր կոչում ունի «շարժարեր փոկ» լինել կուսակցության համար: Կուսակցության առաջ կանգնած ե պրոլետարիատի ամբողջ կռվի ղեկավարության խնդիրը, մինչդեռ կոմսոմոլի առաջ կանգնած ե յերիտասարդության մասսայի դաստիարակության խնդիրը կուսակցության ղեկավարությամբ: Այս պատճառով կուսակցությունն ստիպված ե հատկապես զգույշ լինել իր կազմի ընտրանքի իմաստով: Իսկ կոմսոմոլը գործ ունի բանվորների և գյուղացիների յերիտասարդ սերնդի հետ, վորոնք ավելի հեշտ են յենթարկվում դաստիարակչական ներգործության և վորոնք պետք ե ակտիվ հասարակական և քաղաքական կյանքի մեջ քաշվեն:

Վերջապես, մարդկանց նոր սերնդի նախապատրաստման և դաստիարակության խնդիրը, սերունդ, վոր արդեն դաստիարակվում ե խորհրդային կարգի պայմաններում և կոչված ե սոցիալիզմ կառուցելու, նույնպես պահանջում ե, վոր կուսակցության համեմատությամբ լայնացվի կոմսոմոլի կողմից մասսաներն ընդգրկելու շրջանակները: Անթույլատրելի չե այս չհասկանալ:

Բայց ոպպոզիցիան չկարողացավ հասկանալ այս: Ընդհակառակը, նրա կողմից ակնհայտ փորձեր յեղան կոմսոմոլը հակադրել կուսակցությանը, «հավասարացնել» կոմսոմոլն ու կուսակցությունը նրանց նշանակության և դերի իմաստով: Փոխանակ ընդգծելու կուսակցության ղեկավար դրությունը կոմսոմոլի վերաբերմամբ, կոմսոմոլական ոպպոզիցիոներները, ընդհակառակը, փորձեցին ամեն կերպ վարկաբեկել կուսակցության ղեկավար դերը, խախտել նրա հեղինակությունը կոմսոմոլի աչքում:

Լիովին ակնհայտ է, որ կոմսոմոլի ներքում կուսակցության և նրա լենինյան ԿԿ հեղինակության խախտման այդ քաղաքականությամբ կոմսոմոլական օպպոզիցիան նպատակ ուներ օգտագործել միությունն իբրև պայքարի միջոց իր սխալ, ոչ-լենինյան հայացքների համար:

ՈՎ Է «ԱՎԵԼԻ ՁԱԽ»— ԿԻՄ-Ը, ԹԵ ԿՈՄԻՆՏԵՐՆԸ

Կոմսոմոլական օպպոզիցիոներներից մեկը համարձակություն ունեցավ պնդելու, թե կոմսոմոլը կուսակցությունից «ավելի ձախ» գտնվեց այն հիման վրա, որ «ԿԻՄ-ը Կոմինտերնից մի ամիս առաջ դատապարտեց տրոցկիզմը»: Սրանում այլ բան չկար, քան ցանկություն՝ խախտել վստահությունը դեպի Համ. ԿԿ(բ): Պարզ է, որ հարցըն այդպես դնելով, օպպոզիցիան ուզում էր հեշտացնել Համ. ԼԿԵՄ մեր կուսակցությանը հակադրելու հնարավորությունը, բանվոր երիտասարդության ղեկավար դերը գյուղացիական երիտասարդության վերաբերմամբ կուսակցական ղեկավարությանը հակադրելու հնարավորությունը, այն ղեկավարության, որ իրականացնում է կուսակցությունն ամբողջ միության վերաբերմամբ: Օպպոզիցիոներները հայտարարում էին, որ, իբր թե «չի կարելի կարծել, թե պրոլետարական կորիզի ղեկավար դերը կարող է ապահովվել կուսակցական ղեկավարության փաստի գոյությամբ խսկ: Այդպես դատել,—ասում էին նրանք,—այդ նշանակում է իրերը գլխիվայր կանգնեցնել»:

Ի՞նչն է այստեղ սխալ: Սխալ է պնդել, որ կոմսոմոլի պրոլետարական կորիզը, մեր կուսակցության հին բալշևիկյան կադրերի նման, ինքնին կարող է ապահովել միության ուղիղ գիծը: Չէ՞ որ կոմսոմոլի պրոլետարական կորիզը կազմում են այն երիտասարդ բանվորները, որ մեծացել են ու իրենց դասակարգային ինքնագիտակցությունը ձևավորել պրոլետարիատի դիկտատուրայի եպոխայում, որ չեն անցել ցարիզմի ու կապիտալիզմի դեմ մղվող պայքարի ծանր դպրոցը, որ մեծ մասամբ չգիտեն կուսակցության պատմությունը, չեն յուրացրել, ինչպես հարկն է, մարքսիզմի-լենինիզմի թեորիան:

Անվիճելի յէ, որ կոմսոմոլում ղեկավար դերը պատկանում է բանվոր երիտասարդությանը: Բայց ճիշտ այդպես էլ պետք է անվիճելի լինի և այն, որ այդ ղեկավարության պահպանման լավագույն երաշխիքը հանդիսանում է կուսակցության ղեկավար ազդեցությունը կոմսոմոլի վրա: Այդ յերկու ուժերը հակադրել չի կարելի:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿՅԵՄ «ՉԵԶՈՔՈՒԹՅԱՆ», ՅԵՎ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ» ԹԵՈՐԻԱՆ

Կոմսոմոլական օպպոզիցիայի պահանջներից մեկը կոմսոմոլի մասնակցության պահանջն էր այն բոլոր դիսկուսիաներին և տարաձայնություններին, որոնք տեղի յեն ունեցել ու կարող են տեղի ունենալ կուսակցության մեջ: Օպպոզիցիոներներն

այս հարցը դնում էին, իբրև անփոփոխ պահանջ միշտ և բոլոր պայմաններում:

Կոմսոմոլը կուսակցությունից «ավելի ձախ» համարելով, կուսակցական օպպոզիցիայի հետ միասին մեր Համ. ԿԿ (բ) ԿԿ, ու նրա հետ էլ Համ. ԼԿԵՄ ԿԿ իբր թե՛ «կուլակային» քաղաքականություն վարող համարելով, կոմսոմոլական օպպոզիցիայի համար դժվար չէր այն մտքին հասնել, որ պետք է «ուղղել» կուսակցության քաղաքականությունը, այդ, իբրք բոլորովին ուղիղ, լենինյան կուսակցական քաղաքականության դեմ մղվող կռվի մեջ քաշելով յերիտասարդությունը:

Օպպոզիցիոներները հայտարարում էին, որ իբր թե «միության մանր-բուրժուական տարրերը շարունակ ձգտում էին, ձգտում են հաճախ և այժմ,-կոմսոմոլը կուսակցությունից հեռացնել, գլխավորապես, միությունը ներկուսակցական կյանքի վճռական մոմենտներին մասնակցելուց հեռու պահելու միջոցով»:

Կոմսոմոլական օպպոզիցիայի այս պնդումը վոչ մի հիմք չունի, բացի յերիտասարդությունը կուսակցության դեմ օգտագործելու ցանկությունից, նրա գործերին «մասնակցելու» միջոցով:

Ինչն է, որ տվյալ դեպքում կոմսոմոլական օպպոզիցիան չի հասկացել կամ, ավելի ճիշտ, չի ցանկացել հասկանալ: Այն, որ կոմսոմոլը բանվոր և գյուղացի յերիտասարդության մասսայական դաստիարակչան կազմակերպությունն է, որ աշխատում է կուսակցության ղեկավարությամբ, և որ կոմսոմոլի մասնակցությունը ներկուսակցական կյանքի այս կամ այն հարցերում դաստիարակչական նշանակություն ունի. այդ մասնակցությունը չի կարող օգտագործվել կուսակցության քաղաքականության վրա ճընշում գործադրելու կամ կուսակցական գիծն «ուղղելու» համար:

Կոմսոմոլի օպպոզիցիան չէր հաշվառում նույնպես և այն, որ կոմսոմոլում, կուսակցական փոքրիկ կորիզի կողքին, գյուղացիական յերիտասարդության նշանակալի մասսայի գոյությունը կարող է այն բանին հասցնել, որ կուսակցության ամեն տեսակ դիսկուսիաներին մասնակցելը կանբարոյացնի, կը պառակտի կոմսոմոլը:

Այս պատճառով պարզ է, որ միության մասնակցությունը կուսակցական կյանքի այս կամ մոմենտներին ամեն մի տվյալ դեպքում վորոշվում է յերկրի, կուսակցության, կոմսոմոլի և այլն դրության համաձայն:

Կուսակցական օպպոզիցիայի լիդերներից մեկը, ընկեր Զինովևը, յերբ նա դեռ հանդես չէր գալիս իբրև օպպոզիցիոներ, կոմսոմոլի VI համագումարում այս հարցի վերաբերյալ բոլորովին ճիշտ կերպով

թյան հակադրությունը կուսակցական կորիզին ու ղեկավարությանը:

Ահա ում մտքերն ու տրամադրություններն էր արտահայտում կոմսոմոլական օպոզիցիան: Պարզ է, որ ամբողջ միությունը պետք է գիտակցեր, թե ինչքան մեծ էր օպոզիցիայի կողմից կոմսոմոլի լենինյան միությունը խանգարելու փորձերի վտանգը: Հենց այս պատճառով կոմսոմոլի միության համար մղվող կռիվը պետք է հատկապես կարևոր հանդիսանա:

Քանի գնա, այնքան ավելի մեծ դժվարություններ կը կանգնեն մեր կուսակցության և կոմսոմոլի առաջ: Քանի գնա, այնքան ավելի շատ մեր միության մեջ կգա նոր, այժմ միայն արդյունաբերության մեջ մտնող բանվոր յերիտասարդություն և գյուղից յեկած նոր յերիտասարդություն: Այս պատճառով կուսակցության և կոմսոմոլի գծի միության համար լենինյան կոմսոմոլի համար մղվող կռիվը, ամեն տեսակ հակալենինյան թեքումների դեմ մղվող կռիվը պետք է հատկապես վճռական լինի: Կոմսոմոլը պետք է շարունակ պատրաստվի կռիվ մղելու այս թեքումների դեմ:

Մենք հաստատեցինք, թե ինչքան մեծ է կոմսոմոլի դերը և ինչքան կարևոր ու անհրաժեշտ է կոմսոմոլի դերի ու դասակարգային էության ուղիղ ըմբռնումը և կուսակցության ու կոմսոմոլի միջև ուղիղ փոխհարաբերություններ հաստատելը: Մենք ցույց տվեցինք նույնպես, թե ինչքան վնասակար ու վտանգավոր են այնպիսի յերևույթները, ինչպիսին կոմսոմոլական օպոզիցիան է:

Այժմ մենք կանցնենք կոմսոմոլի հերթական խնդիրների հարցերին, այն հարցին, թե ինչպես կոմսոմոլը պետք է գործնականապես կատարի կուսակցության շարժարեր փոկի, պահեստի և օգնականի իր դերը: Այս խնդիրների ուղիղ լուծումը հնարավոր է միայն այն պայմանով, յեթե մենք յելնենք այն ընդհանուր քաղաքական գծից, որ հաստատվեց Համ. ԿԿ (բ) XIV համագումարում և Համ. ԼԿՅԵՄ VII համագումարում:

2. Կոմսոմոլի աշխատանքի աշխուժացումը

ԿՈՄՍՈՄՈԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ Կոմսոմոլի հաջողությունները և նվաճումները բավական մեծ են: Կոմսոմոլը ներկայումս ընդգրկում է մեր յերկրի ամբողջ բանվոր յերիտասարդության համարյա կեսը: Դրա հետ միասին ուժեղացել է կոմսոմոլի կողմից նաև գյուղացի յերիտասարդության ընդգրկումը: Անկասկած են նույնպես կոմսոմոլի հաջողությունները նաև տնտեսական ասպարեզում.—մենք տեսնում ենք, թե ինչպես բանվոր յերիտասարդության դրությունը նշանակալի չափով լավանում է: Բանվոր և գյուղացի յերիտասարդության ակ-

տիվության ընդհանուր բարձրացման կողքին ուժեղացավ նաև ակտիվությունը կոմսոմոլի ներսում.—կոմսոմոլիստները նշանակալի չափով քաղաքականապես ավելի ակտիվ ու ավելի գիտակից դարձան: Կոմսոմոլում այն ակտիվությունը և քաղաքական գիտակցականության ուժեղացումը նշանակալի չափով հետևանք է հանդիսանում կոմսոմոլի այն սիստեմատիկ աշխատանքի, որ նա կատարում էր կոմսոմոլի մասսաների քաղաքական կրթության ասպարեզում: Վերջին տարիների ընթացքում ուժեղացավ կոմսոմոլի ակտիվ կադրերի աճումը: Շատ կոմսոմոլիստներ ակտիվ աշխատողներ դարձան աշխատանքի այլ ասպարեզներում՝ խորհրդային, արհմիութենական, կոոպերատիվ:

Անկասկած, վերջին տարիների ընթացքում ուժեղացավ կուսակցության և կոմսոմոլի կապը: Կուսակցության և միության այս մերձեցմանը և ԿՅԵՄ մեջ կուսակցության հեղինակության ուժեղացմանը նշանակալի չափով նպաստեց կոմսոմոլի մասնակցությունը կուսակցության և միության հակալենինյան թեքումների դեմ մղած կռվին:

Այս բոլոր նվաճումները հանդիսանում են ոչ միայն յերկրի ընդհանուր լավացման ցուցանիշը, այլև հենց կոմսոմոլի աշխատանքի ուժեղացման, յերկրի ընդհանուր կյանքում նրա դերի ուժեղացման ցուցանիշը: Բայց դրա հետ միասին անհրաժեշտ է, սակայն, ընդգծել նաև թերությունները և նպաստել նրանց ամենաարագ վերացմանը:

ՄԵՐ ԳԼԽԱՎՈՐ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Յեթե խոսում ենք կոմսոմոլի թերությունների ու հիվանդոտ յերևույթների մասին, ապա կարելի կը լինի այն բաժանել յերեք հիմնական տեսակի: Առաջին՝ կոմսոմոլի շարքերի աճման կողքին, նրանց մեծացման արագ թափի հետ աստիճանաբար շարունակ մեծանում է նաև կոմսոմոլի հոսանուտությունը: Անորմալությունը նրանումն է կայանում, որ շատ հաճախ մեզ մոտ յերիտասարդությունը գալիս է և ապա որոշ ժամանակ անց՝ հեռանում: Դրա հետ միասին, կոմսոմոլի կազմի հոսանուտության այս յերևույթներին ուղեկցում է անկարգապահության և սանձարձակության աճումը կոմսոմոլի շարքերում:

Յերկրորդ՝ կոմսոմոլի այս հիվանդագին յերևույթների պատճառը նշանակալի չափով հանդիսանում է այն, որ չենք կարողանում մեր աշխատանքը, աշխատանքի մեր ձևերը և բովանդակությունը զուգորդել յերիտասարդության ընթացիկ պահանջների հետ: Շատ հաճախ յերիտասարդությունը մի բան է ուզում, իսկ կոմսոմոլական կազմակերպությունները, հաշվի չառնելով այդ պահանջները, մի ուրիշ կողմ են քաշում: Յերիտասարդության համար կենդանի, հիվանդոտ հարցերը մենք դեռ չենք սովորել ուղիղ

և յուրաժամանակ դնել ու լուծել։ Շատ հաճախ շաղակրատությունը փոխարինում է կենդանի, կոնկրետ գործին։ Մենք դեռ չենք կարողանում ուղիղ կերպով զուգորդել յերիտասարդության անձնական ձգտումները նրա հասարակական-քաղաքական պարտականությունների հետ։ Շատ հաճախ մեզ մոտ դեռևս անձնականն ու հասարակականը հակադրվում են իրար։

Յերրորդ՝ մեր անկարողությունը հաշվառելու աշխատանքի վոչ միայն քանակը, այլև վորակը։ Շատ դեպքերում մենք նայում ենք, թե ինչքան է արված, ինչքան է ընդունված միության մեջ, ինչքան զրույց ու ժողով է արված, բայց քիչ ենք մտածում այն մասին, թե ինչպես է արված, ինչ յեղան միության մեջ ընդունվածները, ինչպես են տարվում մեր զրույցներն ու ժողովները։ Քանակի համար մղած պայքարում մենք հաճախ մոռանում ենք վորակը։

Մենք կը կարողանայինք մեր աշխատանքի դեռ ավելի շատ թերությունները թվել։ Բայց նրանք բոլորը, ընդհանուր առմամբ, տեղավորվում են մեր վերը մատնանշած շրջանակների մեջ։

Ինչ վերաբերվում է կոմսոմոլում յեղած այս յերեք ամենաբնորոշ յերևույթներին, ապա նրանցից ամենաբնորոշը, ամենակարևորը և վճռականը հանդիսանում է վերը մեր կողմից մատնանշած անջատումը, վոր գոյություն ունի կոմսոմոլի աշխատանքի ձևերի, մեթոդների և բովանդակության միջև մեկ կողմից, և յերիտասարդության պահանջների միջև մյուս կողմից։

ԿՈՄՍՈՄՈԼԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Իբրև օրինակ վերցնենք բանվոր յերիտասարդությունը։ Ինչի՞ յենք հանդիպում տվյալ դեպքում։ Արտադրության մեջ է գալիս նոր յերիտասարդություն, վոր ունի մի ամբողջ շարք պահանջներ. այդ պահանջները մենք պետք է նկատի ունենանք և բավարարենք։

Այդ յերիտասարդությունը ցանկություն ունի լավացնել իր նյութական դրությունը (բարձրացնել աշխատավարձը առաջին հերթին)։ Նա ձգտում է բարձրացնել իր վորակումը, ցանկանում է հարկ յեղած արհկրթություն ստանալ։ Նա ցանկանում է իմանալ, թե ընդհանրապես ինչ տեղ է բռնում ինքն արտադրության և ձեռնարկության մեջ.—արդյոք չեն շահագործում իրեն։ Շատ հաճախ յերիտասարդությունը ձգտում է մասնակցություն ունենալ արտադրության ընթացքին, ցանկանում է ազդել ձեռնարկության բախտի վրա։ Ցանկանում է, վերջապես, առողջ, հանգիստ, հետաքրքիր զվարճություններ ունենալ։

Այս հատկապես վերաբերվում է բանվոր յերիտասարդությանը։ Հարց է առաջ գալիս, արդյոք բավարարում ենք մենք նրա պահանջները։ Վո՛չ, վոչ միշտ, վոչ լրիվ և վոչ ամբողջովին։ Հաճախ բոլորովին չենք բավարարում։

Նշանակում է, հարկավոր է սկսել այդ պակասը լրացնել։ Հարց է առաջ գալիս—ինչպես։ Ամեն մի գործ պետք է հմտորեն սկսել։ Այս գլխավոր խնդրի լուծման ժամանակ մենք կարող ենք կամ չափն անցնել կամ բանը կիսատ թողնել։ Կարելի չէ ուղղակի սկսել ամեն մի պահանջ անխտիր այսպես ձևակերպել՝ պահանջել, հաշվի չառնելով այն, թե արդյոք պետությունը կարող է այդ պահանջները կատարել—աշխատավարձը բարձրացնել, ավելորդ դպրոց բանալ և այլն։ Իսկ կարելի չէ նաև մյուս ծայրահեղության մեջ ընկնել—անխտիր ասել, թե այս չի կարելի, վոչ էլ այն, մյուսն էլ սահմանված չէ և այլն։ Պարզ է, վոր այստեղ մենակ տարերքի արձակ թողնելը վտանգավոր է.—աշխատավարձի անմիտ բարձրացումը և բանվորների մի մասի (յերիտասարդության) պայմանների լավացումն այնտեղ կը հասցնի, վոր նա կընդհարվի հասակավոր բանվորների և պետության հետ։ Այդ քաղաքականությամբ յերիտասարդությունը կը դաստիարակվեր իբրև ինդիվիդուալիստ, վոր չի ցանկանում այլ բան գիտենալ, բացի իր անձնական շահերից։

Բայց անհեթեթ է նաև մերժել յերիտասարդության ավելի լավ ապրելու, ավելի շատ վաստակելու ցանկությունը, վորովհետև մեր պայմաններում այդ միակ միջոցն է, վորպեսզի յերիտասարդությունը բարձրացնի իր արտադրական վորակումը (կվալիֆիկացիան)։

Բանը նրանում է, վորպեսզի կարողանանք զուգորդել անձնական շահն ընդհանուր գործի հետ, սոցիալիզմի շինարարության գործի հետ մեր յերկրում։ Բանը նրանում է, վորպեսզի յերիտասարդությունը սովորի իրը, անձնականն ընդհանուր գործի հետ կապել։

Բայց գործնականապես ինչպես անցկացնել այս։ Այս հարցի պատասխանն արդեն տվել են կոմսոմոլի VII համագումարը և Համ. ԿԿ (բ) XIV համագումարը։ Յերիտասարդության դրության լավացման հիմնական միջոցը—պատասխանել են նրանք,—նրանում է կայանում, վորպեսզի աշխատավարձի բարձրացումը, աշխատանքի վարձատրության բարձրացումն ընթանա յերիտասարդության վորակումի բարձրացման համապատասխան։ Մեր պայմաններում այս յերիտասարդության նյութական դրության և կենցաղային պայմանների լավացման միակ ուղիղ ճանապարհն է։

Ֆաբրիկա-գործարանային դպրոցների (ФЗУ), անհատական և խմբական (բրիգադային) աշկերտություն, ընդհանուր-կրթական և արտադրական, պրոֆտեխնիկական գիտելիքների կուրսերի և այլն կազմակերպումը,—այս բոլորը պետք է յերիտասարդության աշխատանքի պայմանների և կենցաղի լավացման միջոցը դառնա։ Յերիտասարդության վորակումի բարձրացման այս ձևերի շինարարության գործի մեջ անհրաժեշտ է քաշել հենց իրեն յերիտասարդությանը։ Նրա մասնակցությունն այս շինարարությանը մի միջոց է նրա հասարակական դաստիարակության, վորովհետև այդպիսի գործը հասարակական գործ է։ Պարզ է, վոր այս ամբողջ աշխատանքը պետք է կատարվի վորոշ վորակման բանվորական ձեռքերի նկատմամբ արդյունաբերության ունեցած պահանջների համապատասխան։

Բանվոր յերիտասարդությանը ձեռնարկության արտադրական և հասարակական կյանքի մեջ քաշելը պետք է միջոց հանդիսանա դաստիարակելու նրա մեջ գիտակից, տնտեսատերի վերաբերմունք դեպի իր ձեռնարկությունը և դեպի մեր ամբողջ ժողովրդական տնտեսությունը։ Յերիտասարդության լայն մասսաների արհեստակցական աշխատանքի մեջ քաշելը պետք է նպաստի նրա դասակարգային, պրոլետարական դաստիարակությանը, նրա մեջ պրոլետարական դիսցիպլինի մշակման և նրա կողմից արտադրության և ձեռնարկության մեջ իր տեղը գիտակցելուն։

Շատ հիվանդոտ հարց է յերիտասարդության գործազրկության հարցը։ Քաղաքացիական պատերազմի, քայքայման տարիները նպաստեցին այն բանին, վոր մենք այժմ մեր ձեռնարկություններում չենք կարող տեղավորել բոլոր ազատ բանվորներին։ Հատկապես ծանր է յերիտասարդության դրությունը, վորովհետև նա ավելի քիչ է վորակավորված։ Պարզ է, վոր այս նրա մեջ առաջ է բերում հիվանդագին տրամադրություն և հոռետեսություն։ Այս նշանակալի չափով անդրադառնում է նաև աշխատող յերիտասարդության վրա։ Այստեղ խնդիրն այն է, վորպեսզի ամեն միջոցով թեթևացնենք նրա ծանր դրությունը։ Արտելների կազմակերպությունը և ուրիշ նման միջոցները, միության այս ուղղությամբ կատարվող բացատրական աշխատանքի հետ միասին, պետք է հանդիսանա այդ յերիտասարդության դաստիարակության և դրության լավացման միջոցը։

Հարկավոր է սովորեցնել բանվոր յերիտասարդությանը տեսնել և հասկանալ իր արած ամեն մի փոքրիկ

գործի կապը և նշանակությունը սոցիալիզմի շինարարության մեծ խնդրի հետ—սովորեցնել զուգորդելու «փոքր» «մեծի» հետ։

ԿՈՄՍՈՄՈԼԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂԱՑԻ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նույնն է նաև գյուղացի յերիտասարդության վերաբերմամբ։ Այժմ մենք նկատում ենք գյուղում ընդհանուր վերելք։ Այս հատկապես խիստ անդրադառնում է յերիտասարդության վրա։ Գյուղացի յերիտասարդութ. ԿՅԵՄ մեջ մանելու աճումը միայն հաստատում է այս։ Ի՞նչ ենք նկատում մենք այժմ գյուղում։ Բատրակ ու չունևոր յերիտասարդությունը ձգտում ունի պաշտպանելու և լավացնելու իր (կամ հավաքական) տնտեսությունը։ Միջակ յերիտասարդության այս ձգտումն էլ ավելի ուժեղ է։ Չունևոր ու միջակ ակտիվ գյուղացությունը և յերիտասարդությունը, մանավորապես, ձգտում են այն բանին, վորպեսզի իրենց դրությունը լավացնեն իրենց արտադրության լավացման, տնտեսության ավելի առաջավոր ձևերի անցման միջոցով։ Նույն այդ նպատակով նրանք ձգտում են ավելացնել նաև իրենց ընդհանուր գիտելիքները։ Դրա հետ միասին յերիտասարդությունը գյուղում անպայման ձգտում ունի դեպի զվարճության նոր ձևերը, դեպի կենցաղի նոր ձևերը։

Հարց է առաջ գալիս, ի՞նչ պետք է անենք մենք այս պայմաններում։ Իհարկե, վոչ թե պետք է կռվենք այդ ցանկությունների դեմ, այլ ընդհակառակը, ամեն կերպ ձգտենք այն բանին, վորպեսզի գյուղացիների իրենց անհատական տնտեսությունը լավացնելու ցանկությունը զուգորդենք սոցիալիստական շինարարության ընդհանուր շահերի հետ։ Այստեղից պարզ է, վոր կոմսոմոլը պետք է պայքարի կոլեկտիվ, կոոպերատիվ ունակությունների (навык) և աշխատանքի ձևերի զարգացման համար։

Այսպես, որինակ, այս տեսակետից կարևորագույն նշանակություն և դեր պետք է խաղա գյուղում գյուղատնտեսական խմբակների, գյուղացիական յերիտասարդության դպրոցների, հասակավորների համար գյուղացիական կուրսերի կազմակերպումը։ Այս գործում քիչ դեր չպետք խաղա կոոպերացիան և չունևորների համար կուլակների դեմ մղած կռիվը։

Չունևորներին ոգնելը նույնպես պետք է կոմսոմոլի բջիջի կարևորագույն գործերից մեկը լինի։ Այս խնդիրը մենք կարող ենք իրականացնել տնտեսական ոգնության ձևով (չունևորների անհատական և կոլեկտիվ տնտեսությանն ոգնելը, արտելներ, արհեստային դպրոցարհեստանոց կազմակերպելը և այլն)։ Քաղաքական ոգնությունը պետք է արտահայտվի նրանում, վոր աջակցենք կուսակցությանը չունևոր-

ների խմբակների կազմակերպման, չունևորներին խորհրդային, կոոպերատիվ և այլ հիմնարկությունները քաշելու, բատրակներին արհմիության մեջ քաշելու ժամանակ։

Այս բոլորը, կոմսոմոլի բջիջի վորակման բարձրացման պայմանում, դրա հետ միասին պետք է հանդիսանա այդ աշխատանքով կոմսոմոլխաների կոմմունիստական դաստիարակության միջոցը։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ԿՈՄՍՈՄՈԼԻ ՄԵՋ

Բայց մենք այս բոլոր խնդիրները կարող ենք լուծել միայն այն պայմանով, յեթե նրանց իրագործման համար մղվող պայքարի մեջ քաշվի յերիտասարդության ամբողջ մասսան։

Իսկ այդ կարելի յե անել միայն այն դեպքում, յեթե մեր աշխատանքի բոլոր մեթոդները փոխվեն աշխուժացման ուղղությամբ։ Ավելի շատ պարզություն, ավելի շատ գործ, ավելի քիչ պոլիտիկանություն (հարկավոր չե քշացնել «պոլիտիկան»)—ահա թե ինչը պետք է նպաստի աշխատանքի աշխուժացմանը։ Այն ժամանակ կոմսոմոլի ամեն մի շարքային անդամ և անկուսակցական կը կարողանան այս «հասարակ», փոքր գործը կատարել, գիտակցելով իրենց վրա վերցրած պարտականության ամբողջ կարևորությունը։

Այս իրականացնելու կարևորագույն միջոցը կոմսոմոլական դեմոկրատիան է։ Այս նշանակում է, վոր յերիտասարդությանը վորևե կերպ ճնշելը, հրամայելը, ահ ազդելը պետք է վերացվի։ «Հարկադրանքի մեթոդները պետք է փոխարինվեն համոզելու մեթոդներով» (Համ. ԿԿ (բ.) XIV համագումարի բանաձևից)։ Այս նշանակում է, վոր կոմսոմոլական աշխատանքի բոլոր կարևորագույն սկզբունքային հարցերը պետք է քննության առնվեն և վճռվեն ամբողջ միության կողմից։ Մեր ժողովները պետք է թեթևանան հարցերի ավելորդ կճեփից։ Նրանց տեղը պետք է բռնեն յերիտասարդությանը հուզող հարցերը։ Այժմ, որինակ, շատ հաճախ մեր ժողովներում քննում են 15—17 հարց, իսկ իմաստ չկա—խոսում են միայն ընդունելությունների, դիսցիպլինի, հեռացումների մասին։

ԿՈՄՍՈՄՈԼԻ ԿԱԶՄԻ ՀՈՍԱՆՈՒՏՈՒԹՅՈՒՆԸ

Ինչու յեն մեզ մոտ շատերը դուրս գալիս կոմսոմոլից։ Հենց այն պատճառով, վոր «ձեզ մոտ անելու բան չկա, հետաքրքիր չե, վոչինչ չի կարելի սովորել»,—պատասխանում է միությունից հեռացող կոմսոմոլխան։ Յեվ հաճախ այս ճիշտ է։

Մեր բջիջների մեծամասնությունն այնպես են վարում աշխատանքը, վոր դրա շնորհիվ միջանցիկ բակերի են փոխվում։ Յերիտասարդությունը «գործ» է ուզում, «գիտելիքներ». գյուղում յերիտասարդությունն ուզում է «գործով զբաղվել» (այսինքն տնտեսու-

թյան լավացումով)։ Յերիտասարդությունը գոհ է այն բջիջներում, ուր կարողացել են սոցիալիզմի համար մղվող կռիվը զուգորդել յերիտասարդության կրթության, նրա տնտեսության լավացման (գյուղում) համար մղվող կռվի հետ, ուր թեկուզ մի քիչ զվարճություններ կան։ Այս նույնպես անհրաժեշտ է հաշվառել։

Յերբ խոսում են դիսցիպլինի անկման մասին, ապա հաճախ թերագնահատում են հենց նոր ասածը։ Պարզ է, վոր ժողովները հաճախելու ցանկությունը չքանում է, յեթե նրանք ձանձրալի յեն, յեթե «չորացնում են» բջիջի ամբողջ կյանքն ու աշխատանքը։ Հասկանալի յե, վոր դիսցիպլինի անկումը կարելի յեր բացատրել նաև ուրիշ պատճառներով։ Որինակ՝ դիսցիպլինի անկումը նշանակալի չափով հետևանք է յերիտասարդության այն նոր շերտերի հոսանքին միության մեջ, վորոնք դեռ գործարանային ուսումը չեն անցել, վորոնք դեռ իրենցից դեն չեն գցել «բլուզով» ջահելի կոպտությունը։ Բայց նշանակալի չափով այդ կախված է նաև մեր աշխատանքի վորակից։

Պարզ է, վոր աշխատանքի ընդհանուր լավացման կողքին անհրաժեշտ է վճռականորեն պայքարել նաև դիսցիպլինը խանգարողների դեմ, նրանց դեմ, վորոնք լավացում չեն ցանկանում, այլ միայն բարոյալքում են կոմսոմոլի շարքերը։

ԿԵՆՑԱՂ։ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱ

Կենցաղի հարցերը հատկապես սուր կերպով կանգնած են յերիտասարդության առաջ։ Մասնավորապես, միության մեջ դեռևս չի վերացված անձնական յերևույթները, կենցաղային և ընտանեկան սանձարձակությունները, շինծու «դատարկապորտությունը»։ Այս բոլորը հին, մասսաներից կտրված ինտելլիգենցիայի և բոյակային, քաղքենիական, մանր-բուրժուական ու անարխիստական տարրերի իդեոլոգիայի մնացորդներն են, վորոնք, իհարկե, կոմմունիստ-պրոլետարներին սազ չեն գալիս։ Համ. ԿԿ (բ.) XIV համագումարը բոլորովին ճիշտ ասաց, վոր «պետական և կոոպերատիվ տնտեսությունն իրենց ուսերի վրա կրող կադրերը կկարողանան ուղիղ և հաղթականորեն վարել գործը միայն այն ժամանակ, յերբ ավելի ճշգրիտ և ավելի ճիշտ «կհաշվեն, կաշխատեն և կապրեն»։

Նեպի շրջափակման արդի պայմաններում նոր կենցաղի համար մղվող կռիվը հատկապես կարևոր նշանակություն է ձեռք բերում, վորովհետև «գայթակղությունները» անհամեմատ ավելի շատացել են, քան հեղափոխության առաջին տարիներում եյին։

Մասնավորապես, այս կռվում կոչված է ոգնելու ֆիզկուլտուրան.—այդ հզոր միջոց է, վորի ոգնությամբ կարելի յե և «պարպել»

ուրախանալու մեր ցանկությունները, և «ցատկոտել», և դրա հետ միասին այդ իրագործել խելացի կերպով ու կոլեկտիվի մեջ:

«ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ» ՅԵՎ «ԿՈՒԼՏՈՒՐԱՆ» «ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՀԵՏ «ՇԱՂԿԱՊԵԼՈՒ» ՄԱՍԻՆ

Այն գոյավիճակի ծանրությունը, վորի մեջ գտնվում ենք, այն դժվարությունները, վոր դեռ հանդիպելու յենք մեր ճանապարհի վրա,—այդ բոլորը պահանջում են, վորպեսզի վերացվեն այնպիսի անորմալ բաներ, ինչպես «կոմամբարտավանությունը», պաշտոնական լավատեսությունը, յերբ հայտարարում են, թե մեզ մոտ ամեն ինչ «բարեհաջող» ե: Այս քաղցր յերգերը պետք ե վանել հարցերի առողջ մոտեցումով, իրերի դրության ուղիղ և ճշմարիտ գնահատումով:

Անհրաժեշտ ե նույնպես պայքարել կոմսոմոլի շարքերում յեղած «հոռետեսության», ախ ու վաշի դեմ: Իհարկե, յերիտասարդության համար նշանակալի չափով ավելի դժվար ե դրությունն ըմբռնել, քան, որինակ, հասակավոր պրոլետարների համար: Նա քաղաքական և կենսական ավելի քիչ փորձ ունի, և նրա համար ավելի հեշտ ե վհատության գիրկը նետվել և մեր յերկրում սոցիալիզմի շինարարության վերաբերմամբ թերահավատության մեջ ընկնել:

Իսկ այդպիսի տրամադրություններ վոմանց մեջ մենք արդեն նկատում եյինք, յերբ վորոշ կոմսոմոլիստներ հայտարարում եյին՝ թե «ամեն ինչ վատ ե. գուցե վոչինչ դուրս չի գա», արդյոք ավելի լավ չե «ինքնակատարելագործությամբ» զբաղվել: Յերիտասարդության մեջ այսպիսի միտումներ վորոշ տեղերում կան, և հարկավոր ե վերացնել այն՝ կոմսոմոլում «կուլտուրան» և «քաղաքականությունը» ուղիղ զուգորդելու միջոցով: Հարկավոր ե, նկատի ունենալով յերիտասարդության ձգտումը դեպի իր տնտեսական դրության լավացումը, սովորել զուգորդել «նրա» այդ տնտեսական շահերը «կուլտուրայի» և «քաղաքականության» հետ:

Բայց, արդյոք, սրա շնորհիվ չի փոքրանում քաղաքականության դերը: Անպայման վոչ, վորովհետև յեթե մենք «եկոնոմիկան» շաղկապենք քաղաքականության հետ, այն ժամանակ յերիտասարդությունը կը հասկանա, թե ինչ չափով կարող ե այնպես «ինքնակատարելագործվել», վորպեսզի իր դասակարգից չկտրվի: Վոչ, վորովհետև դա յերիտասարդությանը կը սովորեցնի տեսնել իր ինքնակատարելագործման նպատակը—սոցիալիզմի շինարարությունը:

Առանց եկոնոմիկայի և քաղաքականության այսպիսի շաղկապի անկարելի յե նաև յերիտասարդության միջազգային դաստիարակությունը: Յեթե յերիտասարդությունն «ամեն մի մանրունքի յետևը համաշխարհային հեղափոխությունը» չտեսնի, ապա պարզ ե, վոր այն

ժամանակ անխուսափելի յեն հոռետեսությունը և վհատությունը: Բայց հենց այս պատճառով ել հարկավոր ե յերիտասարդությանը սովորեցնել գտնել համաշխարհային հեղափոխությունը մեր շինարարության ամեն մի «մանրունքի» յետևը:

Պակաս կարևոր չե նաև կոմսոմոլի ակտիվի դաստիարակությունը: Արդեն Համ. ԼԿՅԵՄ VII համագումարն ասաց, վոր ամբողջ ակտիվը պետք ե մարքսիզմ-լենինիզմ սովորի Մարքսով և Լենինով, այսինքն կարդալով և ուսումնասիրելով նրանց: Այդ ես անհրաժեշտ ե անել այժմ, վորովհետև այդպիսի ուսումնասիրությունն ամենից ավելի ընդունակ ե մեր ակտիվը քաղաքականապես ինքնուրույն դարձնել:

Այդ հատկապես անհրաժեշտ ե այժմ անել, յերբ մեր միությունն անընդհատ աճում ե, յերբ մեզ մոտ գալիս են բանվոր և գյուղացի յերիտասարդության շարունակ նոր մասսաներ, յերբ մեր առաջ կանգնում են բազմաթիվ նոր դժվարություններ:

ԱՄԲՈՂՋ ԲԱՆՎՈՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄՍՈՄՈԼԻ ՇԱՐՔԵՐՈՒՄ

Համ. ԿԿ (բ.) XIV և Համ. ԼԿՅԵՄ VII համագումարները մեկ անգամ ել մատնանշեցին այս խնդրի կարևորությունը: Այս պայմաններում կարևորագույն նշանակություն ե ձեռք բերում նույնպես ԿՅԵՄ պրոլետարական կորիզի ամրապնդման հարցը: Յեթե կոմսոմոլն իր շարքերն ե գրավել բանվոր յերիտասարդության 50%, ապա նրա առաջ խնդիր ե կանգնած, չդանդաղեցնելով գյուղացի յերիտասարդության ընդունելությունը միության մեջ, ձգտել բանվոր յերիտասարդության լրիվ գրավմանը միության մեջ:

Նույնքան, յեթե վոչ ավելի, կարևոր ե նաև, վոր կուսակցության կողմից ուժեղանա կոմսոմոլի ղեկավարությունը: Մասնավորապես, անհրաժեշտ ե ամեն կերպ ձգտել, վոր մեծանա կուսակցության անդամների տոկոսը կոմսոմոլում: Այժմ շատ քիչ ե այն՝ վոչ ավելի քան 8—9% ամբողջ միության համար:

ԿՈՄՍՈՄՈԼԸ ԼԵՆԻՆՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Միայն այս պայմաններում կարելի կը լինի պահպանել կուսակցության և կոմսոմոլի միությունը և ապահովել կոմսոմոլի հետագա ամրապնդումը, միայն այս դեպքում կոմսոմոլը հետագայում ել կը կանգնի լենինյան դիրքերում:

Միայն այս դեպքում կոմսոմոլը միշտ կուսակցության հետ միասին, նրա ղեկավարությամբ, կը պայքարի պրոլետարիատին լենինյան դիրքերից հանելու ամեն տեսակ փորձերի դեմ, վորտեղից ել վոր բղխելու լինեն այդ փորձերը:

Յեվ, վերջապես, միայն այս դեպքում պրոլետարական յերիտասարդությունը կոմսոմոլի ղեկավարությամբ իրոք կը դառնա սոցիալիզմ կառուցող պրոլետարիատի լավագույն ջոկատներից մեկը:

ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

Յերիտասարդության Կոմմունիստական Ինտերնացիոնալը

ԻՆՉԻ ՄԱՍԻՆ Է ԶՐՈՒՅՑԸ

Մեր այս զրույցում մենք կը քննենք այն հարցը, թե ինչպես է ապրում և կռվում պրոլետարական յերիտասարդությունը և ինչ է նրա համար Յերիտասարդության Կոմմունիստական Ինտերնացիոնալը։ Մենք կը ջանանք դըրսևորել ԿԻՄ-ի տեղն ու դերը պրոլետարական յերիտասարդության կազմակերպման, հեղափոխական ղեկավարության և դաստիարակության համար մղվող պայքարում։ Ապա—կը դրսևորենք ԿԻՄ-ի պայքարի մեթոդները և ձևերը բուրժուական և ռեֆորմիստական պատանեկական կազմակերպությունների դեմ՝ պրոլետարական յերիտասարդության վրա ազդեցություն ձեռք բերելու համար։

Վերջապես կաշխատենք հասկանալ ԿԻՄ-ի և նրա սեկցիաների հերթական խնդիրները։

ԲԱՆՎՈՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿԻՐՆԵՐՈՒՄ

Նա, ով ուզում է թեկուզ փոքր պատկերացում ունենալ Յերիտասարդության Կոմմունիստական Ինտերնացիոնալի (ԿԻՄ-ի), նրա աշխատանքի ու պայքարի մասին, այն մասին, թե ինչպիսի խնդիրներ են կանգնած նրա առաջ—նա ամենից առաջ պետք է իմանա, թե ինչպես է ապրում և պայքարում բանվոր յերիտասարդությունը կապիտալիստական յերկրներում։ Հարկավոր է ասել, որ պրոլետարական յերիտասարդությունը բացառիկ ծանր դրության մեջ է։ Բացառությամբ ԽՍՀՄ, բոլոր յերկրներում յերեխաների աշխատանքը և մանկահասակների աշխատանքը փաստապես կիրառվում է առանց սահմանափակումների։

Յերեխաների աշխատանքի և մանկահասակների աշխատանքի պաշտպանության վերաբերող որենսդրությունը, որ գործում է (իսկ փաստապես անգործության է մատնված) կապիտալիստական յերկրներում, հարցն ամենափոքր չափով չի լուծում։ Վոչ վոք, բացի այդ յերկրների աշխատավորներից, շահագրգռված չէ այդ որենքների փաստական կատարումով։ Ընդհակառակը, կապիտալիստներն ամեն կերպ խախտում են (ամենից հաճախ պետական չինովնիկների լուռ համաձայնությամբ) այդ ասպարիզում արված տարրական նվաճումները։ Այդ նրանց համար ավելի ես հեշտ է անել, քանի վոր ամբողջ փաստական իշխանությունը և ազդեցությունը նրանց ձեռքին է։

Նրանք ամեն կերպ ոգտվում են այն բանից, վոր բանվորի ընտանիքը հ ա ր կ ա դ ր վ ա ծ է յերեխաներին ձեռնարկություն ուղարկել ամենամանուկ հասակից։ Համենայն դեպս մի բան հո կաշխատի իբրև լրացում ծնողների խղճուկ դաղումի։

Անգլիայում, որինակ, ածխարդյունաբերության մեջ յերեխաների և մանկահասակների աշխատանքը բավական տարածված յերևույթներից մեկն է։ Ավելի ճարպիկ ու ճկուն լինելով, նրանք ավելի լավ ու ավելի հեշտ կարող են անցնել նեղ շախտերով, քաշ տալով ուսից կապած փոքրիկ վագոնները, քան հասակավոր բանվորները։ Անգլիայում $2^1/_2$ միլիոն յերիտասարդ բանվոր է զբաղված արդյունաբերության մեջ։ Գերմանիայում մինչև 18 տարեկան բանվորներն էլ ավելի շատ են—3,800,000։

Նրանց աշխատանքի պայմաններն այնքան ծանր են, յերեխաների ու մանկահասակների շահագործումն այնքան մեծ չափով է տարածված, վոր հաճախ հարց եր բարձրանում մանկահասակների ու յերիտասարդության աշխատանքի պայմանների փոփոխության մասին։ Չնայած դրան, այնուամենայնիվ յերիտասարդությունը մնում է ամենալպիրշ շահագործման ու ճնշման առարկա։

ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Հատկապես վատ վիճակում է յերիտասարդության աշխատանքի վարձատրության գործը։ Նախ՝ յերիտասարդ բանվորներն իրենց աշխատանքի համար հասակավոր բանվորներին հավասար վարձատրություն չեն ստանում։ Իրենց իրավազուրկ դրության շնորհիվ, այն բանի շնորհիվ, վոր ս.-դ. արհմիությունները հրաժարվում են յերեխաներին և մանկահասակներին պաշտպանելուց, դիմադրության խիստ թույլ հնարավորություններ ունենալով, նրանք համեմատաբար ավելի մեծ շահագործման են յենթարկվում, քան հասակավոր բանվորները և համեմատաբար ավելի քիչ են ստանում, անկախ իրենց վորակումից և արտադրողականությունից։

Յերկրորդ՝ յերիտասարդ բանվորների աշխատավարձը չի համապատասխանում ապրուստի այն մինիմումին, վոր գոյություն ունի տվյալ յերկրում։

Անգլիայում, որինակ, մետաղարդյունաբերության յերիտասարդ բանվորները միջին հաշվով դաղում են ամսական 80 շիլլինգ։ Տեքստիլ արդյունաբերության մեջ այդ դաղումը հավասար է 60 շիլլինգի, հանքային արդյունաբերության մեջ—60 շիլլինգի։ Յերիտասարդ յերկաթուղայինները միջին հաշվով ստանում են 80, իսկ փայտագործները նույնիսկ 50 շիլլինգ։ Ինչ վերաբերում է ապրուստի մինիմումին, վոր անհրաժեշտ է Անգլիայում գոյություն պահպանելու համար, ապա այն

հավասար է 8 ֆունտ ստեռլինգի (անգլիական 20 շիլլինգը=1 ֆունտ ստեռլինգի=9 ռ. 50 կ. ռուսական դրամով):

Գերմանիայում յերիտասարդ մետաղագործները միջին հաշվով ստանում են ամսական 60 մարկ, մանածագործները—35, իսկ յերիտասարդ հանքագործները միջին հաշվով ստանում են 50 մարկ:

Իսկ Գերմանիայում ապրուստի մինիմումը մոտավորապես հավասար է ամսական 90 մարկի (գերմանական մարկան=47 կ. ռուսական դրամով):

Արդեն ստացած աշխատավարձի և ապրուստի մինիմումի այս համեմատությունից իսկ կարելի յե դատել, թե ինչքան ծանր է յերիտասարդ բանվորների նյութական դրությունը:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Բայց մենակ աշխատավարձի տվյալները բավականաչափ չեն դրսևորում յերիտասարդ բանվորների շահագործման իրական աստիճանը:

Հատկապես ուժեղ կերպով շահագործման աստիճանը դրսևորում են յերիտասարդության աշխատանքի որի տվյալները:

Համարյա բոլոր յերկրներում յերիտասարդության աշխատանքի օրն ավելի յերկար է, քան հասակավոր բանվորներինը, չնայած այն բանին, վոր ֆիզիքապես դեռ չամրացած յերիտասարդությունը պետք է վոր ավելի քիչ աշխատեր, քան հասակավոր բանվորները: Վորոշ յերկրներում անց է կացվում 8-ժամյա աշխատանքի օր: Սակայն, յերիտասարդությունը մեծ մասամբ 9—10 ժամ է աշխատում: Ամենուրեք աշկերտների վրա պարտականություն է ընկնում սրբել շենքերը, մաքրել մեքենաները և այլն: Մանր ձեռնարկություններում աշխատանքի օրը սովորաբար 9—10 ժամից պակաս չէ, իսկ հաճախ ստիպված են աշխատել օրական նույնիսկ մինչև 14 ժամ:

ԳՈՐԾԱԶՈՒՐԿ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Առանձնապես վատ օրեր են քաշում յերիտասարդ գործազուրկները: Հասակավոր գործազուրկները վորոշ ժամանակ պետությունից նպաստ են ստանում, յերիտասարդ գործազուրկները մեծ մասամբ նույնիսկ այս չնչին օժանդակությունը չեն ստանում: Ձեռնարկատերերը և իշխանությունները հայտարարում են, վոր յերիտասարդ բանվորները դեռ իրենց ծնողների ծախքով են ապրում, այս պատճառով հարկ չկա նրանց նպաստ տալ: Յերիտասարդ բանվորները մինչև 16 տարեկան հասակը վոչ մի յերկրում նպաստ չեն ստանում: 16 տարեկանից սկսած, նրանք վորոշ դեպքերում (յեթե նրանք ընտանիքի միակ աշ-

խատողն են և այլն) կարճ ժամանակ պետությունից օժանդակություն են ստանում, բայց այդ նպաստն էլ ավելի ցածր է, քան հասակավոր բանվորներինը:

Յերիտասարդության աշխատանքի պաշտպանության օրենսդրությունը, վորի մասին այնքան շատ շաղակրատում են սոցիալ-դեմոկրատները և «արմատական» կապիտալիստները, գործնականում համարյա հավասար է զրոյի: Օրենքով հաստատված արձակուրդը շատ քիչ է (համենայն դեպս տարեկան վոչ ավելի, քան մեկ շաբաթ). բացի այդ, օրենքով յերիտասարդությանը արձակուրդ տրվում է միայն շատ քիչ յերկրներում: Յերիտասարդության ապահովումը հիվանդության դեպքում համարյա վոչ մի տեղ գոյություն չունի:

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Անհրաժեշտ է այս բոլորին ավելացնել նաև այն, վոր յերիտասարդությունը փաստապես զրկված է պաշտպանվելու հնարավորությունից: Ռեֆորմիստական արհմիությունների կանոնների համաձայն 18 տարեկանից փոքր յերիտասարդ բանվորներն արհմիությունների մեջ չեն ընդունվում: Իսկ այնտեղ, ուր բանվոր յերիտասարդությունը մտնելու իրավունք ունի, նա այդ իրավունքից օգտվելու փաստական հնարավորությունից զրկված է նրա ուժերից բարձր մուտքի վճարի պատճառով: Այս փաստապես յերիտասարդությանը հնարավորությունից զրկում է պայքարելու իր դրության լավացման համար: Յերեխաների և մանկահասակների աշխատանքն ամենալայն կերպով տարածված է: Անհրաժեշտ է հաշվառել, վոր տեխնիկական կատարելագործությունները, ծայրահեղ չափով պարզացնելով մեքենայի վրա աշխատելը, կապիտալիստներին թույլ են տալիս լայնորեն գործադրել յերեխաների ու մանկահասակների աշխատանքը:

Շարունակ ավելի մեծ չափով է, վոր մեքենան աշխատում է մարդու փոխարեն, և շարունակ ավելի քիչ քանակով է, վոր գործարանները հասակավոր վորակյալ բանվորների կարիք են զգում: Հսկել մեքենային և «լրացնել» նրան կարող են և՛ յերեխաները, և՛ մանկահասակները, հաճախ, իրենց ճարպկության շնորհիվ, նույնիսկ ավելի լավ, քան հասակավորները: Հենց այս է հնարավոր դարձնում մանկահասակների աշխատանքի այսքան լայն տարածումը:

Համաձայնողական արհմիությունների հանցավոր վերաբերմունքը դեպի պրոլետարիատի հասունացող մասի կազմակերպությունը, յերիտասարդությանն արհմիությունների անդամ ընդունելուց հրաժարվելը բուրժուազիան ամեն կերպ օգտագործում է:

Այսպես, օրինակ, բանվոր յերիտասարդության փոշիացած և հասակավոր բանվորներից կտրված լինելը կապիտալիստներին հնարա-

վորություն է տալիս բանվոր յերիտասարդության աշխատանքի գործադրումն ընդլայնելով և նրա աշխատանքը ցած վարձատրելով, ցածացնել բանվորների աշխատավարձի ընդհանուր միջին մակարդակը։ Բայց այս քիչ է։ Այն հանգամանքը, վոր յերիտասարդ բանվորների մեծամասնությունն արհմիությունների անդամ լինելու հնարավորությունից զրկված է, կապիտալիստներին ձեռնտու յե նաև այն տեսակետից, վոր նրանք օգտագործում են յերիտասարդ չկազմակերպված բանվորներին իբրև շտրեյկբրեխերներ արհմիությունների մեջ չկազմակերպված բանվորների դեմ։

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Ինչ վերաբերում է քաղաքական իրավունքներին, ապա բանվոր յերիտասարդությունը դրանցից բոլորովին զրկված է։ Մի շարք յերկրներում (Լեհաստան, Բուլղարիա և ուրիշները) յերիտասարդության կազմակերպությունները բոլորովին արգելված են այն պատրվակով, վոր յերիտասարդության դաստիարակության գործը պետական գործ է։

Այս բոլորը միասին առած ցույց է տալիս, թե ինչպես է բանվոր յերիտասարդության իրական դրությունը կապիտալիստական յերկրներում։

Տնտեսական ճնշում և քաղաքական իրավազրկություն—ահա բանվոր յերիտասարդության բաժինը կապիտալիստական յերկրներում։

Ինչ վերաբերում է յերիտասարդության դրությանն Արևելքում, ապա էլ ավելի վատ և ծանր է այն։ Այնտեղ այս բոլոր շահագործմանը և քաղաքական իրավազրկությանը, վոր անչափ ավելի մեծ է, քան Արևմուտքում, ավելանում է նաև յերիտասարդության ազգային ճնշումը։

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ

Հարց է առաջ գալիս, իսկ ո՞ւր է տանում այսպիսի դրությունը։ Այսպիսի դրությունն անխուսափելիորեն դրդում է յերիտասարդությանը կռվել իր տնտեսական և քաղաքական իրավունքների, իր ազատագրության համար։

Ինչքան ավելի ուժեղ են սեղմում կապիտալիստները բանվոր դասակարգին և բանվոր յերիտասարդությանը, ձգելով նրանց ուսերին հետպատերազմյան քայքայման ամբողջ ծանրությունը, այնքան ավելի ուժեղ է բանվորների և հատկապես յերիտասարդ պրոլետարների բողոքը։

Համաձայնողականներն այժմ էլ, գուցե նույնիսկ ավելի ուժեղ ու ավելի հաճախ, պնդում են, վոր «յերիտասարդությունը պետք է կռվից ու քաղաքականությունից դուրս լինի»։ Այս դավաճանական

հավաստիացումների տակ, ըստ էության, թաքնվում է բանվոր յերիտասարդության հեղափոխականությունից ունեցած վախը և յերիտասարդությանն այդ «չարաղետ քաղաքականությունից» հեռու պահելու ցանկությունը։

Սակայն, կյանքը ժխտում է մենշևիկյան հեքիաթները։ Յերիտասարդությունը շարունակ ավելի ու ավելի հեղափոխականանում է։ Յերիտասարդությունը շարունակ ավելի ու ավելի յե ձեռք զարկում կռվելու իր դրության լավացման համար։ ԽՍՀՄ յերիտասարդության ձեռքբերումներն աշխատանքի ու կրթության, իրավունքների ու կենցաղի տեսակետից յերիտասարդ պրոլետարների մեջ համակրանք են առաջացնում դեպի ԽՍՀՄ, կոմկուսակցությունը և կոմսոմոլը։ Այս համակրանքները համաձայնողականները չեն կարողանում հաղթահարել վոչ միայն անկուսակցական յերիտասարդության, այլ նույնիսկ իրենց անդամների մեջ (ԽՍՀՄ յեկած պատգամավորների, յերիտասարդության սոցիալիստական միությունների անդամների հեռացման դեպքերն Ավստրիայում, Գերմանիայում և այլն)։ Իսկ լավագույն, ամենագիտակից, առաջավոր պրոլետարական յերիտասարդությունը գալիս է կոմսոմոլ, մտնում է ԿԻՄ-ի մեջ։

ԿԻՄ-Ը ՅԵՎ ՆՐԱ ՍԵԿՑԻԱՆԵՐԸ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ԿՌՎՈՒՄ

Այս բոլորը նշանակալի չափով բարձրացնում է կոմսոմոլների ազդեցությունն ու դերը և նրանց պատասխանատվությունը պրոլետարական յերիտասարդության աճող ակտիվությանը ճիշտ ուղղություն տալու գործում։

ԿԻՄ-ը և նրա սեկցիաները (առանձին յերկրների կոմսոմոլները) հեղափոխական պրոլետարիատի և նրա ավանգարդի—կոմկուսակցության—խոշորագույն ուժն են դառնում պրոլետարական հեղափոխության համար մղվող կռվում։

ԿԻՄ-Ի ԹՎԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Իսկ վո՞րոնք են ԿԻՄ-ի դրոշակի տակ գնացող ուժերը։ Յեթե խոսենք ԿՅԵՄ միայն անդամների մասին, ապա ԿԻՄ-ը իր շարքերում ունի մինչև 120—130 հազար մարդ (առանց Համ. ԼԿՅԵՄ-ի)։ Բուրժուական և սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների համեմատությամբ ԿԻՄ-ն իր անդամների թվով, հարկավ, առաջին տեղը չի գրավում։ Այսպես, օրինակ, դեղին Սոցիալիստական Ինտերնացիոնալը յեվրոպական յերկրներում (Գերմանիա, Ավստրիա և այլն) ավելի շատ անդամ ունի, քան ամբողջ ԿԻՄ-ը։ Նրանք պնդում են, վոր 250 հազար անդամ ունեն։ Հիանալի հասկանալով, վոր այդ չափազանցված է, մենք, սակայն, չենք կարող չնշել այն, վոր անդամների թվով ՍԻՄ-ը (Յերիտասարդության Սոցիալիստական Ինտերնացիոնալը) այնուամենայնիվ գերազանցում է ԿԻՄ-ին։ (Ճիշտ է,

այս բացատրվում է նույնպես և այն բանով, վոր ՍԻՄ-ը իր «անդամ» է համարում արհմիությունների բոլոր յերիտասարդ անդամներին, վորոնցից—համաձայն այն պայմանագրի, վոր կնքել է ՍԻՄ-ը արհմիությունների հետ—մեխանիկորեն վերցվում են անդամավճարները։ ԿԻՄ-ը այդպիսի պրիյոմներ (հնարներ) չի գործադրում)։

Իսկ յեթե խոսենք բուրժուական կազմակերպությունների մասին, վորոնցում նույնպես բավական մեծ քանակով բանվոր յերիտասարդություն կա, ապա նրանք իրենց անդամների թվով արդեն բոլորովին գերազանցում են ԿԻՄ-ին, օրինակ՝ միայն հինգ յերկրում, այսինքն Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Բելգիայում և Չիլիում «յերիտասարդության կաթոլիկական (տերտերական) միությունները» ունեն ավելի քան յերկու և կես միլիոն անդամ։

Բայց հարկավոր է, սակայն, նկատի ունենալ նաև ԿԻՄ-ի առավելությունները։ Նա, օրինակ, 51 սեկցիա ունի, այդպիսով իր ազդեցությամբ ընդգրկում է համարյա ամբողջ աշխարհը, մինչդեռ ՍԻՄ-ը, օրինակ, իր միությունները ունի գլխավորապես միայն Յեվրոպայում։

ԻՆՉՈՒՄՆ ԵՆ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՅԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ինչու մենք ավելի քիչ անդամներ ունենք, քան այդ մյուս կազմակերպությունները։ Ընդհանուր պատճառն այն է, վոր բուրժուազիան ունի յերիտասարդության վրա ներգործելու հզոր ապարատ—դպրոց, յեկեղեցի, մամուլ, ակումբներ և այլն,—և կարող է յերիտասարդությանը, մանավորապես բանվոր յերիտասարդությանը, իր ազդեցության տակ քաշել։ Նա իր տրամադրության տակ ունի վոչ միայն քաղաքական կազմակերպություններ, այլև կազմակերպություններ, վորոնք արտաքուստ ապաքաղաքական բնույթ են կրում - սպորտային, կուլտուրական, կրոնական և այլն։

Այս պատճառով պարզ է, վոր մինչև այն ժամանակ, քանի պրոլետարիատը չի ջախջախի բուրժուազիայի տիրապետության ապարատը, մեզ համար դժվար կը լինի իրականացնել յերիտասարդության մեծամասնության նվաճման և բանվոր յերիտասարդության նշանակալի մասը մեր շարքերն առնելու խնդիրը։ Այդ հնարավոր կը լինի միայն պրոլետարական հեղափոխությունից հետո։ ԽՍՀՄ օրինակը—դրա լավագույն հաստատությունն է։

ԿԻՄ-Ի ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Բայց չնայած այն բանին, վոր ԿԻՄ-ն ավելի քիչ անդամներ ունի, քան դեղին Յերիտասարդության Սոցիալիստական Ինտերնացիոնալը և յերիտասարդության ուրիշ կազմակերպությունները, նա իր ազդեցությամբ ու դերով անպայման ավելի մեծ նշանակություն ունի, քան ՍԻՄ-ի։

ԿԻՄ-ի գլխավոր ու արմատական զանազանությունը ՍԻՄ-ից և յերիտասարդության ուրիշ կազմակերպություններից այն է, վոր Յերիտասարդության Սոցիալիստական Ինտերնացիոնալը մի կազմակերպություն է, վոր ձգտում է յերիտասարդությունը դասակարգային կռվից քաշել «կուլտուրականության» ուղին, մինչդեռ ԿԻՄ-ն առաջին հերթին կռվի կազմակերպություն է։

Իրեն նպատակ դնելով ակտիվ հեղափոխական կռիվ մղել յերիտասարդության դրության լավացման համար և կապիտալիստական կարգի դեմ, ԿԻՄ-ը կոմսոմոլի ամեն մի անդամից պահանջում է ակտիվ մասնակցություն քաղաքական և տնտեսական կռվին և կազմակերպության ընդհանուր աշխատանքին։

Իսկ ՍԻՄ-ը, ընդհակառակը, ամենից ավելի քիչ է շահագրգռված իր անդամների այդպիսի ակտիվությամբ։ Նա ամեն կերպ արգելք է հանդիսանում նրանց նույնիսկ այն ժամանակ, յերբ հենց անհրաժեշտությունն է հրում նրանց դեպի այդ ակտիվ կռիվը։

ՍԻՄ-ի նպատակն է—յերիտասարդությանը հեռու պահել քաղաքականությունից և յերիտասարդության ուշադրությունն ուղղել դեպի անձնական «կատարելագործությունը» գոյություն ունեցող կապիտալիստական կարգի շրջանակներում։ Իսկ իրենց խնդիրների և նրանց լուծման մոտեցման այս տարբեր հասկացողությունն իր կնիքն է դնում ԿԻՄ-ի և ՍԻՄ-ի կազմակերպությունների դերի և ազդեցության վրա։

ՊԱՅՔԱՐ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այս դրությունը նշանակալի չափով ուժեղացնում է ԿԻՄ-ի դերը, իբրև պրոլետարական յերիտասարդության մարտական, հեղափոխական միջազգային կազմակերպություն յերիտասարդության լայն մասսաների համար մղվող պայքարի գործում։

ԿԻՄ-ի աշխատանքը բանվոր յերիտասարդության մասսաները քաղաքական և տնտեսական կռվի մեջ քաշելու գործում հնարավոր է ու անհրաժեշտ հատկապես այժմ, յերբ կապիտալիզմի այսպես կոչված «ստաբիլիզացիան» (կայունացումը) հիմքից յերերվում է, յերբ նորից շարունակ ավելի ուժեղ և ավելի հաճախ են կրկնվում կոնֆլիկտները աշխատանքի և կապիտալի միջև։

Վերջին ժամանակներս ծավալված անցքերը նորից դրսևորեցին կոմսոմոլի մարտական դերը։ Անգլիայում, օրինակ, կոմսոմոլը յերիտասարդության միակ կազմակերպությունը յեղավ, վոր ընդհանուր գործադուլի և հանքագործների գործադուլի ժամանակ բանվոր յերիտասարդության ղեկավարությունն իր վրա վերցրեց։

Անգլիայի կոմսոմոլն ամենալայն և ամենաուժեղ գործունեություն ծավալեց գործադուլի ժամանակ։ Հենց նա պայքարի լոզունգ-

ներ առաջ քաշեց յերիտասարդության համար, հենց նա, արհմիությունների ռեֆորմիստական առաջնորդների կամքի հակառակ, յերիտասարդ բանվորներին կռվի մեջ գրավեց: Վոչ այլ վոք, բայց յեթե անգլիական կոմսոմոլն եր, վոր բոլոր յեղանակներով բացատրում եր յերիտասարդ բանվորներին դրության ամբողջ վտանգավորությունը, յեթե նրանք գործադուլի ժամանակ աշխատեն և գործադուլավոր բանվորների վերաբերմամբ շտրեյկբրեխերների դեր խաղան:

Լեհաստանում կոմսոմոլը նույնպես մեծ գործունեություն ծավալեց յերիտասարդության լայն մասսաներն իր կողմը գրավելու համար:

Լեհաստանում յեղած շատ ուժեղ գործազրկությունը, հատկապես, խիստ հարվածում ե յերիտասարդությանը: Այս կապակցությամբ կոմսոմոլը լայն պայքար սկսեց յերիտասարդության կյանքի և աշխատանքի պայմանների լավացման համար: Ընդհատակյա վիճակում գտնվելով, այնուամենայնիվ լեհական կոմսոմոլն իր գործնական աշխատանքով կարողացավ ուղի գտնել դեպի մասսաները:

Բայց այս բոլորը բավական չե: Ամենագլխավոր խնդիրն այն ե, վորպեսզի ամեն կերպ ուժեղացնենք բանվոր յերիտասարդության գրավումը դեպի ԿՅԵՄ շարքերը: Անհրաժեշտ ե, վոր մեր միություններն ոգտագործեն բանվոր դասակարգի քաղաքական ակտիվության աճման արդի դրությունը մեր շարքերի ամրապնդման համար: Այս մանավանդ անհրաժեշտ ե անել նրա համար, վոր այժմ յերիտասարդությանը ԿՅԵՄ-ի շարքերը գրավելու պայմաններն ավելի բարեհաջող են, քան մի քանի տարի սրանից առաջ:

ԻՆՉՆ ԵՐ ԽԱՆԳԱՐՈՒՄ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՆՎԱՃՄԱՆԸ

Ավելի վաղ (4–5 տարի սրանից առաջ) մեր կոմսոմոլներն Արևմուտքում համարյա բոլորովին աշխատանք չեյին կատարում բանվոր յերիտասարդության լայն մասսաների գրավման գործում: Նշանակալի չափով դրան նպաստում եր այն դրությունը, վորի մեջ գտնվում եր հեղափոխական շարժումն ընդհանրապես և պատանեկականը մասնավորապես:

Կոմմունիստական կուսակցությունները դեռ ամեն տեղ ձևավորված չեյին: Շատ հաճախ Կոմինտերնը կոմկուսակցություններ ստեղծելու և նրանց ամրացման համար մղվող կռվի գործում հենվում եր կոմսոմոլների վրա, վորոնք մի ամբողջ շարք յերկրներում (Շվեցիա, Շվեյցարիա և այլն) սկզբում Կոմինտերնի միակ հենարանն եյին հանդիսանում:

Այդ խնդիրները նշանակալի չափով միություններին հեռացնում եյին նրանց հիմնական խնդրից և նրանց չեյին թույլատրում զբաղ-

վել ընդհանրապես իրենց ներքին աշխատանքով և յերիտասարդության հարցերով:

Հետագայում, յերբ կոմկուսակցություններն ամրացան, յերբ նրանք արդեն կարողացան իրենց վրա վերցնել պրոլետարական շարժման ղեկավարության խնդիրը, այդ յերկրների պատանեկական կոմունիստական կազմակերպությունների առաջ կանգնեց մի ուղղակի խնդիր—ուժեղացնել իրենց աշխատանքը յերիտասարդության մասսաների մեջ կոմկուսակցությունների ղեկավարությամբ: Սակայն, մեր կոմսոմոլները միանգամից չկարողացան հարմարվել իրենց այս նոր խնդիրներին: Շատերը նոր պայմաններում ել շարունակում եյին հին ձևով մոտենալ իրենց անելիքներին, չցանկանալով հրաժարվել հեղափոխական շարժման ավանգարդի իրենց, ըստ եյության, ժամանակավոր դերից: Գերագնահատելով իրենց դերն ընդհանուր պրոլետարական շարժման ղեկավարության գործում և թերագնահատելով կուսակցության դերն այդ տեսակետից, շատ միություններ դրա հետ միասին թերագնահատում եյին նաև յերիտասարդության մասսաների նվաճման խնդիրները:

Մեր վորոշ կոմսոմոլների այսպիսի հայացքների դեմ համառ կռվից հետո, ԿԻՄ-ին, վերջապես, հաջողվեց վերջ տալ նոր պայմաններում աշխատանքի այդ սխալ մոտեցումին: Աստիճանաբար մեր միությունները գիտակցեցին իրենց տեղը պրոլետարիատի դասակարգային կռվի կազմակերպությունների սիստեմում: Վերջին տարիներն անցան «դեպի յերիտասարդության մասսաները» նոր լոզունգների տակ:

ԴԵՊԻ ՄԱՍՍԱՆԵՐԸ ՏԱՆՈՂ ՈՒՂԻՆ—ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆ Ե

Յերիտասարդության Կոմինտերնի մասսաների նվաճման այս կուրսն իր ամենավառ արտահայտությունը գտավ յերկու ուղղությամբ: Առաջին միջոցը, վոր անհրաժեշտ եր իրագործել, վորպեսզի կոմսոմոլը կարելի լինի մոտեցնել յերիտասարդության մասսաներին և այն մարտական, ճկուն, յերիտասարդության շահերը և պահանջները հաշվառել կարողացող կազմակերպություն դարձնել,—այդ միջոցը միությունների վերակազմությունն եր:

Առաջ մեր յեղբայրական կոմսոմոլները կազմակերպված եյին տերրիտորիալ նշանով, կոմսոմոլի անդամները միացվում եյին վոչ թե ըստ աշխատանքի տեղի (բջիջ), այլ ըստ թաղերի: Վերակազմությունը պետք ե միություններն ավելի մոտեցներ բանվոր յերիտասարդությանը՝ ձեռնարկություններում բջիջներ կազմակերպելու միջոցով: Բացի այդ, վերակազմությունն ունի նաև այն ոգուտը, վոր հնարավորություն ե տալիս բջիջի ոգնությամբ կազմակերպել յերիտասարդ

բանվորների պայքարը հենց ձեռնարկություններում։ Այդ հեշտացնում է նույնպես և մեր աշխատանքի կոնկրետացումը։ Իսկ հին սիստեմի ժամանակ, նախ՝ դժվարացած էր բանվոր յերիտասարդության հավաքումը ԿՅԵՄ մեջ, և յերկրորդ՝ միության աշխատանքն ավելի շատ միտինգային բնույթ ուներ և վոչ թե ձեռնարկություններում կատարվող որգանական աշխատանքի բնույթ։

Բայց այս վերակազմության իրականացման պրոցեսում ԿԻՄ-ը հանդիպեց մի ամբողջ շարք դժվարությունների (փորձի բացակայություն, հին ավանդությունների ուժ և այլն), վորոնց կարելի չէ հաղթահարել միայն աստիճանաբար, համառ աշխատանքի պրոցեսում։ Միությունների վերակազմությունը բջիջի սկզբունքով հանդիսանում էր և հանդիսանում է առաջին միջոցը միությունները պրոլետարական յերիտասարդության մասսայական կազմակերպությունները դարձնելու գործում։

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՖՐՈՆՏԻ ՏԱԿՏԻԿԱՆ

«Դեպի մասսաները» լոզունգի իրականացման յերկրորդ միջոցը միասնական ֆրոնտի տակտիկան է։ Մենք արդեն վերը մատնանշեցինք, թե ինչպես է բանվոր յերիտասարդության տնտեսական և իրավական դրությունը կապիտալիստական յերկրներում։ Հենց անգութ շահագործման և ճնշման հետևանքով է, վոր բանվոր յերիտասարդությունն առանձնապես հեշտությամբ է հեղափոխականանում։

Այդ պայմաններում հատկապես կարևոր է պայքարել յերիտասարդության մասսաներին իր իսկական անելիքները պարզաբանելու համար, պայքարել համաձայնողականների դեմ, շարունակ մերկացնելով նրանց, ձևակերպել բանվոր յերիտասարդության պահանջները և պայքարել այդ պահանջների համար։

Սրանում է մեր միասնական ֆրոնտի տակտիկայի հիմնական նշանակությունը։

Ի դեպ, հարկավոր է նկատել, վոր վոչ այլ վոք, քան իրենք ՍԻՄ-ի առաջնորդներն են, վոր մեզ համար հեշտացնում են այդ տակտիկայի արդյունավետ իրականացումը։

Օրինակ՝ ՍԻՄ-ի տնտեսական ծրագիրն իր ամբողջ աղքատությամբ այնուամենայնիվ ընդունակ էր Արևմուտքի բանվոր յերիտասարդության վորոշ շերտերին այն մտապատրանքը (իլլյուզիան) ներշնչել, վոր նրանք ՍԻՄ-ի դրոշի տակ ավելի շուտ կը հասնեն իրենց կենցաղի, իրենց աշխատանքի պայմանների եյական լավացմանը, քան ԿԻՄ-ի ղեկավարությամբ։ Իսկ ՍԻՄ-ի ծրագրի իսկական դեմքը յերևում է Թեկուզ Ֆոգտի, Յերիտասարդության Սոցիալիստական (դեղին) Ինտերնացիոնալի ղեկավարներից մեկի, խոսքերից․

«Յես համարում եմ,—ասում էր նա,—վոր յեթե մենք մոտակա 10 տարվա ընթացքում բոլոր յերկրներում հասնենք այն բանին, վորպեսզի մանկահասակների համար աշխատանքի օրվա մաքսիմալ տևողությունը լինի 6 ժամ՝ պլյուս յերկժամյա ուսուցում ձեռնարկուի հաշվին, ապա այդ շատ նշանակալի նվաճում կը լինի» (ՍԻՄ-ի 2-րդ կոնգրեսի արձանագրություններից)։

Մեր խնդիրը հենց նրանում է, վորպեսզի մերկացնենք սոցիալ-դեմոկրատների նման «պահանջների» ամբողջ անպետքությունը և ԿՅԵՄ անունից նրանց պոչատ պահանջների տեղ առաջ քաշենք իրոք յերիտասարդության կարիքներին համապատասխանող պահանջների ծրագիր։ Այդպիսի ծրագրները չպետք ընդհանուր լինեն, այլ պետք է կազմված լինեն առանձին արտադրությունների համար և խոսեն այն կոնկրետ բարվոքումների մասին, վորոնց համար այսոր պայքար է մղվում։ Այս ամենևին չի նշանակում, թե կոմսոմոլները պետք է հրաժարվեն յերիտասարդ բանվորներին այն հասարակ ճշմարտությունը բացատրելուց, վոր նրանց կարիքների լրիվ բավարարությունը կարող է տալ միայն պրոլետարական պետությունը։

Այդ միայն նշանակում է, վոր մեր կոմսոմոլները, այս գլխավոր խնդրի կողքին, այնուամենայնիվ կը պայքարեն և պետք է պայքարեն բանվոր յերիտասարդության մասնակի պահանջների համար, դրա հետ միասին ցույց տալով նրան լրիվ ազատագրության իսկական ուղիները։

ՄԱՍՍԱՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆՈՂԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԴԵՄ

Խնդիրն այն է, վորպեսզի մեր միությունները սովորեն սոցիալիստական յերիտասարդության մասսաների հետ միասին, թեկուզ և նրա առաջնորդների կամքի հակառակ, պայքարել յերիտասարդության հեղափոխական պահանջների համար, սովորեն հենց այդպիսով իրենց կողմը գրավել յերիտասարդությունը։

Այս միասնական ֆրոնտի տակտիկան պետք է իրականացվի նաև յերիտասարդության կյանքի այլ ասպարեզներում։ Այս տեսակետից հատկապես կարևոր նշանակություն է ձեռք բերում մեր պայքարը նոր իմպերիալիստական պատերազմների վտանգի դեմ։

Յերիտասարդության Սոցիալիստական (դեղին) Ինտերնացիոնալն այս հարցերում էլ իր դավաճանական քաղաքականությունն է իրականացնում։ ՍԻՄ-ը մերժում է ԿԻՄ-ի մեթոդները—մերկացում և պրոպագանդ բանակում, իմպերիալիստական պատերազմների միլիտարիստական բնույթի պարզաբանում և այլն։ ՍԻՄ-ը համարում է, թե նա իր խնդիրը կատարեց այն բանով, վոր ընդունեց պատերազմական վտանգի դեմ «դպրոցում խաղաղ դաստիարակության» միջոցով կռվելու

անհրաժեշտությունը։ Պարզ է, վոր Յերիտասարդության Դեղին Ինտերնացիոնալի կողմից այնպիսի ակտուալ (սուր) հարցի, ինչպիսին պատերազմական վտանգն է, մթագնումը և զինվորականության դեմ կռվելու խնդրի վարագուրումը պահանջում է, վորպեսզի ԿԻՄ-ն ամբողջովին իր վրա վերցնի այդ խնդիրը։ Բայց դրա լուծումը հնարավոր է միայն այն դեպքում, յերբ պատերազմի վտանգի դեմ մղվող կռվի մեջ քաշվեն յերիտասարդության մասսաները։ Դեռ Կարլ Լիբկնեխտն է ասել, վոր «բանակը կը գնա նրա յետևից, ով իր յետևից կը տանի յերիտասարդությունը»։ Ուրեմն ավելի քան անհրաժեշտ է, վոր ԿԻՄ-ը միասնական ֆրոնտի տակտիկայով իր յետևից տանի այդ յերիտասարդությունը, ամեն կերպ մերկացնելով դավաճաններին։

Ներկայումս պատերազմական վտանգը նորից սուր բնույթ է ստանում։ Առանձին կապիտալիստական յերկրների հակասությունները — մի կողմից, և ԽՍՀՄ վրա անգլիական բուրժուազիայի հարձակումների ուժեղացումը (հատկապես միութենական պրոլետարիատի կողմից հանքագործներին ցույց տված պաշտպանության համար) — մյուս կողմից, — այս բոլորը մեծացնում է պատերազմի վտանգը։ Ըստ էության ապագա համաշխարհային պատերազմի առաջին ծիծեռնակներն արդեն ունենք։ Պատերազմը Մարոկկոյում, Յեգիպտոսում, Սիրիայում և Չինաստանում վոչ այլ ինչ է, բայց յեթե մի հանգույց, վոր առիթ կը ծառայի կապիտալիստական պետությունների ընդհանրական տուր ու դմփոցին շուկաների համար մղվող կռվում։

Հարկավ, պատերազմի ամենամեծ վտանգը կանգնած է ԽՍՀՄ առաջ։ Միջազգային բուրժուազիան առաջին հերթին վրա կընկնի ԽՍՀՄ, վորովհետև վոչ այլ վոք, բայց յեթե ԽՍՀՄ է, վոր խանգարում է բուրժուազիայի հափշտակողական ծրագրերն Արևելքում։

Միջազգային պրոլետարիատի և մասնավորապես պրոլետարական յերիտասարդության առաջ մի խնդիր է կանգնած՝ հսկել, շրջանկատ լինել։

Պրոլետարական յերիտասարդությունը, ԿԻՄ-ի ղեկավարությամբ, արդեն շատ անգամ ցույց է տվել, վոր ընդունակ է պատերազմի դեմ մղվող կռվի գործում։

Իբրև օրինակ պատերազմի դեմ մղած հերոսական պայքարի, կարելի չէ մոռանալ ֆրանսիական և գերմանական կոմսոմոլիստների հակամիլիտարիստական պայքարը Ռուրում, ֆրանսիական կոմսոմոլիստների ագիտացիան Մարոկկոյի պատերազմի ժամանակ։

Արևմուտքի բանվոր յերիտասարդության առաջ այժմ էլ կանգնած է նոր իմպերիալիստական պատերազմի վտանգի դեմ պայքարելու այդ խնդիրը։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՈՐԸ (МЮД)

Այս գործում խոշորագույն դեր խաղում է և պետք է խաղա Միջազգային Պատանեկական Որը։ Միջազգային Պատանեկական Որը, վոր պատերազմի սկզբում ծագեց իբրև կազմակերպված բողոքի ձև պատերազմի դեմ, դարձավ յերիտասարդության միջազգային յեղբայրական համերաշխության դրսևորման լավագույն ձևերից մեկը և բանվոր յերիտասարդության մեջ ու բանակում հակամիլիտարիստական պրոպագանդի միջոցներից մեկը։ Ներկա պայմաններում Միջազգային Պատանեկական Որի այս նշանակությունը հատկապես մեծ է։ Մեր յեղբայրական կոմսոմոլները պետք է այդ որն ամբողջ բանվոր յերիտասարդության առաջ հատկապես վորոշակի ու պարզորեն դնեն ու պարզաբանեն պատերազմական վտանգի և միության անհրաժեշտության հարցը, վորպեսզի կարելի լինի դիմադրել իմպերիալիստներին և համաձայնողական առաջնորդներին և պատրաստ լինել պրոլետարական միջազգային համերաշխության կատարյալ սպառազինությամբ դիմավորել իմպերիալիստական պատերազմը։

ԽՍՀՄ ՅԵԿՈՂ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միասնական տակտիկայի և յերիտասարդության մասսաների նվաճման միջոցներից մեկը ԽՍՀՄ ուղարկվող յերիտասարդության պատգամավորություններն են։ Մենք արդեն ասել ենք, ինչպիսի հետաքրքրություն է յերևան բերում Արևմուտքի յերիտասարդությունը դեպի այն, թե ինչպես է ապրում և աշխատում ԽՍՀՄ յերիտասարդությունը։ Բանվոր յերիտասարդության կողմից յեկած պատգամավորությունների միջոցով, վորոնք ընտրվում են հենց յերիտասարդությունից և ապա նրան հաշիվ տալիս, ԿԻՄ-ն ամենից լավ կը կարողանա ապացուցել Արևմուտքի յերիտասարդ բանվորներին Կոմինտերնի և ԿԻՄ-ի գծի ճշտությունը, հակառակ ՍԻՄ-ի առաջնորդների պնդումներին։

Այն խանդը և խստությունը, վորով ՍԻՄ-ը և սոցիալիստական (դեղին) արհմիությունների Կենտրոնական Կոմիտեները վերաբերվում են ԽՍՀՄ գնացող պատգամավորներին, այդ կազմակերպությունների անդամներին (հեռացումներ, արձակումներ և այլն), ամենից լավ է համոզում յերիտասարդությանը, թե ով է արդարացի — ԿԻՄ-ը, թե ՍԻՄ-ը։

Յերիտասարդության պատգամավորության անդամների զեկուցումները տեղում ԽՍՀՄ մասին, նրանց խանդավառ վկայությունները ԽՍՀՄ բանվոր յերիտասարդության կյանքի, աշխատանքի և կրթության պայմանների մասին — այս բոլորը Արևմուտքի բանվոր յերիտասարդության վրա ամենախոր տպավորություն է թողնում։ Յերկիրների մեծ մասում յերիտասարդության առաջ պատգամավորությունների այդպիսի հաշվետվությունների հետևանքը նշանակալի չափով այն է

անհրաժեշտությունը։ Պարզ է, որ Յերիտասարդության Դեղին Ինտերնացիոնալի կողմից այնպիսի ակտուալ (սուր) հարցի, ինչպիսին պատերազմական վտանգն է, մթագնումը և զինվորականության դեմ կռվելու խնդրի վարագուրումը պահանջում է, վորպեսզի ԿԻՄ-ն ամբողջովին իր վրա վերցնի այդ խնդիրը։ Բայց դրա լուծումը հնարավոր է միայն այն դեպքում, յերբ պատերազմի վտանգի դեմ մղվող կռվի մեջ քաշվեն յերիտասարդության մասսաները։ Դեռ Կարլ Լիբկնեխտն է ասել, վոր «բանակը կը գնա նրա յետևից, ով իր յետևից կը տանի յերիտասարդությունը»։ Ուրեմն ավելի քան անհրաժեշտ է, վոր ԿԻՄ-ը միասնական ֆրոնտի տակտիկայով իր յետևից տանի այդ յերիտասարդությունը, ամեն կերպ մերկացնելով դավաճաններին։

Ներկայումս պատերազմական վտանգը նորից սուր բնույթ է ստանում։ Առանձին կապիտալիստական յերկրների հակասությունները—մի կողմից, և ԽՍՀՄ վրա անգլիական բուրժուազիայի հարձակումների ուժեղացումը (հատկապես միութենական պրոլետարիատի կողմից հանքագործներին ցույց տված պաշտպանության համար)—մյուս կողմից,—այս բոլորը մեծացնում է պատերազմի վտանգը։ Ըստ եյության ապագա համաշխարհային պատերազմի առաջին ծիծեռնակներն արդեն ունենք։ Պատերազմը Մարոկկոյում, Յեգիպտոսում, Սիրիայում և Չինաստանում վոչ այլ ինչ է, բայց յեթե մի հանգույց, վոր ավելի կը ծառայի կապիտալիստական պետությունների ընդհանրական տուր ու դմփոցին շուկաների համար մղվող կռվում։

Հարկավ, պատերազմի ամենամեծ վտանգը կանգնած է ԽՍՀՄ առաջ։ Միջազգային բուրժուազիան առաջին հերթին վրա կընկնի ԽՍՀՄ, վորովհետև վոչ այլ վոք, բայց յեթե ԽՍՀՄ է, վոր խանգարում է բուրժուազիայի հափշտակողական ծրագրերն Արևելքում։

Միջազգային պրոլետարիատի և մասնավորապես պրոլետարական յերիտասարդության առաջ մի խնդիր է կանգնած՝ հսկել, շրջահայաց լինել։

Պրոլետարական յերիտասարդությունը, ԿԻՄ-ի ղեկավարությամբ, արդեն շատ անգամ ցույց է տվել, վոր ընդունակ է պատերազմի դեմ մղվող կռվի գործում։

Իբրև օրինակ պատերազմի դեմ մղած հերոսական պայքարի, կարելի յե մատնանշել ֆրանսիական և գերմանական կոմսոմոլների հակամիլիտարիստական պայքարը Ռուրում, ֆրանսիական կոմսոմոլիստների ագիտացիան Մարոկկոյի պատերազմի ժամանակ։

Արևմուտքի բանվոր յերիտասարդության առաջ այժմ էլ կանգնած է նոր իմպերիալիստական պատերազմի վտանգի դեմ պայքարելու այդ խնդիրը։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՈՐԸ (МЮД)

Այս գործում խոշորագույն դեր խաղում է և պետք է խաղա Միջազգային Պատանեկական Որը։ Միջազգային Պատանեկական Որը, վոր պատերազմի սկզբում ծագեց իբրև կազմակերպված բողոքի ձև պատերազմի դեմ, դարձավ յերիտասարդության միջազգային յեղբայրական համերաշխության դրսևորման լավագույն ձևերից մեկը և բանվոր յերիտասարդության մեջ ու բանակում հակամիլիտարիստական պրոպագանդի միջոցներից մեկը։ Ներկա պայմաններում Միջազգային Պատանեկական Որի այս նշանակությունը հատկապես մեծ է։ Մեր յեղբայրական կոմսոմոլները պետք է այդ որն ամբողջ բանվոր յերիտասարդության առաջ հատկապես վորոշակի ու պարզորեն դնեն ու պարզաբանեն պատերազմական վտանգի և միության անհրաժեշտության հարցը, վորպեսզի կարելի լինի դիմադրել իմպերիալիստներին և համաձայնողական առաջնորդներին և պատրաստ լինել պրոլետարական միջազգային համերաշխության կատարյալ սպառազինությամբ դիմավորել իմպերիալիստական պատերազմը։

ԽՍՀՄ ՅԵԿՈՂ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միասնական տակտիկայի և յերիտասարդության մասսաների նվաճման միջոցներից մեկը ԽՍՀՄ ուղարկվող յերիտասարդության պատգամավորություններն են։ Մենք արդեն ասել ենք, ինչպիսի հետաքրքրություն է յերևան բերում Արևմուտքի յերիտասարդությունը դեպի այն, թե ինչպես է ապրում և աշխատում ԽՍՀՄ յերիտասարդությունը։ Բանվոր յերիտասարդության կողմից յեկած պատգամավորությունների միջոցով, վորոնք ընտրվում են հենց յերիտասարդությունից և ապա նրան հաշիվ տալիս, ԿԻՄ-ն ամենից լավ կը կարողանա ապացուցել Արևմուտքի յերիտասարդ բանվորներին Կոմինտերնի և ԿԻՄ-ի գծի ճշտությունը, հակառակ ՍԻՄ-ի առաջնորդների պնդումներին։

Այն խանդը և խստությունը, վորով ՍԻՄ-ը և սոցիալիստական (դեղին) արհմիությունների Կենտրոնական Կոմիտեները վերաբերվում են ԽՍՀՄ գնացող պատգամավորներին, այդ կազմակերպությունների անդամներին (հեռացումներ, արձակումներ և այլն), ամենից լավ է համոզում յերիտասարդությանը, թե ով է արդարացի—ԿԻՄ-ը, թե ՍԻՄ-ը։

Յերիտասարդության պատգամավորության անդամների զեկուցումները տեղում ԽՍՀՄ մասին, նրանց խանդավառ վկայությունները ԽՍՀՄ բանվոր յերիտասարդության կյանքի, աշխատանքի և կրթության պայմանների մասին—այս բոլորը Արևմուտքի բանվոր յերիտասարդության վրա ամենախոր տպավորություն է թողնում։ Յերկրների մեծ մասում յերիտասարդության առաջ պատգամավորությունների այդպիսի հաշվետվությունների հետևանքը նշանակալի չափով այն է

լինում, վոր յերիտասարդության մասսայի աչքում ուժեղանում է ԿՅԵՄ-ի դերը և հեղինակությունը:

ՈԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերջապես, հատկապես լուրջ նշանակություն են ձեռք բերում յերիտասարդության համար մղվող կռվում ԿՅԵՄ զանազան ոժանդակ կազմակերպությունները: Այժմ բոլոր յերկրների բուրժուազիան հարձակվում է պրոլետարիատի և բանվոր յերիտասարդության նվաճումների վրա: Անգլիական ածխահատների գործադուլը հիանալի կերպով հաստատում է այդ: Բուրժուազիայի տնտեսական հարձակմանը հետևում է նաև քաղաքականը—աճում է ռեակցիան, ուժեղանում են ֆաշիստները, հաճախակի են դառնում կոնֆլիկտները ԽՍՀՄ հետ և այլն: Այս բոլորը պահանջում է, վորպեսզի բանվոր դասակարգը և պրոլետարական յերիտասարդությունն իրենց հերթին կազմակերպվեն, վոր կարողանան դիմադրել աճող ֆաշիզմին: Գերմանիայում այդպիսի մարտական կազմակերպություններ են հանդիսանում պրոլետարիատի «Կարմիր ֆրոնտովիկների» կազմակերպությունը և «Յունգշտուրմը»—յերիտասարդության մարտական կազմակերպությունը, վորի մեջ գրավվում է նաև անկուսակցական յերիտասարդությունը: Վոչ պակաս, յեթե վոչ ավելի, լուրջ նշանակություն է ձեռք բերում կոմսոմոլի աշխատանքն արհմիություններին կից պատանեկական սեկցիաներում:

Արևմուտքում վորոշ տեղերում պատանեկական սեկցիաները կոմսոմոլների համար յերիտմիության կապի միակ լեգալ ձևն են անկուսակցական բանվոր յերիտասարդության հետ:

Այսպիսով արհմիություններին կից այդպիսի պատանեկական սեկցիաներում ազդեցություն ձեռք բերելը միության ամենակարևոր խնդիրներից մեկն է:

Բայց այդ դարձյալ հնարավոր է միայն յերիտասարդության շահերի ճիշտ հաշվառման և մենշևիկների դեմ մղվող հմուտ պայքարի պայմաններում, դեղին «առաջնորդների» դավաճանական դերի հմուտ մերկացման պայմանում:

Ռեակցիայի, ֆաշիզմի, հարձակվող կապիտալի, դեղին առաջնորդների դավաճանության դեմ մղվող կռվում ԿԻՄ-ն իր սեկցիաների հետ միասին պետք է իրականացնե իր միասնական ֆրոնտի տակտիկան: ԿԻՄ-ի ղեկավարությամբ—մասսաների հետ, դավաճան համաձայնողական-առաջնորդների դեմ,—ահա ինչումն է այս տակտիկայի իմաստը և նշանակությունը:

ԿԻՄ-ի առաջ կանգնած են դեռ նաև ուրիշ շատ խնդիրներ: Մասնավորապես կարևորագույն նշանակություն ունի կոմսոմոլն Արևելքում: Արևելքի աշխատավոր մասսաները հատկապես ուժեղ ճնշվում

են ինչպես իրենց տեղական, այնպես էլ միջազգային բուրժուազիայի կողմից: Յերիտասարդությունը հատկապես ուժեղ կերպով այդ զգում է իր կաշու վրա: Այս պատճառով ԿԻՄ-ի և նրա Արևելքի սեկցիաների առաջ կանգնած է բանվոր, գյուղացի և սովորող յերիտասարդության լայն մասսաներն ազգային-ազատագրական կռվի մեջ քաշելու խնդիրը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՌԱՋՆՈՐԴ ԿԻՄ-ին

Արևելքում մեր կոմսոմոլների դերի և նշանակության լավագույն հաստատությունը պետք է հանդիսանա չինական կոմսոմոլը, վորը կարողացավ, իր պրոլետարական կադրերը մեծացնելով, դրա հետ միասին յերիտասարդության լայն մասսաների ղեկավարության միջոցով խոշորագույն դեր խաղալ ազգային-ազատագրական շարժման համար մղվող ընդհանուր պայքարում:

Ներկայումս չինական կոմսոմոլը ծավալում է իր ազդեցությունը վոչ միայն բանվոր և ուսանող յերիտասարդության, այլև գյուղացի յերիտասարդության մասսաների վրա, վորոնց մեջ նա սկսել է աշխատանք կատարել:

Արևելքում կոմսոմոլի աշխատանքի իբրև յերկրորդ որինակ կարելի յե վերցնել յերիտասարդության մոնղոլական միությունը:

Հեղափոխական յերիտասարդության այդ միությունը, վոր աշխատում է ԿԻՄ-ի ղեկավարությամբ, խոշորագույն դեր է խաղում Մոնղոլիայի կյանքում: Այդ միության անդամներն ամենաակտիվ մասնակցություն են ունենում ազգային-հեղափոխական կառավարությանը, շատերն աշխատում են այդ հանրապետության պետական ապարատում, ժողովրդական լուսավորության ասպարեզում և այլն:

Յերիտասարդության մոնղոլական միության առանձնակի նշանակությունը և դերը նրանում է, վոր միությունը գտնվում է մի յերկրում, ուր դեռ ուժեղ են համարյա նախնադարյան հարաբերությունները, ուր բնակչության դեռ մի նշանակալի մասը թափառաշրջիկ կյանք է վարում, ուր բոլորովին պրոլետարիատ չկա: Այս հանգամանքը մոնղոլական յերիտասարդական միությունը դարձնում է յերիտասարդական միության ամենայուրահատուկ տիպերից մեկը, վորի դերի ուսումնասիրությամբ պետք է զբաղվեն ԿԻՄ-ը և նրա անդամները:

ԿԻՄ-ի դերը մեծ է, և նրա առաջ կանգնած խնդիրներն անսովոր չափով բարդ են: ԿԻՄ-ի բոլոր սեկցիաները պետք է աշխատեն այն բանի վրա, վորպեսզի ճիշտ լուծեն այդ խնդիրները և պահպանեն ԿԻՄ-ը, իբրև պրոլետարական յերիտասարդության մարտական, լենինյան դիրքերում կանգնած միջազգային կազմակերպություն:

Այս տեսակետից ԽՍՀՄ յերիտասարդությանը՝ հատկապես Համ. ԿՅԵՄ-ի անդամների առաջ կանգնած ե միջազգային կապն ամեն կերպ ամրապնդելու, ԿԻՄ-ին իր դժվար աշխատանքում ամեն կերպ պաշտպանություն ցույց տալու խնդիրը։

ՀԱՎԵԼՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

I

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդեն յերկու տարի յե, վոր կուսակցությունը կիրառում ե խորհուրդների աշխուժացման քաղաքականություն։ Նրա արդյունքները, մանավանդ գյուղում, արդեն նկատելի յեն։ Այս մասին բավական խոսվել ե։ Բայց այդ արդյունքներն այնքան մեծ չեն, վորքան այդ քաղաքականության տված առաջին պտուղները։ Խորհուրդների իսկական աշխուժացումը դեռ առաջներիս ե։ Խորհուրդների իսկական աշխուժացումն այն ե, վոր բանվոր դասակարգը կատարելապես տիրե ամբողջ պետական ապարատը։ Խորհուրդների իսկական աշխուժացում՝ նշանակում ե գյուղացության և աշխատավորական ուրիշ շերտերի ակտիվ մասնակցությունը պետական ապարատի ամբողջ աշխատանքին պրոլետարիատի ղեկավարությամբ։

Մենք դեռ շատ քիչ բան ենք արել այդ ուղղությամբ. Զուր չե, վոր բյուրոկրատիզմն ու չինովնիկության հին վոգին մաշում են մեր խորհրդային հիմնարկությունները։ Մինչև իսկ այնտեղ, վորտեղ համարյա տասը տարու չափ նրանց գլուխն են անցել մեր կուսակցական ընկերները, այնտեղ ևս մասսաներից ու նախ և առաջ բանվորներից կտրված լինելը շատ դեպքերում մեր վարչական մարմինների բնորոշ գիծն եր կազմում։

Մասսաներին պետապարատի աշխատանքին մասնակից անելու գործում կուսակցության կատարած սիստեմատիկ աշխատանքը, վոր հենվում եր նրանց կուլտուրականության որ ըստ որե բարձրացման վրա, մնում ե սոցիալիզմի շինարարության ամբողջ ժամանակաշրջանի արմատական խնդիրներից մեկը։ Այստեղից ե բխում խորհուրդների աշխուժացման լոզունգի կարևորությունը, իբրև ներկայումս մի խոշոր քայլ խորհրդային դեմոկրատիզմի զարգացման գործում։ Իսկ այդ նշանակում ե, թե «խորհուրդների աշխուժացումը» պետք ե կուսակցության հիմնական լոզունգը կազմի խորհուրդների վերընտրության այս կամպանիայում ևս։

Խորհուրդների աշխուժացման քաղաքականության դեմ առար-

կում եր օպպոզիցիան։ Ընկ. Տրոցկին նույնիսկ ասաց, թե նա «առհասարակ» հրաժարվում ե խորհուրդների աշխուժացման մասին խոսելուց։ Իբր թե այդ լոզունգում, որը ճիշտ կերպով վերցված ե Լենինից (տես. XVIII հատոր, մաս 1, եջ 341), դասակարգային պարզ բովանդակություն չկա։ Օպպոզիցիոն կրետինիզմն այնքան եր մշուշապատել կուսակցության քաղաքականության հակառակորդների ակնոցները, որ նրանք դադարեցին մեր խորհուրդներում պրոլետարական պետություն կառավարելու սիստեմը տեսնելուց։ Դրանից մեր յերկրում (որտեղ գերակշռում ե գյուղացությունը) կիրառվող խորհուրդների սիստեմը չեր դադարի առաջին և աշխարհումս առայժմ միակ իսկական պրոլետարական պետությունը լինելուց։

Այդ օրինակից եվ մի ավելորդ անգամ յերևում ե օպպոզիցիոն բլոկի հակապրոլետարական թեքումը։ Նա (օպպոզիցիոն բլոկը) այս դեպքում ևս արտահայտում եր պետական ապարատի մեջ յեղած, բանվոր դասակարգին խորթ, կատարելապես բյուրոկրատական ըմբռնումները, որոնք զանազան ճանապարհներով ընդդիմանում են կուսակցության քաղաքականությանը մեր կառավարական մարմինների նոր սկսված արմատական վերակազմության գործում։ Օպպոզիցիոն բլոկն այստեղ եվ հանդես եր գալիս իբր թե պարզ դասակարգային, իբր թե զուտ պրոլետարական գծով։ Այնինչ իրապես նա պետապարատի այն բուրժուական բյուրոկրատական տարրերի յուրահատուկ իդեոլոգիական արտահայտիչն ու քաղաքական վահանն եր, որոնք չեն կարող չընդդիմանալ խորհուրդների աշխուժացման քաղաքականությանը, մասսաներին խորհուրդների բոլոր աշխատանքներին մասնակից անելու քաղաքականությանը, այսինքն՝ պետապարատի բյուրոկրատիզմի ու բուրժուա-չինովնիկական տարրերի դեմ արմատական պայքար մղելու քաղաքականությանը։ Այդպես ամեն բանում օպպոզիցիոն բառերի տակ թաքնվում ե պրոլետարիատին դասակարգորեն խորթ գաղափարական ու քաղաքական բովանդակությունը։

Ամբողջ օպպոզիցիան այդպես բացարձակ կերպով հանդես չեր գալիս խորհուրդների աշխուժացման դեմ, ինչպես ընկ. Տրոցկին։ Այդ միենույն ընկ. Զինովյեվի ու Կամենևի առածներում կուսակցության այդ քաղաքականության վերաբերմամբ կգտնվեն թե թեր (առաջ) և թե դեմ (վերջին ժամանակներս) խոսքեր։ Այնուամենայնիվ, պարզ չե՞, արդյոք, որ այդ փաստերն ամենևին կուսակցության ընդունած քաղաքականությունը չե, որ վարկաբեկում ե, այլ մի ինչ-որ բոլորովին այլ բան։ Կուսակցությունն ու բանվոր դասակարգը պետք ե գեն նետեն տրոցկիզմի հատակում նստած քաղաքագետների այդ վողորմելի հակասություններն ել։ Այդ «խորխորատից» պրոլետարական հեղափոխության

լենինյան հեռանկարներում նրանց շատ ու շատ բան չի յերևում։ Սակայն թող ամեն մեկը մնա կառչած այն բանին, դեպի որը, հավանորեն, «վոչ պատահաբար» քաշում ե նրան «հոգու հարազատությունը»։ Իսկ պրոլետարիատը, որ ընթանում ե իր սեփական, սոցիալիզմի շինարարության ճանապարհով, կարող ե ունենալ միայն մի հեռանկար—այն, որն անխզելի կերպով կապված ե խորհուրդների աշխուժացման որեցոր ավելացող թափի հետ։ Այդ պատճառով «խորհուրդներն աշխուժացնելու» լոզունգն այն լոզունգն ե, որով պիտի կատարվեն 1927 թվի խորհուրդների նոր ընտրությունները։

Խորհուրդների ընտրությունները բոլորովին մոտեցել են։ Աշխուժացման պայմաններում, խորհուրդների ընտրությունները մեր քաղաքականության ու մեր աշխատանքի կարևորագույն մասսայական ստուգումն են։ Այդ ընտրություններում կուսակցության հիմնական խնդիրը հարկավոր ե ավելի պարզորեն ընդգծել։

Առաջին խնդիրն այն ե, որ պետք ե աշխատել, վորպեսզի բանվորական մասսաներն առավելագույն չափերով մասնակցեն ընտրություններին։ Անհրաժեշտ ե, վորպեսզի Խորհրդային իշխանության տասներորդ տարում բանվորները մասնակցեին ընտրություններին, իբրև աշխատավորության ամենաակտիվ, ամենակազմակերպված, ամենագիտակից մասը, որն իր ղեկավարող դերը խորհուրդներում կատարում ե պատվով։ Դրան մենք պիտի ձգտենք առաջին հերթին։ Դրան մենք կը հասնենք։

Մեր արդյունաբերությունն այդ տարիներում արագորեն բարձրանում եր, նրա հետ միասին բանվոր դասակարգն եվ վերականգնվում եր ու աճում։ Բարձրանում եյին բանվորների ակտիվությունն ու կազմակերպվածությունը, կուլտուրականությունն ու քաղաքական գիտակցությունը։ Այժմ ավելի ևս, քան առաջ, հիմքեր կան սպասելու, որ պրոլետարիատը վորոշեր վերընտրությունների բնույթը վոչ միայն յերկրի բոլոր քաղաքային ու արդյունաբերական կենտրոններում, այլ և ստուգեր նրանց ընդհանուր արդյունքները։ Կուսակցության ուշադրությունը պետք ե ուղղված լինի դեպի այն կողմը, որ իսկապես ամբողջ բանվորական մասսայի կազմակերպված ու գիտակցական մասնակցությունն ընտրություններին ու այդ ընտրությունների արդյունքը պարզապես ընդգծեյին բանվոր դասակարգի հեգեմոնիան ամբողջ յերկրի քաղաքական կյանքում։ Այդ պետք ե նույնպես իր վավերացումը գտնի ինչպես կոմմունիստական ազդեցությունը մասսաներում ամրապնդելու, այնպես եվ անմիջականորեն կուսակցության ղեկավար ներգործությունը խորհուրդների վրա սաստկացնելու գործում։

Բայց և այնպես կուսակցության ղեկավարությունը խորհուրդների աշխատանքներին՝ աշխուժացման պայմաններում այն չէ, ինչ որ առաջ էր մեզանում (նշանակումների պրակտիկան) և ինչ որ հաճախ զգացնել է տալիս իր գոյությունն այժմ էլ։ Խորհուրդների աշխուժացման քաղաքականությունը պահանջում է, որ կուսակցությունը բացառիկ ուշադրությամբ վերաբերվի անկուսակցական մասսաների ձայնին։ Խորհուրդների աշխուժացման քաղաքականությանը սահման չկա այնտեղ, ուր կուսակցական բանվորի ձայնը չեն լսում, որտեղ ուշադրությամբ չեն վերաբերվում անկուսակցական մասսայի տրամադրությանը։ Այդ պատճառով էլ, ի միջի այլոց, կոմմունիստական թեկնածուներ փաթաթել նրանց շլինքին՝ նշանակում է կուսակցության ընդգրկած քաղաքականության հակառակ գնալ։ Անհրաժեշտ է բոլորովին այլ կերպ վերաբերվել անկուսակցական պրոլետարիատի ձայնին։ Հարկավոր է հասկանալ, որ անկուսակցականները պետք է ստուգեն կուսակցականների աշխատանքը (ինչպես որ Լենինը մատնանշում էր այդ)։ Հարկավոր է հասկանալ, որ մի քանի դեպքերում անկուսակցական բանվորական մասսան կարող է և պետք է ուղղի առանձին կուսկազմակերպությունների պրակտիկան, որոնք մասսաների հետ ունեցած պատշաճ կոնտակտը (կապը) կորցրել են։

Բյուրոկրատական ինքնագոհությանը, յերբ նա թափանցում է առանձին կումարմինների մեջ, հարկավոր է հակադրել կուսակցության պահանջները. ուշադիր լսել անկուսակցական բանվորների ձայնին, հաշվի առ. շարքային պրոլետարիատի ու ամեն մի աշխատավորի քննադատությունը և ուղղիր քո աշխատանքի թերությունները։ Հարկավոր է, որ կուսակցության ղեկավարող մարմիններն ուղղակի աջակցություն ցույց տան բանվորներին, յերբ նրանք, այսպես ասած՝ ներքևից ուղղումներ են մտցնում այս կամ այն կումարմինների վատ աշխատանքի մեջ։ Փույթ չէ, յեթե բանվորների շլինքին փաթաթվող վատ կոմմունիստներին նրանք տեղ-տեղ կփոխարինեն իրենց անկուսակցական ակտիվ պրոլետարով, որն իր լուման կը մտցնի խորհրդի աշխատանքի մեջ։ Այդպիսի դեպքեր, իհարկե, քիչ կը լինեն։ Մեր բանվորները բավական սովորել են գնահատել Համ. ԿԿ ղեկավարությունը խորհրդների ամբողջ շինարարության գործում։ Բայց բանվորական կոնտրոլի դեպքերը ներքևից, յեթե մենք կանոնավոր վերաբերմունք ցույց տալու լինենք, ոչ միայն կը նպաստեն խորհուրդներում բանվորների ինքնագործունեության աճմանը, որ այնքան անհրաժեշտ է, այլև մեր հետամնաց կազմակերպությունները կուսակցական խնդիրների մակարդակին հասցնելուն։ Նրանք կուսակցության հեղինակությունը մասսաներում կամրացնեն, կը բարելավեն

խորհուրդների աշխատանքի ղեկավարության գործում նրա կիրառած մեթոդները և, հետևապես, կամրապնդեն պրոլետարիատի դիկտատուրան։ Իսկ այդ էլ նշանակում է խորհուրդների աշխուժացման քաղաքականությունը ճշտորեն կիրառել։

Քաղաքային ընտրողների մյուս խավերի վերաբերմամբ գլխավոր խնդիրն ընտրությունները կազմակերպչորեն պատրաստելն է, մասնավորապես, արհմիությունների կազմակերպված մասնակցությունն այդ ընտրություններին և կուսակցական կազմակերպությունների կողմից բացատրական-կազմակերպչական կամպանիային պատշաճ ուշադրություն նվիրելը։ Այդ միջոցներն զգալի չափերով ավելի լավ կապահովեն (նախընթացների համեմատությամբ) ծառայողների շրջանում և մանր բուրժուական խավերի աշխատավորության մեջ կատարված ընտրությունների արդյունքները քաղաքներում։

Մանավանդ խոշոր նշանակություն ունեն ընտրությունները գյուղում։

Խորհուրդները գյուղում գյուղացության հիմնական և, իր արդի քաղաքական նշանակությամբ, ուղղակի միակ մասսայական կազմակերպություններն են։ Այն էլ գյուղացական մի այնպիսի կազմակերպություն, որն իր ընդհանուր սիստեմով գյուղացության աշխատավորական մասսաներին կապում է պրոլետարիատի հետ, այդպիսով իրեն դնելով խորհուրդների հեգեմոնի (առաջնորդի)—բանվոր դասակարգի ղեկավարության ներքո։ Այժմ մենք չենք կարող այդ բանը մեր կենտրոնական խնդիրը չհամարել։ Այդ բոլորը խորհուրդների վերընտրությունները դարձնում է գյուղում մղվող մի այնպիսի քաղաքական պայքար, որ կարևոր նշանակություն ունի ամբողջ յերկրի համար։

Խորհուրդների ընտրությունները, մանավանդ ներկայումս կատարվող աշխուժացման պայմաններում, շարժման մեջ են դնում գյուղի բոլոր դասակարգային շերտերը։ Այդպիսով ավելի որոշակի կերպով են յերևան գալիս գյուղացության մեջ յեղած դասակարգային շահերն ու դասակարգային ներհակությունները։ Յերևան են գալիս նաև կոմմունիստական կուսակցության աշխատանքի բոլոր բարդություններն ու դժվարությունները ժամանակակից գյուղում։ Թվում է, որ ամենքի համար էլ պետք է պարզ լինի, որ միայն մեր գյուղական կազմակերպությունների բարելավման գործում կատարած համառ աշխատանքը և միայն նրանց քաղաքական փորձը սիստեմատիկաբար զարգացնելու շնորհիվ կուսակցությունը (դիկտատուրայի տնտեսական դիրքերն ամրացնելու հիման վրա) կարող է հաղթահարել գյուղում կատարելիք իր աշխատանքի այդ բազմաթիվ դժվարությունները։

Բայց մեզ համար առանձնապես կարևոր էյին ու իբրև այդպիսին

նաև առայժմ մնում են խորհուրդների աշխուժացման առաջին հաջողությունները հենց գյուղում։ Այդ հաջողությունների կարևորությունը, որոնք ինքնին գյուղացական մասսաների վերաբերմամբ պրոլետարական ղեկավարության հաջողություններն են, պետք է առավելագույն չափերով բարձրացնի մեր յեռանդը խորհուրդների աշխուժացման պրակտիկայի այդ դժվարությունները հաղթահարելու համար։

Մեր օպպոզիցիան չհասկացավ այդ բանը։ Ուստի այդ հարցում այնքան ցայտուն կերպով յերևան յեկավ նրա քաղաքական սնանկությունը։ Օպպոզիցիան թույլ տվեց վախենալ իրեն (իսկ այդ պատահում է նրանց հետ, ովքեր քաղաքականության մեջ այդպիսի հակում ունեն) գյուղխորհուրդների աշխուժացման գործի դժվարություններով։ Նա խորթ, ուղղակի մենշևիկյան ձայնով աղաղակ բարձրացրեց, որ խորհուրդների ստորին հարկը լցվելու, խեղդվելու յե գեղջկային ուժերով։ Նրա աչքում արդեն սկսում եր յերևալ խորհուրդների իշխանության կուլակային վառասերման ուստրյալովյան թեորիայի կենդանի մարմնացումը։ Որքան էլ այդ անսպասելի չե, բայց և այնպես օպպոզիցիան նույնիսկ իրեն Համ. ԿԿ մեջ «պրոլետարական ձախ թև» յերևակայեց։ Ավաղ, այդ ոչ այլ ինչ եր, բայց յեթե լոկ ինքնաթմրեցում օպպոզիցիոն գոլորշիով և սասովչինայի բուրմունքով ինքնարբեցում։ Իրականում օպպոզիցիան այդ հարցում իր քաղաքականությամբ ոչ միայն ցույց եր տալիս, որ սոցիալ-դեմոկրատական մեշչանականության նախապաշարմունքներից ինքը գերված եր, այլև ուղղակի հրաժարվում եր գյուղի վերաբերմամբ պրոլետարական ղեկավարության նոր անելիքներից։ Օպպոզիցիային զիջում անել այդ հարցում, կը նշանակեր խզել պրոլետարիատի և գյուղացության հաստատուն դաշինքն ու այդպիսով իսկ պրոլետարիատի դիկտատուրայի տապալումը ԽՍՀՄ մեջ։

Կուսակցությունն այս դեպքում էլ վճռականապես մերժեց օպպոզիցիոն յերերումներն ու սխալները։ Կուսակցությունն իր ուշադրությունը, յեռանդը և փորձն ուղղեց գյուղի խորհուրդների աշխուժացման գործում յեղած դժվարությունների հաղթահարման կողմը։ Վերընտրությունների անցյալ կամպանիան պարզ ցույց տվեց, թե որն է այս դեպքում մեր գլխավոր անելիքն այժմյան պայմաններում։

Գյուղում արագ կերպով աճում է միջակ մասսայի, ինչպես և ունեոր-կուլակ վերնախավի ակտիվությունը։ Յեթե կուլակության վերաբերմամբ կուսակցությունը կարող է միայն մի քաղաքականություն վարել, այն է՝ վճռական պայքար մղել կուլակության չեզոքացման համար, անպայման դիմադրություն ցույց տալ նրա կողմից խորհուրդների վերաբերմամբ գործադրվող ճնշմանը, ապա միջակների վերաբերմամբ կուսակցությունը վարում է և պետք է վարի այլ քաղաքականություն։

Միջակ մասսայի հասարակական ակտիվության աճումը, հակառակ օպպոզիցիայի քաղաքական փոքրոգության, ամենևին մինուս չե, այլ պլյուս մեր պետության զարգացման գործում։ Միանգամայն անորմալ կը լիներ, յեթե յերկրի, այդ հաշվում և գյուղի տնտեսական ու կուլտուրական աճման պայմաններում հողագործության «կենտրոնական դեմքի»՝ միջակի հասարակական ակտիվության վերելք չկատարվեր։ Անհեթեթություն կը լիներ նմանապես և այնպիսի քաքաղաքականությունը, որը դուրս կը գար այս վերելքի դեմ, խոչընդոտ հանդիսանալով նրան։

Լենինյան կուսակցությունը չի կարողացել և չի կարող այս ինքնասպան քաղաքականության հողի վրա կանգնել։ Կուսակցությունն իրեն խնդիր է դրել և այժմ էլ դնում է միջակի այդ ակտիվությունը խորհուրդներում բարձրացնել և այն հետագայում խորհրդային հունով էլ ավելի զարգացնել։ Այս քաղաքականությամբ, կուսակցության ղեկավարությամբ, մենք աշխատում ենք ամրապնդել պրոլետարիատի և միջակ գյուղացության դաշինքը։ Միայն այսպես կարող է լինել իսկական լենինյան քաղաքականությունը, որը գյուղացության հետ դաշնակցած ամրապնդել ու ամրապնդում է իրեն սոցիալիզմի շինարարության նորանոր հաջողություններով։

Անցյալում տեղի ունեցած խորհուրդների վերընտրությունները, իրենց բոլոր թերություններով միասին, հաստատեցին այս։ Անցյալ ընտրությունները (1925 թվի վերջին) ոչ թե թուլացրին, այլ ամրապնդեցին կուսակցության հեղինակությունն ու ղեկավարությունը գյուղում։ Այս հաստատում է և անցած տարում գյուղում տիրող ընդհանուր քաղաքական կացությունը (գյուղական կուսկազմակերպությունների աճումը, խորհուրդների ու կոոպերացիայի ծավալվող աշխատանքը, հացամթերումների հաջողությունը և այլն), որն, օրինակ, չի կարող համեմատվել 1924 թվի հետ, յերբ կուսակցությունն անցավ խորհուրդների աշխուժացման քաղաքականության։

Սրա հետ միասին անցած ընտրությունները բավական պարզ կերպով շեշտեցին, թե որտեղ են ընկած մեր գլխավոր խնդիրները գյուղում։ Այդ խնդիրներն, իհարկե, ընկած են այնտեղ, որտեղ կուսակցության գլխավոր հենարանն է և որտեղ մենք դեռևս այնքան թույլ գտնվեցինք։

Միջակների վերաբերմամբ մենք արդեն համեմատաբար խոշոր հաջողություններ ունենք՝ ընտրություններին և խորհուրդների աշ-

էլ առայժմ մնում են խորհուրդների աշխուժացման առաջին հաջողությունները հենց գյուղում։ Այդ հաջողությունների կարևորությունը, վորոնք ինքնին գյուղացիական մասսաների վերաբերմամբ պրոլետարական ղեկավարության հաջողություններն են, պետք է առավելագույն չափերով բարձրացնի մեր յեռանդը խորհուրդների աշխուժացման պրակտիկայի այդ դժվարությունները հաղթահարելու համար։

Մեր օպպոզիցիան չհասկացավ այդ բանը։ Ուստի այդ հարցում այնքան ցայտուն կերպով յերևան յեկավ նրա քաղաքական սնանկությունը։ Օպպոզիցիան թույլ ավեց վախենալ իրեն (իսկ այդ պատահում է նրանց հետ, ովքեր քաղաքականության մեջ այդպիսի հակում ունեն) գյուղխորհուրդների աշխուժացման գործի դժվարություններով։ Նա խուրթ, ուղղակի մենշևիկյան ձայնով աղաղակ բարձրացրեց, վոր խորհուրդների ստորին հարկը լցվելու, խեղդվելու յե գեղջկային ուժերով։ Նրա աչքում արդեն սկսում եր յերևալ խորհուրդների իշխանության կուլակային վատասերման ուստրյալովյան թեորիայի կենդանի մարմնացումը։ Վորքան էլ այդ անսպասելի չէ, բայց և այնպես օպպոզիցիան նույնիսկ իրեն Համ. ԿԿ մեջ «պրոլետարական ձախ թև» յերևակայեց։ Ավաղ, այդ վոչ այլ ինչ եր, բայց յեթե լոկ ինքնաթմրեցում օպպոզիցիոն գոլորշիով և սասովչինայի բուրմունքով ինքնարբեցում։ Իրականում օպպոզիցիան այդ հարցում իր քաղաքականությամբ վոչ միայն ցույց եր տալիս, վոր սոցիալ-դեմոկրատական մեշչանականության նախապաշարմունքներից ինքը գերված եր, այլև ուղղակի հրաժարվում եր գյուղի վերաբերմամբ պրոլետարական ղեկավարության նոր անելիքներից։ Օպպոզիցիային զիջում անել այդ հարցում, կը նշանակեր խզել պրոլետարիատի և գյուղացության հաստատուն դաշինքն ու այդպիսով իսկ պրոլետարիատի դիկտատուրայի տապալումը ԽՍՀՄ մեջ։

Կուսակցությունն այս դեպքում ևս վճռականապես մերժեց օպպոզիցիոն յերերումներն ու սխալները։ Կուսակցությունն իր ուշադրությունը, յեռանդը և փորձն ուղղեց գյուղի խորհուրդների աշխուժացման գործում յեղած դժվարությունների հաղթահարման կողմը։ Վերընտրությունների անցյալ կամպանիան պարզ ցույց ավեց, թե վորն է այս դեպքում մեր գլխավոր անելիքն այժմյան պայմաններում։

Գյուղում արագ կերպով աճում է միջակ մասսայի, ինչպես և ունևոր-կուլակ վերնախավի ակտիվությունը։ Յեթե կուլակության վերաբերմամբ կուսակցությունը կարող է միայն մի քաղաքականություն վարել, այն է՝ վճռական պայքար մղել կուլակության չեզոքացման համար, անպայման դիմադրություն ցույց տալ նրա կողմից խորհուրդ-

ների վերաբերմամբ գործադրվող ճնշմանը, ապա միջակների վերաբերմամբ կուսակցությունը վարում է և պետք է վարի այլ քաղաքականություն։

Միջակ մասսայի հասարակական ակտիվության աճումը, հակառակ օպպոզիցիայի քաղաքական փոքրոգության, ամենևին մինուս չէ, այլ պլյուս մեր պետության զարգացման գործում։ Միանգամայն անորմալ կը լիներ, յեթե յերկրի, այդ հաշվում և գյուղի տնտեսական ու կուլտուրական աճման պայմաններում հողագործության «կենտրոնական դեմքի»՝ միջակի հասարակական ակտիվության վերելք չկատարվեր։ Անհեթեթություն կը լիներ նմանապես և այնպիսի քաքաղականությունը, վորը դուրս կը գար այս վերելքի դեմ, խոչընդոտ հանդիսանալով նրան։

Լենինյան կուսակցությունը չի կարողացել և չի կարող այս ինքնասպան քաղաքականության հողի վրա կանգնել։ Կուսակցությունն իրեն խնդիր է դրել և այժմ էլ դնում է միջակի այդ ակտիվությունը խորհուրդներում բարձրացնել և այն հետագայում խորհրդային հունով էլ ավելի զարգացնել։ Այս քաղաքականությամբ, կուսակցության ղեկավարությամբ, մենք աշխատում ենք ամրապնդել պրոլետարիատի և միջակ գյուղացության դաշինքը։ Միայն այսպես կարող է լինել իսկական լենինյան քաղաքականությունը, վորը գյուղացության հետ դաշնակցած ամրապնդել ու ամրապնդում է իրեն սոցիալիզմի շինարարության նորանոր հաջողություններով։

Անցյալում տեղի ունեցած խորհուրդների վերընտրությունները, իրենց բոլոր թերություններով միասին, հաստատեցին այս։ Անցյալ ընտրությունները (1925 թվի վերջին) վոչ թե թուլացրին, այլ ամրապնդեցին կուսակցության հեղինակությունն ու ղեկավարությունը գյուղում։ Այս հաստատում է և անցած տարում գյուղում տիրող ընդհանուր քաղաքական կացությունը (գյուղական կուսկազմակերպությունների աճումը, խորհուրդների ու կոոպերացիայի ծավալվող աշխատանքը, հացամթերումների հաջողությունը և այլն), վորն, որինակ, չի կարող համեմատվել 1924 թվի հետ, յերբ կուսակցությունն անցավ խորհուրդների աշխուժացման քաղաքականության։

Սրա հետ միասին անցած ընտրությունները բավական պարզ կերպով շեշտեցին, թե վորտեղ են ընկած մեր գլխավոր խնդիրները գյուղում։ Այդ խնդիրներն, իհարկե, ընկած են այնտեղ, վորտեղ կուսակցության գլխավոր հենարանն է և վորտեղ մենք դեռևս այնքան թույլ գտնվեցինք։

Միջակների վերաբերմամբ մենք արդեն համեմատաբար խոշոր հաջողություններ ունենք՝ ընտրություններին և խորհուրդների աշ-

խատանքներին նրանց կողմից ցույց տրվող մասնակցության իմաստով. այս ուղիով մենք էլ ավելի առաջ կերթանք, դեպի նորանոր և էլ ավելի լուրջ հաջողությունները:

Կուլակության և, ընդհանրապես, կապիտալիստական տարրերի վերաբերմամբ, մենք հարկադրված էյինք մի շարք միջոցներ ձեռք առնել նրանց կողմից խորհուրդների վերաբերմամբ ցույց տրվող ճնշման դեմ:

Սակայն գյուղի հասարակական կյանքի ընդհանուր աճումից բացահայտ կերպով յետ է մնում չքավորության ու բատրակության ակտիվությունն ու կազմակերպվածությունը: Իսկ չէ՞ որ այս մեր կուսակցության ամենակայուն և ամենահաստատ հենարանն է գյուղում: Այս պատճառով այժմ, վերընտրությունների նոր կամպանիայի ժամանակ, հենց այստեղ էլ ընկած են մեր գլխավոր գործնական ու քաղաքական խնդիրները: Ճակատի այս թևում, չքավորության ու բատրակության թևում մենք տվյալ մոմենտում պետք է, որքան կարելի է, խոշոր ուժեր կենտրոնացնենք և շղթայի հիմնական օղակը մեր ձեռքն առնելու բոլշևիկյան կարողություն հայտնաբերենք: Անցած ընտրություններին մենք գործնական դաս առանք, թե որքան ենք յետ մնացել այս գործում: Այժմ մենք պետք է այս ասպարիզում այլ հետևանքների հասնենք: Ներկա ընտրությունները կուսակցական կազմակերպության գյուղում կատարած վողջ աշխատանքի լրջության լավագույն ստուգումը կը դառնան և, մասնավորապես, ստուգումն այն բանի, թե ինչ արդյունքների յենք մենք հասել չքավորության շրջանում կատարած աշխատանքների ընթացքում:

Այնտեղ, որտեղ չքավորության կազմակերպման գործը շատ հեռու չի գնացել «լավ» զեկուցումներից ու հոդվածներից և մեկ էլ գովելի բանաձևերից ու «սքանչելի» հաշվետվություններից,—այնտեղ չի կարելի սպասել խորհուրդների աշխուժացման դրական արդյունքների: Միայն չքավորության ու բատրակության միաձուլման ու քաղաքական լուսավորման նպատակով կատարվելիք մտածված ու համառ գործնական աշխատանքը (ըստ որում, յեթե գործը յետ է մնացել, ապա, համենայն դեպս, նախընտրական կամպանիայի ընթացքում այն պետք է վճռական կերպով տեղից շարժել) կարող է կուսակցության կողմից իր խնդիրների առաջին շարքում դրված այս գործի հաստատուն հիմքը դնել:

Ինչով պիտի արտահայտվեն գյուղական չքավորության շրջանում կուսակցության կատարած աշխատանքի հաջողությունները: Իհարկե, նրա այնպիսի արդյունքներով, վորոնք ի հայտ կը բերեն չքավորության ու բատրակության առավել բարձր ակտիվություն, կազմա-

կերպվածություն ու քաղաքական գիտակցություն, կուսակցության ոգնությամբ և միջակի հետ դաշնակցած, նկատելի չափով բարձրացնելով իր ազդեցությունը գյուղի հասարակական կյանքի և, ամենից առաջ, խորհուրդների աշխատանքի նկատմամբ: Գյուղի չքավոր մասը, վորը դեռևս վերջնականապես չի ազատագրվել իր անցյալի ընկճված, անկուլտուրական ու առանձնացած վիճակից, միայն այս ձևով, այսպիսի աշխատանքի միջոցով, խորհուրդներում ունեցած իր ներկայացուցիչների քանակն ավելացնելով ու նրանց վորակը բարելավելով, կը կարողանա իրոք ճշտությամբ պաշտպանել իր շահերը:

Այստեղից հետևյալ գործնական հետևությունները կարելի յե հանել. վողջ չքավորությունը և, առաջին հերթին, վողջ բատրակությունը պետք է ակտիվ մասնակցություն ցույց տան ընտրություններին: Չի կարելի թույլ տալ, ինչպես անցյալ անգամ է պատահել, վոր չքավորությունը վերընտրություններին մասնակցելու գործում վերջին տեղը բռնի: Հարկավոր է այնպես անել, վոր այժմ նա այս տեսակետից գյուղի մնացած խավերից առաջ ընկնի:

Չքավորության ձայնը և նրա կարիքներն այս անգամ պետք է ավելի ցայտուն արտահայտություն գտնեն նոր խորհուրդներին տրվելիք հրահանգներում: Չքավորությունն ու բատրակությունը կուսակցության աջակցությամբ և միջակի հետ դաշնակցած պետք է աշխատեն, վոր վերընտրական կամպանիայի ընթացքում չքավորության շահերը լայն կերպով պարզվեն և նոր ընտրվելիք խորհուրդների աշխատանքի մեջ առաջին տեղը դրվեն:

Խորհուրդների կազմը պետք է ավելի լիակատար կերպով արտահայտի չքավորության ու բատրակության ազդեցությունը: Ըստ վորում այս վերաբերում է վոչ միայն գյուղխորհուրդներին ու շրջգործկոմներին, այլ և գավառական, նահանգական և հանրապետական գործկոմներին:

Մեզանում դեռևս բազմաթիվ դեպքեր են լինում, յերբ աղայական-չինովնիկական և կոպիտ-մեշչանական վերաբերմունք են ցույց տալիս աշխատավորության շրջանից և, մասնավորապես, գյուղացիական մասսայից նոր տարրերի ղեկավար աշխատանքի համար առաջ քաշելուն: Ինքնահավան այն չինովնիկներին և բյուրոկրատներին, վորոնք իրենց խորհուրդների ու գործկոմների «անփոխարինելի» անդամներն են համարում, չի վոչնչացրել նույնիսկ Հոկտեմբերյան փոթորիկը և հեղափոխության շինարարության համարյա թե տասը տարին: Սակայն այժմ միանգամայն անհանդուրժելի յե, յերբ ջանում են աշխատավորական մասսայից (լինեն նրանք բանվորներ թե գյուղացիներ—այդ միևնույն է) «առաջ քաշել» միևնույն սիրված դեմքե-

խատանքներին նրանց կողմից ցույց տրվող մասնակցության իմաստով. այս ուղիով մենք էլ ավելի առաջ կերթանք, դեպի նորանոր և էլ ավելի լուրջ հաջողությունները:

Կուլակության և, ընդհանրապես, կապիտալիստական տարրերի վերաբերմամբ, մենք հարկադրված եղինք մի շարք միջոցներ ձեռք առնել նրանց կողմից խորհուրդների վերաբերմամբ ցույց տրվող ճընշման դեմ:

Սակայն գյուղի հասարակական կյանքի ընդհանուր աճումից բացահայտ կերպով յետ է մնում չքավորության ու բատրակության ակտիվությունն ու կազմակերպվածությունը: Իսկ չէ՞ որ այս մեր կուսակցության ամենակայուն և ամենահաստատ հենարանն է գյուղում: Այս պատճառով այժմ, վերընտրությունների նոր կամպանիայի ժամանակ, հենց այստեղ էլ ընկած են մեր գլխավոր գործնական ու քաղաքական խնդիրները: Ճակատի այս թևում, չքավորության ու բատրակության թևում մենք տվյալ մոմենտում պետք է, որքան կարելի յե, խոշոր ուժեր կենտրոնացնենք և շղթայի հիմնական օղակը մեր ձեռքն առնելու բոլշևիկյան կարողություն հայտնաբերենք: Անցած ընտրություններին մենք գործնական դաս առանք, թե որքան ենք յետ մնացել այս գործում: Այժմ մենք պետք է այս ասպարեզում այլ հետևանքների հասնենք: Ներկա ընտրությունները կուսակցական կազմակերպության գյուղում կատարած վողջ աշխատանքի լրջության լավագույն ստուգումը կը դառնան և, մանավորապես, ստուգումն այն բանի, թե ինչ արդյունքների յենք մենք հասել չքավորության շրջանում կատարած աշխատանքների ընթացքում:

Այնտեղ, վորտեղ չքավորության կազմակերպման գործը շատ հեռու չի գնացել «լավ» զեկուցումներից ու հոդվածներից և մեկ էլ գովելի բանաձևերից ու «սքանչելի» հաշվետվություններից,—այնտեղ չի կարելի սպասել խորհուրդների աշխուժացման դրական արդյունքների: Միայն չքավորության ու բատրակության միաձուլման ու քաղաքական լուսավորման նպատակով կատարվելիք մտածված ու համառ գործնական աշխատանքը (ըստ վորում, յեթե գործը յետ է մնացել, ապա, համենայն դեպս, նախընտրական կամպանիայի ընթացքում այն պետք է վճռական կերպով տեղից շարժել) կարող է կուսակցության կողմից իր խնդիրների առաջին շարքում դրված այս գործի հաստատուն հիմքը դնել:

Ինչո՞վ պիտի արտահայտվեն գյուղական չքավորության շրջանում կուսակցության կատարած աշխատանքի հաջողությունները: Իհարկե, նրա այնպիսի արդյունքներով, վորոնք ի հայտ կը բերեն չքավորության ու բատրակության առավել բարձր ակտիվություն, կազմա-

կերպվածություն ու քաղաքական գիտակցություն, կուսակցության օգնությամբ և միջակի հետ դաշնակցած, նկատելի չափով բարձրացնելով իր ազդեցությունը գյուղի հասարակական կյանքի և, ամենից առաջ, խորհուրդների աշխատանքի նկատմամբ: Գյուղի չքավոր մասը, վորը դեռևս վերջնականապես չի ազատագրվել իր անցյալի ընկճված, անկուլտուրական ու առանձնացած վիճակից, միայն այս ձևով, այսպիսի աշխատանքի միջոցով, խորհուրդներում ունեցած իր ներկայացուցիչների քանակն ավելացնելով ու նրանց վորակը բարելավելով, կը կարողանա իրոք ճշտությամբ պաշտպանել իր շահերը:

Այստեղից հետևյալ գործնական հետևությունները կարելի յե հանել. վողջ չքավորությունը և, առաջին հերթին, վողջ բատրակությունը պետք է ակտիվ մասնակցություն ցույց տան ընտրություններին: Չի կարելի թույլ տալ, ինչպես անցյալ անգամ է պատահել, վոր չքավորությունը վերընտրություններին մասնակցելու գործում վերջին տեղը բռնի: Հարկավոր է այնպես անել, վոր այժմ նա այս տեսակետից գյուղի մնացած խավերից առաջ ընկնի:

Չքավորության ձայնը և նրա կարիքներն այս անգամ պետք է ավելի ցայտուն արտահայտություն գտնեն նոր խորհուրդներին տրվելիք հրահանգներում: Չքավորությունն ու բատրակությունը կուսակցության աջակցությամբ և միջակի հետ դաշնակցած պետք է աշխատեն, վոր վերընտրական կամպանիայի ընթացքում չքավորության շահերը լայն կերպով պարզվեն և նոր ընտրվելիք խորհուրդների աշխատանքի մեջ առաջին տեղը դրվեն:

Խորհուրդների կազմը պետք է ավելի լիակատար կերպով արտահայտի չքավորության ու բատրակության ազդեցությունը: Ըստ վորում այս վերաբերում է վոչ միայն գյուղխորհուրդներին ու շրջգործկոմներին, այլ և գավառական, նահանգական և հանրապետական գործկոմներին:

Մեզանում դեռևս բազմաթիվ դեպքեր են լինում, յերբ աղայական-չինովնիկական և կուլտ-մեշչանական վերաբերմունք են ցույց տալիս աշխատավորության շրջանից և, մանավորապես, գյուղացիական մասսայից նոր տարրերի ղեկավար աշխատանքի համար առաջ քաշելուն: Ինքնահավան այն չինովնիկներին և բյուրոկրատներին, վորոնք իրենց խորհուրդների ու գործկոմների «անփոխարինելի» անդամներն են համարում, չի վոչնչացրել նույնիսկ Հոկտեմբերյան փոթորիկը և հեղափոխության շինարարության համարյա թե տասը տարին: Սակայն այժմ միանգամայն անհանդուրժելի յե, յերբ ջանում են աշխատավորական մասսայից (լինեն նրանք բանվորներ թե գյուղացիներ—այդ միևնույն է) «առաջ քաշել» միևնույն սիրված դեմքե-

րին, հենց այնպես՝ մեծ միրուքի, ալեզարդ գլխի կամ կարմիր խալաթի համար։ Դեկորացիաների ժամանակը վաղուց է, ինչ անցել է։ Այժմ, խորհրդային իշխանության գոյության տասներորդ տարում առաջքաշման խնդիրը, հատկապես գյուղի առաջավոր չքավորների և բատրակների առաջ քաշման խնդիրը չափազանց կարևոր նշանակություն է ստանում։ Սակայն նա կարող է և պետք է լուծվի, վորպես առաջավոր, գիտակից, նոր, իրենց եներգիայով ու խելքով մասսայից տարբերվող ընկերների առաջ քաշում (այս ճիշտ է, իհարկե, և միջակների վերաբերմամբ)։

Ըստ այսմ հարկավոր է կրկին և կրկին շեշտել անկուսակցական աշխատավոր գյուղացիների, իսկ այժմ հատկապես անկուսակցական չքավորների ու բատրակների առաջքաշման անհրաժեշտությունը։ Չե՞ վոր խորհուրդների աշխուժացման քաղաքականության գործնական եյությունն իր առավել ցայտուն արտահայտությունն է գտնում հետևյալում.—կուսակցության ղեկավարությամբ անկուսակցական մասսաներին խորհրդային շինարարության ասպարեզ գրավել, իրեն իսկ մասսայի կողմից նոր անկուսակցական ուժերին խորհուրդների ղեկավար մարմինների մեջ առաջ քաշել, կուսակցականներին անկուսակցականների կողմից ստուգման յենթարկվել և այլն։

Ահա թե ինչու գյուղում (իսկ հետագայում և գավառում, նահանգում և հանրապետության մեջ) նոր խորհուրդներ ընտրելիս պետք է հատուկ ուշադրություն կենտրոնացնել խորհուրդների ու գործկոմների անկուսակցական անդամների լայն կերպով առաջ քաշելու վրա՝ առավել ակտիվ, առաջավոր, գիտակից բատրակներից ու չքավորներից։ Յեթե այս խնդիրը ճշտությամբ լուծվի,—նշանակում է մենք հսկայական մի քայլ կանենք դեպի առաջ խորհուրդների հանրապետության քաղաքական զարգացման գործում։

Խորհուրդների վերընտրությունների կամպանիան պետք է տոնտա կուսակցության կողմից գյուղում կատարվող ամբողջ աշխատանքին։ Հետագայում այս օրինակով պիտի ընթանան կոոպերացիայի, գյուղփոխօգկոմների և այլ հասարակական կազմակերպությունների աշխատանքները։ Խորհուրդների վերընտրությունները կարևոր խթան կը հանդիսանան չքավորության կազմակերպման աշխատանքների համար։ Այս բոլորը միաժամանակ կապահովի նախընտրական կամպանիայի այն ընդհանուր բնույթը, վորի մասին խոսվեց վերևում։ Ներկա պայմաններում այս կը լինի մի պարզ ապացույց այն բանի, վոր մեր յերկրի քաղաքական հեգեմոնը պրոլետարիատն է։ Այս մի խոշոր քար կավելացնի ԽՍՀՄ պրոլետարական դիկտատուրայի և սոցիալիստական շինարարության ֆունդամենտին։

Վերևում ասվածն ամբողջապես նշում է միայն, այսպես ասած, խորհուրդների ընտրությունների նոր կամպանիայի սպեցիֆիկ գծերն ու լոզունգները։ Վերընտրությունների ընդհանուր լոզունգներն են լինելու և չեն կարող չլինել բոլոր այն լոզունգները, վորոնք վորոշում են կուսակցության ներքին և միջազգային քաղաքականությունը։ Ներկայումս մեր յերկրի բանվոր դասակարգի առաջ ծառացած ներքին ու միջազգային առաջնահերթ խնդիրներն են վորոշելու խորհուրդների նոր ընտրությունների ընդհանուր քաղաքական գիծը։

Խորհուրդների վերընտրությունները կրկին կարևորագույն քաղաքական կամպանիա յեն դարձել յերկրում։ Այս ինքնըստինքյան մեր քաղաքական զարգացման խոշորագույն հաջողություններից մեկն է։ Ներկայումս վերսկսվող ընտրություններն էլ ավելի կը բարձրացնեն խորհուրդների նշանակությունը տնտեսական վերելքի և պրոլետարական ու գյուղացական մասսաների ակտիվության աճման պայմաններում։

Խորհուրդների նոր ընտրությունները յերկրորդ լայն ու ընդարձակ կամպանիան կը լինեն։ Մենք նրան ավելի պատրաստված կը դիմավորենք, քան առաջ էր։ Մենք մեր բոլոր ուժերը կը լարենք մեր հիմնական քաղաքական խնդիրների ուղղությամբ։ Այն հավատը, վոր կուսակցության բռնած գիծը ճիշտ է, պրոլետարիատին խորթ քաղաքական տատանումները հաղթահարելու գործում կուսակցության հայտնաբերած միաձուլությունը, ուշադրությունը, ուժն ու փորձն այն բանի վրա կենտրոնացնելը, թե ինչն է վորոշում մեր հիմնական խնդիրները խորհուրդների նոր ընտրությունների ասպարեզում,—այս բոլորը մեր կուսակցության հաջողության գրավականն է այս գործում։

Մենք, կոմմունիստների կուսակցությունը, համարձակ կերպով ենք ձեռնարկում այս ընտրություններին։ Մենք հաստատապես հավատացած ենք, վոր 1927 թվի խորհուրդների ընտրությունները կոժանդակեն պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդմանը և մի կարևոր քայլ կը լինեն մեր յերկրում հաղթական կերպով սոցիալիզմ կառուցելու գործում։ Դրանով իսկ խորհուրդների ընտրությունների հաջողությունները դառնում են կոմմունիզմի շարքերում մարտնչող՝ բոլոր յերկրների պրոլետարների և միջազգային պրոլետարական հեղափոխության հաջողություններ։

II

ԿՈՄԻՆՏԵՐՆԻ VII ՊԼԵՆՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Կոմինտերնի Գործադիր Կոմիտեի յոթերորդ լայնացրած պլենումը, վորի նիստերը տեղի ունեցան անցած դեկտեմբերին, շատ պատասխանատու իր վորոշումներում, ավեց համաշխարհային հեղափոխության և Խորհրդային Միության դրության բնութագիրը, կոնկրետ ձևակերպումներ ավեց Կոմինտերնի անելիքներին և ավեց նաև իր գնահատականը ՀամԿԿ (բ.) վերաբերմամբ, վորն ե՛ր և մնում է առաջին և ղեկավար կուսակցությունը Կոմինտերնի մեջ։ Այս վորոշումները, վորոնք ընդունված են մտքերի լայն փոխանակումից հետո Գործկոմի պլենումում, և վորոնք նախնական քննության նյութ են յեղել նաև ՀամԿԿ (բ.) 15-րդ կոնֆերենցիայում, տոգորված են մարտական լենինիզմի վոգով, համապատասխանում են նրա ավանդներին։

Գործկոմի 7-րդ պլենումը, համաշխարհային տնտեսական կացությունը բնորոշեց իբրև մասնակի և անկայուն ստաբիլիզացիա, վորը՝ բուրժուազիային և նրա սպասավոր «սոցիալիստներին» ուրախացնող մի շարք գրավումների հետ, ունի նաև բազմաթիվ օրգանական և ճակատագրական բացեր ու ճեղքվածքներ, վորոնք հիմքից խախտում են կապիտալիզմի ստաբիլիզացիան, նրա տևականությունը դարձնում անկարելի, իսկ հեռանկարը՝ մռայլ։ Վորո՛նք են կապիտալիստական ստաբիլիզացիայի այդ հիվանդությունները, վոր քրքրում են նրա բուն իսկ հիմքերը — կոնյունկտուրայի տենդագին փոփոխումները, զարգացման խիստ անհամաչափությունը, արտադրական ապպարատի արտադրողական ուժի և արտադրության փաստական չափի հսկայական հակասությունը, բացառիկ մեծ չափերի հասած քրոնիքական անգործությունը։ Ժամանակակից կապիտալիզմը, այդ ծանրագույն բացերի հետ ունի նաև այնպիսի մեծ ճեղքվածքներ, վորպիսին են՝ սոցիալիզմի աճումը ԽՍՀՄ-ի մեջ, անգլիական կապիտալիզմի անկման սուր ընթացքը, դասակարգային կռվի աննախընթաց սուր բնույթն Անգլիայում և ազգային մեծ հեղափոխությունը Չինաստանում։ Այսպիսի բացերով և ճեղքվածքներով կապիտալիզմը նորմալ, խաղաղ կացություն չունի. նա յուրորինակ կրիզիս է ապրում, անխուսափելիորեն դիմում է դեպի պատերազմ, վորը հետևանք է լինելու շուկաների համար մղվող կատաղի մրցության։ Ահա այս ամենը նկատի առնելով, Կոմինտերնի Գործկոմի 7-րդ պլենումը գտնում է, վոր «մեր ապրած շրջանը կարելի չե բնորոշել իբրև միջհեղափոխական շրջան, իբրև մի ետապ՝ հեղափոխական մեկ վերելքից դեպի մյուսը, վորին անխուսափելիորեն կհասցնի պատմության

զարգացման ընթացքը, և վորի վրա հասնելուն գուցե շատ շուտով — պետք է պատրաստ լինեն կոմկուսակցությունները»։

Այսպիսի տեսակետներ ձևակերպելով, Գործկոմի 7-րդ պլենումը հերքեց և ժխտեց Կոմինտերնի զանազան սեկցիաներում գոյություն ունեցող ծայրահեղ աջ և ծայրահեղ ձախ խմբավորումների (նրանց թվում ՀամԿԿ (բ) միացյալ ոպպոզիցիայի) սխալ, վնասակար և թեթևամիտ ու հակալենինյան այն գնահատականներն ու գործնական-տակտիկական առաջարկները, վոր նրանք անում են միջազգային կացության և Կոմինտերնի անելիքների մասին։

Հեղափոխական նոր բռնկումների նախօրեի այս շրջանում, առանձնապես մեծ արժեքավորություն է ստանում Խորհրդային Միության կայուն կացությունը և նրա սոցիալիստական շինարարությունը։ Միջազգային սոցիալ-դեմոկրատիան, կոմմունիզմի ռենեգատները, այլև աջ ու ձախ մի շարք վայկոմմունիստներ (հենվելով ՀամԿԿ (բ) միացյալ ոպպոզիցիայի համապատասխան հայտարարությունների վրա), մեր սոցիալիստական շինարարությունը համարում են կասկածելի, հարցական, յենթակա կուլակային վերասերման։ Կոմինտերնի Գործկոմի 7-րդ պլենումը վճռականորեն հերքում է լիկվիդատորական, թերահավատություն փչող այդ կեղծ գնահատականները և հայտարարում, վոր նա «ԽՍՀՄ համարել և համարում է միջազգային հեղափոխության կարևորագույն ամրոցը»։

Այսպես պարզելով միջազգային կացությունը և Խորհրդային Միության բնույթն ու նշանակությունը, 7-րդ պլենումը նշում է տակտիկական այն գիծը, վորով պիտի ընթանան կապիտալիստական աշխարհի կոմմունիստական կուսակցությունները։ Արդեն անցած լինելով ինքնաճանաչման և գաղափարական բյուրեղացման անխուսափելի ետապները, ձեռք բերելով բավարար փորձառություն և բոլշևիկյան կոփվածություն, Յեվրոպայի կոմկուսներն արդեն ընդունակ են անցնելու ավելի վճռական գործողությունների, ավելի լայն և խորն ընդգրկող շարժումներ ղեկավարելու։ Կապիտալի հարձակումը բանվոր դասակարգի վրա, անչափ մեծ չափերով տարածված անգործությունը, մասսաների աղքատացումը և միջազգային քաղաքական սուր կացությունը ձախացնում, հեղափոխականացնում են մասսաներին, հրում նրանց վճռական յելույթների։ Այս ամենը պիտի հաշվի առնեն բուրժուական յերկրների կոմմունիստական կուսակցությունները և մշակեն ճկուն ու մարտական տակտիկա մասսաներին գրավելու, մասսաներին ղեկավարելու և հասունացող մեծ անցքերը դիմավորելու համար։ Կոմինտերնի Գործկոմի 7-րդ պլենումի ընդունած «Միջազգային կացությունը և Կոմմունիստական Ինտերնացիոնալի

անելիքները» բանաձևը, շատ կոնկրետ կերպով, մանրամասնորեն թըվում ե տակտիկական ամբողջ մի շարք միջոցներ, վոր պիտի կենսագործեն կոմունիստական կուսակցությունները բուրժուական աշխարհում։ Ընկ. Լենինն ասում եր. «Տիրելով կռվի բոլոր միջոցներին, մենք կհաղթենք ամենայն հավանականությամբ, քանի վոր արտահայտում ենք իսկապես առաջավոր, իսկապես հեղափոխական դասակարգի շահերը, յեթե անգամ հանգամանքները չեն թույլատրում բանի գցել թըշնամու համար ամենից անհաճելի այն զենքը, վորն ամենից արագ կերպով կհասցներ մահացու հարվածներ»։ Այո, յեվրոպական կոմունիստների համար հրամայական խնդիր ե՝ համաձայն ընկ. Լենինի պատգամի, յուրացնել կռվի բոլոր միջոցները։ Միայն այդ կերպ նըրանք լավագույն կերպով պատրաստ կլինեն ղեկավարելու մասսայական կռիվները և հաղթելու։ Այն փաստը, վոր Գործկոմի 7-րդ պլենումը տակտիկական խնդիրներին մոտեցավ ամենակոնկրետ կերպով և նշեց առորյա քաղաքականության վարքը՝ այդ փաստն ինքնին ցույց ե տալիս, վոր կոմունիստական կուսակցություններն ընդհուպ մոտեցել են լայն մասսաների պահանջներին, դարձել մասսայական կուսակցություններ։ Ընկ. Լենինը գիտականորեն ապացուցեց, վոր իմպերիալիզմը «մեռնող կապիտալիզմն ե», վոր իմպերիալիզմի տիրապետությունն անխուսափելիորեն առաջացնում ե պրոլետարական հեղափոխություններ բուն կապիտալիստական մետրոպոլիաներում, և ազգային դեմոկրատական ազատագրական հեղափոխություններ՝ գաղութներում։ Լենինյան այս թեորիան ամբողջապես յուրացրել են Կոմունիստական Ինտերնացիոնալը, նրա սեկցիաները, և նրանք գործնականորեն պետք ե պատրաստվեն և պատրաստվում են այդ հեղափոխությունների համար, կատարում այդ հեղափոխությունները (Չինաստան, Ինդոնեզիա և մյուս յերկիրները)։

Կոմինտերնի Գործկոմի 7-րդ պլենումն իր խորը գործնական (իսկ սկզբունքային տեսակետից էլ հետևողական լենինյան) վորոշումներով, աշխատանքի մի գործնական լայն պլատֆորմ տվեց, վորով պիտի առաջնորդվեն Կոմինտերնի բոլոր սեկցիաները։

Այստեղ կարիք չկա մանրամասնորեն կանգ առնելու Խորհրդային Միության և Համամիութենական Կոմունիստական Կուսակցության արդի կացության վրա։ Կարիք չկա, վորովհետև նրանց վերջին տարվա բուռն զարգացումը բնորոշող փաստերը հանրածանոթ են։ Խորհրդային Միությունը հաստատուն քայլերով մտել ե ինդուստրիացման, արդյունաբերության զարգացման մի նոր շրջան, վորն ամենակարճ ճանապարհով մեզ պիտի հանի տեխնիքական հետամնացության վիրավորական վիճակից և բարձրացնի՝ առաջավոր կապիտալիստական

յերկիրների տեխնիքական կուլտուրայի բարձրությանը։ Այդ բուռն շինարարական գործը կատարվում ե Համ. ԿԿ (բ.) հմուտ ու փորձված լենինյան ղեկավարությամբ, վորին չկարողացավ ցնցել և իր ճիշտ ուղիներից շեղել միացյալ ոպոզիցիան։ Ճիշտ և հաստատուն քաղաքականությամբ պրոլետարիատի և գյուղացիության վերաբերմամբ, ինդուստրիացման ուղիով՝ Համ. ԿԿ (բ.) առաջնորդում ե ԽՍՀՄ դեպի նորանոր սոցիալիստական գրավումներ, նորանոր հաղթանակներ։

Կոմինտերնի Գործկոմի 7-րդ պլենումի վորոշումների մասին յերկար պատմեցինք, վորպեսզի պարզ լինի, թե վորքան են նրանց մեջ ապրում ընկ. Լենինի մարտական ավանդները, թե վորքան ճիշտ ե յեղել ընկ. Լենինի նշանառած գիծը համաշխարհային հեղափոխության զարգացման մասին։ Ընկ. Լենինի հեղափոխական գաղափարները դարձել են հատու զենքեր տասնյակ և միլիոնավոր բանվորների, գյուղացիների, գաղութային տրորված, արնաքամ ժողովուրդների ձեռքին։ Հենվելով միջազգային հեղափոխության հզոր ամրոցի՝ Խորհրդային Միության վրա, համաշխարհային հեղափոխությունն աճում, զարգանում, քայլում ե մեր անմահ ուսուցչի գծած ուղիներով, նրա մարտական ավանդների դրոշակի տակ։

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I ՄԱՍ

Առաջաբանի փոխարեն 3

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՎԱԾ. Համ. ԿԿ (բ) ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Առաջին գրույց: Կուսակցության շինարարությունը յեվ կուսակցության անդամի պարտականությունները . . 9

1. *Համ. ԿԿ (բ.) կանոնադրության նշանակությունը և հիմունքները* . . . . . . »
2. *Պայքար հանուն կուսակցության միության* . . . 21

Կտորներ ընթերցանության համար 27

Առաջադրություններ և հարցեր 30

Յերկրորդ գրույց: Համ. ԿԿ (բ.)—բանվորական կուսակցություն 32

1. *Համ. ԿԿ (բ.) պրոլետարական կորիզի նշանակությունը* . . »
2. *Պրոլետարական կուսակցությունն իր յետևից տանում է բոլոր աշխատավորներին* 40

Կտորներ ընթերցանության համար 47

Առաջադրություններ և հարցեր 50

ՅԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ: ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԱՍՍԱՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Յերրորդ գրույց: Կուսակցությունը յեվ արհմիությունները 52

1. *Արհմիությունները պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ* . . . . »
2. *Կուսակցության հերթական խնդիրներն արհմիություններում* 60

Կտորներ ընթերցանության համար 69

Առաջադրություններ և հարցեր 73

Չորրորդ գրույց: Կուսակցությունը յեվ խորհրդային իշխանությունը 74

1. *Խորհրդային սահմանադրության հիմնական գծերը* . . »
2. *Պրոլետարիատի դիկտատուրան և Համ. ԿԿ (բ.)* . . 87
3. *ԽՍՀՄ—զանազան ազգությունների աշխատավորների յեղբայրական միություն* 91

Կտորներ ընթերցանության համար 95
Առաջադրություններ և հարցեր 97

ՅԵՐՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ: ԽՍՀՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հինգերորդ զրույց: Կուսակցության տնտեսական քաղաքականության հիմքերը 99
1. Արտադրողական ուժերի վերելքը և յերկրի ինդուստրիալիզացիան—սոցիալիստական շինարարության հիմնական գիծ 100
2. ՆԷՊ-ը միակ ուղիղ ճանապարհ դեպի սոցիալիզմ . . 106
3. ՆԷՊ-ի սխալ ըմբռնումն օպոզիցիայի կողմից . . 113
Կտորներ ընթերցանության համար 117
Առաջադրություններ և հարցեր 121
Վեցերորդ զրույց: Պետական արդյունաբերությունը յեվ սոցիալիզմի կառուցումը ԽՍՀՄ-ում . . 122
1. Մեր յերկրի ինդուստրիալիզացիան—ժողովրդական տնտեսության սոցիալիստական առաջապահի զարգացումն է 123
2. Յերկրի ինդուստրիալիզացիան և արդյունաբերական շինարարության խնդիրները 129
Կտորներ ընթերցանության համար 138
Առաջադրություններ և հարցեր 142
Յոթներորդ զրույց: Գյուղացական տնտեսության հետ պետական արդյունաբերության զոդման իրագործումը վորպես սոցիալիստական շինարարության հաջողության գրավական 144
1. Զոդման ուղին՝ դա առևտրին տիրելու միջոցն է . 145
2. Մյուս հրամայող բարձունքների դերը զոդումն ապահովելու խնդրում 153
Կտորներ ընթերցանության համար 160
Առաջադրություններ և հարցեր 162
Ութերորդ զրույց: Գյուղի ուղին դեպի սոցիալիզմ. . 163
1. Միջակը—գյուղական չքավորության և պրոլետարիատի հաստատ դաշնակիցն է 164
2. Կոոպերացիան—դա գյուղացական տնտեսության համար մի մեծ ուղի յե դեպի սոցիալիզմը . . 174
Կտորներ ընթերցանության համար 182
Առաջադրություններ և հարցեր 186

II ՄԱՍ

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ: ԲՈԼՇԵՎԻԶՄ (ԼԵՆԻՆԻԶՄ) ՅԵՎ ՕՊՊՈՐՏՅՈՒՆԻԶՄ

Կուսակցության պատմության ուսումնասիրության իմաստը (Ներածություն) 189
Իններորդ զրույց: Բոլշևիզմի պայքարն օպպորտյունիզմի դեմ հանուն պրոլետարիատի նախապատրաստման առաջին հեղափոխության համար 192
1. 1905 թ. հեղափոխության նախադրյալները . . . »
2. Բոլշևիզմը և օպպորտյունիզմը 1905 թ. նախօրյակին . 203
Կտորներ ընթերցանության համար 210
Առաջադրություններ և հարցեր 214
Տասներորդ զրույց: Բոլշևիզմը յեվ օպպորտյունիզմը 1905 թ. հեղափոխության մեջ . . . 215
1. Ինչպես եյին բոլշևիկները, մենշևիկները և տրոցկիստները վորոշում առաջին հեղափոխության բնույթը . . . . »
2. 1905 թ. հեղափոխության զարգացման հիմնական մոմենտները 224
Կտորներ ընթերցանության համար 230
Առաջադրություններ և հարցեր 235
Տասնմեկերորդ զրույց: Բոլշևիզմն ու օպպորտյունիզմը յերկու հեղափոխության միջանկյալ շրջանում 236
1. Բոլշևիկները բանվորական շարժման անկման, Ստոլիպինյան ռեակցիայի և նոր վերելքի շրջանում . . . . »
2. Բոլշևիկներն իմպերիալիստական պատերազմի դեմ մղած կռվում 249
Կտորներ ընթերցանության համար 256
Առաջադրություններ և հարցեր 259
Տասներկուերորդ զրույց: Կուսակցությունը յեվ բանվոր դասակարգը Հոկտեմբերի համար մղվող կռվում յեվ նրա նվաճումների պաշտպանության գործում 260
1. Բոլշևիկները Հոկտեմբերի ուղիներում. . . . »
2. Խորհրդային իշխանության առաջին քայլերը Հոկտեմբերից հետո 271
3. Կուսակցությունը և բանվոր դասակարգը ռազմական կոմմունիզմի շրջանում 277

Կտորներ ընթերցանության համար 281
Առաջադրություններ և հարցեր 284
Տասներեքերորդ գրույց: Բոլշևիկները կուսակցության համար մղվող կռվում Հոկտեմբերից հետո . 285
1. Կուսակցությունը Նեպ-ին անցնելու շրջանում . . »
2. Կուսակցության ուժի և ազդեցության աճումը ՆԷՊ-ի զարգացման հետագա շրջանում . . . 296
3. Համ. ԿԿ (բ.) XIV համագումարը և նրա նշանակությունը. 304
Կտորներ ընթերցանության համար 314
Առաջադրություններ և հարցեր 317

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ: ՀԱՄ. ԿԿ (Բ.), ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ՅԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Տասնչորսերորդ գրույց: Համ. ԿԿ (բ.) յեվ Կոմինտերնը . 318
1. Համ. ԿԿ (բ.) փորձը Կոմինտերնի կազմակերպչական շինարարության մեջ 319
2. Կոմինտերնը բանվորական մասսաների համար մղվող կռվում 324
3. Կոմինտերնի անելիքները գյուղացիության վրա ազդեցություն ձեռք բերելու համար մղվող կռվում . 338
Կտորներ ընթերցանության համար 343
Առաջադրություններ և հարցեր 347
Տասնհինգերորդ գրույց: ԽՍՀՄ յեվ համաշխարհային հեղափոխության հեռանկարները . . 349
1. Կապիտալիզմի մասնակի կայունացումը (ստաբիլիզացիան) »
1. ԽՍՀՄ դերն արդի շրջանում 360
Կտորներ ընթերցանության համար 366
Առաջադրություններ և հարցեր 371
ՀԱՎԵԼՎԱԾ: Համ. ԿԿ (բ.) և ԿՎՀ միացյալ պլենումի բանաձևից (1926 թ. հուլիս). . . . 372
Տասնվեցերորդ գրույց: Պատանեկական շարժման հարցերը 376
1. Կոմսոմոլը, նրա նշանակությունը, դասակարգային էությունը և կուսակցական ղեկավարությունը . »
2. Կոմսոմոլի աշխատանքի աշխուժացումը. . . . 396
Տասնյոթերորդ գրույց: Յերիտասարդության Կոմմունիստական Ինտերնացիոնալը 406
ՀԱՎԵԼՎԱԾ հայերեն հրատարակության
I. **Մոլոտով.** —Խորհուրդների նոր ընտրությունները . 423
II. **Ա. Մռավյան.**—Կոմինտերնի VII պլենումի մասին . 434
Բովանդակություն 439

ԳԻՆԸ 1 Ռ. 60 Կ.

2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0182929
ՀՀ Ազգային գրադարան
NL0037681